

ӦӰԾԸ ӮԾ Ӯ Ӯ

«Արիական իմաստնություն» գիրք Ա

«ԱՃԵԵԵՆԵԱԾ Ի ӮԾԴ ՆՈՒ» ԷԻ ԵԱԱ Ա

Խմբագիր՝ Սրբագրիչներ՝	Զ. Մարտիրոսյան Զ. Նալբանդյան, Ի. Հովհաննիսյան
Յամակարգչային ձևավորումը՝	Գ. Սահակյանի Մ. Մերեշավյանցի

Ծավալը՝ իրատարակչական 9,5 մամուլ, չափսը՝ 60x84 1/16, տպաքանակը՝ 100 օրինակ, գինը՝ պայմանագրային, տպագրված է «Իրավունք» իրատարակչության տպարանում



## Հ Ա Շ Ո Ւ Մ Ա Վ Ա Ր Ա Վ Ո Ւ Թ Յ

Արիների մասին հիշողության հետքերն այս կամ այն ձևերով պահպանվել են եվրասիական մայրցամաքի շատ ազգերի ավանդույթներում, առասպելներում, պատումներում, և նրանց համար արիական կոչվելը համարվում է պատվի, արժանիքի գնահատման, ինքնահարգման առանձնահատուկ հնարավորություն:

«Արի» բառը, առիասարակ, բոլոր լեզուներում հնչում է նույն ձևով և ունի նույն իմաստը՝ արտահայտելով քաջություն, առաքինություն, ասպետություն, ազատասիրություն, իմաստնություն, արդարացիություն, հավատարմություն և կատարելության այլ հատկանիշներ, որոնք փաստորեն դրված են մարդու հոգեբանության ու կերպարի մեջ բարձրագույն բարոյական ու Արարչահածո մտածելակերպ ու վարվելակերպ արմատավորելու նպատակ հետապնդող կրոնների ու գաղափարների հենքերում:

Արիականությունը, տարրալուծված լինելով տարբեր աշխարհայցքային սկզբունքների մեջ, որպես ինքնուրույն հասկացություն կամ սկզբունք չի ծնավորվել, և մարդկային գիտակցության ու ենթագիտակցության մեջ ընդունվել է որպես ինքնըստինքյան հասկանալի ու ընդունելի մարդկային լավագույն հատկանիշների բնորոշման միջոց:

Այլ խոսքով՝ մարդու էության մեջ, այս կամ այն չափով, հանդիսանալով մարդու՝ որպես բնական արարածի և հասարակության անդամի բնորոշ առանձնահատկություն և լինելով ոգեղեն երևույթ, այն դրսևորվում է մարդու կենսագործունեության և այլոց հետ ունեցած հարաբերություններում: Այդ պատճառով արիականության, արիների ծագման, դերի, ենթադրվող սկզբունքների մասին խոհերն ու դատողություններն ակամայից կանգնեցնում են այնպիսի խոր և բարդ հասկացությունների հիմնախնդիրների առաջ, ինչպիսիք են Արարչի կերպարն առհասարակ, Նրա նպատակների մասին պատկերացումները, ոգու բնույթը, տիեզերքի ու բնության զարգացման օրենքները, «կյանք» երևույթի իմաստավորումը, մարդու ծագումը, առաքելությունն ու բնության հետ ունեցած առնչությունը, մարդկային եսի ու մարդ-հասարակություն փոխհարաբերությունները և այլն, որոնց վրա հազարավոր տարիներ տքնել են բազում սերունդների իմաստուններն ու կտքնեն՝ քանի դեռ գոյություն ունի մարդկությունը: Այլ խոսքով՝ խնդիրը հանգում է այնպիսի հիմնահարցերի բազմությանը, որոնց լուծումները վեր են մի մարդու և նույնիսկ մեկ սերնդի ուժերից:

Առ այսօր ձևավորված և մարդկության առաջադիմությունն ուղեն-

շող կրոնական, փիլիսոփայական և այլ գաղափարները, սկզբունքները, ձգտելով տալ այդ հիմնախնդիրների ընդհանուր լուծումներ, տարբեր մոտեցումների պատճառով հանգում են տարբեր՝ մեծամասամբ իրարամերժ արդյունքների:

Ընդունվում է, որ արիականությունը (ներկայիս քաղաքակրթության միջավայրում նենգափոխված «հնդեվրոպականություն» անվանք) մեծ դեր է կատարել մարդկության առաջադիմության, գիտակցության ձևավորման և առհասարակ, նախնադարյան մարդուն քաղաքակրթության բավկայության առաջնորդելու գործընթացում, և, որ իր ակունքներով սկիզբ առնելով աստվածաշնչյան Նոյան տապանից, հանդիսանում է ժամանակակից մարդկային քաղաքակրթության հիմքը:

Առհասարակ, Աստվածաշնչում մարդկության պատմությանն առնչվող դեպքերն ու երևույթները սերնդե սերունդ փոխանցվելով տարբեր առասպելների ու պատումների տեսքով, գրանցվել են որոշակի միտումնավոր, գրանցողների գաղափարախոսություններին հարմարեցված ձևերով և միայն վերջին դարերում են բացահայտվում այդ ձևափոխումները՝ շնորհիվ տարբեր վայրերում կատարված հնագիտական պեղումներով հայտնաբերված սեպագիր արձանագրությունների: Սակայն յուրաքանչյուր քարոզվող աշխարհայացք որոշ չափով պետք է ունենա ծշմարտության տարրեր, որոնք չեն հակասում հայտնի փաստերին: Այդ տեսակետից հետաքրքիր է մարդկային ներկայիս քաղաքակրթության հիմքերի կամ մարդկության համար այլ կարևոր երևույթների ակունքների մատնանշումը Հայկական բարձրավագնդակում, որը համընկնում է այլ ժողովուրդների ավանդապատումների հետ և հաստատվում հնագիտական պեղումներից ստացված տվյալներով:

Հաշվի առնելով այդ հանգամանքը, ներկա գրքույկում օգտագործվել են և քննարկվել Աստվածաշնչում տրված որոշ առասպելներ, որոնց վերլուծումը այս կամ այն չափով հնարակորություն է տալիս բացահայտել կամ եզրակացնել արիների ծագման և ամբողջ մարդկային քաղաքակրթության վրա նրանց ունեցած ազդեցության մասին: Ընթերցողի հետ կիսելով արիական սկզբունքների մասին իր մտորումները, հեղինակը ելնում է այն մոտեցումից, որ դրանք լինելով ոգեղեն և իրենց էլությամբ հակադիր՝ նյութականության կամ շահի սկզբունքներին, միաժամանակ դրանց հետ միասնական են, քանի որ ամբողջ բնությունը, կյանքն առհասարակ, հիմնված է եսի շահերի ապահովման համար գոյության պայքարի, անհատների ու տեսակների մրցակցության վրա:

Ոգեղենությունը որոշ չափով հանդիպելով նաև բնական արարածների մոտ, իր էլությամբ հիմնականում մարդկային երևույթ է, բայց մարդը միաժամանակ լինելով բնության մի մասնիկը, նյութականությունը նրա համար կատարում է նույն դերը, ինչ մյուս արարածների համար: Այս առումով մարդկության զարգացումն ու առաջադիմությունը հնարավոր է միայն այդ երկուսի միաժամանակյա հավասարակշռված գործունեության դեպքում: Ոգեղենությունը մարդու մոտ արարման, նորաստեղծության, մտավոր խիզախության նախապայման է, իսկ նյութակա-

նությունը՝ դրանց արդյունքների իրականացման, խթանման, խրախուսման միջոց: Իսկ նրանց հակադրությունը կայանում է նրանում, որ երբեմն ոգեղենությունը վեր է դասվում նյութականությունից և փորձ է արվում հաշվի չառնել վերջինիս, իսկ նյութականության ջատագովները փորձում են ոգեղենությունը ենթարկել միմիայն շահին, հաշվարկին և մարդկային յուրաքանչյուր հարաբերություն իրականացնել ելնելով շահի սկզբունքներից: Մարդկային հասարակության զարգացումն ընթանում է արագ և առանց ցավագին ցնցումների, երբ պահպանվում է տվյալ պատմական ժամանակաշրջանին հատուկ այդ երկու սկզբունքների համամասնությունը: Ընդ որում, այն տարածվում է մարդկային կեցության բոլոր բնագավառների վրա՝ և սոցիալական, և բարոյական, և ազգային-հասարակական: Սակայն մարդկության զարգացման ընթացքում այդ համամասնությունը միտում ունի անընդհատ փոփոխվելու՝ հասարակության մեջ առաջացնելով հակասություններ, հեղափոխություններ, քաղաքացիական պատերազմներ:

Ներկայիս պատմական ժամանակաշրջանում փաստորեն ավելի ու ավելի գերակայող է դառնում շահը, և մարդկային ցանկացած մտածելակերպ, վարվելակերպ ու գործելակերպ ուղղված է շահի ապահովմանը: Հասարակական հարաբերությունները, օրենքները, գաղափարախոսություններն այդ սկզբունքով վերակառուցվելու հետևանքով, մարդկային զգացմունքները, հարաբերությունները դառնում են արհեստական, շինծու և հաճախ գովազդի ծև են ստանում: Գաղափարների մեջ ոգեղեն գործոնի նվազեցումը մարդկային հոգում առաջացնում է դատարկություն, մարդուն իջեցնելով բնության մյուս՝ ոչ բանական արարածների մակարդակին, գիտակցությունն ուղղելով զուտ անձնական շահի, ամբիցիաների բավարարման ուղղությամբ: Արիականության ոգեղենությունը, փաստորեն, հակադրվելով շահի նյութականությանը, ներքին համակրանք է առաջացնում իր նկատմամբ: Այդ պատճառով, ներկայիս բիզնեսի ավելի ու ավելի գերակայության պայմաններում, «արիականություն» և «արի» հասկացությունների դեմ պայքարը թեև վերջիններիս հետին պլան մղեց, բայց չկարողացավ անել անհնարինը՝ մարդկային ենթագիտակցությունից ու էությունից դրանց վերացնել ամբողջովին:

Յուրաքանչյուր գաղափարի հեղինակագրկման արդյունավետ մեթոդներից մեկը նրա ծայրահեղականացումն է: Ռասիզմը կամ ֆաշիզմը, իր գաղափարախոսությունը հայտարարելով արիական, առանց ընթացնելու ու կիրառելու նրա Արարչական սկզբունքները, ոչ միայն հեղինակագրկում են այն, այլև մարդկային գիտակցության մեջ արիականության նկատմամբ առաջացնում են զգուշավորություն, դրանով մեծ չափով նպաստելով նյութականության սկզբունքի հաղթարշավին:

Սակայն նյութականության սկզբունքն իր հերթին խախտելով նշանակած համամասնությունը, ներկայումս ինքը միտում ունի հասնելու ծայրահեղության:

Չնայած տարբեր օրենսդրական բարեփոխումների ու բարեգործա-

կան միջոցառումների շնորհիվ այդ համամասնության խախտման հետևանքները մեղմացնելու նպատակների հաջողությանը սոցիալական ոլորտում՝ նյութական սկզբունքների վրա հիմնված լինելու պատճառով, դրանք բարոյական և ազգային ոլորտներում նույնիսկ հակառակ դեր կարող են կատարել (իրականում այդ միջոցառումները ավելի ցածրացնում են մարդկային արժանապատվությունն ու բարոյականությունը, միտում ունեն խեղելու ազգերի ազգային ինքնությունն ու արգելակելու ինքնաբացահայտումը և այլն): Այդ պատճառով այդ համամասնության ներկայիս խախտումը աշխարհի տարբեր մասերում առաջ է բերում հասարակական ցնցումներ, հատկապես ազգային ոլորտում:

Զեռնամուխ լինելով իր մտորումները ընթերցողին ներկայացնելու, հեղինակը ելել է արիների, արիականության և արիական ազգերի՝ մարդկության քաղաքակրթության զարգացման գործում կատարած դերից, հայերի՝ իրենց ազգային բնավորությամբ, աշխարհնկալմամբ, այլոց հետ ունեցած փոխհարաբերություններում արիական սկզբունքներին առավել հոգեհարազատ լինելու հանգամանքից, ինչպես նաև հայ ազգի կազմավորման բնօրրանը նույն արիների բնօրրանը լինելու և նրանց նախնիների՝ այդ բնօրրանի բնակիչներ, այսինքն՝ արիների հետևորդները լինելու իրողությունից:

Այդ տեսակետից սեփական ազգային՝ այլոց նկատմամբ քծնանքով տոգորված կամ պատեհապաշտ քաղաքականությամբ առաջնորդվող, ինչպես նաև այլազգի՝ նախանձով կամ իրենց ժամանակավոր նյութական հզորությամբ կուրացած գործիչների կողմից ազգային սնափառության կամ բացառիկության մեջ մեղադրվելու հեռանկարից գգուշանալը հեղինակը համարում է ոչ-արիական և արիամարիանքի արժանի: Հեղինակի կարծիքով, ոչ մի բացառիկ ազգ կամ ժողովուրդ չկա, և յուրաքանչյուր ազգ իր դերն ունի Արարչի նպատակների ու «մարդ» արարածի առաքելության գործում. ուրեմն պետք չէ թաքցնել սեփական արժանիքները:

Այստեղ արժե նշել, որ մարդկության քաղաքակրթության հիմքերը արիների կողմից տարածվելու ժամանակներում հրեաները ընդամենը քոչվոր խաշնարածներ էին, բայց դա չխանգարեց որոշ հրեական ռաբբիների՝ իրենց հայտարարելու բացառիկ, աստծո կողմից ընտրված ազգ, բազմաթիվ այլ ազգերի աստվածների առկայության պայմաններում Արարչին փոխարինել իրենց աստծով, այլ ազգերի ավանդապատումները անցկացնել իրենց ազգային արիզմայով, դրանց հերոսներին անվանափոխել սեփական ազգային անուններով և այդ բոլորը տարափոխել ու պարտադրել ամբողջ աշխարհին Աստվածաշնչի տեսքով: Հետագայում նույն ավանդապատումներն մի մասն ու որոշ հերոսները հանդես եկան նաև Ղուրանում, բայց արդեն ծևափոխված իսլամական սկզբունքներով և արաբացված անուններով:

Ներկա գրքույկը գիտական կոչվելու հավակնություն չունի: Նրանում ամփոփված են հեղինակի մտորումները Արարչի, ոգու, բնության, մար-

դու և մարդկային հարաբերությունների մասին՝ փորձելով բացահայտել արիների դերը մարդկության ծակատագրի, մարդու կերպարի ձևավորման վրա և այդ պատկերացումներից ելնելով, եզրակացնել արիական սկզբունքների առանձնահատկությունների մասին։ Գրքույկում հեղինակը խուսափել է բարդ ու դժվարամարս գիտական ձևակերպումներից ու ապացույցներից և գրել է մեծմասամբ ինտուիտիվ մեթոդով, անհրաժեշտության դեպքում փորձելով այս կամ այն միտքը հիմնավորել տրամաբանությամբ կամ բնությունից ու կյանքից վերցված օրինակներով ու համեմատություններով։ Գրքույկի բաժինները երբեմն գրված են սահմանումների ու դրանց պարզաբանումների ձևով, հասկանալի ոճով և դյուրմբրնելի, նույնիսկ պարզունակ ձևակերպումներով։

Ելնելով «ամեն մի նորը լավ մոռացված հինն է» սկզբունքից, հեղինակը չի հավակնում բերված մտորումները համարել միայն սեփական նորաստեղծության արգասիք, ինքնըստինքյան հասկանալով, որ շոշափված թեմաներով զբաղվել են տարբեր դարաշրջանների իմաստունները, գրվել են հազարավոր աշխատություններ և նրանց մեղքը չէ, որ դրանք մնացել են մասնագիտական կամ գիտական կոչված դարակներում։ Սակայն մյուս կողմից չի կարելի անտեսել այն իրողությունը, որն առանց քննարկման կարելի է ներկայացնել հետևյալ օրինակով։ 30-ական թվականներին Սիրիում հայտնաբերվեց մամոնտի ծագի ամբողջական սառած մարմինը (այն նույնիսկ անվանակոչեցին՝ Ռիմկա), որն իր ժամանակին համարվեց կարևոր հնագիտական հայտնագործություն։ Հետաքրքիրն այն է, որ այն գտնվեց բանուկ ծանապարհի եզրին, որով բազում տարիներով անցել էին և՝ Սիրիու նվաճողները, և՝ տեղաբնակ որսորդները, և՝ նույնիսկ հնագետները։ Եվ բոլորն էլ այն տեսել էին որպես մի խոշոր սառած հողակույտ։ Միայն մի սրատես անցորդ նկատեց այդ սառած հողակոչտի յուրահատուկ ձևն ու մաքրելով տասնյակ հազարավոր տարիներով կուտակված ավելորդ հողագոյացումները, բացահայտեց մամոնտի ծագին…

Գրքույկը գրված է այնպես, որ հեղինակն իր մտքերն ու հայացքները չպարտադրի ընթերցողին, այլ նրա մեջ առաջացնի ցանկություն՝ հեղինակի հետ անձամբ մտորելու, հիշելու իր կյանքում հանդիպած տարբեր դեպքեր ու երևույթներ, օրինակներ, փաստեր, որոնք կգան հաստատելու կամ հերքելու հեղինակի այս կամ այն միտքը, դրդելու մտածել՝ չվախենալով դուրս գալ քարացած պատկերացումներից, ստանդարտներից, հակադրվել համընդհանուր ծանաչում գտած ծշմարտություններին և փորձել խորամուխ լինել երևույթների ներքին էռթյան ու փոխայմանավորվածության առերևույթ չնկատվող կապերի վրա։

Արիների վերաբերյալ հեղինակի հայացքների ձևավորման վրա մեծ ազդեցություն են թողել հատկապես Ա. Վարպետյանի աշխատությունները, ինչպես նաև Ա. Ավետիսյանի, Ա. Մովսիսյանի և այլոց հեղինակած գրքույկները՝ նշված թեմաների շուրջ, չհաշված այլ բազմաթիվ գրքեր և աշխատություններ, որոնց հղումներ կատարելուց և վկայակոչելուց՝



# ԱԿՈԼԵՍԵՐԸ

I.



Աստվածաշնչում տրված Նոյան տապանի պատմությունը, հավանական է, իրեաները վերցրել են իրենց բարելական գերության ժամանակ՝ Ունտապիշտիմի մասին բարելական առասպելից, իսկ վերջիններս էլ վերցրել են էլ ավելի հին՝ շումերների Զիուսուդրայի առասպելից: Այս վերջին երկուսը հայտնաբերվել են ներկա հարյուրամյակում՝ սեպագիր արձանագրությունների տեսքով, բայց ջրհեղեղի մասին աշխարհն իմացավ Աստվածաշնչից՝ որպես իրեական ավանդություն:

- Արարիչը՝ զայրանալով մարդկության չարության և չար գաղափարների վրա, ոչնչացրել է ամբողջ մարդկությունը, թույլ տալով փրկվել միայն Նոյին՝ երազում նախազգուշացնելով ջրհեղեղի մասին և խորհուրդ տալով պատրաստել մի հսկա տապան, նրա մեջ պատսպարելով իր ընտանիքը, բոլոր կենդանիներից զույգեր և փրկել իր հետ:

Այս պատմությունն, իր այլաբանություններով, որոշ խորհրդածությունների տեղիք է տալիս:

- Նախ, բոլոր կենդանիների տեսակները տեղավորելու համար հնարավոր չեր նման չափսերով տապան պատրաստել և հետո, ոչ ժամանակ և ոչ էլ հնարավորություն կլիներ այդ բոլորը ամբողջ աշխարհից հավաքելու համար: Դա հաստատում է, որ այդ պատմության մեջ «աշխարհ» հասկացությունը սահմանափակվել է Միջագետքով և նրա շրջակա տարածքով, իսկ «մարդկություն» ասելով, հասկացվել է միայն Միջագետքի գարգացած քաղաքակրթությունը: Հետևաբար, ջրհեղեղը պետք է ոչնչացներ միայն Միջագետքի և շրջակա տարածքների բնակչությանն ու կենդանական բնությունը, իսկ հավաքել նաև այն կենդանիներից, որոնք պահպանվելու

էին այլ վայրերում, իմաստ չուներ: Մնում է եզրակացնել, որ տապանում պետք է հավաքվեին միայն այն տեսակներից, որոնք Միջագետքից բացի, այլ վայրերում չկային: Նման կենդանիներ կարող էին լինել միայն ընտանի կենդանիները, որոնց գոյությունը բնորոշ է զարգացած քաղաքակրթությանը: Բացի դրանից, նրանց դերը ոչ միայն տեսակի պահպանությունը, այլև ջրհեղեղի ժամանակ և նաև հետո Նոյի ընտանիքին սնունդով ապահովելը կլիներ: Այդ դեպքում միանգամայն հնարավոր էր և բնական դրանց հավաքելն ու տեղավորելը համապատասխան չափսերով տապանում, և փրկելը՝ այդ կերպ նրանց տեսակները փոխանցելով սերունդներին: Փաստորեն դրանք եղել են Նոյի միջոցով հետագա սերունդներին փոխանցված Միջագետքի զարգացած քաղաքակրթության արդյունքների մի մասը:

Որ ջրհեղեղը, իրոք եղել է Միջագետքում, բացի ավանդույթներից, վկայում են նաև հնագիտական պեղումներով հայտնաբերված հետքերը:

- Մյուս կողմից Արարիչը թույլ տվեց միայն Նոյին փրկվելու՝ շնորհիվ նրա «արդար ու կատարյալ մարդկային կերպարի»: Այսինքն, Արարիչը առանձնացնում է մարդուն բնությունից, ուշադիր հետևում է մարդկության զարգացմանը և վճռականորեն իր Վերաբերմունքն է ցուցաբերում մարդ արարածի որդեգրած վարք ու բարքի, զարգացման բարոյական ուղղվածության նկատմամբ: Այնքան ուշադիր և վճռական, որ մարդկանց սխալ ապրելակերպի պատճառով պատրաստ է ամբողջ մարդկությանը (Նոյից և նրա ընտանիքից բացի) ոչնչացնել՝ նույնիսկ ամբողջ բնությունը ոչնչացնելու գնով, մարդու պատճառով չխնայելով մյուսներին: Դա հուշում և ապացուցում է նաև, թե Արարիչը ինչպիսի նշանակություն է տալիս մարդու զարգացման հատկապես ոգեղեն կողմին, բարոյական կերպարին, դրան գերակայություն տալով մյուս հատկանիշների նկատմամբ: Եվ փրկելով Նոյին, Արարիչը կարծես ապագա մարդկությանը մատնացույց է արել մարդկային այն կերպարը, որը նա համարում է ծիշտ և ընդունելի:

Այս ավանդությունից հետևում է նաև, որ հատուկ ուշադրություն դարձնելով մարդու կերպարին, Արարիչը մարդու համար նախատեսել է մի ինչ-որ նպատակ, մի ինչ-որ առաքելություն, և մարդու սխալ զարգացումը ոչ միայն կխանգարեր այդ նպատակի իրականացմանը, այլև կարող էր առաջացնել մի աղետ, որն իր հետևանքներով ավելի վտանգավոր կլիներ, քան ամբողջ բնության և կենդանական աշխարհի ոչնչացումն է:


Որոշ հեղինակներ, փորձելով բացահայտել Նոյան տապանի

պատմության բնական պատճառը, Միջագետքի հզոր ջրհեղեղը կապում են վերջին սառցադաշտային դարաշրջանի ավարտի հետ, որը տեղի է ունեցել 12-14 հազար տարի առաջ, ընդ որում բավականին արագ, հնարավոր է մի քանի կամ մի քանի տասնյակ տարում: Դրանով է բացատրվում Սիբիրում մամոնտների, ոնդեղջյուրների և այլ բրածո կենդանիների զանգվածային ոչնչացումը: Նրանց հաստ բոդյա մորթին, որը հարմարեցված էր պաշտպանելու սառնամանիքներին, եղանակի փոփոխության պատճառով տաք ցերեկների անձրևներից բրծվում և գիշերները սառցակալվում էր՝ սառեցնելով ամբողջ մարմինը: Դրանով կարելի է բացատրել նաև նրանց

## Ա.Ռ. ՚ մ ա ս տ ն ո ւ թ յ ա ն

Նոյի ժամանակակիցների մոտ չար գաղափարների առկայությունը նշանակում է որոշակի բարձր մակարդակի հասած նման զաղափարներ կրող քաղաքակրթության առկայություն (այդ քաղաքակրթության հետքերը ևս հայտնաբերվել են ջրհեղեղի բերած տիղմի տակ): Զգարգացած հասարակության մեջ գաղափարներ լինել չեն կարող. այն հատուկ է միայն զարգացած քաղաքակրթությանը: Մարդկությունը, զարգանալով ոգեղեն սխալ ուղղությամբ, բնականաբար միաժամանակ հասել էր իմաստնության որոշակի մակարդակի: Նոյն ու իր մերձավորները, այսպես թե այնպես իրենց գիտակցության մեջ կրում էին այդ իմաստնության որոշ մասը: Այսինքն, իմաստնությունը, որին հասել էր մարդը նախաջրհեղեղյան քաղաքակրթության ժամանակ, ջրհեղեղի պատճառով չէր կորսվել, այլ Նոյի և իր ժառանգների միջոցով փոխանցվել էր ապագա մարդկությանը: Յետևաբար Նոյի առաքելության մեջ մտնում էր ոչ միայն ապագա մարդկությանը ընտանի կենդանիների տեսակների և Արարչին հածելի մարդկային բնավորության ու կերպարի լավագույն գծերի, այլ նաև իրենից առաջ մարդկության ծեռք բերած գիտելիքների փոխանցումը (այստեղ պետք է կատարել որոշ վերապահություն. արդյո՞ք վերը նշված բացասական հատկանիշների մի ինչ-որ մասը միաժամանակ չի փոխանցվել իմաստնության հետ: Աստվածաշնչում նշված է միայն Նոյի մոտ նման հատկանիշների բացակայությունը, իսկ նրա ընտանիքի անդամների մոտ որանք չեն

# Ա.գ. Ն ա խ ն ա դ ա ր յ ա ն



Նոյի առասպելը իր հիմքում ունենալով իրողություն և սահմանափակվելով աշխարհի մասին Միջազգետքի քաղաքակրթության ունեցած պատկերացումներով ու տեղական ջրհեղեղով, չէր կարող տեղեկություն տալ ամբողջ աշխարհի բնության և մարդկության վերաբերյալ: Մինչդեռ առանձին մայրցամաքներում հայտնաբերված մարդկային կամ մարդանման արարածների մնացորդները վկայում են, որ տարբեր մարդաբանական տիպերով մարդկային խմբերը տարածված են եղել աշխարհի համարյա բոլոր վայրերում ջրհեղեղից ել շատ առաջ՝ մոնղոլիդներ, սեմիտներ, նեգրոիդներ և այլն: Այլ բան է, թե նրանք զարգացման ինչ մակարդակում են եղել: Պարզ է, որ քաղաքակիրթ մարդու, Միջազգետքի քաղաքակրթության համեմատ նրանք պարզապես եղել են նախնադարյան մարդ (վայրի ցեղեր):

- Ըստ մարդաբանների կարծիքի, նախնադարյան մարդու առաջանալու գործընթացն սկսվել էր քարե դարում (մարդաբանության մեջ դա անվանում են նեոլիթյան հեղափոխություն): Ամբողջ աշխարհում հազարավոր տարիների ընթացքում, դանդաղորեն զարգանալով, մարդն իր կենսագործունեությունը ապահովելու համար սովորել էր պատրաստել քարե զենքեր և գործիքներ: Սկսվել էին կազմավորվել ընտանիքներ, որոնք աճելով ձևավորվել էին որպես իրարից առանձնացված և հաճախ իրար թշնամի համայնքներ, էթնիկական խմբեր, սկսել էր կազմավորվել նրանց հաղորդակցման ազդանշային համակարգը՝ լեզուն և այլն:

- Սակայն այդ նախնադարյան մարդկային խմբերը ընդհանուր մարդկության մի մասը դառնալու, մարդկային ընդհանուր հատկանիշներ ձեռք բերելու համար պետք է հաղորդակցվեին մարդկային հասարակության համար ընդհանուր պարտադիր օրենքներին: Նրանք պետք է ձերբազատվեին կենդանական բնագդներից, սովորույթներից (մարդակերությունից, խառնարյունությունից, մերկությունից և այլն), սովորեին համամարդկային համակեցության կանոնները: Մյուս կողմից, նրանք իրենց հետագա զարգացման ընթացքում, ստեղծելով իրենց քաղաքակրթությունը, պետք է խուսափեին զարգացման այն սխալ ուղուց, որով գնաց և որի պատճա-

# Ա.դ. Ս ո հ ն ե ր ի

Նոյի սերունդներն ապրելով ու բազմանալով Արարատի շրջակայքում և նրան շրջապատող Յայկական բարձրավանդակում, իրենց ապրելածեռում օգտագործելով և ավելի զարգացնելով մինչընթաց քաղաքակրթությունից ժառանգած գիտելիքները, և դրա շնորհիվ արագ բազմանալով, սկսեցին տարածվել՝ իրենց հետ տարածելով նաև այդ գիտելիքները և միաժամանակ տարածելով մարդկային այն լավագույն կերպարի պատկերացումները, որոնք ժառանգել էին իրենց նախահայր Նոյից, և ապահովում էին մարդկության առաջադիմությունը՝ Արարչի մատնանշած ուղիով:

Պատմության մեջ այդ գործընթացը հայտնի է «արիների արշավանքներ» անունով:

- Արի՝ հայերենում նշանակում է քաջ մարդ, ասպետ, առաքինի և այլն, այսինքն, ընդգրկում է մարդկային կատարելության այն չափանիշները, որոնց շնորհիվ Նոյը փրկվեց: Այն մոտավորապես նույն իմաստն ունի նաև այլ լեզուներով: Յետաքրքիր է նաև, որ հին հայերենում Արարատն անվանվել է նաև Մասիս, որը սերտորեն առնչվում է Ուտնափիշտիմի լեզենդի՝ Նիսիր լեռան անվան հետ, և որտեղ կանգ էր առել նրա նավը: Այսինքն, տարբեր ժողովուրդների կողմից պատմվելով, տարբեր անուններով հիշատակվում է նույն լեռը:

Արիները շատանալով ու հզորանալով, ցրվեցին աշխարհով մեկ, տարածելով ժամանակակից քաղաքակրթության հիմքը հանդիսացող այսպես կոչված հնդեվրոպական քաղաքակրթությունը (այսինքն՝ արին դարձավ հնդեվրոպացի, ծիշտ այնպես, ինչպես ժամանակին Զիուսուդրան դարձավ Ուտնափիշտիմ, իսկ Ուտնափիշտիմը դարձավ Նոյ):

- Այդ «հնդեվրոպացիների», այսինքն՝ արիների ծագումը Յայկական բարձրավանդակից ապացուցված է հնեաբանական, մարդաբանական, լեզվաբանական և այլ հետազոտություններով: Բնակվելով սկզբում Արարատյան դաշտավայրում, իսկ այնուհետև Յայկական բարձրավանդակում, իրենց Նոյ Նահապետից ժառանգելով նրա իմաստնությունը, նրա մարդկային Արարչահածո կերպարը, ունենալով լավի ու վատի, բարու և չարի մասին ընդհանուր պատկերացումներ, աստիճանաբար իրարից հեռանալով, կտրվելով իրենց ծննդավայրից, նրանք ընդհանուր ազգ չդարձան: Ցրվե-

լով աշխարհի չորս կողմը, տեղաբնակ ցեղերին հեշտությամբ հաղթելով ու հնազանդեցնելով, իսկ անհնազանդներին ոչնչացնելով, նրանք ակամայից սկսեցին իրականացնել նախնադարյան մարդուն մարդ դարձնելու գործընթացը՝ ամբողջ Եվրասիայում և կարծամանակամիջոցում՝ մարդկության զարգացման նախորդ հազարամյակների համեմատությամբ:

- Արիների արշավանքների հետքերը երևում են Հիմալայներից մինչև Արևմտյան Եվրոպա՝ հաճախ անսպասելի ձևերով: Այսպես, Պորտուգալիայում և Իսպանիայում (հատկապես բասկերի մոտ, որոնք իրենց համարում են արմենների հետնորդներ) հաճախ հանդիպում են այնպիսի բառեր ու տեղանուններ, որոնք հազարամյակներ ի վեր օգտագործվում են Հայաստանի տարածքում և հիմնականում նույն նշանակությամբ՝ քար, չար, էգուց, արագիլ, Անի, Արաքս, Վեդի, Յայա և այլն: Իսկ «ար» արմատը հաճախ է հանդիպում ճապոնիայից մինչև Եվրոպա: Անգլիայում հայտնի է Ստոունհենչ հնադարյան աստղադիտարանը: Նման աստղադիտարաններ հայտնաբերվել են նաև Ֆրանսիայում, Գերմանիայում և այլուր: Համարյանույնատիպ աստղադիտարան, բայց մի քանի հազար տարով ավելի հին, ակադեմիկոս Պ. Յերունու գլխավորած մի խումբ էնտուգիաստների կողմից վերջերս հայտնաբերվել է Սյունիքի լեռներում: Շատ հետաքրքիր է Ստոունհենչ աստղադիտարանի անվան՝ նրանց կողմից կատարված համեմատությունը, այդ աստղադիտարանի մոտ գտնվող Քարահունչ գյուղի անվան հետ:

Անգլերեն «ստոունը» հայերենում քարն է, իսկ «հունչը» գուտ հայկական արմատական բառ է, որը խիստ նման է անգլերենով մինչև այժմ անբացատրելի համարվող «հենչ» արմատին: Յայերեն հունչ բառը հնչել բառի արմատն է: «Քարահունչ» նշանակում է քարերից եկող հնչյուններ կամ ձայներ: Գտնված քարերի վրա արված են անցքեր, որոնք ըստ Պ. Յերունու, ուղղված են որոշակի երկնային լուսատուներին: Բնական է ենթադրել, որ կոնկրետ երկնային մարմնին դիտարկելու ծիշտ ուղղվածություն ունենալու համար այդ անցքերի մեջ դրված են եղել եղեգնյա խողովակներ, իսկ այդ խողովակների մի ծայրը փակելիս, որը արվել է ցերեկները, նրանք քամուց ձայներ էին արձակում: Վերջին ենթադրությունը դժվար չէ ստուգել: Բայց մյուս կողմից ծագում է այլ ենթադրություն. արդյո՞ք դրանք միայն աստղադիտարանի դեր են կատարել: Տեղադրված տարբեր երկարության ու հաստության, տարբեր ուղղվածության խողովակները տարբեր կողմից փչող քամիներից կարող էին ամբողջ սիմֆոնիաներ հնչեցնել, որոնք քրմերին հեղինակություն ձեռք բերելու կամ գուշակությունների համար մեծ հնարավորություններ

էին ընձեռում, մանավանդ որ Քարահունչ անունը հենց այդ էլ հուշում է:

- Առ այսօր Յնդկաստանում գոյություն ունեն իրենց արիացիներ անվանող ցեղեր: Իսկ Յնդկաստանից մինչև Եգիպտոս հին աստվածներից շատերի անվանումներն ունեն զուտ արիական ծագում: Մանավանդ, եթե նկատի ունենանք, որ հաճախ աստվածների անունները գաղտնի էին պահպում հասարակ մահկանացուներից և այդ նպատակով, որպես գաղտնագիր, քրմերը դրանք արտասանում կամ գրում էին հակառակ ուղղությամբ (օրինակ Ար-Ռա, կամ Ռա): ճապոնիայի Ճոկայդո կղզում ապրում է այնու (հայ անունից) հնդեվրոպական ցեղը, որի լեզվական առնչությունների պատճառը հնդեվրոպականի հետ լեզվաբաններն ու պատմաբանները ոչ մի կերպ չեն կարողանում բացատրել: Առեղծվածն այն է, որ ճապոնացիների մոնղոլիդ ցեղը ճապոնական կղզիներ է թափանցել Յարավային Կորեայից՝ մեր թվարկության առաջին հազարամյակի կեսերին, և ըստ ճապոնական ավանդույթների, այնտեղ ապրելիս են եղել սպիտակամորթները: ճապոնացիները նրանց համարել են աստվածներ ու իրենց ոգեղեն նախնիները, որոնցից փոխ են առել իրենց օրենքներն ու ավանդույթները: Նույն «ար» արմատով շատ անվանումներ հանդիպում են նաև ճապոնացիների մոտ: Մեկ ուրիշ հետաքրքիր դիտարկում. ճապոնացիներն իրենց տոնակատարումների ժամանակ, պարելիս, մի քանի մարդկանցով պատկերում են տարբեր գազանների, նույն թվում և առյուծին: Արևելյան Ասիայում առյուծներ չեն լինում, նրանց տարածման վերջին սահմանը հյուսիսից՝ Կովկասյան լեռներն են, իսկ արևելքից՝ Իրանական սարահարթը: Ավելի արևելք ամենահզոր գազանը վագրն է: Ենթադրվում է, որ առյուծի մասին ճապոնացիները լսել են եվրոպացիներից: Բայց մինչև վերջին դարերը ճապոնացիների շփումները եվրոպացիների հետ եղել են շատ սահմանափակ, իսկ նման տոնակատարումների ավանդույթը շատ հնուց է գալիս և երկրորդը, լսելով որևէ գազանի մասին, այն ազգային ավանդույթների մեջ չեն մտցնում: Մանավանդ որ նրանց պատկերած առյուծը ոչ մի նմանություն չունի առյուծի հետ: Մնում է ենթադրել, որ առյուծի՝ որպես ամենահզոր գազանի մասին նրանց ավանդույթը գալիս է իրենց նախորդներից՝ այնուներից: Արիների համար առյուծը՝ իր «առ» (ար) արմատով համարվել է գազանների արքան և պարերի ժամանակ գազաններ պատկերելիս առյուծին անհնար էր անտեսել: Մյուս կողմից՝ ճապոնացիների նախորդների՝ այնուների կապի հնարավորությունը հին աշխարհի հետ չի կարելի անտեսել: Այսինքն, նրանք իրազեկ են եղել հին աշխարհի կարևոր անցուդարձերին, և այդ կապը կտրվել

Է ներկայիս ճապոնացիների նախնիների ներխուժման հետևանքով: Այսպես, ներկայում էլ ճապոնիայում գոյություն ունի լեզենդ, համաձայն որի, Քրիստոսի փոխարեն հռոմեացիները խաչել են նրա եղբորը, իսկ Քրիստոսը փախել է ճապոնիա, նույնիսկ ցույց են տալիս նրա բնակավայրը: Եվ դա՝ ներկայիս ճապոնացիների նախնիների ներխուժումից մոտ հինգ հարյուր տարի առաջ (կարելի է նշել նաև մեկ այլ փաստ. հայերեն «այո», բարբառային ձևով «իա», իսկ ճապոներեն՝ «հայ»):

Յավանաբար արիների տարածման հետ է կապված նաև Նոյան տապանի առասպելի տարածումը աշխարհի տարբեր ազգերի մոտ, տարբեր պատումներով ու հերոսներով, բայց նման բովանդակությամբ:

Յատկանշական է, որ արիների հետքերը առավել ցայտունորեն հայտնաբերվում են Եվրասիա մայրցամաքի ծայրամասերում՝ Պիրենեներում, Ֆրանսիայում, Անգլիայում, ճապոնիայում, իսկ Կենտրոնական Ասիայում՝ Չինալայների ստորոտներում. այսինքն, այն վայրերում, որտեղ իրենց արշավանքների ժամանակ արիները, հանդիպելով բնական արգելքների, ստիպված կանգ են առել, և, բնականաբար, այդ վայրերում մեծ են եղել նրանց կուտակումները: Եվ այդ երկրների կամ ժողովուրդների անվանումները ևս սերտորեն առնչվում են «արի» անվան հետ (այնու՝ ճապոնիայում, Գաղիա՝ դ-ո ձևափոխմամբ, Գերմանիա կամ Ալամանիա, Իոլանդիա նախկինում Եյրե կամ Այրե և այլն):

Վերջում կարելի է բերել նաև հետևյալ դիտարկումը: Ինչպես հետագա բոլոր աշխարհացունց արշավանքների, այնպես էլ արիների պարագայում, արշավանքի դուրս ելած ժողովրդին ուղեկցել են նրանց ենթակա հարևանները: Բայց հետաքրքիրն այն է, որ ուղեկիցների թողած առարկայական հետքերը սովորաբար ավելի մնայուն են, քան արշավանքում գերիշխող և դեկավարող ժողովրդինը: Ալեքսանդր Մակեդոնացու և մակեդոնացիների արշավանքներին մասնակցում էին մեծ թվով հույներ: Հետագա դարերում մակեդոնացիների մասին հիշատակումներ չկան, իսկ հույների ազդեցությունը Արևելքի քաղաքականության վրա շատ զգալի էր: Մոնղոլ-թաթարների արշավանքները դեկավարում էին մոնղոլները, բայց աշխարհի հետագա քարտեզի վրա մոնղոլները մնացին միայն Մոնղոլիայում,

# Ա.Ե Ք ա ղ ա ք ա կ ր թ ո ւ թ յ ա ն



Յացը, մետաղը, հաղորդակցության միջոցները, գիտությունը ներկայիս քաղաքակրթության հիմքերն են: Փաստերը ցույց են տալիս, որ դրանք առաջին անգամ մարդն օգտագործել է Յայկական բարձրավանդակում, և հավանական է՝ գալիս են Նոյից ու իր գավակներից:

- Ըստ հնագետների ժամանակակից ուսումնասիրությունների տվյալների, ցորենի մշակումը սկսվել է Յայաստանից մինչև Եգիպտոս տարածված գոտում՝ այսպես կոչված «ոսկյա կիսալուսնում»: Բայց, որ այն առաջին անգամ Յայաստանում է մշակվել, հիմնավորվում է այն իրողությամբ, որ վայրի ցորենը աճում է միայն Յայաստանի որոշ վայրերում: Յետաքրքիր է, որ դժվար թե աշխարհում գտնվի այնպիսի կարևոր բույս, որը վայրի վիճակում աճի միայն նման սահմանափակ տարածքում: Դա ակամայից միտք է հուշում այդ վայրում Նոյի հայտնվելու և Միջագետքի կործանված քաղաքակրթության ժառանգման կապի մասին:

Ծատ այլ մշակովի բույսեր էլ կան, որոնց հայրենիքը համարվում է Յայաստանը. օրինակ ծիրանը և այլն, բայց ամենից հետաքրքիրը խաղողի մշակումն է, որի գինուց, ըստ Աստվածաշնչի, հարբել էր ինքը՝ Նոյը: Խաղողից գինի ստանալը վկայում է խաղողագործության լավ իմացության մասին, որը նորից հուշում է գյուղատնտեսության բնագավռում նախաջրեղեղյան քաղաքակրթության ժառանգման մասին: Նույնն են հուշում նաև անասնապահության վերաբերյալ եղած հնագիտական տվյալները: Ընդ որում, հետաքրքիրն այն է, որ ընտանի կենդանիների ուսկորների ամենահին մնացորդները գտնվել են հիմնականում ցորենի մշակման տարածքներում:

- Յնագույն մետաղամշակման վառարանների (բրոնզի և երկաթի ձուլման մի քանի հազար տարվա հնության) հետքեր են հայտնաբերվել Մեծամորում, չնայած այլ երկրների հետ համեմատած՝ Յայաստանն այնքան էլ հարուստ չէ մետաղով: Եվ նորից Աստվածաշնչում պղնձի ու երկաթի մշակման մասին հիշատակելիս նշվում է Նայիդ երկիրը՝ Եղեմից արևելք, (իիշենք, որ Յայաստանը հնում անվանվել է նաև Նայիրի), որն համընկնում է Մեծամորի հետ: Իսկ աշխարհի ամենահին պղնձամշակման հետքերը գտնվել են Յայկական բարձրավանդակի հարավային մասում՝ Շանիդար վայրում, որոնց տարիքը հասնում է մինչև մ. թ. ա. 9500 տարվա:

- Քին հունական դիցաբանությունում հիշատակվում է կենտավրոսների՝ մարդածիերի մասին: Որ նրանք խորթ էին հունական ազգային

Էռլիքանը, երևում է այն հակակրանքից, որ նրանք տածում էին կենտավրոսների հանդեպ, նրանց ներկայացնելով հիմնականում բացասական գժերով՝ կռվարար, հարբեցող և այլն (նկատենք, որ նույն հակակրանքով էին վերաբերվում նաև պատերազմի՝ Արես աստծոն): Պատմվում է նաև նրանց հետ Յերակլեսի կռվի մասին: Բայց միաժամանակ նշվում է նրանցից՝ Փոլոսի, Քեիրոնի իմաստնության մասին. ընդ որում, վերջինս եղել է Յերակլեսի բարեկամն ու ուսուցիչը: Նա եղել է նաև ուրիշ շատ հունական հերոսների ուսուցիչը՝ Ասկլեպեյոսի, Օրփեոսի, Յասոնի, Աքիլլեսի և այլն, այդ հերոսներին սովորեցնելով բժշկություն, արվեստ, ռազմական գործ և այլն: Այսինքն՝ հույները չսիրելով կենտավրոսներին, ստիպված էին ընդունել նրանց դերը իրենց հերոսներին դաստիարակելու գործում: Ենթադրվում է, որ կենտավրոսների մասին պատկերացումը եկել է ծի հեծած մարդու կերպարից, մանավանդ որ նման պատկերացման հնարավորության մասին գուգահեռներ կան: XV դարում, երբ իսպանացիները ափ իջան Յարավային Ամերիկայում, իրենց հետ տարել էին ծիեր: Եվ, երբ հեծյալը իջնում էր ծիուց, բնիկները սարսափահար էին լինում: Նրանք հեծյալին ծիու հետ ընդունում էին որպես ամբողջություն, իսկ ծիուց մարդուն իջնելը համարում էին կախարդություն:

Պատմության մեջ առաջին անգամ հեծելազորի մասին հիշատակվում է մեր թվարկությունից 1700 տարի առաջ Յայկական բարձրավանդակից արիական ցեղի՝ հյուքսոսների արշավանքի կապակցությամբ: Նրանք ծի հեծած և մարտակառքերով հարձակվեցին հզոր փարավոնների երկրի՝ Եգիպտոսի վրա, որտեղ ծանոթ չեն հեծելազորին և հեշտությամբ գրավելով՝ 110 տարի պահեցին իրանց իշխանության տակ: Նրանք կառուցեցին Ավարիս մայրաքաղաքը (հայերեն ավար բառից), նույնիսկ փորձեցին հիերոգլիֆները փոխարինել տառերով:

Բնական է, որ ծիերի ու մարտակառքերի կիրառումը արիներին հնարավորություն էր տալիս արագորեն տարածվել ամբողջ Եվրասիայով մեկ: Այստեղ արժե նաև ուշադրություն դարձնել չին իմաստունի հիշատակման վրա՝ արևմուտքից (Չինաստանի նկատմամբ) դեպի արևելք արշավող հեծյալների մասին (խոսքը մոնղոլների մասին չէր կարող լինել, քանի որ չինարենում նրանք ունեն որոշակի անվանում, հարձակվում էին հյուսիսից և ավելի ուշ ժամանակներում):

- Արիական լեզվի շատ տարրեր մտած են ներկայիս Եվրոպական ու ասիական տարրեր լեզուներում: Շատ բարեր ու արմատներ արտասանվում են նույն կերպ և նույն իմաստն ունեն: Յետաքրքիր է «արմ» (arm) արմատի օգտագործումը: Բոլոր լեզուներում այն կապված է գենքի, բանակի, գորքի հետ: Բնական է ենթադրել, որ այն կապ ունի արիների հետ: Նրանց արշավանքները պետք է լինեին զորական խմբերով:

Հայերը, լինելով Հայկական բարձրավանդակի, Արարատի շրջակայքի բնիկներ, հետևաբար և՝ արիների ուղղակի հետնորդներ, իրենց լեզվում, որը համարվում է հնդեվրոպական լեզվի առանձին ինքնուրույն ճյուղ, շատ են պահպանել արիական լեզվի բառերն ու արմատները (պետք է նշել, որ հայերենի խորը վերլուծությունը, որը ներկայումս կատարվում է առանձին էնտուգիաստների կողմից, ուրվագծում են զարմանալի մաթեմատիկական օրինաչափություններ):

- Ներկայումս գիտական շրջաններում ընդունված է այն կարծիքը, որ Երկնքի կենդանակերպի համաստեղություններին և առանձին պայծառ աստղերին անվանումներ տալու սովորույթը Հայաստանի տարածքից է անցել շումերներին (որոնցից ժառանգել են բաբելացիները) և հետո տարածվել է ամբողջ աշխարհում՝ թարգմանվելով համապատասխան լեզուներով: Հայկական բարձրավանդակում կատարվել են գիշերային երկնքի մշտական դիտարկումներ, և, բնականաբար արիների արշավանքների ժամանակ շատ են պետք եկել այդ գիտելիքները: Բացի վերը նշված Քարահունչից, ավելի վաղ շրջանի աստղադիտարան է հայտնաբերվել նաև Մեծամորի մոտ, որտեղ ժայռի վրա փորագրված կողմնացույցը մեծ ճշգրտությամբ ցույց է տալիս աշխարհի կողմերը: Մյուս կողմից արույր, երկար ծովելու և մշակելու համար անհրաժեշտ էր համապատասխան գիտելիքներ: Հյուքսոսները Եգիպտոսում փորձել են ներդնել տառեր. նշանակում է նրանք ունեցել են իրանց տառերը այն ժամանակ, երբ նրանց ժամանակակից Եգիպտացիները օգտագործել են հիերոգլիֆներ, իսկ մյուս ժողովուրդները՝ սեպագրեր: Հավանական է, որ Մեսրոպ Մաշտոցի կողմից արիական տառերի մեծ մասը փրկվել և օգտագործվել են ներկայիս հայերենի այբուբենում: Եվ իրոք, եթե ուշադիր դիտենք հայերեն տառերը, դրանց մեծ մասի մոտ նկատվում են հետաքրքիր օրինաչափություններ: Օրինակ, որոշ տառեր (փոքրատառ)՝ ա, բ, գ, դ, ե, ի, ր, լ և այլն, կազմված են նույն տարրերից և իրենց ձևով կարծես կրկնում են բերանի և նրա առանձին մասերի՝ շրթունքների, ըմպանի, լեզվի փոխադարձ դասավորության ուրվագծերը՝ համապատասխան տառերն արտասանելիս: Նման բան այլ լեզուներում չի նկատվում (հետաքրքիր է, որ Մեսրոպ Մաշտոցի տված տառերում կային ավելորդ պոչիկներ ու գծիկներ, որոնք շատ շուտով վերացել են, կարծես վերգտնելով նախնական ձևերը):

Կարելի է նաև հիշատակել, որ շումերներն ու նրանց ժամանակակիցները Հայկական բարձրավանդակը անվանել են «սուրբ օրենքների երկիր», և, որ շատ հավանական է՝ օգտվել են այդ օրենքներից:

(Եվս երկու հետաքրքիր տեղեկություններ.

- սաունաների սիրահարների համար. քանի դեռ օճառը հայտնա-

# Ա.զ հ մ ա ս տ ն ո ւ թ յ ա ն

Քերոնի մասին հիշատակությունը հունական առասպելներում հուշում է արիների կողմից իրենց առաքելության իրականացման գործելակերպի մասին (այստեղ արժե ուշադրություն դարձնել «Քերոն» անվան և հայերեն բերթող՝ ուսուցիչ, գրող, ինչպես նաև «կերտել» բառերի՝ նույն «քեր» կամ «գիր» արմատի վրա): Փաստորեն, նրանք ապրելով հունական միջավայրում, չնայած բնիկների հետ հաճախակի մանր ընդհարումների, որը բնական է նույն վայրում տարբեր ազգերի ու քաղաքակրթությունների համակեցության պայմաններում, հույներից ընտրել են առավել ընդունակ աշակերտներին, և նրանց հաղորդել իրենց իմաստնությունն ու գիտելիքները: Այդ աշակերտները, իրենց ուսուցիչներից սովորածի շնորհիվ, հետագայում դարձել են հունական հերոսներ և կիսաստվածներ, և նրանց կերպարները մեծ դեր են կատարել ոչ միայն հույների, այլ ամբողջ մարդկության գիտակցական ու բարոյական դաստիարակման գործում: Բնական է ենթադրել, որ արիների վարկելակերպը նույնն է եղել նաև այլ ցեղախմբերի նկատմամբ, չնայած խորը պրատումներ են պետք դրանց հետքերը մյուս ազգերի հնագույն ավանդույթներում հայտնաբերելու համար: Այսինքն, արիներն իրենց արշավներում, տեղավորվելով որևէ ցեղի տարածքում, տեղի բնիկներից ընտրել են անհատների և նրանցից ուսուցիչներ են դաստիարակել ամբողջ ցեղի համար (նույն վարկելաձևով, որ որդեգրել էին միսիոներները Աֆրիկայում կամ Ամերիկայում, և կատարում են ներկայիս ուսուցիչները նոր հայտնաբերվող մարդկային վայրի ցեղերի նկատմամբ, նրանց ժամանակակից

# Ա.է. Ե դ ե մ ի


Հետաքրքիր է նաև Ադամի և Եվայի մասին աստվածաշնչյան պատմությունը: Արարիչը, ստեղծելով նրանց, բնակեցրեց Եդեմի պարտեզում, որը գտնվում էր Տիգրիս, Եփրատ, Փիսոն (Արա՞ք) և Գեհոն (Քո՞ւ) գետերի ակունքներում, որը ծշտորեն համընկնում է Հայկական բարձրավանդակի կենտրոնական մասի հետ: Այնտեղից

Նրանք վտարվեցին իմաստնության ծառի պտուղը ճաշակելու պատճառով: Նշանակում է՝ իմաստնության ծառը, մարդկության իմաստնությունը, որպես այդպիսին, ծագել է այդ տարածքից: Աստվածաշնչում հավաքված են հնագույն տարբեր ցեղերի ու ժողովուրդների ավանդույթներն ու առասպելները, որոնք այլաբանորեն, տվյալ ժամանակի պատկերացումներով, նկարագրել են իրական հիմք ունեցող, իրականում տեղի ունեցած երևույթներն ու դեպքերը: Եվ եթե հաշվի առնենք, որ արիների արշավանքներն ու նրանց կողմից իմաստնության տարածումը տեղի է ունեցել Աստվածաշնչը գրի առնվելուց մի քանի հազար տարի առաջ, ապա պարզ է, որ այդքան ժամանակը բավական էր, որպեսզի այդ արշավանքները և մարդկության ճակատագրի վրա դրանց հետևանքները ստանային դիցաբանական, մարդկային երևակայությանը և պատկերացումներին հարիր, այլաբանական ձևակերպումներ: Նույն պատմության մեջ տրվում է նաև, որ Եղենում, քերովքեների պաշտպանության տակ, գտնվել է նաև կենաց ծառը՝ անմահության պտուղով, որը ճաշակելը մարդկանց (իմաստնության պտուղը ճաշակելուց հետո) կիասցներ աստվածների մակարդակին: Նշենք նաև, որ հնագույն պարսկական ավանդույթներում Եղեմը անվանվել է նաև Արամի այգի, (այսինքն՝ հայոց հնագույն նահապետի անունով): Այստեղ նկատվում է նաև մի զարմանալի զուգադիպություն: Եվ մարդկության ծնունդը (Արամի ու Եվայի ստեղծումը), եւ վերածնունդը (Զիուսուդրա-Ուտնափիշտիմ-Նոյի տապան) սկսվում է նույն Յայկական բարձրավանդակից. դրան գումարած «Սուրբ օրենքների երկիր» անվանումը և նման այլ փաստարկները բավականին շատ են՝ պատահական համարվելու համար, նույնիսկ եթե հարցին մոտենանք շատ կասկածամտորեն...


Իսկ, թե ինչ իմաստ կա կենաց ծառը ևս նույն վայրում տեղադրելու մեջ, արժե մտորել:

Շատ այլազգի հավատացյալների մոտ նկատվում է (հասկանալի պատճառներից ելնելով) ներքին դժգոհություն նշվածի վերաբերյալ, որն արտահայտվում է լրության մատնելու կամ հետաքրքրության բացակայությամբ՝ այդ փաստերի մասին: Որոշ մասն էլ դրախտը պարզապես պատկերացնում է երկնքում, մտքում կատարելով Աստվածաշնչի սրբագրում կամ Արարչի, իրենց կարծիքով, կատարած սխալի ուղղում: Դժբախտաբար նման միտումը միակը չէ և ոչ

Բ.



Բ.ա.



Յ ա յ կ ա կ ա ն

- Որ Յայկական բարձրավանդակն արիների բնօրանն է, հայտնի էր հնագույն ժողովուրդներին: Յնդկական ավանդույթների համաձայն, արիները Յնդկաստան են եկել արևմուտքից, Եվրոպական ցեղերի կարծիքով՝ արևելքից, իյուսիսային ժողովուրդների համար՝ հարավից, Միջագետքում իրար հաջորդող ժողովուրդների կարծիքով՝ հյուսիսից: Բազմաթիվ փաստերը՝ մարդաբանական, լեզվաբանական, աշխարհագրական, պատմական և այլն, ինչպես նաև հնադարյան ավանդույթներն ու առասպելներն իրար հետ համադրելով՝ այդ կարծիքին են հանգել ոչ-հայ մասնագետները: Բայց ահա համընդհանուր ընդունումը հանդիպում է մեծ դիմադրության: Այդ փաստերի դեմ պայքարում են բազմաթիվ մեթոդներով, բազում դարերով, անընդհատ և հիմնականում տվյալ ժամանակաշրջանի հզոր պետությունների, տվյալ պահին միջազգային քաղաքականությանը տոն տվող դիվանագետ-քաղաքագետների նախաձեռնությանը: Նախ, ինչպես վերևում նշվեց, «արի» անվանումը խուսափողաբար փոխարինելով «հնդեվրոպացի» անորոշ անվանք և, հզորների ազգային մեծամոլությունից ելնելով, հետո այդ «հնդեվրոպացիների» բնօրբանը տեղափոխել են սեփական երկրի տարածք, կամ հեռացնելով, տանելով՝ էլ Յիմալայներ, էլ Յարավային Ուրալ, էլ Բալկաներ, այսինքն՝ հնարավորին չափով հեռու Յայկական բարձրավանդակից: Եսկ Յայկական բարձրավանդակը որպես արիների բնօրբան հաստատող գիտնականները փաստերը բերելիս «խոհեմաբար» օգտագործում են Յարավային Կովկաս կամ Անդրկովկաս, նույնիսկ Թուրքիա, Միջագետքից հյուսիս կամ Արևելյան Անատոլիա անվանումները: Եթե հազարամյակներ շարունակ այդ տարածքն ամբողջ աշխարհը անվանում էր Յայաստան, ապա վերջին տարիների քարտեզներում, մամուլում, դիվանագիտական փաստաթղթերում խորիմաստորեն հիմնավորվել է Արևելյան Անատոլիա արտահայտությունը (այդ օգտագործողների մակարդակին բնորոշ անվանում հունարեն Անատոլիա նշանակում է արևածագի երկիր, այսինքն Արևելյան

Անատոլիա՝ արևելյան արևածագի երկիր: Երևի այդ նորամուծության հեղինակները կարծում են, թե գոյություն ունի նաև արևածագ. իիրավի, չափազանց ջանասիրությունը երբեմն հասցնում է զավեշտի):

Այստեղ, իհարկե, չի կարելի չնշել S. Գամկրելիձեի և Վ. Իվանովի 80-ական թվականներին հրատարակված «Հնդեվրոպական լեզուն և հնդեվրոպեցիները» ծավալուն աշխատության մասին, որտեղ տարաբնույթ փաստերի համակողմանի վերլուծության շնորհիվ ապացուցել է հնդեվրոպացիների (արիների) նախահայրենիքը Քուռ-Արաքսի միջակայքում, այսինքն Հայկական բարձրավանդակում տեղադրված լինելը:


- Մեկ ուրիշ երևույթի մասին ևս: Ներկայիս պոպուլիստական (ոչ-մասնագիտական, մարդկանց՝ գիտության նվաճումները քարոզելու և հետաքրքրասիրությունը բավարարելու միտում ունեցող) գրականության մեջ սկսել են հպանցիկ իիշտառակել արիների մասին: Սկսել են «արի» բառի հետ, միանգամայն իրավացիրեն, կապել ալանների (օսերի) անվան ծագումը (այստեղից էլ Ալանանիա՝ Գերմանիայի Փրանսերեն անվանումը), գալլերի՝ Փրանսիացիների նախնիների անվանումը և այլն), իրան երկրի անունը, Իռլանդիա (նախկին Էյրե) անունը, նույնիսկ Ալլահ անվանումը և այլն, բայց ոչ երբեք Արմենիան (ամենաշատ կույր է նա, ով չի ուզում տեսնել): Ըստ հռոմեացի, հույն, ինչպես նաև հայ պատմիչների՝ Հայաստանի՝ Նախիջևան (առաջին Իջևան), Ակորի (ուժի բառից, որտեղ Նոյը ուժի ծառ է տնկել) և այլ շատ տեղանուններ կապված են Նոյան տապանի առասպելի հետ: Այդ տեղանունների անվանումները եղել են Աստվածաշունչը գրելուց դեռ շատ առաջ, այսինքն՝ այդ առասպելը Հայկական բարձրավանդակում հայտնի է եղել խորը հնադարից, իսկ անվանումները, կապված առասպելին առնչվող այս կամ այն երևույթի հետ, հուշում են Նոյի գործածած լեզվի ու արիների լեզվի մոտ ազգակցության մասին:

- Հետաքրքիր եզրակացությունների կարելի է հանգել նաև որոշ հայկական քաղաքների անունների վերլուծությունից: Այսպես, որոշ հնագույն պատմիչներ երևանի անունը կապում են Նոյի պատմության հետ. երբ ջրիեղեղից հետո առաջին անգամ երևաց ցամաքը, Նոյը բացականչեց՝ «Երևաց», այստեղից էլ երևացող ցամաքի անվանումը՝ Երևան: Սակայն նման բան Աստվածաշնչում գրված չէ, և դա միայն գեղեցիկ ենթադրություն է, որը չի համատեղվում Նոյի բաց թողած աղավնու պատմության հետ: Նոյը, փակված լինելով տապանում, ջրերը հետ քաշվելու մասին իմացավ իր բաց թողած աղավնու միջոցով և չեր կարող նման բացականչություն անել: Ավելի

հավանական է Երևան անվան պատմական վերլուծությունը: Հնագույն պատմիչների աշխատություններում Երևան տեղավայրի անվանումը գրվել էր նաև Երիվան, Արիվան, Այրիվան: Եթե նկատի ունենանք, որ «վան» արմատը հայերենում նշանակում է շեն, քաղաք, ավան, ապա բառի սկզբնամասը հայերեն «արի» բառն է ա-է տառափոխությամբ, կամ առանց դրա: Այսինքն, Երևան պարզապես նշանակում է արիների ավան կամ քաղաք: Մյուս կողմից, այն բլուրը, որի վրա վերջին ժամանակներս հայտնաբերվեց այսպես կոչված «ուրարտական» Երեբունի ամրոցը, շրջակայքի ժողովուրդը հնագույն ժամանակներից անվանում էր Արինբերդ, այսինքն արիների բերդ (Ա-սեռական վերջավորություն է, որը մինչև հիմա պահպանվել է արևմտահայերենում): Երևանի՝ հին և կարևոր բնակավայր լինելու մասին վկայում է թեկուզն այն, որ նա անհիշելի ժամանակներից շրջապատված է եղել հզոր ամրոցներով՝ ծիծեռնակաբերդը (որի տեղը, հայտնի է, բայց առայժմ չի ուսումնասիրված, Աղվեսաբերդը, որի տեղը ենթադրվում է միայն, հետագայում կառուցվեց նաև Թեյշենբանի ամրոցը): Իսկ Երեբունի ամրոցը, որի կառուցման վերաբերյալ արձանագրություն է պահպանված, հավանական է հնագույն վերանորոգված Արինբերդն է:

Այսինքն, Երևանը շատ անգամ ավելի հին, արիական բնակավայր է, քան նշված արձանագրությունն է: Դա բնական է, քանի որ անմիջապես գտնվում էր Արարատի փեշերին և Նոյի ժառանգների կառուցման բնակավայրերից ամենաառաջինն էր: Նույնը կարելի է

## Բ. Ա Արարատ



Վերը նշվածներից հետևում է, թե արիները ինչպիսի մեծ դեր են կատարել մարդկային քաղաքակրթությունը իրոք մարդկային դարձնելու գործում և ինչպիսի դարավոր ու համառ պայքար է մղվում այդ դերը լռության մատնելու, առհասարակ, նրանց վերաբերյալ ամեն ինչ նենգափոխելու, փաստերն աղավաղելու ուղղությամբ: Այդ փորձերը մի նպատակ են հետապնդում՝ թույլ չտալ մարդկությանը ծանոթանալու իր քաղաքակրթության արմատներին, մարդկության զարգացումը տանել արհեստական հիմքերի վրա խարսխված, մարդկանց, բայց ոչ Արարչի կողմից նախանշված միտումնավոր ուղղությամբ, որը պատերազմներից ու թշնամանքից,

կոտորածներից ու արյունահեղությունից բացի, այսօր մարդկությանը հասցրել է կործանման եզրին՝ նստեցնելով միջուկային ական-ների վրա:

- Սովորաբար որևէ ծրագիր իրագործելիս օգտագործվում է նա-խորդ փորձը: Խնդրեմ. Զիուսուտրան փոխարինվում է Ուտնափիշտի-մով, Ուտնափիշտիմը՝ Նոյով, արիները փոխարինվում են «հնդեվրո-պացիներով», Արարատյան պետությունը՝ Ուրարտուով, Չայկական բարձրավանդակը՝ Արևելյան Անատոլիայով, լոռության է մատնվում Արմենիան... Իսկ նույն Աստվածաշնչում ոչինչ չի ասվում արիների արշավանքների մասին:

- Այդ նույն մեթոդը վաղուց կիրառվել էր իին Եգիպտոսում: Մարդ-կային պատմության ամբողջ ընթացքում իշխանության համար մշտա-կան պայքար է մղվել աշխարհիկ և հոգևոր վերնախավի միջև (ինչ-պես, ասենք, կրոնական ղեկավարության և միապետների կամ ֆեո-դալների միջև, ինչու չէ, նույն բանը կարելի էր նկատել նաև համայնա-վարական պետություններում՝ կուսակցական ղեկավարության և գործնական ղեկավարման ներկայացուցիչների միջև, նույն կերպ՝ նաև Եգիպտոսում՝ քրմերի ու փարավոնների միջև, և տարբեր ժամա-նակաշրջաններում հաղթել է այս կամ այն ոլորտի խմբավորումը): Փարավոններն իրենց անունները հավերժացնելու, ինչպես նաև հան-դերձյալ կյանքում իրենց իշխանությունը ապահովելու համար կառու-ցել են հսկայական բուրգեր ու նաև Սֆինքսը, որոնք իրենց ահռելիու-թյամբ ստվեր էին գցում քրմական տաճարների հեղինակության վրա և գերակայություն ապահովում քրմերի նկատմամբ նույնիսկ հանդեր-ձյալ կյանքում: Քրմերը աշխատում էին նվազեցնել այդ բուրգերի նշա-նակությունը, մոռացության մատնել փարավոնների անունները: Իշխանությունը գրավելուց հետո, դա նրանց հաջողվեց, և հույն պատ-միչներին մնում էր միայն արձանագրել հսկա բուրգերի առկայությու-նը՝ առանց հասկանալու դրանց դերը: Նույնիսկ այն տարածքը, որտեղ կառուցված էին բուրգերը, վերանվանվեց պարզապես «ոչխարների արոտավայր»: Իսկ ահա Սֆինքսը՝ իր խորհրդավոր հայացքով ու ահռելիությամբ, շատ հնարավոր էր, մարդկանց մեջ կառաջացներ հե-տաքրքրություն, և ի վերջո կբացահայտվեր հնագույն փարավոնների առեղծվածները: Եվ քրմերը գտան լուծումը՝ այն ծածկեցին ավագով և վերածեցին ավագաբլուրի, այնպես, որ նույնիսկ մ. թ. ա. 5-րդ դարում Հերոդոտը այն չէր նկատել: Սֆինքսը բացվեց միայն 1-ին դարերում (իմիջայլոց նույն զավեշտական պատմությունը կրկնվեց նաև վեր-ցերս. 80-ական թվականներին բացահայտվեց, որ Ադրբեջանի տա-րածքում, նույն ծևով, հողով ծածկել էին մի հնագույն հայկական եկե-ղեցի):

Բայց Արարատը Յայկական բարձրավանդակում է, Արարատ և արի անունների կապը այժմ դպրոցականն էլ կնկատի, իսկ դրան ավելանում են հայերեն Արարիչ ու Արև անունները: Ինչն է ավելի բնական, քան իրար հետ Արարչական կապով կապված անունների միևնույն՝ հիմքային արմատի առկայությունը...

Զրիեղեղը, սահմանափակված լինելով Միջագետքով, զրի բարձրությունն էլ չեր կարող լինել այնքան, որ ջրից դուրս չմնային, այլ ավելի մոտ լեռնագագաթներ, ասենք Յայաստանի հարավում կամ իրանում: Նշանակում է՝ Նոյի տապանի համար Արարատ լեռան հանգրվան ընտրելն այլ իմաստ ևս ուներ:

Արարատն իր կառուցվածքով հսկա մեծ և փոքր բուրգերի զույգ է: Բուրգն իր ձևով ունի տիեզերական Արարչական խորհուրդ: Իզուր չեր, որ Յին Եգիպտոսում, որտեղ փարավոններին վերագրում էին աստվածային ծագում, նրանց գերեզման-կառույցները պատրաստում էին հսկայական բուրգի ձևով, նույնն է նաև Ամերիկայում՝ Մայաների մոտ: Եկեղեցիների ու մեջիտների գմբեթները, Կրեմլի աշտարակները և այլ կառույցներ ևս պատրաստում են բուրգի տեսքով: Միայն վերջերս են նկատել և ուշադրություն դարձրել բուրգ՝ Երկրաչափական մարմնի անբացատրելի հատկություններին: Պարզվում է, բրգաձև շինության ներսում մարդիկ ինչ-որ խորհրդավոր ինքնազգացում են ունենում, առաջանում է ինչ-որ ոգեղենություն, ջերմեռանդություն: Բուրգի ներսում մարդը զգում է մտքի կենտրոնացում՝ ֆոկուսացում: Այն կարծես հավաքում, միավորում ու երկինք է հաղորդում հավատացյալների աղոթքները, մտքերը, ցանկությունները, ինչպես ոսպնյակը՝ լույսին: Մյուս կողմից, կարծես բուրգի

## Բ.գ. Առաքելության

Իրենց ճանապարհին տեղաբնակ ցեղերին հեշտությամբ հաղթելով, խառնվելով պարտվածների հետ, նրանց փոխանցելով իրենց գիտելիքները, ոգեղեն ու արարչական կերպարը, հազարավոր կիլոմետրերով կտրված լինելով իրենց բնօրրանից և տեղաբնակների համեմատությամբ լինելով սակավաթիվ, արիները շուտով կորցրել են իրենց շատ սովորույթները, լեզուն, մարդաբանական տիպը և ծովական անհետացել են՝ որպես ինքնուրույն ցեղախմբեր, տալով այդ ժողովուրդներին իրենց լեզվից շատ բառեր և իրենց «արիա-

## կան» անվանումը:

- Բնական է, որ այդ արշավանքները ուղեկցվել են դիմադրող ու անհնագանդ ցեղերի ոչնչացումով: Յայտնի է, օրինակ (այդ մասին ասվում է հնդկական լեզենդներում և հաստատվում է մարդկային մնացորդների գտածոներով), որ Միջերկրական ծովի ամբողջ ավագանը և ներկայիս Հնդկաստանի տարածքը բնակեցված է եղել սևամորթ որսորդներով: Որսի առատությունը և փարթամ բնությունը այդ ցեղախմբերի զարգացման համար փաստորեն արգելակիչ դեր են կատարել և նրանց համար արիների բերած գիտելիքները պարզապես ավելորդ էին, իսկ իրենք՝ արիները, զավթիչներ: Այլ խոսքով՝ համամարդկային սկզբունքներին հաղորդակցվելը, որ մտնում էր արիների առաքելության մեջ (անկախ իրենց կամքից), այդ ցեղերի համար ավելորդ էր: Նորից, եթե անդրադառնանք հետագա մարդկային ցեղի պատմական զարգացման գործընթացին, կնկատենք, որ նրանք իրենց զարգացման մակարդակով փաստորեն հավասար էին Աֆրիկյան սևամորթներին, կամ ամերիկյան հնդիկներին, երբ սկսվեց Աֆրիկայի և Ամերիկայի գաղութացումը: Յիշենք, թե քանի հարյուրամյակ պահանջվեց և ինչքան ցեղեր ոչնչացվեցին, մինչև որ մնացածները հասան ժամանակակից մարդկային քաղաքակրթության մակարդակին:


Սպիտակամորթ ցեղերը բնակվելիս են եղել ավելի հյուսիս, խստաշունչ պայմաններում, և արիների գիտելիքները իրենց գոյապահպանման համար գերազանց միջոց էին: Այդ հանգամանքը խթան հանդիսացավ նրանց հետ արիների ծուլվելուն և հզորանալով դեպի հարավ շարժվելուն: Այդ ծուլման և նոր ազգեր կազմավորվելու գործընթացին ևս կարելի է զուգահեռներ գտնել հետագա դարերում: Օրինակ, Ամերիկյան մայրցամաքը գաղութացվելուց և գաղութների անկախանալուց հետո, գաղութացնողները տեղաբնակների մշակույթից և սովորույթներից մեծ չափով ազդվելով ու նաև խառնվելով նրանց հետ, հեռացան իրենց նախնական ազգային կերպարից և նույնիսկ ազգագրագետները ստիպված են ընդունել, ասենք, արգենտինացու և մեքսիկացու տարբերությունը իսպանացուց, կամ ամերիկացու և կանադացու տարբերությունը անգլիացուց: Յավանական է, որ եթե ժամանակակից հաղորդակցման և տեղեկատվական միջոցները չկանեին, դարերի ընթացքում նրանք իրարից նույնքանով կտարբերվեին, որքանով ժամանակակից արիական (հնդեվրոպական) ազգերն իրարից: Արիների տարածման ձևը, թերևս, առավել նման է 10-րդ դարում ներկայիս Նորվեգիայի տարածքից դեպի Եվրոպա վիկինգների արշավանքներին: Նրանք ել, չունենալով պետականություն, հարծակվելով ու գրավելով մեծ

տարածքներ՝ Անգլիայից մինչև Կիևյան Ռուսիա, հիմնադրեցին տարբեր պետություններ և հետագայում ձուլվելով տեղացիների հետ և այդ տարածքներում վերացան որպես ազգ:

- Այստեղ պետք է նշել ժամանակակից որոշ «հումանիստների» բացասական վերաբերմունքը արիների անգթության վերաբերյալ: Այժմ ով կարող է նման հումանիստական մոտեցում ցուցաբերել մարդակերության կամ մարդկային գոհաբերության դեպքերի վերաբերյալ: Իսկ չէ՞ որ արիների արշավանքներից առաջ այդ բանը տարածված էր ամբողջ աշխարհում, և նման բաներ էին վերագրվում և հունական աստվածներին, և՝ Աստվածաշնչի մեջ գործող որոշ անձաց: Մյուս կողմից՝ այժմ ո՞վ է շեշտում՝ վիկինգների կամ գաղութարարների անգթությունները:

Արարիչը մարդկությանը պատժել էր՝ չարության, նրանց սրտի չար խորհուրդների, չար գաղափարների, անիրավության, այսինքն՝ օրինականության բացակայության համար: Ասել է, թե՝ նա գործել էր հանցագործին պատժելու սկզբունքով: Նույն սկզբունքով էին առաջնորդվում նաև արիները իրենց արշավանքների ժամանակ: Իսկ այն ցեղերին, որոնք ի վիճակի էին և ընդունեցին արիների գերազանցությունը, արիները սովորեցրեցին իրենց գիտելիքները (ինչպես հույներին), խառնվեցին նրանց հետ և հիմք դրեցին բազմաթիվ արիական ազգերի ծևավորմանը:

- Անդրադառնալով ներկայումս արիական համարվող գաղափարախոսություններում արծարծվող արիական, կիսաարիական, ոչ-արիական հատկանիշներ ազգերին վերագրելու ռասիստական միտումներին, պետք է նշել, որ արիականությունը հիմնված է ոգեղեն սկզբունքների վրա, այն ոչ մի աղերս չունի ազգության, ռասայի, ծագումի հետ: Եվ արիական համարվող ու չհամարվող ազգերի մեջ կարող են լինել մարդկային, բարոյական և ոգեղեն կերպարով իսկական արիներ և անձինք, որոնք մնում են նախնադարյան մարդու մակարդակին՝ որքան էլ փորձեն հպարտանալ իրենց արիական



Այսպիսով, Յնդկաստանից մինչև Ատլանտյան օվկիանոս՝ տարբեր ցեղերին ու էթնիկական խմբերին խառնվելով, արիները տարբեր ազգերի ձևավորման նախապայմաններ ստեղծեցին: Իսկ Յայկական բարձրավանդակում՝ արիների բնօրրանում, մնացին այնքան, որքան հողը հնարավորություն ուներ կերակրելու այն ժամանակվա պայմաններում, և նրանք էլ դարձան հայերի նախնիները: Նոյն վախճանվեց ու թաղվեց Արարատին մոտ (Նախիջևանում), մահացան նրա զավակները, բազմացավ նրա սերունդը, և Յայկական բարձրավանդակը դարձավ նրանց հայրենիքը: Բայց դարերի ընթացքում ենթարկվելով իրենց արի նախնիների օգնությամբ կազմավորված, իմաստնացած ու հզորացած այլ ազգերի մշտական հարձակումներին, խարդավանքներին, բռնություններին, ի վերջո կամաց-կամաց թուլացան, կորցրեցին իրենց բնօրրանի մեծ մասը: Եվ դա միայն այն պատճառով, որ նվաճելով մոտ ու հեռու ցեղերին, նրանք իրենց առջև նպատակ չեին դրել ոչնչացնել կամ ուժացնել նրանց: Ազգային ճակատագրով Արարիչը նրանց վերապահել էր ուսուցչի դեր: Երբ հյուքսոսները գրավեցին Եգիպտոսը, նրանք Եգիպտացիներին սովորեցրին իրենց ռազմական արվեստը, ձի հեծնելն ու մարտակառքեր օգտագործելը, և Եգիպտացիները մի հարյուրամյակ հետո հեշտությամբ նրանց քշեցին Պաղեստին, որտեղ էլ նրանք կուլ գնացին սեմիտական միջավայրում: Չնայած հույների հակակրանքին, Քեիրոնը եղավ նրանց համարյա բոլոր հերոսների ուսուցիչը և իր առաքելությունը ավարտած համարելով, կատարեց և վերջին անձնազնությունը՝ անցավ խավարի թագավորություն՝ Պրոմեթեսի փոխարեն:

- Մշտական հարձակումների, նվաճվելու և ազատագրվելու ժամանակահատվածներում՝ փոխազդեցությունների միջոցով արիների անմիջական սերունդները դարերի և հազարամյակների ընթացքում իրենց սովորույթներում, լեզվում, առասպելներում և մանավանդ ոգեղեն կերպարում պահպանեցին արիական սկզբունքների մեծ մասը, և դա նրանց օգնեց հաղթահարել բազում արիավիրք-

**ԱԵՐԸ և հարատևել:** Շատ ազգեր, ստեղծելով աշխարհակալ պետություններ, համառությամբ փորձելով հայերի մեջ մեղնել արիական ոգին, ի վերջո իրենք վերացան, որովհետև Արարչի կամքը փորձեցին փոխարինել իրենց կամքով: Իսկ ծագումով շումերներից ու բաբելացիներից էլ հին հայերը պահպանեցին իրենց ինքնությունը: Այդ երևույթն այս կամ այն կերպ փորձում են բացատրել տարբեր գիտնականներ, բայց դա ունի բնական ու պարզ բացատրություն: Դայ ազգի կազմավորման, ազգային բնավորության ու կերպարի ձևավորման հիմքում դրված են արիական սկզբունքները, որոնք նրա օրիհասական պահերին ոգի են տվել և Արարչական ուժ, իսկ նրա թուլացման պատճառը եղել է օտար ազդեցությունների ներթափանցումը: Այդ ազդեցությունները այս կամ այն չափով խաթարելով հայերի ազգային կերպարը, չեն կարողացել խաթարել արիական ոգեղեն հիմքերը, որոնք պահպանվում են ենթագիտակցության ոլորտում:

- Երբ բաղաքականության մեջ անբարոյականությունը հասնում է անամոթության, նա այլևս հարկ չի համարում թաքցնել իր էությունը, գործում է բացահայտ՝ արիամարհելով ողջախոհության բոլոր չափանիշները: Երբեք չինացին կարիք չի զգում ապացուցելու, որ ինքը չինացի է, եթովպացին՝ որ ինքը եթովպացի է և այլն: Բայց ահա հայը (արմենը) չկամության, անբարյացակամության և նենգափիխումների մթնոլորտով շրջապատված, հաճախ է ստիպվում ապացուցել իր արիական ծագումը: Ընդ որում, նման մթնոլորտը ներմուծվել է նաև ներազգային միջավայր: Եվ դա բացատրվում է ոչ միայն դրսից դեկավարումով, այլև ներսի խորագետ իշխանավորների ստորաքարշությամբ, համապատասխան մասնագետների անվտահությամբ ու ազգային հպարտության բացակայությամբ:

- Մինչդեռ որոշ բացառություններով, բոլորը հայերին համարել են արմեններ՝ հենց իրենց ազգային ինքնագիտակցության պահից: «Արմեն» նշանակում է արի մարդ (մեն արիական արմատ է, որ լեզուների մեծ մասում նշանակում է մարդ, օրինակ. սպորտսմեն-սպորտով զբաղվող մարդ, բիզնեսմեն-բիզնեսով զբաղվող մարդ՝ թուրքմեն-թուրք մարդ, պոլիսմեն, բարմեն և այլն): Բայց ահա հայերն իրենց «արմեն» չեն անվանում: Դայագետները տարբեր լեզվաբանական խճված մեթոդներով փորձում են կապ հաստատել «արմեն» ու «հայ» անվանումների միջև, ավելի խճելով հարցը: Բայց ամենից պարզն ու բնականը այդ երկու բառերի բխեցումն է միևնույն՝ «հայր» բառից: Նախ հայերի և բոլոր հնագույն ազգերի մոտ հայրը եղել և մնում է որպես նահապետ, անառարկելի հեղինակություն, ուժի և իմաստնության նարմնացում և, բնականաբար, Նո-

յը համարվել է բոլորի հայրը, իսկ նրա զավակներն՝ արդեն հաջորդ սերունդների հայրերը: Նույնպես բնական է հազարավոր տարիների ընթացքում վերջին «ր» տառի սղվելը: Նույնիսկ առ այսօր, հատկապես գյուղերում, ընտանիքի մայրը, ընտանիքի հորը դիմելիս կամ նրա մասին խոսելիս, ասում է ոչ այլ կերպ, քան «հայ», հատկապես դա նկատվում է մեծահասակների վարմունքում:

Մյուս կողմից՝ օտար լեզվարտասանություններում «հայր» բառի հ-ի սկզբնատառի սղումը ևս բնական է՝ տվյալ լեզվում այդ հնչյունի բացակայության կամ առանց դրա՝ բառի ավելի հեշտ արտասանվելու պատճառով: Շատ հավանական է, որ արիների ժամանակ տիտղոսներ կամ գինվորական աստիճաններ չեն եղել, և նրանք իրենց դեկավարներին պարզապես հարգանքով անվանել են հայրեր (ինչպես ներկայումս արևմտահայերենում պապին անվանում են «մեծ հայր»): Արիների այդ դիմելաձևը օտարների մոտ վերածվել է այր-ար-արի ձևին: Նշենք նաև, որ առաջներում հայերենում Արարատն անվանել են Այրարատ. այնպես որ՝ «յ» հնչյունի սղումը բնական է: «Արի» անվանման մեկ ուրիշ հավանական վարկած ևս կարելի է դիտարկել՝ կապված այր (տղամարդ) բառի հետ, որը խորհրդանշում է առնականություն, քաջություն: Մյուս կողմից, արիները արշավել են հեծելազորով՝ այրուձիով, որը ևս հնարավոր է՝ նրանց «արի» անվանելու պատճառ հանդիսանալու: Եվ, վերջապես, չի բացառվում նաև, որ «արի» անունը ծագում է հայերեն արև բառից: Արիները, ինչպես հայտնի է, եղել են արևապաշտ, և նրանց կրոնական ծիսակատարությունների ժամանակ անընդհատ հնչվող «արև» բառը այլ ցեղերին, հնարավոր է, դրդեր նրանց անվանելու արիներ:

Այսպիսով, օտարները հայերին անվանել են արմեններ՝ արի մարդիկ, իսկ հայերի ինքնանվանումը դարձել է հայ. այստեղից էլ՝ երկրի անունը՝ Հայք:

Նշված ենթադրությունը հակասության մեջ է մտնում Մովսես Խորենացու կողմից բերված հայ անվանումը Հայկ Նահապետի անունից ծագելու ենթադրության հետ: Դա քննարկման կարիք ունի, մասնավանդ որ նախքան Հայկ Նահապետը, հայերն ունեցել են նահապետների մի շարք, Թորգոմից ու Արամից սկսած և նախքան Հայկը, հայերի ինքնանվանման հարցը բաց է մնում: Հայերն իրենց արի կամ արմեն չեն անվանել, համենայն դեպս այդ մասին ոչ մի ավանդություն կամ հիշատակություն չկա:

Հայկ Նահապետը, հավանական է, եղել է Հայաստան պետության հիմնադիրը, որը հանդիսանում է վերջնականապես հայ ազգի ձևավորման պայմաններից մեկը, և ոչ թե հայերի ինքնանվանումն

Է ծագել Յայկի անունից, այլ Վերջինիս անունը՝ հայ, հայր բառերից: Յայք (այսինքն՝ հայեր, Յայաստան) բառի Վերջին «ք»-ն հոգնական Վերջավորություն է: Բառի մեջ որևէ տառի փոփոխությունը հայերենում հաճախ է պատահում, սակայն բառի իմաստը չի փոխվում, իսկ տվյալ (Խորենացու) Ենթադրության դեպքում տեղի է ունենում իմաստափոխություն, որը քիչ հավանական է: Մյուս կողմից, եթե անդրադառնանք «ք-կ» փոխանակությանը, ապա Վերջինս պատահում է (օրինակ՝ մարդիք-մարդիկ. կատարվել է տառի փոփոխություն, բայց իմաստը չի փոխվել), իսկ հակառակը, այսինքն «կ»-ից «ք» հայերենում բնորոշ չէ՝ մանավանդ իմաստափոխությամբ: Իսկ Յայաստանին օտարների կողմից տրվող Արմենիա անվանումը պարզապես բխում է «արմեն» բառից, այսինքն՝ «արմենների երկիր»:

Իսկ ինչպես է բացատրում Ժամանակակից հայագիտությունը «Արմենիա» անվան ծագումը: Յայտնի է հնագույն պատմությունից, որ Յայաստանի հարավում գոյություն է ունեցել Ուրարտուին ժամանակակից Մանա պետությունը, որի մասին քիչ տեղեկություններ են պահպանվել: Յայաստանն առաջացել է Ուրարտուի, Մանայի և Ասքանազների պետությունների միաձուլումից և նույնիսկ Աստվածաշնչում դրանք անվանվում են «Երեք Արարատյան թագավորություններ»: Այլ լեզուներով սեպագիր արծանագրություններում Մանան անվանվել է՝ ուրարտերենում՝ Կուր-Մանու, աքքադերենում՝ Մատ Մաննա, Էլամերենում՝ Յար Մինայա, ասորերենում՝ Ար-Մենի, իին պարսկերենում՝ Ար-Մինայա և այլն: Ըստ պատմաբանների կարծիքի, Վերջին անվանումը դեպի Յունաստան պարսկական արշավանքների հետևանքով տարածվել է աշխարհում «Արմենիա» ծևով և այստեղից էլ հայերի «արմեն» անվանումը: Այսինքն, երկրի անվանումից ծագել է ազգի անվանումը, որը իին աշխարհի համար բնորոշ չէ (ըստ այդ Ենթադրության ռուս ազգի անվանումը ծագել է «Ռուսիա» երկրի անունից, անգլիացիներինը՝ «Անգլիա» անունից, չիներինը՝ «Չինաստան» անունից և այլն): Իսկ հայերի համար եղել է բացառություն՝ «Արմենիա» երկրի անունից ծագել է «արմեն» ազգի անունը: Նման երևոյթ տեղի ունեցել միայն Վերջին հազարամյակում՝ Ֆրանսիա, Աներիկա, Կոլումբիա, Բոլիվիա, Ուզբեկստան (ի պատիվ այս կամ այն անձի) անունների առնչությամբ:

Քին աշխարհում անձի անունով երկիր անվանելու երևոյթ չի եղել, և դա գալիս է հների իմաստնությունից: Նախ՝ ազգի անունը որևէ անձի անունով կոչելը, ինչքան էլ նա նշանավոր լիներ, ազգի համար կլիներ նվաստացում (միշտ ազգի զավակն է կոչվել ազգի

անունով և ոչ թե ընդհակառակը), երկրորդը՝ բացառված չէր, որ այդ բանը կլիներ նախադեպ, և ժամանակին կիայտնվեր մեկ այլ հզոր ու փառամոլ հերոս կամ միապետ, որը հենվելով իր կատարած մեծագործությունների վրա, կփորձեր ամբողջ ազգի անունը փոխել իր անունով: Նույնիսկ Ալեքսանդր Մակեդոնացին, հիմնելով իր անունով բազմաթիվ քաղաքներ, մտքով իսկ չէր անցկացրել իր հիմնած հսկա տերությունը անվանել Ալեքսանդրիա: Դա նաև պարզապես վտանգավոր էր ազգի գոյության համար, որովհետև վատ օրինակը վարակիչ է, իսկ նման դեպքում ուղղակի կործանարար (հիշենք գալլերի օրինակը):

Ինչ վերաբերում է հռոմեացիներին, դա ևս բացատրելի է՝ Հռոմուլոսի անունով կոչվել է քաղաքը, իսկ քաղաքի անունով՝ ազգը: Օրինակ արևելյան երկրներում մինչև վերջին դարերում էլ ռուսներին անվանում էին մոսկովներ: Նույն պատճառով արմեն անվանումն Արամ Նահապետի անունից բխեցնելը ևս անհավանական է:

Բայց բոլոր դեպքերում, եթե նույնիսկ հայերի համար ընդունենք այդ բացառությունը, ապա անպատասխան է մնում մի նուրբ հարց. իսկ ի՞նչ է նշանակում Ար-Մինայա երկրի անվան առջևում դրված «ար» մասնիկը...

Որոշ գիտնականներ, նույնիսկ Յայկ անունը կապում են ուրարտական «Խալդ» աստծո անվան հետ, իսկ դա արդեն ավելի է հեռացնում «Յայկի» և «հայի» կապը:

Մեկ ուրիշ վարկած ևս գոյություն ունի. Յայաստան անվանումը ծագել է հետագայում Յայաստանի կազմի մեջ մտած՝ Ուրարտուին և Խեթական թագավորությանը ժամանակակից Յայասա երկրի անունից: Բայց դա չի բացառում այն ենթադրությունը, որ հենց Յայասսա երկրի անունն էր ծագել «հայ» բառից:

Յայաստանի տարածքում մեծ քանակություն են կազմում «ար» արմատով սկսվող տեղանունները, որոնք կարծես փորձում են շեշտել իրենց արիական ծագումը: Դրանք տարածված են Յայկական բարձրավանդակում, սկսած արևելքից՝ Արդաբիլից (Արտավետ) մինչև արևմուտք՝ Երզնկա (Արզնկա), հյուսիսից՝ Արդվինից, մինչև հարավ՝ Արասխ կենտրոնում՝ Արարատ ու Արցախ: Շատ արիավիրքներ են եղել այդ բարձրավանդակում, շատ ազգեր են եկել, հաստատվել, իրենց լեզվով փոխել տեղանունները, բայց հետո ծուլվել են արիների միջավայրում, և նրանց անհետացման հետ անհետացել են նրանց կնքած անուններն ու վերականգնվել հները՝ իրենց նախնական տեսքով:

Ուրիշ դիտարկում ևս՝ կապված «Չումեր», «սումեր»՝ աշխարհի ամենահին միջագետքի քաղաքակրթությունը ձևավորող ազգութ-

յան հետ: Շումերները եղել են արմենոիդ մարդաբանական ռասայի ներկայացուցիչներ, որին պատկանել են մերձավոր արևելյան շատ հին ժողովուրդներ և ներկայումս այդ տիպին պատկանում են գլխավորապես հայերը:

Նույն շումերներն իրենց մեհյանիները կառուցել են արհեստական բլուրների վրա, որը վկայում է նրանց լեռնաբնակ ծագումը: Աստվածաշնչում նշվում է, որ նրանք եկել են արևելքից: Սակայն դա հակասության մեջ է մտնում նրանց մարդաբանական տիպի հետ, որը պարզված է նրանց գերեզմանների պեղումներից և ավելի ճշմարիտ է երևում այն պատմական տեղեկությունը, որ նրանք սկզբում բնակվելիս են եղել Միջագետքի հյուսիսում, այսինքն՝ Հայկական բարձրավանդակի անմիջական սահմաններում և հարավ են մղվել աքքաղների՝ սեմիտական ցեղերի կողմից, որոնց հետ հետագայում խառնվելով, նրանց հաղորդելով իրենց բարձր քաղաքակրթությունը, կրոնական պատկերացումները, գիտելիքները, հիմք են դրել աշխարհի ամենահին քաղաքակրթությանը՝ աքքաղաշումերային քաղաքակրթությանը: Այն լինելով բարելոնյանի նախորդը, մեծ ազդեցություն են թողել հետագա համաշխարհային քաղաքակրթության զարգացման վրա: Հայերենում ներկայումս էլ շատ կան շումերական բառեր ու արմատներ: Իսկ թե հազարավոր տարիների իր զարգացման ընթացքում լեզուն ինչքան կարող է փոփոխվել, երևում է թեկուզ 700-1000 տարի առաջ հայերի օգտագործած գրաբարի և ներկայիս օգտագործվող հայերենի կամ այլ ազգերի հին ու նոր լեզուների համեմատությունից: Նույն է նաև հայերենի բարբառների պարագան. դրանք բոլորը ծագած լինելով միևնույն մայր լեզվից, դժվարությամբ են հասկացվում նույնիսկ հարևան տարածքներում: Մյուս կողմից, թե լեզվաբանական ինչպիսի ձեռնածություններ կարելի է կատարել ցանկության դեպքում, դա երևում է «ուրարտական» լեզվի օրինակով:

- Ազգի անվանումը անմիջական հարևանների մոտ պահպանվում է հազարավոր տարիներ: Հայերի հյուսիսային հարևանները՝ Վրացիները և կովկասյան որոշ ժողովուրդներ, հայերին անվանում են սոմեխի, որը մեծ չափով առնչվում է սումեր անվան հետ, իսկ օսերը (նախկին ալանները) ուղղակի անվանում են սումերներ:


Հետաքրքիր է հայերի անվանումը իին սլավոնների կողմից: Ներկայումս ուկրաինացիները և այլ սլավոնական ժողովուրդներ հայերին անվանում են «վարմենե», որտեղ բարի առաջին մասը ծագում է «վարմայ» բառից, որ նշանակում է տաք (նույն «ար»-ի թարգմանությունը, եթե այն ընդունենք վերցված «արև» բառից), իսկ մյուս մասը նույն «մարդ» բառն է:

Յայերենի բառապաշտում բոլոր լավ, հզոր, կարևոր և այլ հասկացությունները սկսվում են «ար» (առ) արմատով, դրանով կարծես ընդգծելով դրանց գերադրական արժեքային իմաստը (ընդորում այն տարբեր խոսքի մասերում օգտագործվում է նույն դերով՝ գոյականում, ածականում, բայում և այլն): Արարիչ, արև, արքա, արմատ, արծիվ, արվեստ, արժեք, արույր, արհեստ, արու, արի, արյուն, արդյունք, արկած նաև առաջ, առյուծ, առագաստ, առաքյալ, առանձին, առարկա, առու և այլն, և այլն: Շատ բառեր կան, որոնցում «ար» արմատը գտնվում է բառամիջում կամ բառավերջում, կամ օգտագործվում են նույն արմատի տարբեր ձևափոխությունները՝ էր, օր, ուր, իր և այլն (հետաքրքիր է նաև, որ ընդգծված բացասական իմաստ արտահայտելիս վերցվում է նույն արմատը ժխտական մասնիկով բառասկզբում՝ օրինակ չար, այսինքն՝ ոչ «ար» կամ բառավերջում՝ օրինակ արատ, այսինքն՝ արը կտրված, ինչպես կոճատ, պոչատ և այլն):

Աշխարհի բոլոր այբուբենները սկսվում են «ա» տառով, այսինքն բոլոր լեզուներում «ա»-ին տրվում է առաջնային, առանձնահատուկ դեր՝ կարծես ընդգծելով, որ իմացությունը սկսվում է «ա»-ից: Իսկ հայերենում «ա»-ն Արարիչ, Աստված բառի սկզբնատառն է: Մյուս կողմից, այլ լեզուների համեմատ, հայերենում «ա» տառով սկսվող բառերի տեսակարար կշիռը մյուս բառերի նկատմամբ ամենից շատն է՝ 10 տոկոսից ավելի, կարծես բառն արտասանվում է Արարչի անունից սկսվելով:

Յայերի՝ արիներից անմիջական ծագումը հետևում է և անվանումից, և լեզվի բառապաշտությանց, և երկրի աշխարհագրական դիրքից, և պատմությունից, և սեփական ազգային ու հնագույն այլ ազգերի ավանդույթներից ու առասպելներից, և սովորույթներից:

- Միջագետքի կործանված քաղաքակրթության որդեգրած բացասական հատկությունների մասին Աստվածաշունչը նկարագրում է ընդհանուր գծերով: Սակայն, կարծես ցուցադրելու համար, Արարիչը տալիս է նաև այն տարբերակը, թե ինչ կլիներ ամբողջ մարդկության ճակատագիրը սխալ ուղիով զարգանալու դեպքում: Կենտրոնական Ամերիկայում, նախքան այն իսպանացիների կողմից նվաճվելը, գոյություն ուներ ացտեկների բարձր զարգացած քաղաքակրթությունը: Ֆիշտ է, նրանք դեռ չեն հասել երկարի մշակման մակարդակին, բայց նրանց պատրաստած շինությունները, արձանները չեն զիջում եգիպտական ու բաբելոնյան համա-



# Ա ՐԱՐԻՉԸ ԽԵՎ ԿՐՈՆՆԵՐԸ



## Նախնադարյան մարդու պատկերացումները

Նախնադարյան մարդը բնության մեջ գոյության պայքարում ծեռք էր բերել որոշակի, իր կենսագործունեությանն առնչվող փորձնական գիտելիքներ: Միաժամանակ կախված լինելով բնական երևույթներից, պայմաններից, նա փորձում էր գտնել այս կամ այն երևույթի պատճառները, դրանց վրա ազդելու հնարավորությունները՝ պաշտպանվելու և կանխելու համար վտանգները և առաջացնելու ու օգտագործելու բարենպաստ հանգամանքներ իր կյանքն ու կենսագործունեությունը ապահովելու համար: Նրան պետք էր վտանգների դեմ պաշտպանվածության զգացում, ինչ-որ կողմնակի գերիզոր ուժի հովանավորություն և այդ ուժի բարեհածության վրա՝ ինքնավտահություն: Այդ նպատակի համար նախամարդը հնարեց տարբեր միջոցներ, հավատալով դրանց արդյունավետությանը և հնարավորությանը: Քարե և փայտե կուռքեր, որոնց նա հաղորդում էր իր ցանկությունները, որսի կենդանիների նկարներ, որոնց հարվածելով պարզունակ գենքերով՝ հավատում էր, թե հարվածում է հենց որսին, թալիսմաններ, որոնք նրան պաշտպանում էին վտանգներից և այլն: Այլ խոսքով՝ նրա գիտակցության մեջ արդեն սկսեց սերմնավորվել ոգեղենությունը:

Արիների կողմից ստացած իմաստնությունը նախնադարյան մարդու ոգեղենությունը բարձրացրեց նոր աստիճանի, որ նրա՝ մարդ դառնալու հիմնական պայմանն էր: Նա սկսեց ակամայից

Ա.Ռ.




## Բազմաստվածություն

Արիների գիտելիքների բարձր մակարդակը նախամարդկային ցեղերի մեջ առաջացրեցին նրանց նկատմամբ պատկառանք, երկյուղածություն, նույնիսկ պաշտամունք: Սկզբնական շրջանում նրանց ընդունելով որպես գերբնական էակներ (ճիշտ ամերիկյան հնդիկների կամ զարգացման ցածր մակարդակում գտնվող այլ ցեղերի նման, որոնք առաջին եվրոպացիներին ընդունում էին որպես գերբնական արարածներ): Դարերի ընթացքում արիների՝ այդ ցեղերին խառնվելուց հետո, այդ հիշողությունը վերածվեց պաշտամունքի, որը նրանց գիտակցության մեջ աստիճանաբար թուլացրեց կուռքերի, տոտեմների վերաբերյալ հավատը, բնական այս կամ այն երևույթների, կախարդանքի նկատմամբ սնիավատ վախը, այդ բոլորը վերագրելով աստվածների կամքին ու արարքներին: Համարյա բոլոր ազգերի մոտ հայտնվեցին աստվածները՝ մարդկանց, կիսամարդ-կիսակենդանիների, կամ բանականությամբ օժտված գազանների տեսքով: Բոլոր աստվածները «մասնագիտացան» ըստ գործունեության՝ մարդկանց կենցաղային կամ կենսագործունեության ոլորտներին համապատասխան: Աստվածներին տրվեցին մարդկային հատկանիշներ, մարդկային բնավորություն՝ իր առավելություններով ու թերություններով: Նրանք հասկանալի էին մարդկանց՝ նրանցից տարբերվելով միայն իրենց հզորությամբ ու ամենակարողությամբ, բնական երևույթների վրա ազդելու հնարավորությամբ:

Այդ աստվածները ծառայում էին ոչ թե մարդկանց խրատելու, կատարելագործման մղելու համար, այլ որպես գերբնական հնարավորություններով օժտված էակներ, որոնց մարդիկ աղոթելու, համոզելու, կաշառելու (նվիրատվությունների, զոհաբերությունների տեսքով) միջոցով ձգտում էին օգտագործել՝ ապահովելու համար նրանց հովանավորությունը իրենց առօրյա գործունեության ընթացքում, իրենց նպատակներն իրագործելու համար, անկախ դրանց բարի կամ չար բնույթից: Այդ աստվածներից յուրաքանչյուրի նպատակն իր գործունեության ոլորտը խանդությամբ պաշտպանելն էր և մարդկանց կողմից իր նկատմամբ վախն ու պաշտամունքն ապահովելը:

Սովորաբար բազմաստվածության ժամանակ առանձնանում էր գլխավոր աստվածը, որն իշխում էր ու գերակայում մյուս աստվածներին, իսկ վերջիններս էլ հնագանդվելով, երբեմն փորձում էին խաբել նրան: Ընդհանրապես, այդ աստվածները, հաճախ լինելով մրցակից ու նույնիսկ հակառակորդ, ունենալով նույնիսկ բնավո-

Ա. գ



## Միաստվածություն

Մարդկային գիտակցության հետագա զարգացման ընթացքում աստիճանաբար սկսեց արմատավորվել միաստվածության սկզբունքը՝ միակ, ամենազոր ու գերիմաստուն Աստծո պաշտամունքը։ Այսինքն՝ մարդկությունը (տարբեր ժողովուրդների մոտ տարբեր մոտեցումներով) սկսեց հանգել այն իրողությանը, որ տիեզերքում ու կյանքում ամեն մի երևույթ ու գոյածն պայմանավորված է միակ բարձրագույն Գոյի՝ Արարչի կամքով։ Միաստվածության սկզբունքը նպաստում էր ազգերի ու պետությունների կազմավորմանն ու ամրապնդմանը, ոգեղեն մակարդակով արդարացնում միապետների իշխանությունն ու հիմնավորում կրոնական պատկերացումները։ Պետական ու հասարակական հարաբերություններն սկսեցին կազմավորվել մարդկային օրենքներով, որոնք իրենց վրա կրում էին տվյալ պետության տարածքում ընդունված կրոնական սկզբունքների կնիքը։ Օրենքներում և դատաստանագրքերում փաստորեն համատեղվում էին իրավունքն ու կրոնը. այսինքն՝ իրավունքը հիմնավորվում էր կրոնի միջոցով, իսկ կրոնը պաշտպանվում էր օրենքի ուժով. և բոլորը, անգամ երբեմն միապետը, ստիպված էին ենթարկվել օրենքներին։


- Արիներն իրենք եղել են արևապաշտ, այսինքն՝ Արարչին նրանք պատկերացրել են Արևի տեսքով։ Այդ են վկայում Յայկական լեռնաշխարհում հայտնաբերված արևի խորհրդանիշները տարբեր տեսքերով՝ հենց արևի տեսքով՝ բազմաձառագայթ, քառաթև (ճառագայթներով)` խաչի տեսքով, պտտվող արևի՝ կեռխաչի (սվաստիկայի) տեսքով և այլն։ Արիները խաչը դիտել են որպես արևի խորհրդանիշ և ընդունել են այն՝ տեղիք տալով հետագայում այդ իրողությունը պարզող քրիստոնյա եվրոպացիների զարմանքին ու խորհրդավոր ենթադրություններին։

Արիների արևապաշտությունը մեծ ազդեցություն է թողել հետագա կրոնների վրա։ Զրադաշտը (կրակապաշտությունը) արևապաշտության մի ծև է, իսլամում արևածագին աղոթելը, քրիստոնեության մեջ՝ աղոթելիս դեպի արևելք շրջվելը և եկեղեցում խորանը արևելյան կողմում տեղադրելը կամ հանգուցյալին դեմքով դեպի արևելք թաղելը և այլն։ Նման գուգահեռներ կարելի է գտնել նաև այլ կրոններում։

- Կարելի է ենթադրել, որ կրոնների՝ արիական հիմքերի վրա ձևավորվելը հայտնի է եղել ինչպես դրանց հիմնադիրներին, այնպես էլ հակառակորդներին։ Խաչը, որպես արևի խորհրդանիշ, արի-

Աերի կողմից պաշտվել է Քրիստոսից հազարամյակներ առաջ, և Քրիստոսին խաչելուց հետո, փոխելով իր իմաստը, դարձավ քրիստոնեության խորհրդանիշը: Քրիստոսին խաչեցին, և հետագայում էլ խաչում էին քրիստոնյաներին ոչ միայն նրանց դաժանորեն տանջամահ անելու համար (հնադարում, ինչպես նաև ներկայումս, տանջամահ անելու առավել կատարելագործված միջոցներ կային), այլ կարծես ապացուցելու համար այդ խորհրդանիշի անզոր լինելն ու ծաղրելու համար մեռնողների նվիրվածությունը նրան, այսինքն՝ արիական սկզբունքներին: Նշենք, որ նախքան Քրիստոսին խաչելը, խաչը որպես քրիստոնեության խորհրդանիշ չէր օգտագործվում (Քրիստոսն իր դեմքը չէր խաչակնքում): Խաչը մարդկանց գիտակցության և ենթագիտակցության մեջ նույնանում էր արևի հետ:

- Միաստվածության սկզբունքով կրոնները սկսեցին կազմավորել մ.թ.ա. 1-ին հազարամյակում, գրեթե ամենուր միաժամանակ. բրահմանությունը՝ Մերձավոր Արևելքում և Հնդկաստանում, հուդայականությունը՝ Խրայելում և այլն: Միաստվածության ժամանակ Արարչի կերպարը դառնում է ամենազոր ու անսահման: Սակայն բազմաստվածությունը ամբողջապես չանհետացավ: Աստվածներին փոխարի-



## Արարչի մասին պատկերացումները

- Յուրաքանչյուր կրոնի առանձնահատկությունը, Արարչի, նրա եռթյան, կերպարի, գտնվելու վայրի՝ իր սեփական բացատրություններն են: Սակայն համարյա բոլոր միաստվածային կրոններում Արարիչը միակ, անհասանելի, կատարյալ ու ամենատես, ամենահզոր, արարչագործ, բարի, բարձրագույն Գոյ է: Արարչի գործելակերպը իրականացվում է անկողմնակալ օրենքի, իրավագորության կամ սկզբունքի հիման վրա, որով նա դեկավարում է աշխարհի և մարդկանց գործերը: Որպես ծշմարտություն բացարձակ է, միակ ու հավերժ, մարդիկ ու նրանց ճակատագրերը կախված են Նրա կամքից: Մշտական պայքար է գնում Արարչի և սատանայի միջև: Գոյություն ունեն բարի և չար ոգիներ, հոգին անմահ է և, կախված կյանքում մարդու կատարած գործերից, մահվանից հետո գնում է դրախտ կամ դժոխք կամ անցնում է այլ արարածների, և մարդը երկրային կյանքում պետք է հոգա այդ մասին: Գոյություն ունեն պահապան ոգիներ: Մարդկանց մեղքերը Բարձրագույն Գոյի մասին


մոռանալու հետևանք են: Այդ մեղքերից հիմնականներն են՝ սպանությունը, շնանալը, խաբեբայությունն ու սուտը, զրպարտանքը, բամբասանքը, կործանարար մոլությունները, գողանալը, Արարչին չընդունելը....: Մեղքերը պետք է քավել մեղանչելով, որով մարդը թողություն է ստանում Արարչի գթասրտության շնորհիվ: Մարդու մեղանչելով, հոգին ազատվում է մարմնական ցանկություններից, լուսավորվում է, խաղաղվում, և մարդը փրկություն է ստանում:

- Արարիչը մարդուն ենթարկում է փորձությունների, որոնց նապետք է դիմանա: Դրա համար մարդը պետք է ունենա ինքնավերահսկողություն, սրտի մաքրություն, կայտառություն, համառություն, համբերություն, հավատ Արարչի նկատմամբ, նվիրվածություն ու փառաբանում, վախ Արարչի բարկությունից, խոնարհություն ու ենթարկվածություն, երախտագիտություն Արարչի նկատմամբ, իմաստնություն, սուրբ գործերի ծշմարտացիության անվերապահ ընդունում: Կյանքում ձեռք բերած գիտելիքները, որոնք կիրառվում են նյութականի համար, հաճախ խանգարում են ոգեղեն փնտրտուքներին և կարող են արգելք հանդիսանալ Արարչական ծշմարտությանը հասնելու ժամապարհին: Պետք է մշտապես աղոթել Արարչին, կատարել գոհաբերություն, լինել զսպված ու չափավոր, ծնշել ցանկություններն ու հածույքները, հրաժարվել նյութական բարիքներից:


Ամբողջ մարդկությանը սպասվում է վերջին ահեղ, բայց արդար դատաստան, որից կարող են փրկվել միայն նշված պատգամները կատարող մարդկանց հոգիները:

Միաստվածության ժամանակ պաշտվող սրբերը, ինչպես քրիստոնեության մեջ, այնպես էլ իսլամում և այլ կրոններում, մեծ մասամբ նահատակներ են՝ հանուն բարոյականության ու

Բ.



Բ.ա



## Արարչի Եկույունն ըստ կրոնների

- Արևելյան կրոններում՝ բուդդայականության, իհնդուիզմի, դահիզմի մեջ, սահմանվում է, որ անհնար է հասկանալ Արարչի կամքը, գործունեությունը, նպատակը, քրիստոնեությունը պնդում է, որ մարդկային միտքը, բառերը ի գորու չեն անհրաժեշտ չափով բացատրելու Նրա էկույունը, իսլամը առհասարակ արգելում է դատողություններ անել Արարչի մասին. այսինքն՝ բոլոր կրոններում մարդկային իմացության համար Արարիչն անհասանելի է: Դա բնական է, քանի որ հասկանալը կարթնացներ Նրա գործերին խառնվելու, նպատակները կանխատեսելու և փոխելու ցանկություն, իսկ դա կհանգեցներ տիեզերական քառսի:


Ոչ-մատերիալիստական փիլիսոփայության մեջ Արարչի էկույունը երբեմն բնորոշվում է Ոչինչ տերմինով՝ նկատի ունենալով ոչ թե չգոյություն, այլ անիմանալիություն: Այդ տեսակետից առավել ճիշտ կլինի օգտագործել հենց «Անիմանալի» արտահայտությունը:

- Այստեղ արժե ուշադրություն դարձնել հետևյալի վրա. բոլոր կրոնները հիմնվել, նրանց սկզբունքները սահմանվել են մարգարեների, առաջյալների կողմից, որոնց գրվածքները, քարոզները համարվում են ներշնչված, թելադրված Արարչի կողմից, որպես Նրա կամքի արտահայտություն: Բայց մյուս կողմից, երբ որևէ կոռն ծանաչում է ստանում, որոշ ժամանակ անց նույն կրոնում հանդես է գալիս մեկ ուրիշ առաջյալ կամ սուրբ, որը համարձակվում է այլ տեսակետից մեկնաբանել տվյալ կրոնի դոգմաները և գտնում է հետևողիներ: Տեղի է ունենում տվյալ կրոնի պառակտում, կամ առաջանում են աղանդներ, և դա բնորոշ է համարյա բոլոր կրոնների համար: Պառակտումը խորանում է, վերածվելով պայքարի, թշնամանքի ու արյունահեղության՝ նույնիսկ նույն կրոնի հավատացյալների միջև: Տարբեր ուղղությունների կրոնավորները ու հավատացյալները միմյանց մեղադրում են ամենասարսափելի մեղքերի մեջ: Ստացվում է,

որ յուրաքանչյուր ուղղություն, իրեն համարելով միակ ճշմարիտն ու Արարչի կամքի արտահայտիչը, պայքարում է մյուսի դեմ, որը նույն բանը վերագրում է իրեն: Այսինքն, Արարիչը, տարբեր մարգարեներին ներշնչելով տարբեր մոտեցումներ, կրիվ է առաջացնում մարդկանց մեջ:

- Մյուս կողմից, գիտության ու հասարակական հարաբերությունների զարգացման պատճառով անհրաժեշտություն է առաջանում նորովի բացատրել ու պատճառաբանել կրոնական դոգմաները, դրանք հարմարեցնելով գիտության նոր տվյալներին ու հասարակական նոր հարաբերություններին: Այսինքն՝ մարդկության զարգա-

Բ.Թ.



## Արարչի կերպարը

- Արարչին բնութագրող կրոնական դոգմաները կարող են հասկանալով կամ չհասկանալով օգտագործել կրոնավորները, «ոչինչ», «ինքնին իր» և այլ հասկացություններ կարող են ընդունել փիլիսոփաները, իսկ սովորական հավատացյալն իր առօրեական կյանքում սովոր է մտածել պատկերների, խորհրդանիշների տեսքով և, բնականաբար, աղոթելիս, Արարչին դիմելիս, նրա անունը տալիս, պետք է պատկերացնի մի որևէ հասկանալի առարկայական կերպար, ընդ որում այնպիսի կերպար, որը ներշնչում է պատկառանք, ակնածանք, հարգանք: Սովորաբար ժողովրդական պատկերացումներում, ավանդույթներում, երազներում Արարիչը ներկայանում է սպիտակ հագուստով, սպիտակամորուս, բարի ու իմաստուն հայացքով ծերունու տեսքով:

Տարբեր կրոններում Արարչի տեսանելի կերպարի խնդրին վերաբերվում են տարբեր կերպ: Իսլամը կտրականապես արգելում է Արարչին պատկերել որևէ տեսքով, Աստվածաշնչում ասվում է, որ Աղամին Արարիչն ստեղծեց իր կերպարանքով, այսինքն՝ նա մարդկային կերպարանք ունի: Քրիստոնեության մեջ Արարիչը ընդունվելով որպես սուրբ երրորդության մի բաղադրիչ, փաստորեն հանդես է գալիս Քրիստոսի կերպարանքով, հագուրդ տալով շատ տաղանդավոր նկարիչների ու քանդակագործների երևակայությանը: Այդ բանը ցայտուն է հատկապես կաթոլիկության մեջ: Բուդդայականության մեջ նա հանդես է գալիս Բուդդայի տեսքով և այդտեղ էլ, ինչ-

պես նաև հնդկական այլ կրոններում ևս, լայն տարածում ունեն արձաններն ու քանդակները:

- Քրիստոնեության տարածման սկզբնական շրջանում, որպես Քրիստոսի անմեղության խորհրդանիշ էր ընդունվել գառը: Սակայն շուտով հասկացվեց այդ խորհրդանիշի անբնական, անհասկանալի լինելը և հետագայում ընդունվեց Քրիստոսի մարդկային պատկերը: Հետաքրքիր է այդ պատկերի ծագման ավանդույթը: Դեռ նախքան Քրիստոսի խաչվելն ու համբարձվելը, հայոց Արգար թագավորը, մտադիր լինելով նրա ուսմունքը տարածել Հայաստանում և, հավանական է, զգալով գառը որպես խորհրդանիշ ընդունելու անբնականությունը, պատվիրակ է ուղարկել Քրիստոսի մոտ՝ նրա պատկերը ստանալու խնդրանքով: Եվ Քրիստոսը սպիտակ կտորը դեմքին հպելով, իր դեմքը պատկերել է կտորի վրա, ուղարկել թագավորին, որից էլ հետագայում նմանակվելով, տարածվել է քրիստոնեական աշխարհում: Հետաքրքիր է նաև, որ աֆրիկյան որոշ եկեղեցիներում Քրիստոսը պատկերվում է որպես սևամորթ:

Իսլամում և որոշ այլ կրոններում Արարչի պատկերումը արգելվում է այն պատճառով, որ դա հիշեցնում է կռապաշտություն: Այսինքն, աղոթելիս մարդը Արարչի փոխարեն դիմում է մարդու ձեռքով ստեղծած նկարին կամ արձանին: Եվ իրոք, երբեմն ջերմեռանդ հավատացյալները կամ Արարչից ակնկալիք ունեցողները հաճախ աղոթելիս մեծ ուշադրությամբ նայելով, փորձում են նկատել ինչ-որ փոփոխություններ, նշաններ՝ ի հաստատումն իրենց աղոթքն ընդունելու կամ խնդրանքը կատարելու:

- Արձանների, նկարների և այլ խորհրդանիշների օգտագործման սովորությունը գալիս է հազարամյակների խորքերից, երբ մարդը գերազույն ուժերի հետ փորձում էր հաղորդակցվել տոտեմների և այլ պաշտամունքային առարկաների միջոցով: Կրոնների վրա արիների ազդեցությունը կարելի է նկատել հետևյալ գուգահեռից. Հայաստանում հազարամյակներ ի վեր, մինչև հիմա գոյություն ունի Նարի-Նարի (հայերի ծովերի ու ջրերի աստվածուի ծովինարի անունով) կոչվող տոնախմբությունը, երբ տևական չորային եղանակի դեպքում, երեխաները (մեծերի դրդմամբ) պատրաստում են մի մեծ տիկնիկ և նրա ձեռքերից բռնած, երգելով շրջում են փողոցներում երկնքից անձրև ակնկալելով, երբեմն-երբեմն թակելով նաև դրները՝ պահանջելով չիր ու չամիչ: Համեմատենք այդ սովորույթը ներկայիս կաթոլիկ և որոշ ուղղափառ եկեղեցիներում ընդունված ծիսակարգի հետ, երբ սրբերի արձանները հոգևորականները երգելով ու փառաբանությամբ պտտեցնում են փողոցներով:

**Բ.գ.**



## Ամենագոյություն

- Որոշ կրոններում աղոթելու կամ Արարչի հետ հաղորդակցվելու ժամանակ հավատացյալներն աչքերը փակում են կամ հայացքը մի կետի սևեռելով, ոչինչ չտեսնելով, ինքնամփոփվում են և կտրվում արտաքին աշխարհից: Մուսուլմաններն ու քրիստոնյաները աղոթելիս սովորաբար հայացքներն ուղղում են Երկինք, իսկ Եկեղեցում քրիստոնյաները դիմում են սրբապատկերներին: Տվյալ դեպքում Երկինք հասկացությունը փաստորեն ընդգրկում է ամբողջ տիեզերքը (կլոր Երկրագնդի վրա հայացքներն ուղղվում են տարբեր, նույնիսկ հակառակ ուղղություններով): Բայց միևնույն ժամանակ սուրբ գոքերում նշվում է, որ Արարիչը հեռու չեւ և անմիջական մասնակցություն ունի մարդկանց գործերում: Ըստ իսլամի, Արարիչը մարդուն ավելի մոտ է, քան վզի զարկերակը, ըստ հինդուիզմի և սիկխիզմի՝ նա յուրաքանչյուր մարդու սրտի մեջ է, ըստ բուդդայականության՝ նա մարդու գիտակցության խորքերում է, քրիստոնեական «Ճայր մեր»-ում ասվում է, որ Երկնքում է: Որոշ կրոններ Արարչին նույնացնում են անհատական հոգու հետ: Այսինքն՝ ըստ կրոնների, Արարիչը Երկնքում է, ամենուր և միաժամանակ յուրաքանչյուր մարդու մեջ:


- Գիտության զարգացման և իմացության ներկա մակարդակի պայմաններում փորձեր են արվում եզրեր որոնել գիտության ու կրոնի միջև, ապացույցներ ու գիտական իիմնավորումներ գտնել ոգեղեն Երևույթների էռթյան, իրականության հետ պատճառահետևանքային կապի գործունեության մեխանիզմների մասին: Եվ յուրաքանչյուր նոր գիտական արդյունք, որն անհնար է մարդու գօյարանների համար դարձնել շոշափելի կամ տեսանելի, կամ վեր է մարդկային պատկերացումներից, անմիջապես փորձ է արվում կապել ոգեղեն Երևույթների հետ: Դրանով իրապուրվել են նույնիսկ շատ հոչակավոր գիտնականներ: Այսպես. անցյալ դարում Սինկովսկու կողմից տեսականորեն ապացուցվեց չորրորդ չափման, իսկ հետագայում նաև՝ բազմաչափ տարածության հնարավորությունը, և առ այսօր փորձեր են արվում այդ օգտագործել՝ բացատրելու համար ոգիների, ուրվականների, տարբեր ոգեղեն Երևույթների մարդուն անտեսանելի լինելու և մարդկանց կեցության վրա ազդելու հնարավորությունը: Վերջին տարիներին որոշ ու ֆոլոգներ ևս փորձում են չորրորդ չափումով բացատրել թռչող

ափսեների երևույթը։ Որ նման երևույթներ գոյություն ունեն, ընդունվում են շատերի կողմից, չնայած դրանց ժամանակակից գիտության խիստ պահանջներով հիմնավորված չլինելուն։ Սակայն դրանց կապը քառաչափ տարածության հետ մնում է ենթադրության մակարդակում այն պատճառով, որ մարդն ապրելով եռաչափ տարածության մեջ, քառաչափ տարածությունը պարզապես չի պատկերացնում։ Համեմատության համար կարելի է օրինակ բերել մրջյունին։ Մրջյունն ապրում է երկչափ տարածության՝ որոշ հաստությամբ հարթության մեջ, և երրորդ չափումը (վերև) նրա համար գոյություն չունի (նա ծառի բնով կարող է վերև բարձրանալ իր հարթության անկյունը փոխելու միջոցով)։ Եթե երրորդ չափման մեջ գտնվող մարդը մրջյունին մի ծառի տերևի վրայից տեղափոխեր հարևան ծառի տերևի վրա, և եթե մրջյունը գիտակցություն ունենար, իրեն կգտար այն չուկչայի վիճակում, որին չորրորդ չափման մեջ Չուկոտկայից տեղափոխել են Սահարա անապատ։

Կան նաև այլ տեսություններ, որոնք ևս փորձ են արվում օգտագործել վերը նշված երևույթների բացատրության համար։ Օրինակ՝ տարածության ու ժամանակի ընդհատության՝ առանձին մասնիկներից կազմված լինելու տեսությունը։ Նյութի, նույն թվում նաև էներգիայի բոլոր տեսակի տեղափոխությունները տեղի են ունենում նման մի մասնիկից մյուսը անցնելու միջոցով։ Ընդ որում, հնարավոր է այդ մասնիկների միջև նրանցից ազատ միջավայրի գոյություն։ Եթե կա նման միջավայր, ապա այնտեղ կարող են տեղի ունենալ երևույթներ, որոնք մեր տարածությունից ու ժամանակից դուրս են։

- Այլ ենթադրություններ էլ առաջմ առավելապես ֆանտաստիկայի ժանրին են առնչվում։ Օրինակ զուգահեռ աշխարհների գոյությունը, որտեղ կատարվում են նույն երևույթները, ինչ որ մեր տեսանելի աշխարհում, բայց տեղաշարժված որոշ պարբերությամբ ժամանակային առումով։ Այսինքն, եթե մարդը պատահականորեն մասնակից է լինում մի դեպքի, զուգահեռ աշխարհում այդ դեպքը չի լինում և նրա կյանքը այլ ուղիով է ընթանում։

**Բ.Դ.**



## Կրոնների հետազա ճակատագրերի

Ոչ ոք չի կարող ապացուցել, թե մի կրոնը ծիշտ է, մյուսը սխալ: Բոլոր կրոններն էլ ծիշտ են և իրենց մեջ պարունակում են Արարչի կամքի ու նպատակի որոշակի մասնիկը, սակայն կրոնների մեջ հակասություններն առաջանում է այն պատճառով, որ նրանցից յուրաքանչյուրն իր գործունեության մեջ շեշտը դնում է ոչ թե իր յուրահատկության, իր մեջ եղած Արարչական մասնիկի ինքնաբացահայտման վրա, այլ անում է այն, ինչ ուրիշներին արգելում է անել. այն է՝ փորձում է ընդգրկել անընդգրկելին, Արարչի անունով ներկայացնել դեղատոմս կյանքի բոլոր երևույթների, մարդկային ու հասարակական բոլոր հարաբերությունների համար: Իրենց հիմքում մեծ մասամբ ունենալով ընդհանուր համամարդկայինը, նրանք փորձում են Արարչականը ներկայացնել իրենց մոտեցումներով, ընդունելով և հավատացյալներին էլ պարտադրելով դա ընդունել, որպես միակ ճշմարիտը, անհանդուրժողաբար և թշնամանքով վերաբերվելով ամեն մի քննելու փորձի կամ այլ մոտեցումների նկատմամբ: Այսինքն, բոլորը մերժում են այլընտրանքային տարբերակները, այլ կարծիքների իրավունքը:


- Բոլոր կրոնները, իրենց հիմքում լինելով ոգեղեն, Արարչական են: Սակայն յուրաքանչյուր կրոնի կամ աղանդի Արարչական բնույթը կախված է նրանցից, թե մարդը ինչպես է հասկանում և կիրառում նրա դոգմաները, և հատկապես նրանցից, թե այդ գործընթացում որքան է անձնական շահի դերը: Չկան լավ կամ վատ կրոններ: Յուրաքանչյուր կրոն ներշնչված է Արարչի կողմից՝ մարդուն բարոյապես զարգացնելու նպատակով, և հարմարեցված է տվյալ ազգային միջավայրի համար: Եվ համարյա բոլոր կրոններում նրանց բարոյանպաստ հիմքը խարիսլում են մարդիկ՝ նրանցում մտցնելով անհանդուրժողականության տարրեր այլոց նկատմամբ, ելնելով իրենց ամբիցիաներից ու շահերից (Արևն իր կենսատու լույսը պարզեցնելու մեջ է բոլորին հավասարաչափ, և աշխարհի բոլոր բազմերանգ ու բազմատեսակ ծաղիկների հայացքներն ուղղված են նրան: Ոչ ոք իրավունք չունի պնդելու, թե Արևն այս կամ այն ծաղկի մյուսների համեմատ ավելի շատ է լույս պարզեցնելու, որ բոլոր ծաղիկները լինեն միատեսակ, այդ ծաղիկին նման):

- Յանարյա բոլոր կրոնների մեջ տեղի ունեցած պառակտումները, աղանդների առաջացումը, մեծ մասամբ կրոնավորների (հատ-

կապես բարձրաստիճան) գործելակերպի հետևանք են: Փաստացի վարքով և կերպարով կրոնական հիմնադրույթներից նրանց հեռանալը հավատացյալների շրջանում առաջացնում է բողոք ու դժուհություն, ձգտում վերադարձի իրենց պատկերացումներով տվյալ կրոնի սկզբունքներին (օրինակ՝ պուրիտանները՝ քրիստոնեության մեջ, վահաբիստները՝ իսլամում), կամ հավատ՝ կասկածելի նպատակներ ու վարքի տեր ինքնակոչ «մարգարեների» նկատմամբ:

Մյուս կողմից՝ յուրաքանչյուր կրոնին ու աղանդին մեծապես վնասում են մոլեռանդները: Բոլոր կրոնների հիմքում ընկած է Արարչականը և անեծքը չարի դեմ, իսկ մոլեռանդները, ուրիշների նկատմամբ թշնամությամբ, մարդկային կյանքի ու ճակատագրի նկատմամբ սեփական մոտեցումներում համառությամբ, ի վերջո դառնում են չարի գործիք, և ձգտելով նմանվել իրենց կրոնների սրբերին, նմանվում են սատանային: Այդ պատճառով ոչ մի կրոն չկարողացավ համապարփակ կիրառել իր հիմքերում դրված

**Բ.Ե.**



## Ոգեղեն ցնցումները

- Ա.թ. 5-րդ դարում, մոտ մի դարի ընթացքում, այն ժամանակ-վա համարյա բոլոր կազմավորված ազգերի մոտ սկսեցին ծևավոր-վել կրոնները՝ միաստվածության սկզբունքով: Համարյա նույն ժա-մանակ առաջացան Զրադաշտը՝ Պարթևստանում, Բուդդայակա-նությունը՝ Հնդկաստանում, Կոնֆիցիուսը հանդես եկավ Չինաստա-նում: Մոտավորապես նույն ժամանակ վերջնականապես ծևավոր-վեց Աստվածաշունչը:

Այդ կրոններից մոտ հինգ հարյուր տարի հետո հրապարակ իջավ քրիստոնեությունը և մի քանի դարում տարածվելով Սերծավոր Արևելքում և Եվրոպայում, հետագայում Եվրոպացիների կողմից տարածվեց ամբողջ աշխարհում:

Եւս հինգ-վեց հարյուր տարի, և Արաբիայի հարավում, որը ինչ-որ չափով կտրված էր Եվրասիայի քաղաքակրթությունից, հանդես եկավ իսլամն ու արաբական հեծելազորի սրերով տարածվեց Հյու-սիսային Աֆրիկայից մինչև Ինդոնեզիա, ներառելով նաև արիական ազգերը:

1000-ական թվականներին, այսինքն՝ ևս հինգ հարյուր տարի հե-

տո, սկսվեց ամենատարածված կրոնների՝ քրիստոնեության և իսլամի պառակտումը երկուական հզոր ճյուղերի՝ քրիստոնեությունը արևելյան՝ ուղղափառ և արևմտյան՝ կաթոլիկ ուղղությունների, իսկ իսլամը՝ շիա և սուննի ճյուղերի: Նույն թվականներին Ռուսաստանն ընդունեց քրիստոնեությունը: Քրիստոնեության ընդունումը Կիևյան Ռուսիայի Վլադիմիր Սեծ իշխանի կողմից (նրա կողմանը՝ Բյուզանդիայի հայազգի կայսր Վասիլի դուստր Աննայի նախաձեռնությամբ) այն մեծ նշանակություն ունեցավ ուղղափառությունն ամրապնդելու գործում, իատկապես Բյուզանդիայի կործանումից հետո:

15-16-րդ դարերում (նորից 500 տարի հետո) տեղի ունեցավ հաջորդ ոգեղեն ցնցումը: Շվեյցարիայում և Գերմանիայում համարյա միաժամանակ կազմավորվեց քրիստոնեության մի նոր, կաթոլիկությունից ոչ պակաս հզոր ուղղություն՝ բողոքականությունը և արագորեն տարածվեց Անգլիայում ու Սկանդինավիայում:


- Այսպիսով, եթե առաջին ոգեղեն ցնցումը համարենք մ.թ.ա. 1-ին հազարյամյակում վերը նշված միաստված կրոնների կազմավորման սկիզբ, ապա ոգեղեն ցնցումները մինչև ներկա դարաշրջանը 6-ն են: Տրամաբանությունը հուշում է, որ նման ոգեղեն ցնցումը սպասվում է 2000-ական թվականներին, որը կլինի 7-րդ ցնցումը: Իզուր չէ, որ շատ կրոններում, կրոնափիլիսոփայական գրքերում շատ է ասվում մարդկությանը սպասվող առաջիկա ոգեղեն հիմնարար ցնցումների մասին: Սովորաբար նման ցնցումները որևէ կոնկրետ դեպքով կամ երևույթով չեն նշանավորվում (Քրիստոսի ծնունդը միայն մարզարեներն էին գուշակել): Ցնցումը և նրա հետևանքը զգացվում են հետագայում՝ ամբողջ մարդկության և առանձին ժողովուրդների ճակատագրերի վրա թողած ազդեցության շնորհիվ:

Ներկայումս աստղաֆիզիկոսների կողմից բացահայտված արևի ակտիվության 500-ամյա պարբերականությունը համարյա համընկնում է նշված ոգեղեն ցնցումների պարբերականության հետ, և բնական է այդ երկու երևույթների միջև պատճառական կապի ենթադրությունը: Արևի նման ակտիվությունը բնության վրա ակնառու ազդեցություն չի թողնում, սակայն ոգեղեն ոլորտում այդ ազդեցությունը զգացվում է որոշակիորեն: Այսինքն, արիների, ինչպես նաև այլ արևապաշտ ցեղերի կողմից Արևի պաշտամունքը ելնում էր ոչ միայն նրա դերի գիտակցումից՝ ամբողջ բնության ֆիզիկական գոյության համար, այլև նրա ոգեղեն ազդեցության ենթագիտակցական մակարդակով ընկալումից:

- Առաջիկա ոգեղեն ցնցման բնույթի մասին որևէ միասնական կարծիք առայժմ չկա: Նույնիսկ փորձեր են արվում նոր համաշխար-

հային կրոններ հորինելու համար: Բայց, ինչպես ցույց է տալիս մարդկության պատմությունը, անկախ իր սկզբունքից, ցանկացած համամարդկային կրոն շատ շուտով ազգայնացվում է, և տարբեր ազգերի կամ ազգային խմբերի մոտ առաջանում են տարբեր ուղղություններ, որոնք հաճախ պայքարում են իրար դեմ: Եվ երկրորդ, երբ տարածման համար գումարներ են ծախսվում, քարոզիչներին վարձատրում են, դա արդեն կրոն չէ, դա կամ քաղաքականությամբ պայմանավորված որևէ նպատակի գովազդ է կամ ձեռնարկատիրական գործունեություն: Ոչ մի կրոն հաջողություն ունենալ չի կարող, եթե այն արհեստական է:

- Բոլոր կրոնների հիմնական նպատակը մարդու բարոյականության ձևավորումն է, նրան չափավոր, մարդկային էությանն ու կերպարին հարիր արարչահածո բնույթ հաղորդելը, մարդու գիտակցության մեջ բարու արմատավորումն ու չարի նկատմամբ հակարանք առաջացնելը: Սակայն տարբեր ազգերի, ժողովուրդների մոտ



Առհասարակ, կրոնական սկզբունքները հիմնված են Արարչի նկատմամբ անքննելի հավատի, մերձավորի նկատմամբ սիրո (եթե նա նույն դավանանքից է), իշխանավորի նկատմամբ հավատարմության վրա (եթե այլ բան հնարավոր չէ):

- Արարչի և նրա առաջալների նկատմամբ նման անքննելի հավատն ու նվիրվածությունը մարդուն պետք էր նրա մարդկային կերպարի ձևավորման սկզբնական շրջանում, երբ նոր-նոր էին ձևավորվում մարդկային բանականության, մարդկային հասարակության և ներկայիս քաղաքակրթության սաղմերը: Այդ առումով կրոնները միջոց էին՝ մարդուն ստիպելու իրեն զգալ մարդկային հասարակության անդամ, ընդունելու իր ազատությունները սահմանափակելու և իր կենսագործունեության մեջ ի վերուստ տրված կանոններին ու օրենքներին ենթարկվելու անհրաժեշտությունը: Իրենց

Աերքին բովանդակային հակասություններով ու պարզունակ բացատրություններով հանդերձ, կրոնները մարդկային նոր ծևավորվող բանականության վրա ծեռք են բերել մեծ ազդեցություն, շնորհիվ այն բանի, որ ինչ-որ ծևով կարողանում են բավարարել մարդկային հետաքրքրասիրությունը՝ կյանքի ու մահվան, բարու ու չարի, նյութականի ու ոգեղենի, բնության երևույթների և այլ բազմաթիվ հարցերի մասին: Մարդուն հատկապես շատ է հուզում և անհանգստացնում հանդերձալ կյանքի հեռանկարը: Մարդկային բանականությունն ի սկզբանե (և առ այսօր) չի ընդունում և չի պատկերացնում իր կարծատն կյանքի աննպատակ, ինքնին լինելը, իրենից հետո և իր կամքից անկախ կյանքի շարունակումը, իր ու բնության ցանկացած արարածի միջև «կյանք» երևույթի նույնականությունը:

Գիտության ու տեխնիկայի զարգացումը միջնադարի վերջում, շատերի մեջ առաջացրեց ամեն ինչ մաթեմատիկայի ու մեխանիկայի օրենքներով բացատրելու ինքնավատահությունը, դարվինիզմը հավակնեց կյանքի ծագումն ու զարգացումը բացատրել տեսակների միջև գոյության պայքարի ու բնական ընտրության պատճառով: Այստեղից էլ աթեկամի արարչամերժ գաղափարախոսությունը, որին հատկապես նպաստեցին կրոնական դոգմաների պարզունակությունը, հակասականությունն ու հավակնոտությունը և առանձնապես, փաստերի համառ մերժումը տգետ կրոնավորների կողմից:

- Մարդն իր մտքի ուժով արդեն թափանցում է ատոմի խորքերից մինչև տիեզերքի խորքերը, բացահայտում կյանքի ու գենետիկայի գաղտնիքները: Եվ ինչքան խորն է թափանցում, այնքան համոզվում է այդ ամբողջի համակարգվածության, փոխայմանավորվածության և պատճառական կապի նպատակահարմարության մասին և դրանց բոլորի ինքնիրեն, ներքին զարգացումներով, թեկուզ հարյուր միլիոնավոր տարիների ընթացքում, առաջանալու անհնարինության մեջ: Եվ այստեղ արդեն մարդը գիտակցորեն է գումար ազդող արտաքին ուժի անխուսափելիությունը, նրա ամենազորությունն ու գերիմաստությունը:

Արարչի, այսինքն՝ արտաքին, մարդու կամքից անկախ, ազդող ուժի գոյությունը համարյա բոլորն են ընդունում, թեկուզ ներքուստ: Այժմ ամբողջ իհմնախնդիրը դիտվում է այլ՝ Արարչի կամքը հասկանալու, բնության ու կյանքի նպատակի, մարդու դերի, Արարչի միջամտության հետևանքների, ոգու և այլ անհասկանալի երևույթներն ըմբռնելու և մարդկային իմացության մակարդակով պարզաբանելու տեսանկյունից:

- Մարդկության զարգացման, ազգերի ու ժողովուրդների ճակա

տագրերի, առանձին նշանավոր անհատների հայտնվելու ու գործունեության, պատմության ընթացքի վրա ազդող անսպասելի ու անկասելի երևույթների ամբողջ թվացյալ քառսի մեջ զգացվում է որոշակի միտում, որոշակի ուղղվածություն, որի մեջ մարդն իրեն զգում է այն մրջյունի վիճակում, որի վրա ինքն է փորձեր կատարում: Նման դերի ընկալումն ու ընդունումը հակասում է մարդու ներքին էությանը, ինքնավստահությանը, բնությունից վեր լինելու գիտակցությանը: Գոյություն ունեն շատ երևույթներ, որ մարդը չի կարող բացատրել ոչ ֆիզիկայի, ոչ մաթեմատիկայի, ոչ էլ մյուս այն օրենքներով, որոնց հասու է մարդկային գիտակցությունն իր ներկա մակարդակով, և անհայտ է՝ «մարդկային ուղեղ» կոչված բիոհամակարգիչն առհասարակ ընդունակ է դրանք ընկալել: Ֆիշտ այն մրջյունի նման, որն իր մրջյունային գիտակցությամբ ոչ մի կերպ չի հասկանում իրեն դեսուդեն իրող ուժի նպատակն ու պատճառները: Մարդը մրջյունից տարբերվում է նրանով, որ ստիպված ընդունում է այդ երևույթները, հաշվի է առնում իր գործունեության ընթացքում և համակերպվում է այն գիտակցության հետ, որ, թեև փորձում է, բայց առայժմ անզոր է բացատրել և դեկավարել դրանք:

- Արարչի նկատմամբ արիական մոտեցումների մեջ կույր հավատն ու սերը կամ վախը գրավում է ոչ առաջնային տեղ: Արարիչը ոչ բարեգործ է, ոչ պատժիչ ծեռք, ոչ էլ ինքնամեծար միապետ: Նա միակ հզոր ու անվերջ էություն է, որը մարդուն տվել է ինարավորություն և ունակություն՝ սեփական ուժերով հաղթահարելու իր դժվարություններն ու ընթանալու ճակատագրով նախանշված ուղիով, առանց Արարչի վրա դնելու իր մարդկային դժվարություններն ու հոգսերը հաղթահարելու հիմնախնդիրները, այսինքն՝ բացառում է առևտուրը Արարչի հետ գուտ մարդկային մտածելակերպով՝ հավատի դիմաց հովանավորություն: Արիական սկզբունքներում Արարչի նկատմամբ վերաբերմունքի մեջ հիմնականը անսահման հարգանքն է:

- Մարդկանց մեջ սեր ու հավատ կարելի է առաջացնել համոզելու, դաստիարակության, նույնիսկ վախի միջոցով, և նման մեթոդներն օգտագործվում են ոչ միայն կրոնները տարածելիս, այլ նաև բռնակալների կողմից՝ իրենց դիրքերն ամրապնդելու համար: Նման մոտեցումները մարդուն գրկում են ինքնությունից, սահմանափակում արարման հնարավորությունները, դարձնում մտավոր գերի: Իզուր չէ, որ միջնադարում քրիստոնեությունը քարոզելով ներողամտություն ու սեր, միաժամանակ անողոք պայքարում էր գիտության դեմ այն ոլորտներում, որտեղ ստացված արդյունքները հակասում էին կրոնական դոգմաներին: Քրիստոնեությունը քարոզում է հա-

մընդհանուր սեր, իսլամը՝ սեր իր հավատակիցների նկատմամբ, բուլղարականությունը՝ սեր և հոգածություն իր անձի հոգու նկատմամբ: Բայց բոլորը իրենց ենթատեքստում ենթադրում են ատելություն մյուս կրոնների նկատմամբ: Բողոքականությունը, որպես կրոնական ուղղություն, հանդես գալով ճիզվիտների անգթությունների պատճառով, նույն մեթոդներով պայքարում էր կաթոլիկների դեմ: Եթե կաթոլիկ ճիզվիտները մարդկանց այրում էին խարույկի վրա, ապա բողոքականության հիմնադիրներից մեկի՝ Կալվինի հրամանով մարդկանց ժամերով խորովում էին մարմանդ կրակի վրա:

Սերը առ Արարիչ մոտեցումը ոչինչ չի տալիս Արարչի մեծության պատկերացման համար: Սիրել կարելի է նաև թերություններ ունեցողին, այսինքն՝ ընդունել նրա մեջ թերությունների առկայության հնարավորությունը, բայց հաշվի չառնել դրանք, ներել կամ այդ մասին չմտածել, և դրանք չըննարկել: Սերը բնական լինելով ծնողների ու զավակների, սիրահարվածների, մերձավորների միջև, անբնական է արյունախում թշնամիների միջև: Սերը երբեք թշնամուն բարեկամ չի դարձնի, մանավանդ, եթե նա առաջնորդվում է այլ բարոյական սկզբունքներով և Արարչի նկատմամբ այլ մոտեցումներով: Դա է ապացուցում մարդկային քաղաքակրթության պատմության ամբողջ դառը փորձը: Հավատացյալ քրիստոնյաները, ընդունելով կրոնական դոգմաները, մինչև այժմ էլ չեն դադարում իրար կոտորել, նույնն էլ՝ մուսուլմանները: Այսինքն՝ համարյա երկու հազար տարի քարոզվող սերը այնպես էլ չդարձավ հավատացյալների գործելաձևի ելակետ:

Սերը, որպես օգացմունք հատուկ է բարձրակարգ արարածներին: Կենդանին յուրահատուկ ձևով է սիրում իր ձագին, կամ որոշ կենդանիներ ու թռչուններ իրենց յուրահատուկ ձևով են սիրում միմյանց, ընտանի կենդանիները իրենց յուրահատուկ ձևով են սիրում իրենց տիրոջը: Սակայն, եթե նրանց մոտ սերը կարող է տարբերակվել սահմանափակ ձևով, ապա մարդկային հասարակության միջավայրում այդ տարբերակումն ընդունում է բազմաթիվ ձևեր: Բացի այն, որ մարդկանց կողմից սերը կարող է վերաբերվել առարկաներին, երևույթներին, օգացմունքներին (ասենք՝ գեղեցիկի նկատմամբ), այն առավել կարևորվում է մարդկային հարաբերությունների համարյա բոլոր բնագավառներում. կրոններում՝ սերը Արարչի նկատմամբ, սերը օգացկաների նկատմամբ՝ ծնողական սեր, սերը ծնողների նկատմամբ՝ որդիական սեր, սերը տարբեր սերի անհատների միջև՝ սիրահարվածություն (նշենք, որ այն հանդիպում է նաև նույն սեռի անհատների միջև, երբեմն հասնելով այլանդակությունների), սերը մերձավորների, իր ազգի, ժողովողի, հայրենիքի նկատ-

մամբ, նույնիսկ սեփական անձի նկատմամբ՝ ինքնասիրահարվածություն: Քրիստոնեությունը քարոզելով սերը բոլոր մարդկանց, նույն թվում թշնամիների նկատմամբ, դրանում է տեսնում մարդկային քարոյականության ու փրկության միակ ելքը:

Մյուս կողմից անսահման սերը ենթադրում է անձնազոհություն որևէ նպատակի համար: Այդ դեպքում ո՞վ կարող է ասել, թե տվյալ պահին որն է Արարչի նպատակը, և արդյոք այդ անձնազոհությունը Նրա նպատակին օգնում է, թե՝ խանգարում:

Նույն է հավատի վերաբերյալ: Յավատալ նշանակում է, առանց քննելու ամբողջովին ընդունել ինչ-որ մեկի խոսքերը, հավաստիացումները, քարոզչությունը: Այսինքն՝ հավատալ Արարչի անունից հանդես եկողներին, կուրորեն վստահել նրանց խոսքերին և չնկատել կամ հաշվի չառել նույն քարոզչի վարվելակերպը՝ անձնական խնդիրներ լուծելիս:

Քարոզել հավատ ու սեր, ուրիշներին համոզել սուրբ գրքերի պատգամներով, բայց անձամբ հակված չլինել դրանք կատարելուն. դա ոչ միայն կեղծավորություն է ու երեսպաշտություն, այլ և Արարչի անունից կատարվող խարեբայություն, հանցագործություն: Մարդուն հավատացնել, թե նա Արարչի ստրուկն է և ինքնակոչ հանդես գալ վերակացուի դերում, դա նախամարդու կատարելագործված վարվելածն է:

Կույր հավատն իր մեջ պարունակում է նաև հիասթափության վտանգ: Քի՞չ են Արարչի անարդարության կամ անիրավության մասին դժգոհությունները, երբ անձը կարծում է, որ ինքն անմեղ է, արդար ու բարի, բայց Արարիչը դրանք հաշվի չի առնում, իր նկատմամբ վարվում է անարդար, սխալ, որ ինքը հավատում է Արարչի արդարությանը և փոխարենը նրա կողմից հանդիպում է անարդարության:

- Սակայն հարգելը նշանակում է գնահատել արժանիքները, ընդունել մեծությունը, մշտապես լուրջ ու պատկառանքով վերաբերվել հարգանքի արժանի անձին:

Յարգանք առ Արարիչ, նշանակում է ընդունել Նրա տիեզերաստեղծ ու կենսատու էությունն ամբողջությամբ, չկասկածելով նրա ծշմարտացիությանը և ելնելով այն գիտակցումից, որ Նրա ծշմարտությունը հասկանալու համար մարդկային բանականությունը դեռ շատ է հեռու: Նշանակում է նաև հույս ունենալ, որ մաս առ մաս, բարոյականության զարգացման շնորհիվ, Արարչի թույլատրած չափաբաժիններով, գիտակցության օգնությամբ մարդը կընթանայդ անսահման ծշմարտությունն աստիճանաբար ըմբռնելու և Արարչի կողմից իրեն վերապահված առաքելության իրականացման

**Ծանապարհով:**

Յարգել նշանակում է նաև, ընդունելով Արարչի գործերը, վար-վելակերպը, նպատակը իր կողմից չհասկանալը և համաձայնվել, որ դրանք կարող են և չհամընկնել իր սեփական շահերին: Յար-գանքն առավել ընդգրկուն և ընդհանուր գգացմունք է և կարող է համատեղվել մարդկային համարյա բոլոր զգացմունքների հետ, քանի որ այն բխում է մարդու գիտակցությունից: Շատ ավելի վեհի-մաստ է հարգանքի համատեղումը Արարչի նկատմամբ սիրո և հա-վատի հետ, մերձավորի նկատմամբ սիրո հետ, այլախոհի նկատ-մամբ հանդուրժողականության, համբերատարության հետ: Վեր-ջապես, թշնամու նկատմամբ ատելության հետ հարգանքի համա-տեղումը հնարավորություն է տալիս միշտ զգաստ լինել նրա որո-գայթների նկատմամբ, չարհամարհել և չանտեսել նրա հնարավո-րությունները և նրան հաղթելու համար մշակել առավել արդյունա-վետ միջոցներ:

Բնության մեջ «հարգանք» հասկացությունը գոյություն չունի (թերևս դրան փոխարինում է վախը. բայց երբ թույլը զիջում է ուժե-ղին, դա ոչ թե հարգանքից է, այլ վախից) և բացահայտվում է ա-ռանձին մարդկային անհատների կամ հանրույթների միջավայրում միմյանց, բայց ոչ երբեք առանձին գոյածների ու երևույթների նկատմամբ:

Սերն ու հարգանքը մարդու մեջ զուգահեռ «գործող» զգաց-մունքներ են, երբեմն նաև միասին կամ միմյանց լրացնող: Բայց, ե-թե մարդկային որոշ հարաբերություններում սերն անկիրառելի է ու անբնական, ապա հարգանքը կիրառելի է բոլոր հարաբերություն-ներում, նույն թվում նաև հեռավորների ու մերձավորների միջև: Փաստորեն, սկսած սեփական անձից (ինքնահարգում) և վերջա-ցած Արարչի ու մարդկության նկատմամբ, հարգանքն իր մեծու-թյամբ լինելով շատ կամ քիչ, նույն է և տարբերակման ենթակա չէ:


Վերջապես, հակադրությունների միասնության ու պայքարի օ-րենքի համաձայն սիրո հակադրությունն ատելությունն է, այսինքն որտեղ կա սեր, նրա ստվերում առկա է նաև ատելությունը: Եվ ի-րոք, սիրո օբյեկտի նկատմամբ ցանկացած ոտնձգություն կարող է առաջ բերել մարդկային բնական ատելություն ոտնձգողի նկատ-մամբ, վրեժինդրության պահանջ: Նույնիսկ Յ. Թումանյանն իր «Մի կաթիլ մեղրը» հեքիաթում, որպես ավերիչ պատերազմի պատճառ հնարավոր է համարում խանութպանի սերը կատվի կամ հովվի սերը իր շան նկատմամբ: Իսկ ատելությունն ընդհանրապես մարդկությանը հասած բոլոր չարիքների պատճառներից մեկն է:

Յարգանքի հակադրությունն արհամարհանքն է: Արհամարհան-


**թի պատճառով մարդ չեն սպանում:**

Այլ երևույթների, զգացմունքների, առարկաների նկատմամբ «հարգանք» հասկացությունը տարածել հնարավոր չէ (Երբ ասում են հարգում են զգացմունքը, ապա այն վերաբերում է միայն այդ զգացմունքը կրող անձին): Այլ խոսքով՝ հարգելը վերաբերում է մարդկային հասարակությանը և այդ հասարակության մեջ ընդունած բարձրագույն արժանիքներին: Հարգելը գուտ մարդկային հատկանիշ է, սերը կարող է լինել նաև ոչ մարդկային:

- Արարչի ստեղծած գոյաձևերի, նրանց հատկությունների և փոխհարաբերությունների մեջ սխալներ կամ թերություններ չկան: Կան թերություններ դրանց վերաբերյալ մարդկանց պատկերացումներում՝ մարդկային իմացության անկատարելության պատճառով, և բնության թերությունների մասին դատելը խոսում է նրանց մտքի անկատարության, միակողմանի ինքնավստահության, մեծամտության և Արարչի գործելակերպին վերաբերող հարգանքի բացակայության մասին: Իսկ այդ հատկանիշները միայն տգիտության արդյունք են: Յնագույն իմաստնությունը սահմանում է՝ «իմաստունը նա է, ով հասկանում է, թե ինչքան քիչ բան գիտի ինքը»:



# Մարդու Ակադեմիական Ակտելությունը



Մարդկային գիտակցության մեջ սովորաբար «բնություն» հասկացությունը ասոցացվում է երկրագնդի կենդանական ու բուսական աշխարհի և նրա գոյատևման միջավայրի հետ: Երկրագնդի վրա «անկենդան բնություն» արտահայտությունը գուտ պայմանական է, ցանկացած անկյունում կյանքը գոյություն ունի: Այդ տեսակետից «Լուսնի բնություն» (որտեղ լեռներ ու փոշի է), կամ «Յուպիտերի բնություն», որտեղ միայն ամիակի գագեր կամ ուրիշ, կյանքի համար ոչ պիտանի նյութեր են, կամ կյանքի, մարդկության համար անհայտ, այլ սկզբունքների վրա հիմնված ձևեր, «բնություն» հասկացությունը մարդկային պատկերացումների հետ չեն համատեղվում: Յավանական է հետագայում նրանց համար մարդկությունը այլ հասկացություններ կմտածի:

Այլ խոսքով, բնության հիմնական բնորոշիչը կյանքն է: Ինքնաճանաչման հենց սկզբից, այսինքն՝ այն պահից, երբ մարդը օգաց բնությունից իր առանձնացվածությունը, բնության վրա ազդելու հնարավորություններով և այլ արարածների համեմատ հատուկ հատկություններով օժտված լինելը (այլ խոսքով՝ Արարչի կողմից իր ընտրյալ լինելը), փորձեց հասկանալ իր գոյության, կյանքի, առաքելության իմաստը: Յազարավոր տարիներ, բազմաթիվ իմաստուններ զբաղվել են, զբաղվում են և կզբաղվեն այդ խորհրդածություններով: Այդ հարցին փորձել են որոշակի պատասխաններ տալ նաև կրոնները: Առաջարկվել են տեսություններ, գաղափարներ, վարկածներ՝ ելնելով տվյալ դարաշրջանի իմացաբանական մակարդակից: Ամեն մի դարաշրջանում, հավակնելով կռահել Արարչի կամքը, մարդը փորձում է ինչ որ ձևով արդարացնել իր գոյությունը,

սակայն ի վերջո կամաց-կամաց ստիպված է ընդունել, որ անկախ իր կամքից ինքը մասնակցում է Արարչի արարմանը, չգիտենալով դրա վերջնական նպատակը: Օմար Խայամի խոսքերով՝ «ոչ ոք չգիտի, թե մարդը ինչո՞ւ աշխարհ պիտի գա և գալուց՝ ինչո՞ւ պիտի հեռանա...»: Մարդն ազդում է բնության վրա, արհեստականորեն ստանում կենդանիների և բույսերի նոր տեսակներ, նոր նյութեր ու երևոյթներ, որոնք բնության մեջ չեն եղել: Յնարավոր է, որ դրանք հետագայում կառաջանային, կամ կամ տիեզերքում՝ ինչ-որ հեռուներում, մեր կամ ուրիշ գալակտիկաներում, բայց մարդը դրանք ստեղծեց իր ցանկացած հատկություններով և դրանով բազմացնե-

Բ.



## ՀՅԱՆՔ

### ՊՆԴՐՈՅԱՆ ՄՌԱՋ

Իրոք, եթե փորձենք իրատեսորեն դատել, առհասարակ կյանքը բնության մեջ կարծես հարմարեցված է մարդու կենսապահովման համար: Կարծես բոլոր բույսերի ու կենդանիների կյանքի նպատակն է տվյալ անհատի ժամանակավոր և տեսակի երկարատև գոյատևման ապահովումը, իսկ մարդկության նպատակը՝ նաև անընդհատ մտավոր զարգացումն է, առաջադիմությունն ու արարումը՝ բնության ընձեռած հնարավորություններն ու միայն իրեն տրված գիտակցությունն օգտագործելու միջոցով:

- Երկրագունդն ի սկզբանե նման է մի հսկայական փորձադաշտի, որտեղ փորձարկվում են կյանքի տարրեր ձևեր, կենդանիների տարրեր տեսակներ, և դրանցից ընտրվում է մեկը. Իենց նման ընտրությունն էլ, թերևս, մի հերթական քայլ է եղել մարդու ստեղծման գործնթացում: Յայտնի է, որ կյանքի նախնական ձևերը միաբնից օրգանիզմների տեսքով առաջացել են օվկիանոսում, բայց, թե ինչպես պատահեց, որ անօրգանական անհրաժեշտ նյութերը պատահականորեն միանալով, ստեղծեցին չափազանց բարդ քիմիական մոլեկուլների շղթաներ՝ անհրաժեշտ կառուցվածքով, անհրաժեշտ փոխադարձ կապերով՝ դառնալով կյանքի նախահիմքը՝ միաբնից արարածը, իր միջուկով, միջուկը շրջապատող նյութով և թաղան-

թով, և ամենակարևորը, բազմանալու ընդունակությամբ ու ժառանգականությամբ, այսինքն՝ իր սերունդներին այդ հատկությունները փոխանցելու և, միաժամանակ, նրանց՝ դարերի ընթացքում որոշակի ուղղությամբ փոփոխվելու, փոփոխվող պայմաններին հարմարվելու և զարգանալու ընդունակությամբ, որը ոչ մի հավանականության տեսությամբ հնարավոր չէ բացատրել (գիտության մեջ այն հայտնի է «ծագումնաբանության հիմնախնդիր» անունով, որը առայժմ բացատրված չէ):

Օվկիանոսում ջուրը այդ նախնական կյանքի ձևերին պաշտպանում էր տիեզերական և միգուցե նաև այլ ճառագայթներից, և բացի դրանից, կյանքի համար անհրաժեշտ անօրգանական նյութերը լուծված լինելով ջրում հեշտ էին յուրացվում այդ նուրբ օրգանիզմների կողմից: Զարգանալով ջրում, կյանքի արդեն ավելի բարդ ձևերն անցել են ցամաք՝ սկզբում բույսերի տեսքով, կարծես անհրաժեշտ քանակությամբ թթվածին արտադրելու և պատրաստվելով սնունդ դառնալու՝ իրենցից հետո ցամաք դուրս եկող կյանքի կենդանական ձևերի համար: Կենդանական ձևերի նպատակն էլ եղել է առաջացնել բազմաթիվ տեսակներ, մինչև որ նրանցից մեկը կդառնար մարդանման արարածի երևան գալու նախահիմք: Բոլոր այդ տեսակների նպատակը եղել է ինքնապահպանումը և սերնդատվությունը՝ օգտվելով բնության տված պատրաստի սնունդով: Մարդ արարածն արդեն հնարավորություն ուներ բնությունից վերցնելու այն, ինչ ինքն էր ցանկանում, անհրաժեշտ քանակությամբ ու հատկություններով և կարող էր ցանկացած ձևով փոխել իր շրջապատի բնությունը, դուրս գալ տիեզերը: Բայց օվկիանոսն իր մեջ ամբարված ջրով ու պլանկտոնով մնաց երկրի ամբողջ բնության ու կյանքի ապահովման մշտական աղբյուրը:

- Այս պարզունակ թվարկումը թույլ է տալիս նկատել որոշակի միտում, նպատակառուղղվածություն: Ստացվում է, որ մինչև ժամանակակից մարդու երևան գալը «կյանք» երևույթն անցել է հետևյալ հիմնական փուլերով (ընդ որում, յուրաքանչյուր փուլի վերջում ստացվել է որևէ նպատակային արդյունք, այն տեղափոխվել և շարունակել է իր զարգացումը հաջորդ փուլում): օվկիանոսային փուլում առաջացել է կյանքը՝ միաբնից արարածից հասնելով մինչև բարդագույն կառուցվածքով ծովային կենդանիներին: Այդ փուլի ընթացքում ի վերջո առաջացել են այնպիսի արարածներ, որոնք ընդունակ են եղել ցամաք դուրս գալ և հաջորդ՝ ցամաքային փուլի ընթացքում զարգանալ: Մնացած միլիոնավոր տեսակները մնացել են ջրում, ցամաքի բնությունից ու տիեզերից անջրապետվել են ջրային մակերևույթով և թողնվել ինքնահոսի, միայն ինքնա-

պահպանության բնագդով, նույնիսկ սերնդապաշտպանության բնագդի բացակայությամբ, մասնակցելով հաջորդ փուլի գոյապահպանությանը: Զեները, հիմնականում, չեն հոգում իրենց ձկնկիթի մասին և նույնիսկ խժում են իրենց ձագերին, ունեն իրենց քաշի համեմատ փոքր ծավալի ուղեղ, այսինքն՝ «մտավոր» ցածր մակարդակ (դեռևս ոչ մի ծովային կենդանու, չհաշված դելֆինազգիներին, որոնք հանդիսանում են ցամաքից ծով վերադարձած կաթնասուններ, չի հաջողվել վարժեցնել. չմոռանանք նաև, որ միայն դելֆինազգիներն են հոգում իրենց սերնդի մասին՝ կրծքով կերակրում, պաշտպանում):

Երկրորդ փուլում ցամաք դուրս եկած կենդանիների մեջ միլիոնավոր տարիների ընթացքում առաջացել ու զարգացել են տարբեր կառուցվածքի, կենսաապահովման տարբեր սկզբունքներով օժտված արարածներ (որոնք շարունակում են ապրել կամ վերացել են) և ի վերջո առաջացել է նախնադարյան մարդը, որն իր ֆիզիկական հատկություններով և բանականություն ձեռք բերելու ունակությամբ պատրաստ է եղել անցնելու հաջորդ փուլը: Իհարկե, այս երկու փուլերն իրենց հերթին բաժանվում են ենթափուլերի՝ օվկիանոսում պարզ միաբջջից մինչև ավելի բարդ օրգանիզմներ, ձկներ, կամ ցամաքում՝ երկկենցաղներ, սողուններ, կաթնասուններ, բայց դա էությունը չի փոխում:

Երրորդ փուլն արդեն գիտակցականն է: Այս փուլն անցել է միայն մարդը, իսկ մյուս արարածները մնացել ու ապրում են միայն վերջինիս սնունդն ապահովելու և բնության մեջ իրենց տեսակը պահպանելու միջոցով կյանքի ներդաշնակությունը ապահովելու համար: Երկրորդ փուլում մնացած արարածները, չհաշված միջատներին, արդեն ունեին որոշակի «մտավոր» մակարդակ (որանց կարելի է որոշ բաներ սովորեցնել, վարժեցնել), որոշ ժամանակահատվածում հոգում են իրենց ձագերի մասին: Նրանք կարող են մարդու կողմից վարժեցվելով հասնել որոշակի «գիտակցական» մակարդակի՝ կապված կոնկրետ, բայց ոչ վերացական մտածողության հետ: Այս փուլում կենդանիների որոշ տեսակներ առ այսօր ել ստեղծվում են, բայց ոչ թե բնության, այլ մարդու կողմից՝ որոշակի նպատակային հատկություններով: Նեարդենտալյան մարդը չնայած պարզունակ գործիքներից օգտվելու ընդունակությանը, մնում է այս փուլում: Այս փուլի արարածների մեծ մասը բույն է պատրաստում, ընդ որում, նպատակահարմարության տեսակետից՝ անթերի ու ճաշակով. ազռավը կարող է քարով ջարդել ընկույզը, կապիկը կարող է ճյուղեր նետել թշնամու վրա, նույնիսկ ծիծառել, բայց չնայած ձեռքերի առկայությանը, դեռ ոչ մի կապիկ նետաղեղ չի հնարել: Նեարդենտա-

լյան մարդը ևս մյուս արարածների նման ապրում է գոյապահպանության և տեսակը պահպանելու կենդանական բնազդով և զարգացման գործընթացին չի մասնակցում:

Վերջին փուլ անցած արարման ու վերացական մտածողության ընդունակ կրոմանյոնյան մարդն արդեն այն մարդ է, որն ակտիվորեն, արարման միջոցով մասնակցում է կյանքի զարգացմանը և արդեն դուրս է գալիս տիեզերք, ընդորում ոչ միայն հանուն սեփական կենսապահովման, այլ նաև բնության, տիեզերքի գաղտնիքների մեջ ներթափանցելու, օրինաչափությունները հասկանալու, ճանաչողական նպատակով:

Այս փուլերն իրագործվել են բնության մեջ կատարվող հզոր աղետների, իրաբուխների, աշխարհագրական համընդհանուր ծևափոխությունների, բազմաթիվ բնական ու տիեզերական երևույթների ուղեկցությամբ ու հնարավոր է նաև՝ դրանց միջոցով: Երրորդ փուլի ժամանակ այդ երևույթներն աստիճանաբար թուլացել են, երբեմն միայն հանդես գալով այնքանով, որքանով անհրաժեշտ է տվյալ պահին մարդկության գիտակցական զարգացմանն օժանդակելու համար:

- Կրոմանյոնյան մարդու առաջացման վերաբերյալ կա տեսակետ, որ նա առաջացել է Հյուսիսային Աֆրիկայում, ինչ-որ տեղ, և հետո տարածվել ամբողջ աշխարհում (ինչպես Աստվածաշնչում Աղամն ու Եվան): Այդ տեսակետը միանգամայն հնարավոր է, թեկուզ այն պատճառով, որ մարդկային կմախքների գտածոները դասակարգելիս երևում է 2,5 միլիոն տարուց մինչև մի քանի տասնյակ հազար տարին ընկած ժամանակահատվածում մարդանման արարածի զարգացման փուլերը՝ նախակապիկից մինչև նեանդերտալյան մարդը: Վերջինս կարողացել է քարե գործիքներ պատրաստել, օգտագործել սրածայր նիզակ, բայց իր ֆիզիկական կառուցվածքով բավականին տարբերվելով ժամանակակից մարդուց, նրա անմիջական նախորդը չի կարող համարվել: Եվ ահա նույն վերջին տասնյակ հազար տարիների ընթացքում հայտնվում է ժամանակակից մարդու նախատիպը՝ կրոմանյոնյան մարդը, որի ֆիզիկական կառուցվածքն առ այսօր էապես չի փոփոխվել, նույն թվում նաև ուղեղի ծավալը: Այսինքն՝ նեարդենտալյան մարդն առաջացել է մյուս արարածների նման էվոլյուցիայի ու բնական ընտրության ճանապարհով, իսկ կրոմանյոնյան մարդը՝ ինչ-որ տեղից, հանկարծակի. ընդ որում, գոյություն է ունեցել նրա հետ միաժամանակ քառասուն-հիսուն հազար տարի առաջ: Սովորական էվոլյուցիայով նեարդենտալյան մարդուց կրոմանյանին անցնելու համար անհրաժեշտ կլիներ հարյուր հազարավոր տարիներ, ընդ որում նրանց

միջև ընկած միջանկյալ մարդանման արարածը այսպես կոչված «պակասող օղակը», չնայած մանրակրկիտ փնտրտուքներին, առ այսօր չի հայտնաբերված: Իսկ ինչ վերաբերում է ժամանակակից մարդու ծննդավայրի մասին Աստվածաշնչում նշված Հայկական բարձրավանդակում գտնվող դրախտի և մարդաբանների, չգիտես որտեղից, ենթադրած Հյուսիսային Աֆրիկայի միջև եղած տարբերությունը, դա արդեն մնում է վերջիններիս խղճին: Կրոմանյոնյան մարդն արդեն օգտվում էր նետաղեղից, այսինքն, արդեն նա ուներ վերացական մտածողություն և հետևաբար մարդ դառնալու ունակություն, այլ խոսքով, նա արդեն նախնադարյան մարդ էր: Բայց, ամենակարևորը՝ կրոմանյոնյան մարդն ուներ ինքնազարգացման և բնությունից սովորելու ունակություն:


- Այժմյան մարդաբանությունը միանգամայն ինարավոր է համարում նախնադարյան մարդու տարածումն ամբողջ աշխարհում (Աներազյալ Ավստրալիան ու Ամերիկան) և ժամանակակից ռասաների առաջացումը՝ տարբեր կլիմաների ու աշխարհագրական միջավայրի ազդեցության տակ: Բայց այստեղից հետևում է, որ այն պնդումը, թե կրոմանյոնյան մարդը բացարձակ անփոփոխ է եղել առ այսօր, այնքան էլ ծիշտ չէ, որովհետև ռասաներն իրարից տարբերվում են ոչ միայն մաշկի գույնով, այլ նաև մարդաբանական որոշ այլ հատկանիշներով, (օրինակ գանգի կառուցվածքով): Ընդ որում, այդ փոփոխությունները կատարվում են ավելի արագ, քան սպասելի է, նույնիսկ մեկ կամ մի երկու սերնդի ընթացքում: Օրինակ, նկատված է, որ մանուկ հասակում Զինաստան տեղափոխված եվրոպացին հասուն հասակում շատ է նմանվում չինացու կամ Արաբական երկրներում՝ արաբի (իհարկե, դա ընդհանուր երևույթ չէ. Աֆրիկա տեղափոխվածը նեգրի չի նմանվում, իսկ սպիտակամորթ ծնողներից նեգր երեխա ծնվելն այլ բացատրություն ունի):

Նկատված է նաև մարդկանց դիմագծերի փոփոխությունների տարբեր դեպքեր: Օրինակ, հաճախ ամուսինները տարիների ընթացքում նմանվում են իրար, որդեգրած երեխաները նմանվում են իրենց որդեգրողներին: Հետաքրքիր սովորություն կա հայ նահապետական ընտանիքներում. տան մեծերը հղի կանանց խորհուրդ են տալիս շատ նայել գեղեցիկ կանանց կամ տղամարդկանց, և իրոք, հաճախ նորածինը նմանվում է նրանց՝ չնայած ազգակցական կապի բացակայությանը: Պատահել են դեպքեր, երբ հղի կնոջը շատ է դուր եկել ուրիշի երեխայի դեմքի այս կամ այն նշանը և նույն նշանն ունեցել է իր նորածինը: Այսինքն, աշխարհագրական միջավայրը, հոգեբանական գործոնները մեծ ազդեցություն են թողնում մարդու դիմագծերի վրա և բացառված չեն, որ նման երկարատև ազդեցութ-

յունը կարող էր դեր կատարել ռասաների ձևավորման գործում: Բայց բոլոր ռասաները միասին վերցված, դա նույն կրոնանյոնյան մարդն է՝ իր գիտակցության զարգացման ունակությամբ:

Փաստորեն ստացվում է, որ հարգելի մարդաբաններն էլ, փաստերի նկատմամբ իրենց խստապահանջությամբ և կասկածամտությամբ հանդերձ, ստիպված հանգում են Աստվածաշնչում այլաբանորեն տված մարդու առաջացման պատմության մեջ ծշմարտության միջուկի առկայությանը:

- Այստեղ բնականաբար հարց է առաջանում, թե ինչի էր պետք նախորդ բազմամիլիոն տարիների շղթան, որը պետք է վերջանար նեարդելտանյան մարդով և կտրվեր (տվյալ դեպքում հնարավոր է կտրվելը ևս պայմանական համարել, որովհետև առ այսօր երբեմն հաղորդագրություններ են հանդիպում երկրագնդի խուլ վայրերում, հեռավոր ծյունապատ լեռներում դեգերող, այսպես կոչված «Ճնե մարդու» մասին, որի արտաքինը, ըստ նկարագրության, շատ է նմանվում նեարդելտանյան մարդուն: Մյուս կողմից, ժամանակակից մարդկանց մեջ էլ հազվադեպ չեն անհատները՝ սովորական մարդու արտաքինով, բայց նեարդելտանյան մարդու էությամբ): Ստացվում է, որ Արարիչը մարդուն ստեղծելու համար կատարել է



- Բնության կենդանական գոյածների ստեղծման պահից բազմամիլիոն տեսակներ են առաջացել ու վերացել և այժմ էլ միլիոնավոր տեսակներ կան: Այդ բոլոր գոյածներից միայն մարդն է, որ իր ֆիզիկական կառուցվածքով, բնության պայմաններին իր հարմարվածությամբ, հիվանդությունների ու բնական արհավիրքների նկատմամբ իր դիմացկունությամբ կարողացավ գոյության կռվում ապացուցել իր առավելությունը մյուս գոյածների նկատմամբ: Մարդը կարող է ապրել բնության բոլոր միջավայրերում՝ անապատներում ու սառուցների վրա, լեռներում ու ջունգլիներում, ջրում և

օդում, նույնիսկ տիեզերքում: Մարդն ամենակեր է, երկար ժամանակ կարող է առանց սննդի դիմանալ, կարող է իր հավաքական ուժով գերազանցել մնացած բոլոր արարածներին, չափվել բնական ցանկացած երևույթի հետ: Բայց ամենակարևորը՝ մարդը կարողացավ իրեն ենթարկել կրակը, որից բոլոր արարածները սարսափում են: Եվ, վերջապես, միայն մարդն է, որ ունի հիշողություն ինքն իր մասին, ինչը չունեն այլ արարածները, որոնք հիշողություն ունեն միայն արտաքին երևույթների մասին: Որոշ մարդաբանների կարծիքով, մարդու հիմնական բնորոշիչը չորս հատկանիշների գուգորդումն է, որ չունեն այլ արարածները՝ ուղղաձիգ կմախք, բացարիկ շարժուն ձեռքեր, եռաչափ գունավոր տեսողություն և իր բարդությամբ յուրահատուկ ուղեղ: Բայց, իհարկե, դա բնորոշ է ընդհանրացված մարդ հասկացությանը և առաջին երեք հատկանիշները ստորադաս են վերջինի նկատմամբ: Կույր կամ հաշմանդամ մարդն իր ուղեղի հնարավորություններով երբեմն կարող է գերազանցել մնացած բոլոր հատկանիշներով օժտված մարդուն: Բայց մարդաբաններն ուշադրություն չեն դարձրել մարդու մարմնի մի հինգերորդ բացարիկ առանձնահատկության՝ բրդե ծածկի՝ մորթու բացակայության վրա, որով ծածկված են համարյա բոլոր կենդանի արարածները (նույնը վերաբերում է նաև թռչունների փետուրներին կամ սողունների կարծր մաշկին), թեև կան նաև բացառություններ, նույն թվում նաև նեարդելտանյան մարդու պարագայում: Մորթու բացակայությունը ստիպեց մարդուն իր մարմինը ծածկել գազանների մորթիով, որը հագուստի նախատիպը հանդիսացավ: Բայց ամենից կարևոր մարդու նուրբ մաշկի քիչ ուսումնասիրված այն հատկությունն է, որ նրա ներքին օրգաններն իրենց ազդանշանային կետերն ունեն արտաքին մաշկի առանձին հատվածներում, և դրանց վրա ազդելով կարելի է կարգավորել համապատասխան ներքին օրգանի աշխատանքը: Այդ երևույթն այժմ լայնորեն օգտագործվում է ասեղնաբուժության (չինական բժշկության) մեջ և մեծ արդյունքներ է տալիս: Նման հատկությամբ դժվար թե օժտված լինի կենդանու հաստ մորթին, որը հեշտությամբ անջատվում է մարմնից, համենայն դեպս, այդ մասին առայժմ տվյալներ չկան:

- Ուրիշ խոսքով՝ մարդու մարմինը, թե իր ֆիզիկական կառուցվածքով և թե ներքին ու արտաքին մասերի փոխադարձ կապերով խիստ տարրերվում է բնության այլ արարածներից: Նշված հատկանիշները կարելի կլիներ համարել բավարար, եթե բացառեինք մի այնպիսի, չնայած վիճելի, բայց կարևոր հատկանիշը՝ հոգին: Հոգին առ այսօր Արարչական այն երևույթներից մեկն է, որը փաստերով բացատրված չէ, չնայած հայտնի են որոշ լուսանկարներ, որտեղ


Երևում է մեռնող մարդուց հոգու հեռանալը: Նույնիսկ նկատվել է դեռևս կենդանի և արդեն մեռած՝ նույն մարդու քաշերի տարբերությունը մի քանի հարյուր գրամով կամ մարդու գլխի շուրջը նկատվող լուսապսակը, որը ևս բացատրվում է նույն հոգու առկայությամբ:

- Որոշ աստվածաբաններ գտնում են, որ հոգին մարդու մեջ գտնվող Արարչական մասնիկն է, այսինքն՝ Արարիչը մարդուն, բացի գիտակցությունից, տվել է նաև հոգի, ընդ որում, եթե գիտակցությունը կապված է ուղեղի հետ, ապա հոգին՝ սրտի հետ:

Բոլոր կրոններում էլ ընդունում են, որ հոգին անմահ է ություն է և մեռնելիս լքում է մարմինը: Յնդկական որոշ կրոններ պնդում են, որ մարմինը լքելուց հետո, մարդու հոգին անցնում է այլ արարածներին, այսինքն՝ այլ արարածներն էլ հոգի ունեն: Եվ այդ արարածները սատկելիս ու ծնվելիս, հոգին անընդհատ տեղափոխություններ է կատարում, մինչև որ գտնում է նոր ծնվող մարդու: Ուրիշ խոսքով, եթե հաշվենք, թե յուրաքանչյուր պահին որքան արարածներ են ծնվում ու սատկում, ապա կստացվի, որ շրջապատը լցված է նոր ծնվող արարածներ փնտրող հոգիներով: Այս մոտեցումով, իհարկե, կարելի է բացատրել որոշ մարդկանց բնավորության մեջ այս կամ այն կենդանուն բնորոշ գծերի առկայությունը: Բայց, եթե ելնենք Արարչագործության նպատակահարմարության սկզբունքից, ապա հոգու այդ բազմակի տեղափոխությունները կլիներ ավելորդ: Մյուս կողմից, եթե հոգին Արարչի մի մասնիկն է և մարմնին հաղորդում է Արարչի էության մի մասը, ապա նրա առկայությունն այլ արարածների մեջ անիմաստ կլիներ, քանի որ նրանք չեն արարում: Այստեղ թերևս միակ վերապահումը կլիներ այն, որ հոգին ոչ թե արարման, այլ ընդամենը կյանքի հատկանիշն է, բայց այդ դեպքում ստացվում է, որ նույն հոգին տարբեր ժամանակներում կարող է լինել և մարդու, և նրան սպանող մանրէի մեջ: Մնում է ենթադրել, որ, եթե կա հոգու տեղափոխություններ, ապա դա կատարվում են միայն մարդկանց միջև և մարդը մեռնելիս այն տեղափոխվում է նոր ծնվող մարմնի մեջ: Թերևս դրանով կարելի է բացատրել նույնիսկ տարբեր դարաշրջաններում ապրած մարդկանց գործելակերպի, բնավորության և ճակատագրերի զարմանալի նմանությունները (օրինակ Նապալեոնի ու Քիտլերի): Այսինքն, մեռնող մարդու հոգին պարտադիր չէ, որ անցնի տվյալ պահին ծնվածին (ինչպես ընդունում են Տիբերի լամաները): Այն կարող է թոիչք կատարել ժամանակի և տարրածության մեջ և հայտնվել բոլորովին ուրիշ դարաշրջանում ու վայրում (սա, իհարկե, հակասում է քրիստոնեության կամ իսլամի դոգմաներին՝ հոգին մեռնելուց հետո դրախտ կամ դժողք անցնելու

մասին): Այսինքն՝ կամ այլ արարածները հոգի չունեն, կամ եթե հոգին կյանքի հատկանիշն է, ապա տարբեր տեսակների համար այն տարբեր է, իսկ մարդու վերաբերյալ առավել ևս:

- Ինչպես նշվեց վերևում, ներկայումս կրոմանյոնյան մարդու տասնյակ հազարավոր տարիների տարբեր գտածոների համեմատությունները մարդաբաններին հիմք են տվել եզրակացնելու, որ մարդու արտաքին տեսքն ու կառուցվածքը հիմնականում չեն փոխվել, այսինքն վերջնականապես ստացվել է այն տեսակը, որին հասնելու համար անհրաժեշտ են եղել միլիոնավոր տարիների փորձարկումները: Երկրագնդի վրա կյանքի առաջացումը հաշվվում է մոտավորապես 500 միլիոն տարի, որի ընթացքում միաբջիջ կենդանին վերածվել է ժամանակակից բարձր զարգացած, կենդանի բարդ օրգանիզմի: Կյանքի զարգացման ընթացքը հատկապես լավ երևում է մարդու սաղմի զարգացման օրինակով: Ստացվում է, որ, կարծես մարդու սաղմը 9 ամսվա ընթացքում կատարում է էվոլյուցիայի նույն քայլերը, որը կատարվել է 500 միլիոն տարվա ընթացքում, կամ կնոջ արգանդում սաղմը 1 րոպեում կրում է նույն փոփոխությունը, ինչոր զարգացման տարբեր աստիճաններում կատարվել է 10 հազար տարվա ընթացքում, հաջորդական փուլերով: Այսինքն, պարզունակ մոտեցմանք, զարգացման մեխանիզմը գործում է հետևյալ ձևով. որոշ սերնդի կյանքում 10 հազար տարվա կատարված փոփոխությունը խտացված ձևով տեղափոխվում է և կատարվում է սաղմի զարգացման 1 րոպեանոց հատվածում, իսկ հաջորդ սերունդը ժառանգած է լինում այդ փոփոխությունը և այդպես շարունակ: Այսինքն՝ արգանդում մարդու ձևավորումը իրականացվում է որոշակի կանոնավոր, նախօրոք մշակված, փորձարկված և արագացված ծրագրով (իհարկե, այստեղ չի կարելի պնդել, թե զարգացման առանձին փուլեր հավասարաշափ են): Ստացվում է, որ այդ զարգացումը ի վերջո հանգեցրել է ժամանակակից մարդու ֆիզիկական կառուցվածքին և վերջին մի քանի տասնյակ հազար տարիների ընթացքում կանգ է առել:



# Ա. Մարտունի Մատունի

## ՄՐԱՎԱԿԱՆ ՅՈՒՆԻ ՆԵՐԻ ԱՐԱՐԱԿԱՆ

- Ստեղծելով մարդուն, Արարիչը նրան տվել է մտածելու, այսինքն՝ երևակայությամբ պատկերացնելու, դատելու և գիտակցաբար նպատակառությամբ արարելու ունակություն. բնության մեջ միայն մարդուն: Մարդը կարող է որևէ երևույթի վերաբերյալ առաջարկել վարկածներ և հետո դրանք ստուգել նպատակառությամբ փորձերի միջոցով, թղթի վրա հաշվարկելով ստանալ նոր նյութեր ու երևույթներ և հետո դրանք ստանալ իրականում, գրել երաժշտություն և հնչեցնելով զմայլել ունկնդիրներին:

Բայց մյուս կողմից, մաթեմատիկական ու տրամաբանական մեթոդներով, փաստերը դասակարգելու և դրանցից եզրակացություններ անելու միջոցով Արարչի նպատակի վերաբերյալ որոշակի եզրահանգման համար պետք է մոտավորապես գիտենալ տիեզերքի, բնության, կյանքի զարգացման հիմնական օրինաչափությունները, մարդկության ամբողջ պատմությունն իրականում, այլ ոչ թե միտումնավոր աղավաղված, փորձելով այդ միջոցով նշմարել զարգացման ընդհանուր ուղղությունները և հեռանկարները: Ներկայիս հնարավորություններով դա իրագործելի չէ, այն պատճառով, որ նախ մարդկային գիտելիքները զարգանում են անընդհատ, հայտնաբերվում են նոր օրինաչափություններ, հերքվում կամ փոփոխվում են հների մասին պատկերացումները (այսօրվա հայտնաբերվածը վաղը կարող է հերքվել): Եվ շատ օրենքներ մարդու համար մնում են և կմնան անհայտ, քանզի տիեզերքն անվերջ է, և մյուս կողմից տեխնիկապես հնարավոր չէ ամբողջ տիեզերքից ու բնությունից եկող տեղեկատվությունն անընդհատ հավաքել ու տեսակավորել՝ փորձելով գտնել նրանց նպատակային փոխկապակցությունը, մանավանդ որ դա արդեն կախված կլինի մարդկային հնարավորություններից, հիմնահարցի վերաբերյալ մոտեցումներից, վերաբերմունքից ու ազնվությունից:

- Ամենահիմնական բարդությունն այն է, որ մարդն Արարչին միշտ պատկերացնում է մարդկային կերպարով, մարդկային մտածելակերպով ու գործելակերպով և, հետևաբար անկախ իր կամքից, մարդկային թերություններով: Այլ խոսքով, Արարչի մասին դա-

տում է մարդկային չափանիշներով և դրանց միջոցով փորձում է կռահել Արարչի նպատակն ու կամքը: Եվ դա բնական է, քանի որ մարդն այլ կերպ չի էլ կարող:

Հետաքրքիր պատմություն է բերվում բուդդայական կրոնում, որի կարծ բովանդակությունը այսպիսին է. մի քանի կույրերի, որոնք ծանոթ չեն փղին, տանում են վերջինիս մոտ ու առաջարկում շոշափելով որոշել, թե ինչ է դա: Ով փղի գլուխն է շոշափում, գտնում է, որ դա կարաս է, ով ականջը՝ գտնում է, որ ցորենի զամբյուղ է, ով ժանիքը՝ կարծում է, թե խոփ է, ով կնճիթը՝ գտնում է, որ գութան է, իրանը՝ շոշափողին թվում է, թե ինքը հացահատիկի պարկ է գտել, ոտքերը շոշափողը գտնում է, որ դրանք սյուներ են, ով մեջքը՝ գտնում է, որ քարակույտ է, ով պոչը՝ գտնում է, որ վարսանդ է, ով պոչի ծայրը՝ գտնում է, որ խոզանակ է...

- Արարչի մասին մարդու պատկերացումները հետաքրքիր կողմից են բացահայտվում, եթե նորից քննարկենք Աղամի ու Եվայի պատմությունը: Որպեսզի Աղամը Եղենում մենակությունից չձանձրանա, Արարիչը նրա կողից ստեղծեց Եվային: Ընդ որում, հատկապես հակառակ սերի և սեռական կապի խստագույն արգելքով: Այսինքն, այս պատմության մեջ Արարչին վերագրվում է նույնիսկ «սաղիստական» գործելակերպ՝ դրախտում. երբ պետք էր միայն վայելել, երկու հակառակ սերի մերկ մարդիկ, հավերժ միասին ապրելով, մերձեցման մասին մտածելու իրավունք չունեին: Եվ, երբ դա կատարվեց, համարվեց մահացու մեղք, նրանք արտաքսվեցին դրախտից և դա բավական չէր, նրանց մեղքը տարածվեց նաև նրանց սերունդների վրա՝ ծննդյան օրվանից: Այսինքն, դա Արարչի կողմից կամ անհեռատեսություն էր, կամ դիտավորություն, հետագայում ամբողջ մարդկությանը պարտադրելու՝ մեղավոր զգալու իր՝ Արարչի հանդեպ (և ոչ թե երախտապարտ): Ասել է, թե Արարչին վերագրվում է ինքնամեծարման, ամբիցիաների՝ գուտ մարդկային բնավորությանը հատուկ հատկանիշներ և այդ հատկանիշները բավարարելու համար մարդուն բնորոշ գործելակերպ:

Սակայն պետք է նկատել, որ Աստվածաշնչյան այս պատմության մեջ կա նաև մեկ այլ, մարդու համար ուսանելի իմաստ, որի էությունն այն է, որ հանցագործ ծանապարհով ձեռք բերածի ժառանգումը և օգտագործումը նշանակում է նաև այդ հանցագործության համար պատասխանատվության ժառանգում. մարդը ժառանգել է Աղամից ու Եվայից՝ Արարչի արգելքը խախտելու միջոցով, այսինքն՝ հանցագործ ծանապարհով ձեռք բերած իմաստնությունը և օգտագործում է այն, հետևաբար պետք է մշտապես քավի այդ հանցանքը:

- Ներկայիս քաղաքակրթության պայմաններում հավատալով ու


ընդունելով այս կամ այն կրոնը, մարդն իր գիտակցական, թե ենթագիտակցական մակարդակով, անկախ իր կամքից, նկատելով կրոնական դոգմաների ու սուրբ գրքերի անհամապատասխանությունները գիտության տվյալների հետ, փորձում է դրանց մեջ տեսնել փոխաբերական իմաստ, դրանց մեկնաբանությունը կատարելով այն նույն մեթոդներով, որոնք հանդիսանում են այդ հակասությունների պատճառը. այն է Արարչին ու Նրա գործերը դիտարկել իր շրջապատի նյութական կերպարների և պատկերացումների միջոցով:

- Արդյո՞ք մարդը մշտապես չպետք է հասու լինի Արարչի նպատակին և միշտ մնա որպես գործիք Նրա նպատակներն իրազործելու գործընթացում, որի մասին պնդում են որոշ կրոններ: Այդ դեպքում ինչո՞ւ է տրված նրան գիտակցությունը, զարգանալու անսահման հնարավորություններն ու Արարչի կամքի, իր կյանքի նպատակն իմանալու դարավոր, համառ ձգտումը:

- Մարդու գիտակցությունը տեղափորված է ուղեղում, բայց իր առօրյա գործունեության ընթացքում մարդն օգտագործում է նրա հնարավորությունների միայն 5-7 տոկոսը, այսինքն՝ նրա հնարավորությունները 17-19 անգամ ավելի շատ են, քան պետք են իր անհատական կենսագործունեության համար, մանավանդ եթե հաշվի առնենք նաև այն, որ այլ արարածների համեմատ (չհաշված դելֆիններին) մարդու ուղեղի քաշի հարաբերությունը ամբողջ մարմնի քաշին անհամեմատ մեծ է, ել չհաշված ծալքերի քանակը:

Մնում է ենթադրել, որ մարդու ուղեղը նախատեսված է շատ ավելի մեծ գործերի համար, սակայն նրանում, ինչ որ պատճառով դրված է մի արգելակող պայման, և այդ պատճառը աստիճանաբար վերանալու դեպքում աստիճանաբար կվերանա նաև այդ արգելակող պայմանը՝ թույլ տալով ուղեղին գործելու իր ամբողջ հնարավորությամբ: Այստեղ արժե ուշադրություն դարձնել հետևյալ երևույթների վրա. կան փաստեր, երբ գլխին ստացած հարվածից, էլեկտրականությամբ հոսանքահարվելուց, կամ գլխի հետ կապված այլ ծանր վնասվածքներից, մարդը հանկարծ ծեռք է բերում անսպասելի գերբնական հատկություններ՝ հիմնականում ոգեղեն բնագավառում՝ պայծառատեսություն, ծիշտ գուշակելու ընդունակություն (օրինակ գուշակուիի Վանգայի դեպքում): Նման երևույթներ նկատվել են նաև ուղեղի ծանր հիվանդությունների (ուռուցքների) ժամանակ: Պատմությունից հայտնի է, որ հոչակավոր գորավարներ՝ Ալեքսանդր Մակեդոնացին, Հաննիբալը, Կեսարը, Նապոլիոնը և այլն տառապել են ուղեղի հիվանդությամբ (պարբերական ուշագնացությամբ): Բայց մյուս կողմից նման բան հայտնի չէ որևէ հին կամ նոր

հոչակավոր փիլիսոփաների, գիտնականների վերաբերյալ: Ստացվում է, որ նման իիվանդությամբ տառապել են իմնականում այն նշանավոր անձնավորությունները, որոնք այս կամ այն չափով ազդել են մարդկության պատմության ընթացքի վրա: Այսինքն, երբ այս կամ այն պատճառով խախտվում է այդ արգելակող պայմանի մեխանիզմների աշխատանքը, մարդը ձեռք է բերում զարմանալի ընդունակություններ: Իսկ դա մյուս կողմից հուշում է, որ արգելակող պայմանը գործում է ոգեղեն ոլորտում և ազդում է ուղեղի օգտագործվող մասի վրա: Յաշվի առնելով, որ այդ ծավալը շատ անգամ մեծ է օգտագործվողից, կարելի է պատկերացնել ոգեղեն հնարավորությունների բազմակի հզորության, այսինքն արգելակող պայմանը դնելու պատճառիկ բացառիկ կարևորման մասին:



- Մարդկության ապագայի վերաբերյալ անհանգստությունը միշտ ուղեկցել է մարդուն նրա գիտակցության կազմավորման հետ միաժամանակ, ընդ որում, համարյա միշտ այն հանգել է մոռայլ կանխատեսումների: Յամարյա բոլոր կրոններում հիշատակվում է սպասվելիք համաշխարհային աղետի մասին և, որպես փրկության միջոց, հիմնականում առաջարկվում է Արարչին հավատալը, երկրպագելը և նրա պատգամների կատարումը: Այսինքն՝ մարդու հոգեկանի վրա մշտական ազդեցություն ապահովելու համար, կրոնը մարդուն ներարկում է ապագայի նկատմամբ վախը, Արարչի նկատմամբ հավատը ամրապնդման նպատակով վկայակոչում է նրա զայրույթը, ահեղ դատաստանի հեռանկարը:

Բայց Արարիչը մարդուն տվել է կյանք, իմաստնություն ու ոգեղենություն ոչ թե անընդհատ իրեն երկրպագելու, այլ գործելու, մտավոր ու բարոյական ինքնակատարելագործման, արարելու ու զարգանալու համար: Նորից իրենց մտածելակերպով մարդիկ Արարչին վերագրում են զուտ մարդկային հատկություններ՝ փառամոլություն, ինքնամեծարում, շողոքորթության նկատմամբ բարեհաճություն ու

խրախուսանք և չեն էլ ուզում պատկերացնել, որ աղոթքները, աստվածավախությունը, աստվածանվիրումը ոչ մի կերպ չեն ազդում իրենց կյանքի, ճակատագրի վրա: Յավատացյալներին, նույն թվում և «սրբերին», սպանում են նույն դաժանությամբ, ինչ որ անհավատներին, իսկ Արարիչը չի էլ արձագանքում: Կամ երկրաշարժից եկեղեցիներն ու մզկիթները պակաս հաճախ չեն քանդվում, քան շուկաները կամ հասարակաց տները: Իսկ հանդերձալ աշխարհից դեռ ոչ ոք չի վերադարձել ու վկայել այնտեղի կյանքի մասին: Եվ հաճախ մարդը, հավատացած լինելով իր արդարացիության, իր վարվելակերպի աստվածահաճության կամ ծշմարտության մեջ, տեսնելով չարի հաղթանակը բարու նկատմամբ, վատի հաղթանակը լավի նկատմամբ, ներքուստ կամ բացահայտ հիմասթափվում է Արարչից, դժգոհում կամ բողոքում, մեղադրելով նրան այն բանում, ինչը Նրա գործելակերպին բնորոշ չէ, և ինչը Նրան վերագրել են կրոնավորները՝ այն է, հարաբերությունների փոխադարձություն (բայց մյուս կողմից, իրոք պատահում է, որ Արարչին դիմելով, մարդն կարծես հաջողության հասնում է: Այստեղ գործում է այլ երևույթ, որը կպարզաբանվի ոգու վերաբերյալ բաժնում):

Այլ խոսքով, մարդը փորձում է Արարչի միջոցով կարգավորել իր գործերը, իսկ Արարիչը մնալով անհաղորդ, կարծես մարդուն հասկացնում է, որ նրանից ակնկալվում է, ոչ թե նեղության պահին դիմի իրեն և օգնություն խնդրի, հաջողության պահին իրեն իիշի երախտագիտությամբ ու փառաքանի՝ սովորական վիճակում միշտ աղոթելով ցուցաբերի հավատարմություն, իր մշտական ուշադրությունն ապահովի, այլ որպեսզի օգտագործելով ընձեռված հնարավորությունները, անհատը զարգանա ոչ միայն գիտակցորեն, այլև բարոյապես և արժանանա Արարչի նպատակին հասու լինելուն: Իսկ եթե մարդն աղոթելով ու Նրան դիմելով մաքրվում է բարոյապես ու հոգեպես, դա նաև օժանդակում է նրա բարոյական զարգացմանը:

- Յամաշխարհային աղետի մասին նախազգացումը հնարավոր է, որ Արարչի կողմից մարդկային գիտակցության հետ միասին տրվել է մարդուն, և դա հանդիսանում է Նրա նպատակին հասու լինելու խթանիչներից մեկը, որ կրոնները կիրառում են իրենց նպատակների համար: Մյուս կողմից, հնարավոր է նաև, որ այն գալիս է մարդկային գենետիկ, հազարավոր տարիների ժառանգական հիշողությունից՝ կապված իրոք աշխարհացունց աղետների հետ, ինչպես, ասենք, Նոյան տապանի դեպքում է:

- Երկրագնդի պատմության մեջ, իրոք, տարբեր դարաշրջաններում եղել են աշխարհացունց աղետներ, և վերջին աղետը, որ տեղի

Է ունեցել մոտավորապես 13 հազար տարի առաջ՝ Երկրագնդի կլիմայի տաքացման տեսքով, ապացուցված է և դրանով բավականին շատ Երևոյթներ են բացատրվում: Օրինակ, վերը հիշատակված մամոնտների և այլ բրածո կենդանիների զանգվածային ոչնչացումը՝ Արկտիկայի սառույցների հալվելու պատճառով: Միաժամանակ համաշխարհային օվկիանոսի մակարդակի բարձրացումը, որի պատճառով առաջացել է Բերինգի նեղուցը ու Եվրասիայից կտրվելու պատճառով դադարել է կրոմանյոնյան մարդկանց ներթափանցումն Ամերիկա, և Ավստրալիա: Յնարավոր է, որ դրա հետ է կապված նաև (Եթե դա համարենք բնական աղետի հետևանք, այլ ոչ թե Արարչի կամքի իրագործում) մեծ ջրհեղեղը Միջագետքում՝ Յայկական բարձրավանդակից լեռների սառցադաշտերը հալչելու պատճառով: Այդ ժամանակներին է վերաբերում նաև այսպես կոչված Ատլանտիդայի կործանումը:

Եղել են արդյոք նման աղետներ ավելի հնում: Պարզվում է, որ Երկրագնդի մինչև մեկուկես միլիարդ տարվա պատմության մեջ եղել են բազմաթիվ սառչելու ու տաքանալու դարաշրջաններ, որոնց ընթացքում կործանվել է համարյա ամբողջ կենդանական ու բուսական աշխարհը: Մասնավորապես դրանով է բացատրվում նաև սողունների՝ որպես տիրապետող տեսակի վերացումը մեկ-երկու միլիոն տարի առաջ:

- Երկրագունդը մեծ քանակությամբ էներգիա է ստանում արևից, բայց էնտրոպիայի՝ ջերմության ցրման Երևոյթի պատճառով ավելի շատ կորցնում է՝ այն ցրելով դեպի տիեզերք, և գիտնականների միահամուռ կարծիքով, Երկրագնդին ի վերջո սպասվում է սառցում: Յնարավոր է, որ հերթական սառցադաշտային շրջանը փոխվում է տաքացման ֆիզիկական որևէ գործոնի կամ Երկրագնդի ընդերքում կատարվող ներքին զարգացումների պատճառով: Յամենայն դեպս առայժմ այդ մասին միարժեք եզրակացություն չկա:

- Մյուս կողմից, քանի որ արեգակնային համակարգը գալակտիկայի կենտրոնի շուրջը պտտվում է միլիարդավոր արեգակների բազմության մեջ և հնարավոր չէ հաշվարկել բոլոր այդ արեգակների շարժումների պարամետրերը, ապա չի կարելի բացառել, որ նա կարող է անցնել մի այնպիսի ծգողական կամ ալիքային դաշտով, կամ տեղի կունենա այլ մարմնի (օրինակ գիսաստղի) հետ բախում, որոնք Երկրագնդի վրա կառաջացնեն մեծ աղետ: Մանավանդ՝ նման Ենթադրության հիմք է տալիս հետևյալ Երևոյթը. հայտնի է, որ գիսաստղները լինում են Երկու տիպի՝ արեգակնային համակարգի, որոնք ծգված, փակ ուղեծրով պտտվում են արևի շուրջը և որոշակի պարբերությամբ հայտնվում են Երկնքում (դրանց պարամետրերը

հեշտ է հաշվել և կանխատեսել հայտնվելը), բայց հայտնվում են նաև «հյուրեր», որոնք գալիս են տիեզերքից, շրջանցում Արևն ու հեռանում դեպի տիեզերքի հեռուները: Այսինքն, դրանք նկատվում են, եթե արդեն գտնվում են արեգակնային համակարգում և հնարավոր չէ նախօրոք կանխատեսել դրանց հայտնվելը: Բացառված չէ նրանց բախսվելը երկրագնդին և հսկայական չափի աղետը, քանի որ նման բախման ուժը կախված կլինի նրանց զանգվածից ու արագությունից: Այստեղ արժե իշխատակել չիլիացի աստղագետ Ֆերարայի վարկածը, համաձայն որի, արեգակնային համակարգին է մոտենում, և 2000-2003 թվականներին նրա շրջակայքում կլինի մի հսկա հանգած աստղ, որի զանգվածը գերազանցում է Արեգակի զանգվածին, իսկ այդ աստղի շուրջը պտտվող Բերնար-1 մոլորակը (անվանակոչված է նույն աստղագետի կողմից), որի զանգվածը 3200 անգամ մեծ է երկրի զանգվածից, մեծ ավերածություններ կառաջացնի ամբողջ արեգակնային համակարգում, նույն թվում նաև երկրի վրա: Նախ այդ վարկածը չի հաստատել ոչ մի աստղադիտարան կամ աստղագետ (միգուցե լռո՞ւմ են) և հայտնի չէ, թե ինչ տվյալների վրա է հիմնված այդ վարկածը: Եվ հետո, կասկած է հարուցում նշված թվականը՝ միտումնավորության տարրեր պարունակելու իմաստով: Կարելի է, իհարկե, այդ վարկածում նաև այլ կասկածելի տարրեր էլ նկատել:

Բայց մյուս կողմից կարելի է ուշադրություն դարձնել նաև հետևյալի վրա. Ելնելով որոշ առանձնահատկություններից, մի քանի աստղագետներ գտնում են, որ վերջին՝ Պլուտոն մոլորակը մյուս մոլորակների համեմատ բոլորովին այլ ծագում ունի, և արեգակնային համակարգ է անցել այլ աստղային համակարգերից. այսինքն, իր թափառումների ժամանակ Արեգակն այն պարզապես բռնագրավել է: Իսկ նման բռնագրավման գործընթացը և «խլված» մոլորակը համակարգում տեղավորելը չէր կարող չափել ամբողջ արեգակնային համակարգի, նույն թվում նաև երկրի վրա:

- Այսպիսով առայժմ կարելի է սպասվելիք աղետի պատճառի մասին անել հետևյալ ենթադրությունները. կամ երկրագնդի սառչելը և հետևաբար կյանքի վերացումը, կամ տիեզերական հզոր ծառագայթային, ալիքային կամ ձգողական դաշտում հայտնվելը, որը կծառագայթահարի կամ կիսաթարի երկրագնդի ուղեծիրը, կամ կառաջացնի այլ երևույթներ՝ դրանցից բխող հետևանքներով հանդերձ, կամ բախումը գիսաստղի հետ: Իհարկե բացառված չեն նաև ուրիշ վարկածները:

Արդյոք, այդ աղետների պատճառը Արարչի կա՞մքն է, թե՝ կրոններում ընդունված չար ուժերի դիվային մտահղացում: Աստվածաշնչի համաձայն, Արարիչը վերջին ջրհեղեղով պատժելով մարդ-

կությանը, այնուամենայնիվ, այն չի վերացրել, այլ ընդհակառակը՝ կործանված քաղաքակրթության իմաստնությունը Նոյի և նրա սերնդի միջոցով փոխանցել է հաջորդ քաղաքակրթությանը՝ հետագա զարգացման համար, ինչի ականատեսն ենք ներկայումս: Մյուս կողմից նշվում է, որ Արարիչը որոշել է այլևս երկրագնդի վրա ջրհեղեղ չանել, բայց դա չի նշանակում, որ այն ապահովված է այլ աղետներից:

- Այդ դեպքում ինչո՞վ բացատրել երկրագնդի ուսումնասիրված պատմության մեկուկես միլիարդ տարվա ընթացքում տեղի ունեցած բազմաթիվ աղետները: Յնարավո՞ր է, որ այդ դարաշրջաններում ևս եղել են մտածող արարածներ և նրանց էլ է հասել Արարչի պատիժը: Կյանքի զարգացման գործընթացի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սողունների դարաշրջանից առաջ, այսինքն, երբ դեռ նոր էր սկսվել ցամաքի բնակեցումը, դա հնարավոր չէր, իսկ դրանից առաջ ևս հնարավոր չէր, որովհետև երկրագունդը նոր-նոր էր կազմավորվում: Սողունների կործանումից հետո միլիոնավոր տարիներ պետք եղան, որպեսզի փրկված, ոչնչով աչքի չընկնող արարածների մի քանի տեսակները դառնային ներկայիս բոլոր կենդանիների ու թռչունների նախնիները: Մի քանի միլիոն տարի տևող սողունների դարաշրջանից հայտնաբերված կմախքների մնացորդներում ուղեղների ծավալները ևս բացառում են նման հնարավորությունը, իսկ ուղեղից բացի, այլ օրգանների մասնակցությունը մտածողության գործընթացին՝ առայժմս հայտնի չէ (թերևս դա հանդիպում է ժամանակակից որոշ մարդկանց մոտ): Յետևաբար, եթե աղետները ևս Արարչի կամքով են եղել, ապա միայն՝ որպես զարգացման սխալ ճանապարհով գնացող կյանքի ձևերը վերացնելու միջոց և ճիշտ զարգացող ձևերի ազատ զարգացման հնարավորություն: Այսինքն, նորից ստացվում է, որ այդ ամբողջի նպատակը մարդու ստեղծումն է: (Այստեղ թերևս որոշ կասկածներ կարող են ծագել, ասենք, Անդյան լեռներում հայտնաբերված խորհրդավոր գծագրերի և դեռևս չպարզաբանված որոշ այլ երևույթների կապակցությամբ):

Իսկ եթե այդ աղետները եղել են չար ուժերի կողմից, և միայն Արարչին աղոթելն ու նրա պատգամները կատարելը կարող է (ըստ կրոնների) ընտրյալների համար ապահովել փրկություն, ապա այդ դեպքում ինչի՞ համար է մարդուն տրված գիտակցությունն ու այն անվերջ խորացնելու հնարավորությունը:

- Եթե համեմատենք տարբեր ժողովուրդների ազգային հնագույն

# Զ. Ա Յ Ո Ւ Ա Ր Ա Ր Ա Ր Ա Ր Ա Ր Ա

## Ա Յ Ո Ւ Ա Ր Ա Ր Ա Ր Ա Ր Ա Ր Ա

### Ա Յ Ո Ւ Ա Ր Ա Ր Ա Ր Ա Ր Ա Ր Ա

Այս բոլորից եզրակացվում է, որ Արարիչը մարդկության վրա է դրել ոչ միայն սեփական, այլև ամբողջ բնության, կյանքի պահանման խնդիրը: Կարող է առաջանալ հարց, թե ինչո՞ւ Նա լինելով ամենազոր, Ինքն անձամբ չի հոգում այդ մասին: Այդ նույն հարցն առաջանում է նաև Նոյան տապանի վերաբերյալ: Ինչո՞ւ Արարիչը ոչ թե անձամբ հոգաց Նոյի և նրա ընտանիքի փրկության մասին, այլ փրկվելու ձևը հուշեց Նոյին և դեռ նրա վրա էլ պարտականություն դրեց՝ իր հետ փրկել նաև ուրիշ արարածների: Այստեղից առկայժում են Արարչի նպատակի ու վարվելակերպի որոշ նշույներ՝ Նա ստեղծել է մարդուն, տվել է նրան բանականություն և դրել է նրա վրա պարտականություն՝ օգտագործել իրեն ընծեռած հնարավորությունները՝ աշխարհացունց աղետներից փրկվելու և իր հետ ամբողջ բնությունը փրկելու համար:


Ասել է թե՝ Արարիչը մարդուն դիտում է ոչ թե որպես խնամարկյալի, այլ իր ունակությունների շնորհիվ՝ իր և բնության ճակատագիրը տնօրինելու ընդունակ արարածի, և միայն օգնում է նրան՝ զարգացնելու իր այդ ընդունակությունը (նա մարդուն ոչ թե ձուկ է տալիս, այլ սովորեցնում է ձուկ որսալ): Այս եզրակացությունը գալիս է հիմնավորելու արիականության Արարչի նպատակի մասին մոտեցումները:

- Վերը նշված՝ կյանքի զարգացման ելքի վճռորոշ փուլերը՝ կյանքի առաջացումը օվկիանոսում, զարգացումը ցամաքում և վերացական մտածողության ձևավորումը՝ մարդ արարածի մոտ, մատնանշում է զարգացման այնպիսի ծրագրավորված շղթայի գոյությունը, որի ներկայիս բարձրագույն օղակը մարդն է: Այստեղ, բնականաբար, առաջանում են հարցեր, որոնց վերաբերյալ կարելի է անել որոշ ենթադրություններ:

Նախ արդյո՞ք մարդկային սնափառություն չէ՝ իրեն համարել վերջնական օղակ, և արդյո՞ք նա չի հանդիսանում զարգացման շղթայի հերթական օղակներից մեկը և իրենով պայմանավորում հաջորդ, ավելի բարձր զարգացած օղակի առաջացումը: Եվ, արդ-

յո՞ք, գիտակցությունն այն բարձրագույն հատկությունն է, որը հնարավորություն է տալիս իրականացնելու մարդու՝ Ենթադրվող նման առաքելությունը։ Այդ հարցին կարելի է պատասխանել դրականորեն, ելնելով այն եզրահանգումից, որ նախ ներկայումս հայտնի ոչ մի բնական արարածի մոտ չի նկատվել այնպիսի հատկություններ, որոնք մրցակցեին գիտակցության հետ։ Այսինքն, այնպիսի հատկություններ, որով այդ արարածը կարողանար մրցակցել բնության հետ և որոշ հարցերում նույնիսկ գերազանցել նրան։ Մյուս կողմից մարդու մոտ նկատված վիրտուալ (այնաշխարհային) երևույթները՝ կանխազգացումները, պայծառատեսությունները, հեռազգացումները և այլն, ցույց են տալիս, որ մարդն իր բանականությամբ հաղորդակից է ոչ նյութական ոլորտներին։ Այդ տեսակետից պետք է նկատել, որ նման վիրտուալ երևույթները հանդիպում են միայն մարդու մոտ և հազվադեպ նաև մարդու հետ մշտապես շփվող ընտանի կենդանիների՝ շան, ծիու մոտ և այլն։

Բացի դրանից, պետք է նաև հաշվի առնել Արարչի հատուկ



- Ինչքան մարդկային միտքը խորանում է տիեզերական ու բնական երևույթների, օրենքների, փոխկապակցությունների ուսումնասիրությունների մեջ, այնքան ավելի են ուրվագծվում որոշակի սահմաններ, որտեղից այն, իր ունեցած հնարավորություններով, այլևս թափանցել չի կարող։ Այլ խոսքով, մարդկային գիտակցությունը կարծես դեմ է առնում թույլատրելիի սահմանին։ Ավելի ու ավելի են դժվարանում միկրոաշխարհում և մակրոաշխարհում հանդիպող երևույթների բացատրությունները և նվազում են ապացուցման ֆիզիկական ու այլ մեթոդների օգտագործման հնարավորությունները։ Բայց ամենից հատկանշականն այն է, որ այդ սահմաններին կից երևույթների ուսումնասիրությունները տալիս են արդյունքներ, որոնց օգտագործումը, բազմահազար անգամ մեծացնելով մարդկա-

յին հնարավորությունները, նույնչափ մեծացնում են նաև վտանգը և մարդկության, և բնության, և տիեզերքի ճակատագրի համար: Միջուկի ուսումնասիրություններում խորանալով, մարդը հայտնաբերեց միջուկային էներգիան՝ իր դրական ու բացասական հետևանքներով հանդերձ, խորանալով գեների կառուցվածքներում և բացահայտելով դրանց արհեստականորեն փոփոխելու հնարավորությունները, մարդը կանգնեց նույն հետևանքների առաջացման հիմնախնդրի առաջ: Ներկայումս կատարվում է տիեզերք դուրս գալու առաջին քայլերը և հնարավոր չէ գուշակել դրանց դրական ու բացասական հետևանքները:

- Մաթեմատիկայում օգտագործվում է «սահման» կամ «սահմանային արժեք» հասկացողությունը, որից այն կողմ տվյալ օրինաչափությունը կամ բացատրությունը կիրառելի չէ. մյուս կողմից, այն կողմում գտնվող օրինաչափությունը կիրառելի չէ այդ սահմանից այս կողմ: Այսինքն, սահմանը այստեղ հանդես է գալիս որպես խստորեն ծևակերպված իդեալական հասկացություն, որը սահմանազատում է իրարից տարբերվող օրինաչափությունները: Սակայն իրական կյանքում նման խիստ սահման գոյություն չունի և այն հանդես է գալիս մի տիրույթի տեսքով, որտեղ կատարվում են տարբեր օրինաչափությունների ներթափանցումը միմյանց ազդեցության ոլորտները: Ասենք ջրի և օդի խստորեն սահմանազատված սահման գոյություն չունի, քանի որ կա մի տիրույթ, որտեղ ջրի մոլեկուլները, իոններն անցնում են օդի մեջ, նրան տալով խոնավություն, որի աստիճանը մեծանում է ջրի մակերեսին մոտենալիս: Նույն կերպ օդի տարրերն են անցնում ջրի մեջ՝ հանդիսանալով ծկների համար շնչելու միջոց, և այդ պատճառով ծկները մեծ մասամբ ապրում են ջրի մակերեսային շերտերում: Նման բազմաթիվ օրինակներ կարելի է բերել (օրինակ հոտի երևույթը): Նույնիսկ, եթե վերցնենք որևէ պինդ մարմին, ասենք մետաղը, նրա մակերեսային շերտը այս կամ այն չափով միշտ օքսիդանում է, այսինքն՝ նրա մակերևույթին օդի և մետաղի մասնիկների փոխազդեցության պատճառով առաջանում է մի նոր շերտ, որն իր հատկություններով տարբերվում է օդից ու մետաղից և հետևանք է նրանց միմյանց հետ շփմանը: Փաստորեն, եթե դիտարկենք առավել ընդհանրացված մոտեցումով, ապա երկրագնդի ամբողջ կենսուրութը իրենից ներկայացնում է սահմանային տիրույթ՝ երկրագնդի հալված միջուկի և տիեզերական սառնության արանքում: Եվ ընդհանրապես, բոլոր նյութական և ոչ նյութական կարևոր երևույթները՝ փոփոխությունները, զարգացումը, նորաստեղծումը, սկզբնավորվում են նման տիրույթներում և դրանց առկայության շնորհիվ:

Այստեղ, թերևս, վիճելի է այն հիմնահարցը, թե մարդը, որևէ բնագավառում կատարելով մեծագույն հայտնագործություններ, արդյո՞ք հասել է այդ սահմանին կամ նրան կից մարզերին: Թերևս այդ հիմնահարցին որպես պատասխան կամ այդ մարզերում գտնվելու վերաբերյալ ենթադրություն, կարելի է ելնել այն իրողությունից, որ նման հայտնագործությունների կիրառման արդյունքում ստացվում են երևույթներ, որոնք բնության մեջ գոյություն չունեն, կամ հնարավոր չեն ժամանակակից գիտական տվյալներով բացատրել, ապացուցել, վարկածներ առաջարկել:

Օրինակ, թեկուզ լույսի արագությունից ավելի մեծ արագության գոյության հնարավորությունը, կվարկների բնույթը, էներգիա հասկացության էությունը, գնդաձև կայծակները և այլն: Մաթեմատիկայում ևս շատ հասկացություններ կան, որոնք կիրառվում են այս կամ այն խնդրի լուծման ժամանակ, բայց ֆիզիկապես հնարավոր չեն պատկերացնել, օրինակ՝ անվերջ մեծի կամ անվերջ փոքրի հասկացությունները, անորոշությունները, կեղծ թվերը, «ո» չափումներով տարածությունները:

- Այդ սահմանային տիրույթից այն կողմ գոյություն ունեցող ոլորտի օրինաչափությունների ու երևույթների հզորության մասին կարելի է դատել սահմանային տիրույթում՝ այդ ոլորտին կից մարզերում կատարված հայտնագործությունների արդյունքների հզորությունից, քանի որ դրանք այդ ոլորտից այս կամ այն չափով թափանցելով սահմանային տվյալ տիրույթը, բացահայտվում են այդ հայտնագործությունների շնորհիկ (այսինքն, եթե ջուրը չտեսնենք, նրա առկայության մասին կարող ենք դատել սահմանային տիրույթում ջոին մոտ մարզերում եղած խոնավության մեծացումից):

- Այն հարցին, թե ինչո՞ւ Արարիչը վերը նշված առաքելության նպատակով ստեղծել է մարդուն և առհասարակ բնությունն ու օրգանական կյանքը, և անձամբ իր կողմից կամ ոչ նյութական աշխարհի այլ ներկայացուցիչների միջոցով չի նախատեսել միջոցներ՝ դիմակայելու համար այդ վերահաս աղետները (այդ հարցը պարունակում է նաև ակամա կասկած՝ Արարչի ամենազորության վերաբերյալ), կարելի է պատասխանել այն ենթադրությամբ, որ նյութական ոլորտում տեղի ունեցող գործընթացները, նույն թվում նաև աղետներին դիմակայելը, ենթակա են իրականացման նյութական միջոցներով՝ նյութական ոլորտի ներկայացուցիչների միջոցով: Նյութական և ոչ նյութական ոլորտների երևույթները տարբերվում են իրենց էությամբ և նրանց գլոբալ ներթափանցումները, ինչպես նշվեց վերևում, իոլի են անպատկերացնելի հետևանքներով (այդ մասին վկայում են նման մասնակի ներթափանցումների հետևանքները, ո-

րոնք երբեմն նախատեսված են լինում Արարչի կողմից կամ ունեն պատահական բնույթ): Ոլորտների նման խառնվելը կառաջացներ մի երևույթ, որը «քառ» արտահայտությամբ անգամ հնարավոր չէ բնորոշել:

- Մարդը, գտնվելով երկու՝ նյութական և ոչ նյութական ոլորտների սահմանային տիրույթում, հնարավորություն է ստացել օգտագործել ոչ նյութական ոլորտի որոշ երևույթներ՝ նյութական ոլորտի գործընթացներում օգտագործելու համար, և ինչքան պակասի դրանց օգտագործման արգելվները, որոնք, ինչպես նշվեց, կապված են բարոյականության զարգացածության հետ, այնքան մեծ հնարավորություններ կստանա մարդը:

Ներկայիս մարդն արդեն ձեռք է բերել ոչ նյութական ոլորտին բնորոշ հատկանիշներ (վերացական մտածողություն, ոգի, հոգի)՝ Արարչի կամքով ու նպատակով, մարդու կենսագործունեության ու զարգացման գործընթացին օժանդակելու համար: Իսկ այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են ասենք կանխազգացումները, պայծառատեսությունը, ճիշտ գուշակությունները, առանձին մարդիկ ձեռք են բերում պատահականորեն, մասնակի ներթափանցումների պատճառով և կարևոր դեր չեն կատարում ամբողջ մարդկության ճակատագրի մեջ:

Պետք է նկատել, որ բարձրակարգ արարածների, հատկապես ընտանի կենդանիների մոտ նկատվող ոգեղեն երևույթները (բնագոյն և այլն) ցույց են տալիս, որ նրանք իրենց կենսակերպով գտնվում են նյութական ոլորտի՝ այն տարածքներում կամ գոտիներում, որոնք անմիջականորեն կից են սահմանային տիրույթին:

- Վերջապես ծագում է մի հարց ևս. ինչո՞ւ այդ դեպքում ամբողջ ուշադրությունը սևեռվում է հատկապես Երկիրն ու նրա բնությունը փրկելու վրա: Արդյո՞ք դա չի նշանակում տիեզերքի՝ Երկրակենտրոն լինելու մասին կրոնական դոգմաների հաստատում: Այդ հարցին կարելի է պատասխանել հետևյալ կերպ. կամ դա իրոք այդպես է, և այստեղից եզրակացվում է, որ Արարչի ուշադրությունը սահմանափակվում է Երկրով կամ առավելագույնը՝ արեգակնային համակարգով, կամ մարդու գործունեությունը նախատեսված է տարածել ամբողջ տիեզերքի ծավալով, ամբողջ նյութական ոլորտով և կամ,



# IV. ՈԳԻՆ ԵՎ ՈԳԵՂԵՆ ԵՐԵՎՈՒՅՑԱՇԽԵՐԸ

## Ա. *Պատմութեան* Ոգու

## Ա.ա. Վերաբերյալ պատկերացումն

Կենսագործունեության ընթացքում մարդն օգտագործում է իր ֆիզիկական, մտավոր ու ոգեղեն հնարավորությունները միաժամանակ:

Մարդու գիտակցության ձևավորման պահից, զգալով ոգու կարևոր ազդեցությունն իր գործելակերպի վրա, մարդը փորձել է կռահել, բացատրել նրա բնույթը, բացահայտման և դրսենորման ձևերը: Որոշ փիլիսոփաներ ոգին նույնացնում են Արարչի հետ՝ արտահայտելով նրա համընդհանուր բնույթը՝ համաշխարհային ոգի, տիեզերական ոգի, աստվածային ոգի և այլ բնորոշումներով, կամ կյանքն ընդհանրապես համարում են Արարչական ոգու դրսենորումներից մեկը: Ոմանք ենթադրում են նույն ոգու տարբեր դրսենորումների կամ տարբեր ոգիների իրողության հնարավորությունը: Յիմնախնդիրը հանգում է նրան, որ «ոգի» հասկացությունը կամ երևույթը միակն է, բայց դեռևս տրված չէ այն հարցի վերջնական պատասխանը՝ տարբեր իրադրություններում այն իրեն դրսենորում է տարբեր կերպ, թե՝ ամեն մի գոյածնի համար, ամեն մի երևույթի համար գոյություն ունեն առանձին ոգիներ՝ տարբեր բնույթներով ու դրսենորումներով: Յամենայն դեպք ընդունվում է, որ ոգին ոչ նյութական բնույթի է, ոմանց կարծիքով, նույնիսկ նյութականին հակադիր, և ոչ միայն չի ենթարկվում նյութականին վերաբերող օրենքներին, օրինաչափություններին, այլև երեմն գործում է դրանց հակառակ:

Յնագույն հավատալիքներում և ներկայիս որոշ թույլ զարգացած ազգերի մոտ գոյություն ունեն բնության առանձին գո-

յաձևերի ոգիների մասին պատկերացումներ՝ լեռան ոգի, անտառի ոգի, գետի ոգի և այլն, որոնք մարդկանց հետ հարաբերվելիս կարող են ազդել մարդու կյանքի, հոգեկանի, վարքի վրա, իսկ նրանց դրսևորումներն արտահայտվում են քամիների, հրաբուխների, ալեկոծությունների ձևերով և այլն:

Մարդու գիտակցության ձևավորման պահից սկսեց կարևորվել նաև ոգու դերը, ոգեղենությունը նրա ամբողջ կենսագործունեության մեջ: Նա իր շրջապատի նկատմամբ սկսեց իր վերաբերմունքն արտահայտել նկարների, տոտեմների և այլ միջոցներով, իսկ արիների ազդեցության պատճառով, նաև գաղափարական, գիտակցական վերաբերմունքն՝ արարման, նորաստեղծության, բարոյական հատկանիշներով առաջնորդվելու և այլ ձևերով:

- Տարածված է այն տեսակետը, թե մարդու ոգու բնույթը հնարավոր չէ հոգեբանորեն բացատրել: Հատկապես տարբեր են կարծիքները ոգու և հոգու կապի վերաբերյալ: Ոգի և հոգի հասկացություններն իրար հատ կապված տարբեր երևույթներ են: Ոգին չպետք է շփոթել նաև ուրվականների, տեսիլքների հետ և այլն: Յոգին անձի հոգեբանության, ծակատագրի, անհատականության և այլ բնորոշիչների կրողն է, այսինքն բնորոշում է մարդու էության ոչ նյութական բաղադրիչը: Յուրաքանչյուր անձ ունի իր ծակատագիրը, որն ամբողջ մարդկության ծակատագրի մի մասնիկն է. ոգին այդ ծակատագրի իրականացմանն օժանդակող միջոց է: Յոգին գտնվում է և գործում է մարդու ենթագիտակցության մակարդակում, ոգին կարող է անմիջականորեն բացահայտվել մարդու վարքի, գործելակերպի, վարմունքի առանձին դրսևորումներում:

- Արժե այստեղ ուշադրություն դարձնել ենթագիտակցություն հասկացության վրա: Մատերիալիստ հոգեբանների բնորոշմամբ դա հոգեկանի այն մակարդակն է, որի բովանդակությունը գիտակցված չէ, բայց սկզբունքորեն մատչելի է: Այսինքն, կարելի է գիտակցել, բայց զարմանալիորեն առ այսօր չի գիտակցվում: Ուրեմն, եթե գիտակցվի, այն կդառնա գիտակցության մի մասը, այսինքն այդ հասկացությունը կվերանա: Բայց, չգիտես ինչու, այն ոչ միայն չի վերանում, այլ ավելի ու ավելի շատ հոգեկան երևույթներ, որոնք հնարավոր չեն նյութականորեն պարզաբանել, պատճառաբանվում են իրենց ենթագիտակցական բնույթով: Որոշ փիլիսոփաներ նույնիսկ մարդու հոգեկան աշխարհն ամբողջությամբ համեմատում են սառցալեռան հետ, որի երևացող մասը գիտակցությունն է, իսկ չերևացողը (մոտ 10 անգամ ավելի մեծ)՝ ջրի տակ սուզվածը՝ ենթագիտակցությունը: Ընդորում մատերիալիստները մերժելով հոգու առկայությունը,

ընդունում են Ենթագիտակցության գոյությունը (Երևի հույս ունենալով, որ մի օր այն գիտակցություն կդառնա) և չեն քաշվում այն օգտագործել որոշ կնճռոտ խնդիրներից խույս տալու համար:

Ծայրահեղ իրադրությունների ժամանակ հոգին Ենթագիտակցության խորքերից տագնապի ազդանշան է տալիս ամբողջ մարմնին կամ նրա առանձին մասերին: Ոգին մարմնի բոլոր մասերի ներուժը համախմբելով, ակտիվացնելով և գործելով լիցքի կամ իմպուլսի տեսքով, ստիպում է ամբողջ կարողությամբ աշխատել այն օրգանին (ուղեղին, մկաններին և այլն), որի արտակարգ աշխատանքն է պահանջվում տվյալ պահին (մարմնի մյուս մասերը, որոնց չի վերաբերում տագնապի ազդանշանը, զգալիորեն թուլացնում են իրենց գործունեությունը): Մյուս կողմից հայտնի է, որ սովորական պայմաններում մարդն օգտագործում է իր ամբողջ հնարավորությունների միայն 15%-ը, և ոգին, փաստորեն, մարդուն ստիպում է ակամայից գործի դնել իր ունեցած բոլոր հնարավորությունները: Առավել ծայրահեղ դեպքերում, երբ վտանգ է սպառնում մարդու կյանքին, ծակատագրին և այլն, ոգին լրացուցիչ էներգիա է հաղորդում ամբողջ օրգանիզմին: Սովորական մարդկանց մոտ, հավանական է, այդ էներգիան վերցվում է ոչ թե դրսից, այլ հենց մարդու ներուժից, մոտիկ անցյալում կուտակվածից (ինչպես, ասենք, մարդը որևէ պահի զայրանում է, բայց զսպում է իրեն): Մի քանի նման, հնարավոր է, իրար հետ կապ չունեցող առիթներով կուտակված էներգիաները գումարվում են և որևէ առիթով դուրս են հորդում գումարային ուժով: Իհարկե դա վերաբերում է ոչ միայն զայրույթին): Բացառված չէ, որ այդ էներգիան վերցվում է նաև «ավանսային» կարգով ապագա էներգիայից (սովորաբար նման ծայրահեղ իրավիճակները հաղթահարելուց հետո մարդը թուլանում է):

- Լինելով էներգիայի ձև, ոգին բարի կամ չար լինել չի կարող: Չար կամ վատ հատկանիշները կարող են լինել մարդու բնավորության, հոգեբանության մեջ՝ որպես դաստիարակության հետևանք կամ նախնադարյան մարդուց ժառանգած գենետիկ թերություն, որը դրսենորվում է նրա գիտակցությամբ կամ Ենթագիտակցությամբ պայմանավորված գործելակերպում: Նախանձը, ամբիցիաները, մոլությունները մարդկային Ենթագիտակցության մեջ ազդում են նրա հոգու բնույթի վրա և իրենց կնիքն են դնում ոգու դրսենորումներում: Այդ տեսակետից, երբ կրոններում ասվում է, թե կախված մարդու վարքից իր նյութական կյանքում հոգին գնում է դրախտ կամ դժոխք, դրանում ընդունվում է նյութական աշխարհում մարդու որդեգրած վարվելակերպի, գործելակերպի ազդեցությունը հոգու բնույթի վրա, որն այնկողմնային ոլորտում համապատասխան հա-

**տուցման է արժանանում:**

Այսինքն հոգին ոչ միայն մարդու ծակատագրի կրողն է, այլ նաև իր մեջ ամփոփում է նյութական աշխարհում մարդու ամբողջ ապրած կյանքի տեղեկատվությունը և, որպես մարդու ինքնության հիմնական բնորոշիչ, հանդիսանում է նյութական աշխարհում նրա որդեգրած վարքի համար պատասխանատուն ոչ նյութական աշխարհում: Յետևաբար ոգին ոչ նյութական աշխարհ չի տեղափոխվում, մնում է (ինչպես, ասենք, լիցքն է մնում լիցքավորման աղբյուրը հեռացնելիս) և դրանով կարելի է բացատրել շատ անբացատրելի երևույթներ:

Մարդը կուրորեն, նյութականին վերաբերվող պատկերացումնե-

**Ա.Ռ.**



**Ոգու  
դրս-որումները**

Առանձին դեպքերում ոգին կարող է անհատին հնարավորություն տալ կատարելու անբացատրելի, անտրամաբանական, գերբնական գործողություններ, որոնք կարծես հակասում են մարդու կողմից ներկայումս ծանաչված բնական օրենքներին, հասցնել անբացատրելի հետևանքների և անսպասելի արդյունքների: Ոգու շնորհիվ մարդը կարող է բարձրացնել անհավատալի ծանրություններ, ստեղծել հանճարեղ գործեր, կատարել աներևակայելի սխրագործություններ:

- Մյուս արարածներից մարդը տարբերվում է նրանով, որ նրանում ոգին, բացի կյանքի պահպանության կամ սերնդատվության հետ կապված գործընթացներից, դրսենորվում է նաև ենթագիտակցության և գիտակցության մեջ՝ զգացմունքներում (գաղափարական, հավատի, ստեղծագործելու, սիրո և ատելության, երազանքի, հիացմունքի). այսինքն, մարդկային հարաբերությունների ոչ նյութական ոլորտներում: Յետաքրքիր է, որ ոգու նման դրսենորման նշույլներ նկատվում են նաև որոշ ընտանի կենդանիների վարքագծում (շան, ձիու, կատվի և այլն)՝ հավանաբար ծնվելու պահից սկսած, բազմաթիվ սերունդների ընթացքում մարդու հետ մշտական հարաբերվելու պատճառով: Վայրի կենդանու մոտ նման նշույլներ հազվադեպ է հանդիպում (գայլի ծագը մարդկանց մոտ մեծանալիս միշտ հակված է բացահայտելու իր վայրի բնույթը, չնայած կրկեսներում հատուկ մեթոդներով հաջողվում է որոշ չափով դա զսպել):

- Մարդու մեջ ոգին դրսևորվում է գաղափարական, արարման, զգացմունքային, անհատի ու տեսակի պահպանության պայքարի ոլորտներում, համապատասխան բնույթներով. ընդորում, ըստ գերակայության՝ նշված հերթականությամբ: Այսինքն, գաղափարական բնույթը կարող է գերակայել մնացածներին, արարմանը՝ հաջորդ երեքին, զգացմունքայինը՝ մյուս երկուսին և այլն: Չնայած, կախված մարդու բանականության մակարդակից, այդ հերթականությունը կարող է և խախտվել:

Բնական արարածների մոտ, բնականաբար, ոգու գաղափարական բնույթը բացակայում է, զգացմունքային բնույթը հիմնականում կապված է գոյատևման ու սերնդատվության հետ (կենդանին սովոր կարող է դառնալ անվախ, իր ձագերին պաշտպանող մայրն ի հայտ է բերում մեծ խիզախություն, զուգավորման շրջանում արուները կատաղի կռվում են իրար հետ՝ մոռանալով այլ վտանգների մասին և այլն), արարման բնույթը հանդես է գալիս հազվադեպ (ասենք որսի, ինքնապաշտպանության ժամանակ) և այլն: Այդ պատճառով բնական արարածների մոտ ոգու ինքնապաշտպանական կամ սերնդատվության հետ կապված բնույթն առաջնային է և գերակայող, զգացմունքայինը հաջորդում է նրան, իսկ արարմանը հանդես է գալիս բացառիկ դեպքերում: Որոշ ընտանի կենդանիների մոտ, տարբեր հանգամանքների պատճառով, զգացմունքայինը (ասենք հավատարմությունը տիրոջ նկատմամբ) կարող է ամբողջովին գերակայել:

Նախամարդու «Եսը» բնորոշ է կենդանական մակարդակին, այդ պատճառով նրա ոգին էլ դրսևորվում է բնական արարածներին հատուկ բնույթներով, այսինքն գաղափարականի բացակայություն, զգացմունքային և արարման բնույթների ստորադասում ինքնապաշտպանականի (այսինքն «Եսի» պաշտպանության) նկատմամբ:

- Ինչքան մարդը հեռանում է կենդանուց, այնքան ավելի հստակ է բացահայտվում նրա ոգու մարդկային բնույթին հատուկ գերակայության ձևը: Նրա մեջ ոգու գիտակցական բնույթը կարող է նսեմացնել կյանքի պաշտպանության և սերնդատվության բնազդը (հանուն գաղափարի մահապարտները գնում են ինքնազոհաբերման, հանուն հավատի՝ կուսակրոնները իրաժարվում են ամուսնությունից ինքնասպանության երևույթը և այլն): Այլ խոսքով, ոգու գաղափարական բնույթը կարող է զանցառել ցանկացած ինքնապաշտպանական բնական օրենք: Նման բան կարող է կատարվել նաև զգացմունքային բնույթի հետ՝ ասենք մարդը կարող է հանուն սիրո զոհել իր կյանքը և այլն: Այդ պատճառով որոշ փիլիսոփաներ գտնում են, որ

Ա.գ.



## Ոգու բնույթն ու կառավարելիությունը

- Մարդն ապրում է իր նմանների շրջապատում, հասարակական հարաբերությունների միջավայրում ու հետևաբար, նաև՝ տարբեր մարդկային ոգիների փոխհարաբերությունների և փոխազդեցությունների ոլորտում: Այդ տեսակետից ընդունված են անձի ոգի, հանրային (ազգի, ժողովրդի, հասարակության, ընտանիքի, մարդկային խմբի և այլն) ոգի, ժամանակի ոգի, պատմության ոգի, առարկայացված (ստեղծագործության, աշխատանքային և այլն) ոգի և այլ հասկացություններ:

Անձի ոգին, որը վերաբերում է կոնկրետ անհատին, ինքնաբացահայտվում է նրա՝ իր ուժի նկատմամբ վստահության, ինարավորությունների և հետևաբար հաջողության հասնելու, իր ցանկությունների, կարծիքի, արդարացիության, գաղափարախոսության, համոզմունքի, ինքնության պաշտպանության, իր նպատակներին հասնելու վճռականության և այլ դրսերումներում: Այն կարող է հանդես գալ գիտակցորեն, խթանվելով անձի կողմից՝ կամքի, համառության, ինքնաներշնչման, հոգեբանական վարժությունների (օրինակ, յոգերի մոտ) միջոցով: Այն կարող է հանդես գալ նաև ինքնաբերաբար, առանց գիտակցության «միջամտության», բնազդորեն՝ անկախ մարդու կամքից ու մտադրություններից, անմիջականորեն ենթագիտակցությունից: Երբ ալպինիստը համառորեն ձգտում է բարձրանալ լեռան կատարը և, ի վերջո, չընկճվելով դժվարություններից ու վտանգներից, հասնում է իր նպատակին, դա գիտակցությամբ դրսենորվող ոգու գործունեությունն է, բայց երբ հետապնդվող մարդը ցատկում է լայն անդունդի վրայով՝ գերազանցելով մարդկային բոլոր հնարավորությունները, դա արդեն ոգու անգիտակցորեն դրսենորման ծև է: Ոգու անգիտակցորեն դրսենորումները հաճախ հանդիպում են նաև ստեղծագործական գործունեության, արարման ժամանակ, երբ մարդ ներշնչանք է ապրում, ստեղծագործելու անհաղթահարելի պահանջ:

Ոգին անգիտակցորեն դրսենորող մարդը կարող է լինել սովորական, ուրիշներից ոչնչով չտարբերվող, նույնիսկ բնավորությամբ կամ ֆիզիկապես թույլ: Նրա ոգին կարող է հանդես գալ արտակարգ իրավիճակներում, անկանխատեսելի հանգամանքների ժամանակ:

- Սովորական պայմաններում, մարդու առօրյա գործունեության

ժամանակ, նորմալ մարդու ոգին գտնվում է որոշակի արգելակող գործոններով կասեցված վիճակում և քիչ է ազդում նրա գործելակերպի վրա: Բնականաբար, դա անրաժեշտ է այլոց հետ սովորական, հավասարակշռված փոխհարաբերություններ ապահովելու համար, այսինքն, երբ դեկավարվելով միայն իր գիտակցությամբ, իր առկա մտավոր կամ ֆիզիկական հնարավորություններով անձը կարողանում է լուծել առաջացած հիմնահարցերը:

Այդ կասեցնող, արգելակող գործոնները կարող են լինել տարբեր բնույթների և հիմնականում կախված են անձի հոգեկան ու բարոյական առանձնահատկություններից: Նման գործոններ կարող են լինել տատանումները, ուժերը հաշվարկելու միտումը, ինչպես նաև բնավորության այնպիսի առանձնահատկությունները, ինչպիսիք են՝ զգուշավորությունը, խոհեմությունը, հեռատեսությունը և այլն: Բայց ուժեղ ոգու առկայության դեպքում նման գործոնների ազդեցությունը չքանում է՝ ոգու անհրաժեշտաբար դրսևորման պահից, իսկ նման մտածելակերպը հաճախ հնարավորություն է տալիս ավելի հաշվենկատ դեկավարել ոգու գործունեությունը:

Թույլ կամ անկառավարելի ոգու պատճառով տեղի է ունենում ֆիզիկական, բարոյական կամ հոգեկան հավասարակշռության խաթարում, որի հետևանքով առաջանում է ինքնատիրապետման կորուստ, սարսափ, սթրես և այլն: Ուժեղ ոգի ունեցող անձը երբեք չի կորցնում ինքնատիրապետումը և կարողանում է սառնասրտորեն ուղղություն տալ ոգու նպատակային գործունեությանը:

- Ոգու դրսևորման, նրան ամբողջությամբ ինքնաբացահայտվելու հնարավորություն տալու և գործելու նպատակով անհրաժեշտ են պայմաններ, որոնք չեզոքացնում են արգելակող գործոնների ազդեցությունը: Այդ նպատակի համար օգտագործվում են ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական միջոցներ: Մարտից առաջ հաճախ զինվորներին տալիս էին ոգելից խմիչքներ, մարզիկներին տալիս են արհեստական խթանիչներ, երբեմն օգտագործում են զանազան դեղամիջոցներ (թմրադեղեր): Նման միջոցները ոչ թե ուժեղացնում են ոգին, այլ հիմնականում վերացնում են նրա դրսևորմանը արգելակող գործոնները, ինարավորություն են տալիս ոգուն՝ ինքնաբացահայտվել ամբողջությամբ: Նման միջոցները թույլ ոգուն ուժեղացնել չեն կարող (հարբած նապաստակը առյուծ է դառնում նապաստակների շրջապատում):

Պետք է նկատել, որ արհեստական խթանիչների հաճախակի օգտագործումը ոչ միայն թուլացնում է մարդու ֆիզիկական հնարավորությունները (էներգիան միշտ վերցնելով ապագայից), այլև ազդելով հոգեբանության վրա, նման խթանիչների նկատմամբ

առաջացնում է մշտական պահանջ, որին գիտակցությունն անգամ ի զորու չի դիմադրել: Մարդու գոյապահպանության ամբողջ բնագույքը կենտրոնանում է այդ խթանիչների վրա, և ոգին անընդհատ գործում է այդ պահանջը բավարարելու համար միջոցներ գտնելու ուղղությամբ: Արգելակող գործոնները մշտապես ծնշվելով, ի վերջո վերանում են, և մարդը դառնում է անկառավարելի, փաստորեն հոգեկան իիվանդ (թմրամոլ, հարբեցող և այլն):

- Ոգու արհեստական դրսևորման ոչ-նյութական, ոգեղեն միջոցներից կարելի է նշել ներշնչանքը, ինքնաներշնչումը, իիպնոսը, աղոթքը, համոգելը և այլն, որոնք ամբողջ ուշադրությունը կենտրոնացնելով, այն ուղղում են ոգուն արգելակող գործոնների ազդեցության թուլացմանը և նրա գործունեության ազատականացմանը:

Արտաքին, ոչ-նյութական ազդող միջոցներից ամենաակնառուն թերևս իիպնոսն է: Յիպնոսացնողը խոսքերով ներշնչելով կամ շարժումների միջոցով ամբողջությամբ իրեն է ենթարկում անձի ոգին և դրա շնորհիկ լրիվ կառավարելի է դարձնում իրեն՝ անձին: Այստեղ ակնառու բացահայտվում է ոչ միայն անձի ոգու դերը նրա կենսագործունեության մեջ, այլև այդ ոգու կառավարելիության հետևանքները: Յիպնոսացված մարդու մոտ լրիվ բացակայում է սեփական կամքը, դադարում է գործել գիտակցությունը, նա կորցնում է ինքնությունը և կատարում է իիպնոսացնողի բոլոր իրամանները: Մասնագետների պնդումով իիպնոսացված վիճակում իր բարոյական սկզբունքներին հակասող իրամանները անձը չի կատարում: Յիպնոսված անձը իրամանները կատարում է իիպնոսային քնի վիճակում, այսինքն նրա գործողությունները կառավարվում են դրսից ենթագիտակցությանը թելադրված ազդանշաններով: Որ դա ոգու գործունեությունն է՝ երևում է նաև այն հանգամանքից, որ իիպնոսացված վիճակում մարդը կատարում է գործողություններ, որոնք սովորական վիճակում ֆիզիկապես չեր կարող կատարել (օրինակ, հորիզոնական քարացած վիճակում մեծ ծանրություններ պահելու հայտնի փորձը և այլն): Մյուս կողմից, դա ապացուցում է, որ ոգին անմիջականորեն կապված է ենթագիտակցության հետ, և նրա իիմ-

Ա. Ի.



## Սարդկային ոգու առանձնահատկություն և բարեկարգություն

Արարումը կամ ստեղծագործելու գործընթացը մարդու մտածված, նպատակառուղղված և միաժամանակ ոգեղեն գործունեություն է՝ ոգու անմիջական մասնակցությամբ։ Արարումը հատուկ է հիմնականում մարդուն։ Բնական արարածներից ոչ մեկը ընդունակ չէ նորաստեղծության։ Երբ բնության մեջ կենդանին, թռչունը, միջատը բույն են շինում, կամ թռչունները դայլայլում են և այլն, դա արարում չէ։ Նրանք նույն բանը հազարավոր տարիներով կրկնում են բնագդորեն, առանց նորույթ մտցնելու (թերևս նորույթը մարդու ստեղծած արհեստական նյութերի մնացորդների օգտագործումն է՝ դարձյալ՝ առանց գիտակցելու)։

Արարման ոգեղեն գործունեությունը նախ և առաջ պահանջում է վերացական մտածողություն, երբ ստեղծվելիքը իր բաղադրիչներով կամ անմիջական տեսքով գոյություն ունի արդեն գիտակցության մեջ և մնում է այն իրականացնել, կամ ենթագիտակցական մեջ լինելով, ի հայտ է գալիս արարման ընթացքում։ Շատ բարդագույն հիմնախնդիրներ հաճախ լուծվում են անսպասելիորեն, երազում, որևէ անկապ իրադրության մեջ և այլն։ Հաճախ ոգեղեն գործունեությունը կարծես տեղի է ունենում անձից անկախ, անսպասելիորեն, ոգու բննկումների տեսքով, որոնք հանդիպում են հատկապես հանձարների մոտ։ Նրանց համար ոգին ոչ միայն անձնական ներքին է-ներգիայի դրսեւորում է, այլև պարունակում է Արարչական ներուժ. այսինքն, նրանք դրսից ստանում են նաև լրացուցիչ էներգիա, որի շնորհիվ նրանց արարումները ստանում են համամարդկային նշանակություն և փաստորեն ուղենիշներ են հանդիսանում ամբողջ մարդկության գիտակցական ու բարոյական առաջընթացի գործում։

- Սեփական ոգու գիտակցական մեթոդներով (ինքնաներշնչման, ինքնահամոզման) կառավարման շնորհիվ վերացնելով ոգու դրսեւորման արգելքները, անձը կարծես հաղորդակցության մեջ է մտնում սեփական ոգու հետ, խթանում է նրա գործունեությունը և, եթե այդ նրան հաջողվում է, նա ձեռք է բերում ինքնավստահություն, հոգեկան հավասարակշռվածություն, մտքի պայծառության, կամքի ամրապնդում և այլն։ Փաստորեն անձը, ոգու գործունեությունը նշված մեթոդներով նպատակառուղղելով որոշակի ուղղությամբ, հզորացնում է իր մտավոր և ֆիզիկական գործունեության արդյունավե-

**տությունը:** Պետք է նկատել նաև, որ այդ մեթոդներով, ոգու միջոցով կարելի է կառավարել ոչ միայն օգացմունքները, այլև օգայարաններից եկող ազդանշանների նկատմամբ անձնական վերաբերմունքը (ասենք բարձրությունից կամ մթությունից առաջացած վախը, որևէ հոտի կամ համի նկատմամբ զգվանքը և այլն):

- Գոյություն ունի տեսակետ, թե ոգին ինքը ժառանգական երևույթ է, այսինքն ուժեղ ոգի ունեցող ծնողներից ծնվում են ուժեղ ոգի ունեցող ժառանգներ: Եթե դա ճիշտ է, ապա հավանական է՝ ունի կենսաբանական կամ գենետիկ հիմք, բայց առավել հավանականը ուժեղ ոգով ծնողի հետ մշտական շփումն է: Մյուս կողմից, ընդհակառակը, կյանքում հաճախ է պատահում, որ ուժեղ ոգի ունեցող ծնողների զավակները ոգով թույլ են լինում: Հետևաբար, այստեղ կարևոր դեր են կատարում դաստիարակությունը, կյանքի պայմանները: Սովորաբար բարեկեցիկ կյանքը, պահանջները հեշտությամբ բավարարելու հնարավորությունը, մշտական խնամակալությունը, երբ ոգու դրսևորման համար անհրաժեշտություն չի զգացվում, այն կարծես թմրում է: Միայն ծայրահեղ վիճակները, վատ պայմանները, դժվարին կացությունները ստիպում են ոգուն հաճախակի ինքնադրսևորման: Հաճախակի ինքնադրսևորումները կարծես մարզում, ուժեղացնում են ոգին: Ուժեղ ոգի ունեցող ծնողների զավակները, եթե չեն ժամանակում նրանց ուժեղ ոգին, հավանաբար ժառանգում են նման ոգի ունենալու նախապայմանները և դրանք փոխանցում են իրենց ժառանգներին: Համենայնդեպս ուժեղ ոգու ժառանգման կամ սերունդներին փոխանցման գործընթացի վրա չեն ազդում բնավորության այնպիսի գծերը, այնպիսի սովորությունները, ինչպես ասենք հղվացածությունը, ծուլությունը և այլն, այլ միայն տվյալ ժառանգի մոտ ուժեղացնում են կամ ամրացնում ոգու դրսևորմանն արգելակող պատճեշները:

Ոգու ժառանգման հասկացությունը կարելի է տարածել ոչ միայն տվյալ անձի սերունդների, այլև նրա արարման արդյունքների, ստեղծած արժեքների նկատմամբ: Որոշ իմաստով, հատկապես արվեստագետների պարագայում, ստեղծագործությունը մարդու ոգեղեն զավակն է, ժառանգը: Այսինքն, արարման վերջում դրա արդյունքի մեջ մնում է նրանց ոգու մասնիկը, և ինչքան հզոր ու կայուն է այդ մասնիկը, այնքան բարձր է այդ արարման արժեքը և մնայուն՝ արարման հետ միասին: Ուրեմն, կարելի է ընդունել, որ մարդու մահից հետո նրա ոգին չի անհետանում կամ հոգու հետ չի անցնում այնկողմնային ոլորտ, այլ կարծես ներծծվում է նրա թողած գործերի մեջ (վերևում նշված լիցքի նման):

Այստեղ, թերևս, տեղին է հետևյալ նկատառումը. հայտնի է, որ

արվեստագետները որքան շատ են ստեղծագործում, այնքան վարպետանում են, և բարձրանում է նրանց ստեղծագործությունների արժեքը, ոգեղենությունը: Յետևաբար, ինչքան շատ է ներդրվում ստեղծագործության մեջ ոգին, այնքան հզորանում է սեփական ոգին (ջրհոր փորելու նման՝ ինչքան շատ է հատակից հանվում հողը, այնքան նա խորանում է): Մյուս կողմից, ինչպես նկատեցինք Վերևում, ինչքան քիչ առիթ է լինում ոգու դրսնորման համար, այնքան նա թմրում է: Դա ոգու ամենակարևոր ու նշանակալից առանձնահատկություններից է:

- Կյանքի նոր տեսակների առաջացման և հների կործանման պատճառներին նվիրված ուսումնասիրություններում ենթադրվում է նաև, թե տվյալ տեսակի մեջ ուժեղ ոգին ազդելով և ճնշելով, թուլացնում է ամբողջ տեսակը՝ ի վերջո այն հասցնելով կործանման: Որոշ տեսակները մեռնում են, որովհետև գոյության կռվում տեսակի մեջ եղած ուժեղ անհատները ոչնչացնելով թույլերին, հնարավորություն չեն տալիս իրենց սերունդներին խաչաձևելու նրանց սերունդների հետ, որը ոգուն տալով միակողմանի բնույթ, թուլացնում է ամբողջ տեսակի դիմադրողականությունը արտաքին տարաքնույթ և անսպասելի երևույթների դեմ:

Ուժեղները ուժի վրա հենվելով փորձում են կյանքի պայմանները հարմարեցնել իրենց, իսկ թույլերն իրենք են հարմարվում կյանքի պայմաններին. այսինքն գոյության կռվում որդեգրում են ծկուն վարվելակերպ: Մյուս կողմից ուժեղները չհանդիպելով դիմադրության, նրանց ոգին դրսնորվելու կարիք չի գում և կարծես թմրում է, թմրեցնելով ամբողջ տեսակի ոգին: Եվ ստացվում է, որ եթե արտաքին հանգամանքները դասավորվում են այնպես, որ ուժեղների ուժը չի բավարարում դրանք հաղթահարելու, իսկ նրանց ոգին հաճախակի չդրսնորվելու պատճառով աստիճանաբար թուլացել է, նրանք պարտվում են և ոչնչանում, իսկ թույլերը, հարմարվելով նոր պայմաններին, գոյատևում են: Դրանով է բացատրվում հազարավոր տարիներ առաջ ապրած թրատամ վագրի, քարանձավային առյուծի և այլ հզոր գազանների տեսակների անհետացումը:


Դա բնության օրենք է, որը գործում է ամբողջ օրգանական աշխարհում, նույն թվում նաև մարդկային հասարակության մեջ (թերևս դրան է առնչվում նաև ազնվականության դասի կամ հոռմեական ազգի վերացումը):

Իհարկե այս հարցը քննարկելու կարիք ունի այն առումով, որ չի բացառվում, որ երկու ուժեղ ոգիների ժառանգը կամ թույլ ոգիների ժառանգը ունենա ուժեղ ոգի:

Տեսակի ներսում ուժեղների և թույլերի խաչաձևումը երբեմն

ծնունդ է տալիս նաև անհատների, որոնք ուժեղ ծնողներից ժառանգում են ուժեղ ոգի, իսկ թույլ ծնողներից՝ վարվելակերպի ճկունություն, և այդ անհատներն են տեսակի պահպանման ու զարգացման հիմնական գործոնները։ Ազգի մաքրության, առանձին անհատների կամ ցեղերի արյան մաքրության ռասխիտական հայացքները, փաստորեն ավելի շատ վտանգում են տվյալ ազգի, ցեղի հարատևման հեռանկարները։

Ա.Ե.



## Ազգային ոգին

- Ազգի ոգին այն հիմնական գործոնն է, որը ազգին հնարավորություն է տալիս գոյատևելու և հարատևելու։ Ազգի ոգին հիմնված է նրա լեզվի, բնօրրանի, ավանդույթների, սովորույթների, հոգեկան կերտվածքի, բնավորության, բարոյական կերպարի միագումարի վրա։ Ազգային ոգու ժառանգումը պայմանավորված է ոչ միայն առանձին անհատների կողմից իրենց նախնիների ոգիների կամ այդ ոգիների դրսևորումների նախապայմանների ժառանգումով, այլ ամբողջ ազգի՝ յուրաքանչյուր անհատի գործունեության շնորհիվ ազգի ոգու ուժեղացման կամ թուլացման, յուրաքանչյուր դարաշրջանում նոր ոգեղեն արժեքներ ստեղծելու կամ նախնիների ստեղծածը կորցնելու պատճառով փոփոխված ոգու ժառանգումով։ Ինչքան ուժեղ է նախնիների կողմից ժառանգություն թողած ազգի ոգին, ինչքան շատ արժեքներ են ստեղծել հաջորդ սերունդները և դրանով ուժեղացրել այն, այնքան ուժեղ է տվյալ պահին ազգային ինքնագիտակցության, ինքնավստահության վրա հիմնված ազգային ոգին։

Պատահական չէ, որ զավթիչները կամ նվաճողները աշխատում են ոչնչացնել նվաճվածի ոգեղեն արժեքները՝ պատմական հուշարձանները, գրական ժառանգությունը և այլն. այսինքն՝ պակասեցնել հետագայում տվյալ ազգի մեջ ուժեղ ոգի առաջանալու հնարավորությունը։

Ազգի ոգեղեն արժեքները ազգային ոգու պահեստարանն են։ Ազգի ոգին ազգի ճակատագրական, ծայրահեղ վիճակների ժամանակ, այնտեղից է էներգիա ստանում, ուժեղանում, ինչը ինքնաբացահայտման, հզորանալու և իր ազգային խնդիրները լուժելու հնա-


րավորություն է տալիս: Այդ տեսակետից ազգային ոգին, ինչպես առանձին անձի ոգին, իրեն դրսևորում է արտակարգ հանգամանքների ժամանակ և հնարավորություն է տալիս հաղթելու՝ անկախ ազգի թվաքանակից ու վիճակից՝ ի զարմանս և ի սարսափ հզորների:

Նման պարագաներում ազգի ոգին դրսևորվում է միաժամանակ բոլոր ոլորտներում ամբողջ հնարավորություններով՝ և գաղափարական, և զգացմունքային, և արարման, և ինքնապաշտպանական:

- Անհատի ոգու ազդեցությունը ինչպես ազգի, այնպես էլ հանրույթի ոգու վրա կախված է ոչ միայն նրա ոգու ուժից, անձի գրաված դիրքից ու հեղինակությունից, այլև նրա հանդես գալու ժամանակից ու պայմաններից: Ուժեղ ոգով առաջնորդը հզորացնում է ազգը, նախամարդու մեթոդներով ղեկավար դիրք գրաված թույլ ոգով անձը թուլացնում է ազգի ոգին և վտանգում նրա նորմալ կենսակերպը, նրա զարգացումը, նույնիսկ՝ ապագան: Նման ղեկավարները ի հայտ են գալիս կամ ազգի ոգեղեն ցնցումների ժամանակ, երբ մարդկանց մեջ ավելի շատ գործում է զգացմունքային ոգին, քան առողջ դատողությունը, և նրանք հեշտությամբ խաղալով մարդկային զգացմունքների վրա, տարբեր մեթենայություններով կարողանում են գրավել առաջատար դեր, կամ ազգի բարգավաճման ու հզորության գագաթնակետին, երբ ամբողջ ազգի ոգին, չունենալով դրսևորման անհրաժեշտություն, թմրած է, և ազգը քիչ է հոգում իր ծակատագրի համար:

- Ազգի գոյատևման ամբողջ ընթացքում նրա ոգին պահպանվում է իր այն հատկանիշների, այն որակների մեջ, որոնցով տվյալ ազգը տարբերվում է մյուսներից: Իր պատմության ընթացքում ազգն ստեղծում է առասպելներ, հեքիաթներ, էպոսներ, որոնց մեջ արտահայտում է իր պատկերացումները բարու ու չարի, լավի ու վատի նկատմամբ, որանց միջոցով խոսում Արարչի նկատմամբ իր վերաբերմունքի մասին՝ պատմական կամ հեքիաթային հերոսներին օժտելով իր պատկերացումներով դրական ու լավագույն հատկանիշներով: Եվ որքան այդ հերոսների ոգին մոտ է արիական

Ա.գ.



## Խմբային ոգու կառավարումը

- Երբ նախնադարյան մարդիկ որսից առաջ կատարում էին հատուկ ծիսակարգ՝ պարերով ներկայացնելով որսի տեսարանները, դա դիտվում էր որպես որսի հաջողությանը նպաստելու կախարդության, հմայության մի ձև: Իրականում դա որսորդների խմբի ոգու բարձրացման միջոց էր, հատկապես խոշոր կենդանիների որսի ժամանակ: Այսինքն, նրանք զգում էին խմբային ոգու իրողությունն ու միջոցներ էին ձեռնարկում այն հզորացնելու համար:

Առանձին անձի ոգին, անձի բարձր գիտակցության պայմաններում, այս կամ այն չափով գտնվում է նրա հսկողության տակ և դրսից դժվար է կանխատեսել նրա ոգու առանձին դրսևորումները, բայց մարդկային խմբի մոտ այն դառնում է կանխատելի և հեշտ կառավարելի:

Խմբային ոգին ոչ թե առանձին ոգիների պարզ, թվաբանական գումար է, այլ դրանից առանձին, բազմապատիկ անգամ հզոր մի երևույթ: Այն թույլ դիմադրողականություն ունի հոգեբանական վարակի նկատմամբ, և վարակված ոգով մարդիկ խմբում հաճախ մոռանում են սեփական անձը, դադարում են մտածել ու կողմնորոշվել այն աստիճան, որ անգամ կարող են գործել ի վեհական անձի, սեփական շահերի, հօգուտ իրենց վարակողների: Այլ խոսքով, խմբային ոգին ընդունակ է ճնշել և իրեն ենթարկել խմբի մեջ մտնող առանձին անհատների ոգիները և նրանց գործունեությունն ուղղել ցանկալի հունով:

Մարդ արարածը, գիտենալով հանդերձ, որ անկարգությունների ժամանակ կարող են լինել ընդհարումներ, նույնիսկ զոհեր, առանց մտածելու խառնվում է ամբոխին, կամովի ենթարկվելով խմբային ոգուն և նրան ենթարկելով իր անձնական ոգին: Եվ երբ տարբեր միջոցներով հաջողվում է ցրել ամբոխին, այսինքն ճնշել նրա խմբային ոգին, նրա հետ ճնշվում են նաև առանձին անձաց ոգիները: Ամբոխի առանձին, նույնիսկ ուժեղ ոգի ունեցող անհատները, տեսնելով ամբոխի խուճապահար փախուստը, իրենք էլ հետևում են ուրիշներին: Տվյալ դեպքում սովորաբար առաջին փախչողները հանդես են գալիս որպես նոր հոգեբանական վարակի աղբյուրներ:

- Ժամանակակից քաղաքական և հոգեբանական գիտությունների զարգացման պայմաններում հնարավոր է դարձել տեղեկատվական կեղծիքի, բարոզչության ու զուգագիր մեթոդներով, ըստ ցան-

կության, ձևավորել հասարակական գիտակցությունը, մարդկանց մտածելակերպը, դատողության ուղղվածությունը: Նման դեպքերում գիտակցությանը պատվաստվում է այնպիսի արտակարգ, ծայրահեռ իրավիճակային իրադրություններ կամ պատկերացումներ, որոնք առաջ են բերում հանրությի ոգու ընդհանուր արբեցում կամ տագնապ, հոգեբանական ընդհանուր բռնկում և հնարավորություն են ընձեռում մարդկային հոծ խմբերին վերածել ամբոխի և դրդել ծրագրված հետևանքներով գործողությունների: Նման մեթոդներն օգտագործվում են հեղափոխությունների, զանգվածային ցույցերի, անկարգությունների, ինչպես ասենք, ժողովրդավարական համարվող երկրներում ընտրությունների ժամանակ՝ անձաց կամ գաղափարների գովազդի ձևերով: Ներկայումս նման մեթոդները մշակվում են հատուկ, այդ նպատակների համար կազմակերպված և արհեստավարժ մասնագետներով համալրված բազմաթիվ գիտական կենտրոններում (իհարկե զարգացած երկրներում): Այդ մեթոդները կիրառում են հռետորները, առաջնորդ դառնալու հավակնորդները կամ նրանց աջակցող անհատները:

Ամբոխի ոգու ղեկավարման ձևերից են հատուկ, ամբոխի լսելիքի համար հաճելի, մշակված ելույթները կամ կարգախոսները:

Խմբային ոգու բռնկումներ են առաջանում զանգվածային միջոցառումների՝ համերգների, մարզական և այլ մրցումների, ցուցադրական ելույթների ժամանակ, երբ հանդիսատեսները վարակվում են արտիստների, մարզիկների, հռետորների ուժեղ արտահայտված ոգով (նույն երկույթին կարելի է դասել նույնիսկ նորածնության տարածումը):

- Ոգու ուժեղացումը կարևորվում է հատկապես զինվորական գործում: Այդ տեսակետից բանակում հրամանատարներ նշանակում են ոչ միայն գերազանց մարտական գիտելիքների, այլև ուժեղ ոգու տեր անձաց, որոնց գործողությունները լինում են վստահ, հրամանները՝ որոշակի, կտրուկ և անառարկելի՝ պարունակելով ուժեղ ոգի և դրանով խթանելով զինվորների ոգու ակտիվացմանը: Պատերազմում հաղթելու համար ոգին կատարում է հսկայական դեր: Պատմությունից հայտնի են դեպքեր, երբ փոքրաքանակ, սակայն հզոր ոգու տեր բանակը հաղթել է թվաքանակով ու զինվածությամբ իրեն շատ անգամ գերազանցող թշնամուն: Զգոր ոգի ունեցող բանակը միշտ հաղթական է: Զինվորի ոգին հատկապես հեշտ է բարձրացնել, երբ նա ներքուստ համոզված է իր կռվի արդարացիության, նպատակի ծշմարտացիության, նաև սեփական հզորության մեջ:

Սակայն նշված առաջին երկու պայմանները բնորոշ են հիմնա-

կանում բարձր գիտակցություն և ոգեղենություն ունեցող ազգերի բանակներին: Իսկ վերջին պայմանը հավասարապես բնորոշ է բոլոր բանակների համար: Սեփական հզորության մասին վստահությունը գալիս է զորքի ուժեղ գինվածության, մեծ թվաքանակի և բարձր մակարդակով դեկավարման գիտակցումից, իսկ թերզարգացած ազգերի մոտ՝ նաև անպատճելիության և թալանի ակնկալիքից:


Բանակի ոգու բարձրացման համար մեծ նշանակություն ունի առաջին հաղթական մարտը, սակայն այն նաև վտանգավոր է, եթե առաջանում է արբեցում հաջողությունից (Էյֆորիա), ոգու կառավարելիության թուլացում, որն իր հետևից բերում է զգոնության բթացման և ուժերի գերազանահատման վտանգ:

- Ոգու դրսևորման վրա հետաքրքիր ազդեցություն է թողնում հատկապես երաժշտությունը. գինվորական գործում՝ մարտական քայլերգը, ժողովրդի շրջանում հայրենասիրական երգերը, կրոնում՝ սաղմոսներն ու ժամասացությունը և այլն: Երաժշտությունն ինքը լինելով ոգեղեն երևույթ, հնչելիս, ռեզոնանսի մեջ է մտնում և ուժեղացնում անձի ոգին՝ տալով նրան նոր լիցք ու թափ:

- Նախորդ բաժիններում հիշատակված ոգեղեն ցնցումների 500-ամյա պարբերականությունը միաժամանակ նշում է ժամանակի ոգու՝ իր բարձրագույն աստիճանի հասնելու պահերը: Ոգեղեն ցնցումների ժամանակ առաջ են գալիս նոր կրոններ, գաղափարներ, աշխարհայացքներ, ծնվում են բարձրագույն գեղարվեստական ստեղծագործություններ, կատարվում են գիտական խոշոր հայտնագործություններ՝ հաճախ միաժամանակ և իրարից անկախ: Նման պահերին, կարծես ամբողջ մարդկության, տարբեր ազգերի հանճարների միտքը, ոգին դուրս են գալիս իրենց սահմաններից, ստանդարտներից, փշրում են բնական ու արհեստական պատճեններն ու ինքնադրսևորվելով նոր թափ են հաղորդում ընդհանուր առաջընթացին:

Ոգին հակադրվելով նյութականին, ընդունակ է այն վնասելու գնով առաջացնել հետագայում նյութական առավել բարձր մակարդակի հասցնելու պայմաններ: 500-ամյա պարբերականությամբ համամարդկային մասշտաբով ոգու բարձրակետերին հաջորդում են հանգիստ, համեմատաբար համաչափ զարգացումները՝ ոգու դրսևորման ժամանակ առաջացած մտավոր ծեռքբերումների հիման վրա: Այդ ժամանակ աստիճանաբար տեղի է ունենում նյութականի աճ՝ ի վնաս ոգու: Ոգին կարծես մղվում է հետին պլան, և

**Ա.Է.**



## Ոգու ծայրահեղությունները

- Մարդկային ոգու դրսևորումների ժամանակ հատկապես վտանգավոր են նրա ծայրահեղությունները՝ բոլոր մակարդակներում: Մարդու ոգու կառավարելիության վերը նշված մեթոդներով հեշտ է նրան մղել ծայրահեղությունների՝ կանխատեսելի կամ անկանխատեսելի հետևանքներով: Ոգին իր բարձրագույն վերելքին է հասնում խմբային ոգու մակարդակում և կարող է մարդկային խմբին վերածել վծուական գործողությունների հակված ամբոխի: Կուսակցական գաղափարների, կրոնների դեպքերում այն կարող է մարդուն հասցնել մոլեռանդության, անհանդուրժողականության, այլախոհների նկատմամբ ատելության՝ իր բացասական դրսևորումներով:

Սարսափը, վախը կարող է սրել թույլ ոգիների մոտ ինքնապաշտպանության բնազդը, կաշկանդել ոգու գաղափարական, արարչագործական բնույթները, անձին ստիպել կորցնել ինքնակառավարումը, ամբոխին դարձնել խելահեղ անհատների խումբ, որոնք կուրացած՝ ի զորու չեն ոչինչ ընթառնել:

Առանց տարբերակելու ամբոխը կարող է ոչնչացնել ամեն մի լավ ու առաջադիմական գործ, նախաձեռնություն, հալածել առանձին այլախոհներին, հանճարներին, նույնիսկ գնալ ինքնառչացման (որը երբեմն օգտագործում է նախամարդկային եսը):

Վերևում նշված գլխապտույտը հաջողության պատճառով, արբեցումը ոգու ծայրահեղ բռնկումն է, որը հաճախ կարող է ի չիք դարձնել արդյունքները՝ հետին պլան մղելով բանականությանը:

- Հաճախ է օգտագործվում չար ոգի արտահայտությունը: Ինչպես վերևում նշվեց, ոգին էներգիայի ծև է, հետևաբար այն չար կամ բարի լինել չի կարող: Նույն էներգիայի տեսակով կարելի է և՛ կառուցել, և՛ ոչնցանել: Մարդու բնավորության մեջ կան և դրական, և բացասական գծեր, և մարդու չար կամ բարի լինելը կախված է այդ գծերից որևէ մեկի գերակայությունից, ինչն էլ արտահայտվում է նրա ոգու դրսևորումներում: Ընդորում, այն կարող է դրսևորվել և գիտակցորեն, և անգիտակցորեն: Գիտակցորեն դրսևորումները արտահայտվում են անեծքի, հայիոյանքի, վիրավորանքի և այլ բացասական արտաբերումների ժամանակ, ատելության պոռթկումների ծևով:

Որպես ոգու անգիտակցական բացասական դրսևորում կարելի է

համարել, ասենք, աչքով տալը: Այստեղ անգիտակցական բնույթը կայանում է նրանում, որ չի տարբերակում իր ազդեցության օբյեկտը, և մարդը կարող է աչքով տալ նույնիսկ իր սիրելիներին, ինքն իրեն: Դա տեղի է ունենում անձի կողմից իր ոգուն կառավարել չկարողանալու կամ այն ինքնահոսի թողնելու դեպքում:

Աչքով տալու երևույթի մասին կարելի է շատ օրինակներ բերել և դատողություններ անել, որոնց վերաբերյալ խոսակցությունները սովորաբար հեգնախառն երանգներ են ունենում (հավանաբար վախենալով ծիծաղելի երևալուց): Յետաքրքիր է, որ լրջախոհ մարդիկ, այն համարելով սնահավատություն, հաճախ իրենք էլ լոելյան փորձում է խուսափել դրանից: Իսկ ընդհանրապես այդ երևույթը հաճախ է հանդիպում կյանքում: Դիցուք որևէ առարկա մարդուն շատ է հիացնում և այն անսպասելի դեպքի պատճառով վնասվում է, կամ մարդը չափազանց վստահ է լինում որևէ գործի հաջողության մեջ և անսպասելիորեն անհաջողության է հանդիպում և այլն: Դրանք, փաստորեն, վերևում նշված ոգու ծայրահեղացման հետևանքներ են:

Եթե փորձենք դա բացատրել, ելնելով ոգու՝ էներգիայի տեսակ լինելու ենթադրությունից, ապա այն կարելի է համեմատել էլեկտրական լիցքի կուտակման հետ (չխորանալով վերջինիս ֆիզիկական բնույթի մեջ): Երբ տեղի է ունենում լիցքի գերկուտակում, ի վերջո հետևում է պարպումը, ասենք, կայծի կամ կայծակի տեսքով՝ իր հետևանքներով հանդերձ:

ճիշտ է կատակով, բայց աչքով տալուց խուսափելու համար մարդիկ հաճախ թքում են ծախս ուսի վրայով, կսմթում մարմնի համապատասխան մասերը, կրում են հմայիլներ, երեխայի շորերին, աչքի ընկնող տեղում ամրացնում են կապույտ ուլունք, կամ խոսակցության ժամանակ հիշատակում աչքով չտալու անհրաժեշտությունը և այլն: Իրականում նման գործողություններով, անկախ դրանց ծնից, մարդիկ փորձում են կառավարել ոգուն, կանխել նրան ծայրահեղանալուց:

Ոգու՝ բացասական կողմերով դրսևորվելու ընդունակություններն օգտագործում են զանազան գրավոր ու բանավոր կախարդություններ, հմայություններ կատարելու և այլ նպատակներով: Նման գործողություններով նախամարդը, փաստորեն փորձում է իրականացնել իր կամքը, ցանկությունները, նպատակները մեկ ուրիշի ոգին իրեն ենթարկելու, կառավարելի դարձնելու այսինքն նրան ստրկացնելու միջոցով: Դա ուրիշի կամքի, ճակատագրի վրա ազդելու ծգտում է, որը ոչ միայն անթարոյական է, այլ հակամարդկային ու հակաարարչական: Այդպիսի մեթոդներից օգտվել փորձողները

# Բ.

\* \* \* \* \*  
\* \* \* \* \*  
**ՉՈՐՏԱԿԱՐԱՑՈՒՆ ԱՇԽԱԴՐԻ,  
ՎԱՇԽԱՁՋԱՑՈՒՄՈՒՆ ԱՇԽԱԴՐԻ,  
ՇՎԱԳՇԵՐԻ, ՄՐԱՎԱՆ**

- Մարդը զգալով ճակատագրի իրողությունը և այս կամ այն չափով իր կախվածությունը դրանից, իրեն առնչվող որոշ կարևոր դեպքերի, հանգամանքների, երևույթների անկախությունն իր կամքից, «թվացյալ» պատահականությունների հնարավորությունները և այլն, ձգտում է ինչ-որ ձևով պատկերացում կազմել իր ապագայի, իրեն սպասվելիքի, գործողությունների հաջող կամ անհաջող ելքի, գալիք անհաջողություններից խուսափելու հնարավորությունների մասին՝ այն ակնկալիքով, որ գիտենալով դրանց մասին, հնարավորություն կունենա նաև ազդել դեպքերի ընթացքի, այլ կերպ ասած՝ ճակատագրի վրա: Այսինքն, մարդը ցանկանում է իր ձեռքով կարգավորել իր ճակատագիրը, առանց մտածելու, որ եթե նման հնարավորություններ ունենան բոլորը, ապա կյանքը կվերածվի պայքարի՝ բոլորը բոլորի դեմ (ցանկացած մարդ մտածում է իր եսի մասին, գտնելով, որ ինքը յուրահատուկ է):

Սովորաբար, հեռանկարային ծրագրեր կազմելիս, անձը փորձում է նախատեսել այդ ծրագրերի իրագործման ճանապարհին հանդիպելիք խոչընդոտները, արգելքները շրջանցելու միջոցները, սպասվելիք աջակցող կամ խանգարող երևույթները, հանգամանքները և այլն: Բայց վճռական պատահականությունը, որը չի նպաստում կամ հաճախ ի չիք է դարձնում այդ ծրագրերը, կամ ընդհակառակը, անսպասելիորեն աջակցում է այդ ծրագրերին, մարդը նախատեսել չի կարող:

Այդ իրողությունն զգալով մարդն իր կենսագործունեության ընթացքում և համոզվելով ապագան իմանալու իր անկարողության մեջ ու կարծելով, թե այդ հնարավոր է միայն այնկողմնային ուժերի միջոցով, դիմել է գուշակներին, կախարդներին, որոնք կարողացել են նրան համոզել կամ ապացուցել՝ իրենց նման ընդունակություն ունենալու մասին: Մարդկային քաղաքակրթության արշալույսից սկսած առ այսօր, տարբեր դարաշրջաններում հանդես եկած գուշակները, կախարդները, պայծառատեսները մեծ ազդեցություն են

ունեցել հատկապես կառավարողների, իշխողների վրա: Դժբախտաբար նրանք մեծ մասամբ եղել են խաբեբաներ, բայց հանդիպել են նաև իրոք մարգարեներ, որոնց գուշակությունները կատարվել են ապշեցուցիչ ճշտությամբ:

- Յին Յունաստանում մեծ հաջողություն ունեին դելփյան պատգամախոսները: Յին Յայաստանում քրմերը գուշակում էին սոսիների տերևների սոսափյունով, միջնադարում Նոստրադամուսի գուշակությունների ճշգրտությունն առ այսօր զարմացնում է մարդկանց: Նույնը կարելի է ասել նաև մեր ժամանակներում Վանգայի գուշակությունների վերաբերյալ և ներկայումս լրջությամբ ընդունվող աստղագուշակների մասին և այլն: Գոյություն ունեն նույնիսկ գուշակությունների առանձին, հատուկ դպրոցներ՝ դրուիդների, չինական, հնդկական, աֆրիկյան: Գուշակությունները կատարվում են համակարգիչների կիրառմամբ, տարբեր աստղագիտական տեղեկատունների, աղյուսակների միջոցով:

Քրիստոնեական եկեղեցին խստորեն արգելում է գուշակությամբ զբաղվել՝ դա համարելով ծակատագիրը, այսինքն Արարչի կամքը փոփոխելու փորձ: Իրականում դա հնարավոր էլ չէ անել, քանզի մարդը, նախ անկախ իր կամքից, այդ ծրագրի կատարողն է, բացարձակապես չգիտենալով այդ ծրագրի նպատակառողջվածության մասին, և հետո բացառված չէ, որ իր ծակատագրի այս կամ այն երևույթի, այս կամ այն պահի մասին ծիշտ գուշակության միջոցով տեղեկացնելը ևս մտնում է այդ ծրագրի իրագործման մեթոդների մեջ: Այսինքն, մարդը տեղյակ է պահվում մի երևույթի մասին, որի կատարումը մտնում կամ չի մտնում այդ ծրագրի մեջ, հակասում կամ աջակցում է դրան, և նրան նախօրոք տրվում է հնարավորություն, թելադրվում է կամ պարտադրվում խուսափել դրանից կամ ընդհակառակը:

- Եթե հաշվի չառնվեն նախամարդկային խաբեբայությունները, որոնք այս ասպարեզում մեծ ծավալ են կազմում, ապա կարելի է ենթադրել, որ ծիշտ գուշակությունները գերազանցապես հիմնված են կանխազգացումների վրա, որոնք լինելով ոգու դրսեռորումների ծննդրից, գործում են ենթագիտակցական մակարդակում: Դժվար է ասել, թե կոնկրետ տվյալ պահի կամ հարցի մասին գուշակելիս որն է այստեղ կարևոր դեր կատարում, գուշակի, թե՝ նրան դիմողի կանխազգացումը, քանի որ սովորաբար վարպետ գուշակները, վարժված լինելով հաջողությամբ հաղորդակցության մեջ մտնել դիմողի ենթագիտակցության հետ, ճշտորեն կարդում և նկարագրում են նրա մտքերը, կանխազգացումները՝ օգտվելով հոգեբանական այն տարրական իրողությունից, որ մարդը սովորաբար գուշակին դիմե-

լիս իր ուշադրությունը կենտրոնացնում է իրեն հետաքրքրող խնդրի վրա (հիշենք Վերևում նշված ոգու կառավարելիության երևույթը, ասենք իհպնոսի միջոցով):

Ընդհանրապես նման օրոշակները լավ հոգեբաններ են, և ուշադրի հետևելով մարդու դեմքի արտահայտություններին, ակամա, աննկատելի շարժումներին, հեշտությամբ կարող են հետևել մտքերի ընթացքին և դրանք վերապատմել:

Կան մտքերը հաջողությամբ կարդալու ունակությամբ օժտված, բայց ոչ որպես գուշակ ձևացող անձինք (հաճախ նրանք հանդես են գալիս կրկեսներում), որոնք գիտակցական թե ենթագիտակցական մակարդակում կարդում են դիմացինի մտքերն ու վերարտադրում: Գուշակները, հաճախ նկարագրելով դիմացինին հայտնի ճիշտ փաստերը, կարողանում են գուշակել նաև ցանկացածը և մեծ մասսամբ տալիս են հաճելի պատասխան: Որոշ գուշակներ մտքերի ուժեղ կենտրոնացման են հասնում որևէ առարկայի, նյութի վրա ուշադրությունը կենտրոնացնելու միջոցով (ջրին, արծին, հալված մոմին, սուրճի բաժակին և այլն): Եթե ուշադրություն դարձնենք, սովորաբար ճիշտ են ստացվում արդեն անցած կամ ընթացքի մեջ գտնվող երևույթների ու դեպքերի վերաբերյալ գուշակությունները, որոնց բազ հայտնի է դիմողը և որոնք օգտագործվում են գուշակի խոսքերի նկատմամբ հավատ ներշնչելու համար:

Յնում (չի բացառվում նաև հիմա) սովորաբար գուշակները տալիս էին երկիմաստ պատասխաններ և դիմողին թողնում պատասխանի ընտրությունը՝ ըստ իր ցանկացածի, և հետևանքների պատասխանատվությունը (հիշենք Դելֆյան տաճարի Պյութիա գուշակուիու երկիմաստ պատասխանը Կրեսոս թագավորին):

Պետք է նկատել, որ շատ գուշակներ, եթե նկատում են դիմողի թերահավատ վերաբերմունքը, կասկածանքը կամ չեն կարողանում կարդալ նրա մտքերը, իրաժարվում են գուշակել, պատճառաբանելով այնկողմնային ուժերի մերժումով:

Գուշակությունները մեծ մասամբ կատարվում են որոշակի վարձատրությամբ կամ նվիրատվությամբ (անվարձ գուշակումներ հազվադեպ են): Այսինքն գուշակները, իրենց այդ կարողությունը օգտագործում են շահ ստանալու նպատակով: Բայց հետաքրքիրն այն է, որ դեռևս չի լսվել որևէ գուշակի մասին, որը կարողացել է խոշոր շահում ստանալ, ասենք, վիճակախաղից, կամ այլ խաղերից, և դա նրանք պատճառաբանում են անկողմնային ուժերի դրած արգելքով (արժե մտածել):

- ճշգրիտ գուշակությունները ճակատագրի ընթացքի պահպանման գործում լուրջ գործոններ են, և թե որն է այդ գործոնների դերը

և դրանց հայտնվելու նպատակը, ոչ մի գուշակություն հուշել չի կարող, քանզի դա կնշանակեր գուշակել ճակատագիրը: Իսկ հատկապես մեծամասշտաբ իրադարձությունների, ցնցումների բնական կամ այլ երևույթների զարմանալի գուշակությունները կատարվում են ավելի հաճախ, հավանաբար այն պատճառով, որ որևէ առանձին անհատ, որը կատարել էր այդ գուշակությունը կամ որին հաղորդվել էր այդ մասին, կամ ի զրորու չէ փոխել այդ երևույթը (այսինքն ճակատագրով նախատեսվածը) և հանդիսանում է սուկակամա մասնակից, կամ ինչ-որ պատճառով կանխազգացման համար ավելի ուժեղ համապատասխան ազդանշաններ է ստացել:

Գուշակության տարածված ձևերից մեկը մարդու ճակատագրի որոշումն է ձեռքի ափում գտնվող «գծագրերի» միջոցով: Այդ ուղղությամբ նույնիսկ կան հատուկ բախտացույցներ և տեղեկատուններ: Այս դեպքում գուշակության ծշտությունը կախված է գուշակողի երևակայության մակարդակից: Յետաքրքիր է, որ ձեռքով օժտված մյուս կենդանի արարածներից (օրինակ, կապիկներից) միայն մարդու ափի մեջ կան նման «գծագրեր», և դրանք իիմք են ընդունվում որպես «մարդ» արարածի համար նախատեսված ճակատագրի առկայության և այն գուշակելու հնարավորության ապացույց:

Աստղագուշակությունը գալիս է շատ հնուց և մեծ ազդեցություն է թողել զորավարների, թագավորների այս կամ այն որոշումը ընդունելու և ժողովուրդների ճակատագրերի վրա: Նույնիսկ Յիտլերն ուներ իր անձնական աստղագուշակը, և թե ինչ դեր կատարեցին նրա գուշակությունները և որքանով էին դրանք ճիշտ՝ ցույց տվեցին հետագա դեպքերը:

Աստղագուշակությունը իիմնված է այն ենթադրության վրա, որ տիեզերքը միասնական է և նրանում կատարվող ցանկացած երևույթ (այսինքն՝ աստղերի, մոլորակների տեղաշարժերը) այս կամ այն չափով հուշում կամ ազդում են մարդկանց ճակատագրերի վրա: Այստեղ իիմնախնդիրն այն է, թե աստղագուշակը ինչքանո՞վ ճիշտ է կարողանում ըմբռնել ու բացահայտել այդ կապը:

- Կանխազգացումները, որոնցից վարպետորեն օգտվում են գուշակները, մարդու մոտ հաճախ են պատահում, բայց մեծ մասամբ դրանց վրա ուշադրություն չի դարձվում կամ դրանց նշանակություն չի տրվում:

Դրանք ավելի շատ պայմանավորված են մարդու հոգու գործունեությամբ («հոգին վկայում է»): Հաճախ է պատահում, որ այդ կանխազգացման պահը համընկնում է մարդու մարմնի այս կամ այն մասում տեղի ունեցող մկանային երևույթների հետ: Եթե մարդը

համոզված է (կամ իրեն ներշնչում է), որ այդ կապը պատահական չէ, այսինքն մկանային այդ երևույթը կանխագացման ծև է, ապա դա այդպես էլ լինում է (աչքը խաղում է, ափի մեջ քոր է գալիս և այլն): Այդ կապը բազմիցս կրկնվելով, ամրապնդվում է և երբեմն դառնում է ծիշտ կանխագուշակման միջոց: Այսինքն, հոգին իր ազդանշանները տալիս է այդ մկանային խաղերի միջոցով, և մարդը սովորում է դրանք ընկալել:

Գերգգայուն մարդկանց մոտ համեմատաբար ուժեղ է հոգու և գիտակցության կապը: Նրանք հաճախ նշաններ են տեսնում կամ զգում և ուշադրություն դարձնում դրանց վրա: Նման մարդկանց հաճախ անվանում են նախապաշարվածներ: Բայց նման նշաններն իրոք գոյություն ունեն, և մարդը պետք է կարողանա ընկալել դրանք: Այդ նշաններով հոգին, գտնվելով ենթագիտակցության մեջ, ազդանշաններ է ուղարկում գիտակցությանը: Իսկ վերջինս դրանք ընկալելու համար պետք է ունենա համապատասխան մակարդակ, փորձ և ուշադրություն:

Այդ երևույթը բոլորովին կապ չունի փորձառության հետ, չնայած նույն հետևանքին է հանգեցնում: Երբ մարդը ծանապարհին տեսնում է ծառի կախ ընկած ծյուղը և մտածում է, որ այն մթության մեջ կարող է մեկի աչքը մտնել, դա փորձառություն է: Բայց երբ ինչոր շենքի պատի տակից ամեն անգամ անցնելիս մարդու մտքով անցնում է հեռանալ այդ պատից, կարծես այն վանում է մարդուն, և որոշ ժամանակ հետո այդ պատի տակ, հենց իր կողքին վերևի հարկից ընկնում է պատուհանին դրված ծաղկամանը, որն իր գլխին ընկնելիս կարող էր սպանել, դա արդեն կանխագացում է (նման դեպքեր կյանքում պատահում են): Իհարկե ամեն քայլափոխում նշաններ փնտրելը և դրանցով կառավարվելը, որ նկատվում է որոշ մարդկանց մոտ, ծայրահեղություն է, ավելի շուտ հոգեկան խանգարում: Բախտորոշ նշանները լինում են հազվադեպ և կարծես անկապ: Պետք է միայն գգալ և ուշադրություն դարձնել դրանց վրա՝ չարհամարհել կանխագացումը:

- Յարկ է նշել, որ կանխագացման երևույթը գոյություն ունի նաև բնության մեջ համարյա բոլոր օրգանական ծևերի մոտ: Դա նկատվել է և բույսերի, և ծկների, և միջատների, և հատկապես բարձրակարգ կենդանիների մոտ, որը, հավանական է, կյանքի պաշտպանության օրենքի դրսերումներից է: Արևադարձային երկրներում ուժեղ փոթորկից առաջ մրջյունները լքում են իրենց բները, երկրաշարժից առաջ ակվարիումի ծկներն իրենց անհանգիստ են պահում, առնետները փախչում են խորտակվելիք նավից, որոշ բույսերի ծաղկելու ծևից կամ տերևների տեսքից գիտակները

գուշակում են սպասելիք եղանակը և այլն: Այդ երևույթի նկատմամբ առավել զգայուն են բարձրակարգ կենդանիները, որոնց մոտ այն անվանում են բնազդ (նշենք, որ դա կենդանու կողմից ժառագաբար ստացվող՝ բներ կառուցելու և այլ գործողություններ կատարելու բնազդին չի վերաբերում): Եթե բնական աղետների դեպքում այդ արարածների նման վարքը փորձում են բացատրել շրջապատում կատարվող՝ մարդուն անհասկանալի փոփոխությունների պատճառով, ապա բարձրակարգ արարածների մոտ կանխազգացման երևույթները՝ կապված ճակատագրի հետ, նման պատճառներով բացատրել հնարավոր չեն: Ծները տիրոջ կամ այլ մոտիկ մարդկանց մահվանից առաջ սկսում են ունալ, չնայած այն կարող է լինել գուտ պատահականությունից (թեև կրկնվող պատահականություններն արդեն իսկ օրինաչափություն են): Յնում ծիերով ճամփորդելիս հաճախ նկատվում էր, որ նրանք հրաժարվում էին գնալ այն ճանապարհով, որտեղ վտանգ էր սպառնում, ու դա հաշվի էր առնվում և այլն: Բացառված չեն, որ նման բնազդ եղել է նաև նախնադարյան մարդու մոտ և ներկայումս էլ շարունակում է մնալ մարդկանց ենթագիտակցության մեջ:

- Քնած ժամանակ, երբ մարդու գիտակցությունը, արտաքին զգայարանները չեն գործում, միայն արթուն է ենթագիտակցությունը, որն ինչ-որ չափով պահպանում է արտաքին աշխարհի հետ կապը (մարդը շուռումուա գալիս և մահճակալից չի ընկնում, տակը չի թրցում և այլն): Արթուն ժամանակ ստացած տպավորությունների, ինչպես նաև քնած ժամանակ չգիտակցվող արտաքին ազդանշանների ազդեցության տակ մարդը երազներ է տեսնում, որոնք ենթագիտակցության մեջ կանխազգացումների հետ դրանց միախառնվելու արդյունք են, քանի որ մարդու վերաբերմունքն արդեն արգելակիչ դեր չի կատարում, դրանց դրսևորմանը չի խանգարում:

Իր ճակատագրի ընթացքին մարդու մասնակցության գործում երազները մեծ դեր կարող են կատարել: Շատ մարգարեական երազներ այս կամ այն գործը կատարելու կամ չկատարելու պատճառ են դարձել, շատ կանխազգացումներ, որոնք հայտնվել են երազի տեսքով, մարդուն հետ են պահել փորձանքներից, տիած վիճակներից կամ խթանել գործողությունները (թեկուզ կեսարի երազը՝ Ռուբիկոնն անցնելուց առաջ): Յետաքրքիր է, որ քրիստոնեությունը, արգելելով գուշակությունները, ընդունում է մարգարեական երազներով առաջնորդվելու անհրաժեշտությունը, և Աստվածաշնչում հաճախ Աստվածը երազի միջոցով է կապի մեջ մտնում իր ընտրյալների հետ:

- Երազների կապակցությամբ հարկ է ուշադրություն դարձնել

Երբեմն հանդիպող մի երևույթի վրա, որն ուշադրության չի արժանացել հոգեբանների կողմից: Պատահում է, որ ուժեղ աղմուկից, ասենք պայթյունից, մարդը վեր է թռչում քնից և անմիջապես հիշում, որ երազ է տեսել, որը վերջացել է այդ պայթյունով, չնայած հաճախ երազի բովանդակությունը բոլորովին կապ չունի պայթյունի իրական պատճառի հետ: Կապը միայն պայթյունի ձայնով է դրսևորվում: Նման բնորոշ երազներից է օրինակ հետևյալը. Երազում կրակում են իր վրա. նա վեր է թռչում, և պարզվում է, որ տան մեջ ապակի կամ որևէ իր է կոտրվել, կամ աղմուկով ընկել: Վերլուծենք երազի ընթացքը. Ենթադրենք անձը կանխազգացել է այդ դեպքի մասին և տեսել է մի երազ, որը վերջացել է կրակոցով, ինչը և համընկել է այդ աղմուկի հետ: Նման ենթադրությունը հավանական չէ, որովհետև աղմուկի պատճառն իր բնույթով այնքան էլ լուրջ չէ, որպեսզի մարդն այդ մասին կանխազգացում ունենար և երազ տեսներ: Այս նրա ծակատագրում լուրջ դեր չէր կարող խաղալ տվյալ դեպքում: Մնում է ենթադրել, որ այն մի քանի տասնորդական վայրկյաններում, որ անհրաժեշտ էր այն ուղեղին հաղորդվելու և ուղեղի կողմից տագնապ առաջացնելով, արթնանալու ընթացքում նա տեսել է մի երազ, որը տպավորվել է հիշողության մեջ: Փաստորեն դեպքերի իրական հերթականությունը գնացել է աղմուկից մինչև արթնանալը, իսկ հիշողության մեջ տպավորվել է երազի տեսքով՝ երազում տեսած ինչ-որ դեպքերից մինչև աղմուկը: Այսինքն, երազում հետևանքն ու պատճառը իրենց տեղերը փոխել են, և դեպքերն ընթացել են հակառակ ուղղությամբ՝ հետևանքից դեպի պատճառը: Ընդհանրապես երազատեսությունը սովորաբար սկսվում է արտաքին գրգռիչների ազդեցությունից, և նույն նշված դեպքի ձևով, երազը կառուցվում է փաստորեն գրգռիչի ստացված ազդանշանի ընդունման պահից, անկախ նրանից՝ մարդն արթնանո՞ւմ է, թե ոչ: Սկսվելով այդ ազդանշանից, երազում դեպքերը ընթանում են այնպես, որ դրանց վերջաբանը հանգեցնում է այդ ազդանշանին՝ այս կամ այն ձևով համապատասխանելով նրան: Այսինքն, կարելի է ենթադրել, որ առհասարակ երազները կառուցվում են հակառակ ուղղությամբ, բայց մարդու հիշողության մեջ տպավորվում են սովորական, նյութական իրականությանը համընկնող հերթականությամբ:

Այդ երևույթը համընկնում է այն իրողության հետ, որ սովորաբար մարդը երազները տեսնում և հիշում է արթնանալու պահին մոտենալիս կամ անհանգիստ քնելու ժամանակ, այսինքն, երբ գի-

ԱՌԱՋԱՎՈՐԱԿԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐՈՆԱԿԱՐԱՎԱՐՈՒԹՅԱՆ

Այնկողմնային, ոչ նյութական ոլորտի մասին դատողություններն առ այսօր համարվում են կրոնների և կրոնափիլիսոփայության մենաշնորհը և գերազանցապես հիմնված են հավատի, սուրբ գրքերի, մարգարեների կամ առաքյալների քարոզների վրա, որոնք իմաստաբանությունների, մարգարենությունների միջոցով փորձում են այդ մասին տալ որոշ նկարագրություններ, պատկերացումներ և այլն: Նման իմաստաբանությունների հիմնական նպատակը սեփական կրոննական ուսմունքի, կրոննական դոգմաների, ինչպես նաև կրոնավորների նկատմամբ հավատ կամ վախ ներշնչելն է, այսինքն ըստ իրենց գաղափարախոսությունների մարդկային ոգու կառավարումը:

Բոլոր կրոններում հիմնական ուշադրությունը դարձվում է մարդու բարոյականության զարգացման վրա՝ ի վճար գիտակցության, այսինքն փորձեր են արվում հավասարակշռություն ստեղծել գիտակցության և բարոյականության ածի արագությունների մեջ՝ գիտակցության ածը սահմանափակելու միջոցով: Դա էլ հանդիսանում է կրոնների Արարչական առաքելությունը: Եվ ինչպես նշվել էր սկզբնական բաժիններում, կրոնների պառակտումները հիմնականում առաջանում էին առանձին ազգերի, ժողովուրդների առանձնահատկություններից, քարոզիչների ինքնությունների, գաղափարախոսությունների տարբերություններից և այլն:

- Շատ կրոններում այս կամ այն ձևափոխություններով այնկողմնային ոլորտը բաժանվում է հիմնականում դրախտ, դժոխք, ինչպես նաև քավարան տիրույթների, որտեղ անցնում են մարդկային հոգիները՝ տեսակավորված ըստ նյութական աշխարհում ապրած կյանքում որդեգրած վարքի ու բարոյականության: Ընդորում, եթե քավարանում դրանք պետք է անցնեին որոշակի փորձաշրջան՝ ինչ-որ կերպ քավելով իրենց կատարած մեղքերը, ապա դրախտում կամ դժոխքում հայտնվելը վերջնական է, և տեղափոխվելու ենթակա չէ (եթե իհարկե ժամանակակից դրախտում մեղք գործելու առիթներ չկան, որոնք կային Ադամի և Եվայի ժամանակաշրջանում: Մյուս կողմից նշենք, որ որոշ հավատալիքներում դա ոչ թե մեղք է այլ

**դրախտային պարզեցություն:**

Ինչպես վերևում նշվեց, մարդը գտնվում է նյութական և ոչ նյութական ոլորտների սահմանային տիրույթում և ոչ նյութական ոլորտից ներթափանցող որոշ երևույթների, ոգիների, ճակատագրի, կանխազգացումների հաճախակի ազդեցության տակ: Առհասարակ կյանքը փաստորեն նյութական և ոչ նյութական ոլորտներից ներթափանցած երևույթների համագործակցության արդյունք է: Հետևաբար, ոչ նյութական ոլորտի մասին որոշ պատկերացումներ կարելի է կազմել դրան բնորոշ երևույթների դիտարկումների միջոցով: Սակայն այդ երևույթների մասին առայժմ եղած նյութերը կրում են սուկ նկարագրական - հայեցողական բնույթ և նրանց ազդեցությունների հետևանքների մասին, թեկուզ ինտուիտիվ, որևէ միարժեք, լուրջ կարծիքներ գոյություն չունեն (բացառությամբ որոշ կրոնական ուսումնասիրությունների և ինչու չեն, նաև ժողովրդական ավանդույթների): Իսկ ինչ վերաբերում է երազներին, հոգեբանները դրանց առաջացումն ու բովանդակությունը կապում են զուտ նյութական ազդեցությունների հետ, խուսափելով որոշ երազների մարգարեական բնույթը քննարկելուց:

- Վերևում նշված վերլուծությունների կապակցությամբ թերևս կարելի է որոշ եզրահանգումներ կատարել՝ չմոռանալով, որ այդ վերլուծությունները ևս հիմնված են ինտուիտիվ ենթադրությունների ու տրամաբանության համադրման փորձի վրա:

Նշվեց, որ ոգին ինքը, լինելով հզոր, զգայուն է ու կառավարելի, և կարելի է համարել էներգիայի ծև: Բայց նյութական աշխարհում ցանկացած էներգիան ծախսելիս պակասում է, իսկ ոգիների դեպքում, ինչպես նկատվել է, ծախսվելիս այդ էներգիան աճում է. ոգին ինչքան շատ է դրսուրվում, այնքան ուժեղանում է, արվեստագետը ինչքան շատ ոգի է ներդնում սեփական ստեղծագործության մեջ, այնքան սեփական ստեղծագործական ոգին ցայտունանում է և այլն: Նման երևույթ կարելի է նկատել նաև «գիտակցություն» երևույթի առնչությամբ: Ինչքան մարդը օգտվում է իր գիտակցությունից, ինչքան շատ է աշխատեցնում իր միտքը, այնքան այն ուժեղանում է: Եվ նույնիսկ ինչքան շատ է հաղորդում իր մտքերը ուրիշներին, ինչքան շատ է սովորեցնում, այնքան ինքը շատ է խորանում (իզուր չեն, որ բոլոր նշանավոր, գիտնականները աշխատում են միաժամանակ զբաղվել դասախոսությամբ, իմաստունները միշտ ձգտում էին ունենալ աշակերտներ, ունկնդիրներ և այլն, ոչ միայն հետևորդներ ունենալու, այլև սեփական դատողությունները հիմնավորելու նպատակով: Հաղորդելիս ձևավորվում և հստակեցվում են նաև սեփական մտքերը, որը հնարավորություն է ընձեռում

դրանց հետագա խորացման համար): Այստեղից կարելի է գալ մի եզրակացության, որ ոչ նյութական աշխարհում, որքան շատ է ծախսվում, այնքան ավելանում է (ծիշտ հայտնի հեքիաթի նման): Դա համապատասխանում է կրոններում լայնորեն ընդունված այն տեսակետին, որ մարդը ինչքան շատ է բարիք գործում, այնքան շատ է ստանում: Սա հանդիսանում է նյութական և ոչ նյութական ոլորտների հիմնական տարբերություններից մեկը: Այստեղ այս եզրակացությունը կարելի է կասկածելի համարել ընդունողի կապակցությամբ: Ստացվում է, որ այն ինչքան շատ ոգի է ստանում, այնքան գումարային ոգին թուլանում է: Բայց իրոք դա այդպես է, որովհետև ցանկացած ստեղծագործություն, որի ստեղծմանը մասնակցել են մի քանի անհատներ, այսինքն տարբեր ոգիներ ունեցողներ, իր նշանակալիությամբ ավելի ցածր է, քան մի անհատի կողմից ստեղծածը: Կամ, առանձին, հավասարապես ուժեղ ոգիներով օժտված անհատներից կազմված խմբի խմբային ոգին ավելի թույլ է, քան համեմատաբար թույլ ոգիներով օժտված և մեկ ուժեղ ոգի ունեցող անհատի կողմից դեկավարվող խմբի խմբային ոգին (կարծես տարբեր ոգիներն իրար խանգարում են: Տվյալ դեպքում խումբը հաջողության կարող է հասնել միայն առանձին անհատների կողմից սեփական ոգիների դրսևորումները գիտակցաբար կասեցնելու, այսինքն ենթարկվելու միջոցով): Իսկ ինչ վերաբերում է խմբական ստեղծագործության դեպքերին, որի մասնակիցները նրա տարբեր մասերը ստեղծագործելիս մեկը մյուսին լրացնում են, այդ դեպքում հանդես է գալիս խմբային ոգին, որը գործում է, ինչպես նշվել է վերևում, որպես մի միասնական ամբողջություն: Գիտակցության պարագայում, քանի որ այն իր կիրառական իմաստով ավելի շատ է կապված նյութականի հետ, այստեղ, ինչպես նյութական երևույթների ժամանակ, տեղի է ունենում ստացողի մոտ գիտակցության կուտակում, որովհետև ստանալը ոգեղեն երևույթ չէ, ոգեղեն երևույթը հաղորդումն է: Վերջինս այդ պահին հնարավորություն է տալիս նաև հաղորդողի գիտակցության ածին: Դրանով կարելի է բացատրել ամբողջ մարդկության գիտակցության համընդհանուր ածը, ինչը չի կարելի ասել ոգեղեն ստեղծագործությունների վերաբերյալ, թեկուզ և այն հիմնավորմամբ, որ ներկա և անտիկ արվեստի արդյունքները համեմատելիս, ոչ ոք չի կարող համարձակվել նախապատվությունը տալ ներկայիս արվեստին, այսինքն պնդել ոգու ածը (նույնը նաև՝ իին ու նոր հերոսների հերոսության աստիճանի մասին): Այսինքն գիտակցության ածը ակնառու է, իսկ ոգու ուժեղացումը՝ խիստ կասկածելի:

Մյուս կողմից, երազները քննարկելու ժամանակ նկատվեց, որ

դրանք կատարվում են հակառակ ուղղությամբ՝ վերջից դեպի սկիզբը, բայց դրանք նյութականանում, այսինքն հիշողության մեջ ամրագրվում են սովորական ձևի՝ սկզբից դեպի վերջը: Այսինքն ոչ նյութական աշխարհում ժամանակն ընթանում է հակառակ ուղղությամբ, խախտվում է երևույթների պատճառահետևանքային կապը. հետևանքը նախորդում է պատճառին: Սրանով կարելի է թերևս բացատրել ոչ նյութական աշխարհից նյութական աշխարհ ներթափանցած երևույթները՝ կանխանգացումների, մարգարեական երազների, ծզգրիտ գուշակությունների մեխանիզմների սկզբունքները: Նույն կերպ էլ կարելի է բացատրել ճակատագրի իրագործման անխուսափելիությունը: Թերևս այս երևույթի արձագանքն է բոլոր կրոններում ընդունված այն դոգման, որ այնկողմնային աշխարհում մարդիկ պետք է պատասխան տան նյութական աշխարհում կատարած գործերի, այսինքն անցյալի համար: Այսինքն, ոչ նյութական ոլորտ տեղափոխվելով, հոգին անցնում է մարդու կատարած գործողությունների այն բոլոր փուլերը, որոնք նա անցել է նյութական աշխարհում, բայց հակառակ հերթականությամբ: Մյուս կողմից, սակայն, նյութական և ոչ նյութական ոլորտներում երևույթների հակառակ ուղղվածության պատճառով, մարդու հոգին ոչ նյութական աշխարհում արժանանում է նույն վերաբերմունքին ուրիշների կողմից, ինչպես մարդն է վերաբերվել նրանց նյութական աշխարհում (դա երևի ամենամեծ պարզևատրումը կլիներ արդարների և ամենամեծ պատիժը անարդարների համար. ավելին, քան դրախտում կամ դժոխքում գտնվելը):


- Քանի որ նյութական և ոչ նյութական երևույթների փոխներթափանցումը տեղի է ունենում սահմանային տիրույթում, ապա բնական է ենթադրել, որ նույն ձևով տեղի է ունենում նաև նյութական երևույթների ներթափանցում ոչ նյութական ոլորտ: Այստեղ, թերևս, նման ներթափանցումը հնարավոր է գիտակցության միջոցով՝ նյութական հասկացությունների, պատկերացումների և այլ միջոցներով ոչ նյութական երևույթները բացատրելու ձևերով: Բայց առավել բնորոշ է նյութական ոլորտի որոշ, անհասկանալի երևույթներ բացատրելի դարձնելու համար ոչ նյութական ոլորտ թափանցելու, նրա սկզբունքներն օգտագործելու փորձերը: Եվ իրոք ֆիզիկայում ընդունված կվարկների տեսության համաձայն մեծ զանգված ունեցող մեկից ավելի կվարկների միանալու միջոցով առաջանում են ավելի փոքր զանգված ունեցող տարրական մասնիկներ: Ընդորում, սահմանված է, որ զանգվածների տարրերությունը վերածվում է էներգիայի: Բայց հենց իր՝ էներգիայի հասկացության բնորոշումը,

ինչպես նաև ֆիզիկական շատ հիմնարար երևույթների բնորոշումը, նյութական ոլորտում առայժմ դեռ չի տրված (թեև օգտագործվում է):

Մյուս կողմից ապացուցված է, որ նյութի շարժման արագությունը, լույսի արագությանը մոտենալիս, ժամանակը դանդաղում է, իսկ նրան հասնելիս ժամանակը կդառնա զրո: Ապացուցված է նաև, որ լույսի արագությունից ավելի մեծ արագության հասնել հնարավոր չէ: Աստղագիտության մեջ ապացուցված է չափազանց խիտ աստղերի՝ «սև անցքերի» գոյությունը, որոնց մոտենալիս ժամանակը դանդաղում է՝ ձգտելով զրոյի: Ասել է, թե նրա մակերևույթի վրա այն պետք է զրո լինի: Այդ դեպքում հարց է առաջանում, թե ինչպիսի՞ն կլինի ժամանակը նրա ներսում, այսինքն, մակերեսից դեպի նրա խորքը շարժվելու ժամանակ: Բնական է, որ եթե մակերեսին ժամանակը զրո է, իսկ լույսի արագությունը հնարավոր չէ գերազանցել, մնում է ենթադրել, որ նրանց ներսում մակերեսից դեպի կենտրոնը շարժվելիս մեր պատկերացումների նկատմամբ ժամանակը պետք է գնա հակառակ ուղղությամբ (իհարկե այստեղ հարգելի ֆիզիկոսները կզարմանան բերված դատողությունների պարզունակության վրա, բայց արդյո՞ք ժամանակակից ֆիզիկայի հիմքը կազմող շատ երևույթների, ասենք ժամանակի, տարածության, եներգիայի և այլնի համոզիչ սահմանումների բացակայությունն առ այսօր, և տալու հնարավորության անհայտությունը ապագայում, չի հուշում առհասարակ ընդունված նյութական պատկերացումներով դրանց բացատրելու անհնարինության մասին): Նույն ենթադրությունը կարելի է կատարել նաև չորրորդ չափման վերաբերյալ, առանց որի հասկացության ժամանակակից ֆիզիկական շատ երևույթներ հնարավոր չեն բացատրել, բայց որը մարդկային ուղեղը ոչ մի կերպ չի կարողանում պատկերացնել:

Փաստորեն, կարծես ժամանակակից գիտության մաթեմատիկայի և ֆիզիկայի բնագավառներում մարդն իր նվաճումներով հասել է ոլորտների սահմանային տիրույթի ոչ նյութական մասերին շփող մարզերին և արդեն ստիպված է օգտագործել հասկացություններ, որոնք մատչելի չեն նրա գգայարաններին, պատկերացումներին (այսինքն՝ նյութական աշխարհին), և փաստորեն առնչվում են ոչ նյութական (անբացատրելի հասկացությունների, ինչպես Արարիչը, ոգին և այլն) աշխարհին: Եվ շատ հավանական է, որ հետագա զարգացման ընթացքում գիտության մյուս ճյուղերում ևս կկատարվի նույն երևույթը:

Թե ինչ կլինի հետագայում, կարելի է անել հետևյալ ենթադրությունը. կամ մարդու բարոյականությունը այնքան կածի, որ կվերա-



# ՄԱՐԴԸ ԵՎ V. ՀԱՆՐՈՒՅԹԸ

Ա.



ՀԱՅՈՎՈՒՄԻՒՅՑԱՅԻՆ ՇԱՀ  
ՔԱՂԱՔԻ ՄՐԱՎԱՆ

Ա.ա.



Հիշողության  
եր-ույթը

Մարդու գիտակցությունը հիմնականում, եթե ոչ ամբողջապես, հիմնված է յուրօրինակ, միայն նրան հատուկ հիշողության վրա:

Հոգեբանության մեջ ընդունված է, որ հիշողությունը հատուկ է մարդուն ու բարձրակարգ արարածներին և բնորոշվում է նրանց՝ որոշակի պայմաններում ճեռք բերած տեղեկատվությունը պահպանելու ու որոշ ժամանակ անց այն վերարտադրելու ընդունակությամբ: Չենթարկվելով այն մանրամասն քննարկելու գայթակղությանը, արժե այդ առթիվ կատարել որոշ խորհրդածություններ:

- Ծննդյան օրվանից բարձրակարգ կենդանու մոտ հիշողության երևույթը արտահայտվում է շրջապատի այս կամ այն երևույթի նկատմամբ, իր կենսագործունեությունն ապահովելու համար համապատասխան վերաբերմունք իրականացնելիս՝ ծնողներից ժառանգաբար (այսինքն՝ գենետիկ հիշողությամբ) ստացած կամ սովորեցրած, կամ նախկինում ճեռք բերած փորձն ու տեղեկատվությունը օգտագործելու միջոցով: Նրա գործելակերպում հիշողությունը մասնակցում է կարիքի դեպքում, այս կամ այն հիմնախնդիրը լուծելիս որևէ առիթ ի հայտ գալուց, նախկին կամ նման պայմանների կրկնվելու, այլ խոսքով՝ անհրաժեշտության պատճառով: Աղվեսը մկան հոտն առնելիս, հիշում է նրա բույնը քանդելու, այլ ոչ թե նապաստակին դարանելու մասին, շունը ոսկոր կրծելիս իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացնում է այդ հածելի զբաղմունքի վրա, այլ ոչ թե հիշում է նախորդ օրվա կերածը: Այդ տեսակետից, փաստորեն, պայմանական, թե անպայման ռեֆլեքսներն ել հիշողության տարբերակներ են:

- Մարդու մոտ, վերացական մտածողության շնորհիվ, հիշողության երևույթը շատ ավելի բարդ է, որի երևան գալու դրդապատճառները դժվարացատրելի են: Բացի բարձրակարգ արարածներին բնորոշ անհրաժեշտությունից, մարդու մոտ հիշողությունը կարող է առաջանալ բոլորովին տարբեր, նույնիսկ վերջնական արդյունքի հետ չկապված դեպքերի շնորհիվ: Օրինակ, պատահականորեն լսած «ծով» բառը նրան հիշեցնում է իր ծովային ծանապարհորդությունը, նավի վրա, դիցուք, չուկչայի հետ ծանոթանալը, նրա պատմածը գայլերի ոհմակների մասին: Գայլերի մասին հիշողությունը, նրան դրդում է վերիիշել իր որսորդ ընկերոջը, որ պառկած է հիվանդանոցում և այլն, և այլն:

Ասել է թե՝ հիշողությունը բարձրակարգ կենդանիների մոտ առաջանում է կոնկրետ առիթներով, իսկ մարդու մոտ, տպավորված լինելով ուղեղի ծալքերում, ի հայտ է գալիս որևէ՝ տվյալ (վերջնական արդյունքին) չառնչվող պատճառով: Եթե առհասարակ, ի հայտ գալու որևէ պատճառ կամ առիթ չկա, կախված անհատից, այն կարող է երկար կամ կարծ ժամանակով մնալ կամ անհետանալ:

- Ընդհանրապես, հիշողություն հասկացությունն ավելի համապարփակ և ընդգրկուն իմաստ ունի: Օրինակ, հիշողության մի տարատեսակ է, երբ որևէ գոյածն, որը որևէ պայմանի մշտական ազդեցության տակ փոխում է իր վիճակը, բայց այդ պայմանը վերանալիս վերականգնում է իր նախկին վիճակը, կամ նրանում առաջանում են ուժեր, որոնք դիմադրում են այդ պայմանին և ձգտում են վերացնել այն: Ասենք առաձգականության երևույթը, երբ ձողը ուժի ազդեցության տակ ծկվում է, նրանում առաջանում են լարումներ, որոնք հավասարակշռում են այդ ուժին և ուժը հեռացնելիս վերականգնում են նրա նախկին վիճակը, կամ ծոճանակի տատանումը՝ ձգողության ուժի և նրա շարժման իներցիայի պատճառով և առհսարակ, բոլոր տեսակի տատանումները: Իսկ երբ ծյուղը ծկելիս կոտրվում է կամ նախկին վիճակը չի վերականգնում, դա փաստորեն հիշողության կորուստ է: Թերևս այս երևույթով կարելի է բացատրել նույնիսկ հիշողության բուն մեխանիզմի աշխատանքը մարդկային ուղեղում՝ նեյրոնների մակարդակով:

Մի խոսքով, հիշողությունը, որպես երևույթ, համապարփակ է, բնորոշ է բնական բոլոր գոյածների համար, ունի տիեզերական բովանդակություն և պարտադիր չէ, որ կապված լինի կյանքի կամ գիտակցության հետ:

- Յիշողությունը մարդկային մտածելակերպի ամենակարևոր բաղադրիչն է, նրա ինքնության, գործելակերպի և առհասարակ, էության հիմնական հատկանիշը: Մարդու դաստիարակության ու զարգացման

ամբողջ գործընթացը հիմնված է հիշողության վրա: Կարելի է ընդունել, որ ոչ միայն մարդու գիտակցությունը, այլև ամբողջ բնությունը, կենդանական ու բուսական աշխարհը, ամբողջ կյանքը, զարգացումը՝ հիշողության արգասիք են: Յուրաքանչյուր օրգանական գոյածնի սկզբնավորման ու կազմավորման, գոյատևման ու սերնդատվության հիմքը գենետիկական հիշողությունն է, որը ծրագրավորված լինելով առանձին գեների, քրոմոսոմների մեջ ապահովում է տվյալ անհատի, տեսակի գոյության ու զարգացման առանձնահատկությունները: Երբ միաբանությունը կենդանին կիսվելով դառնում է երկուս, ապա այդ մեկի մեջ եղած զարգացման և բազմացման գենետիկական հիշողության կողը ևս կիսվում է, և յուրաքանչյուրի զարգացման փուլի ընթացքում այն նույնպես զարգանում է, ուժեղանում և դառնում է ենթակա՝ նոր բջիջի հետ միասին ինքը ևս կիսվելու: Իսկ թե ինչպես է մտել նախակզբնական բջիջի մեջ նախասկզբնական հիշողության գենետիկական կողը, որն ընդունակ է իր մեջ կրել միայն տվյալ բջիջին հատուկ տեղեկատվությունը, դա արդեն առնչվում է ծագումնաբանության անբացատրելի երևույթներին: Համենայն դեպս, ինչպես նշվեց վերևում, կյանքի ստեղծման համար անհավանական է, թեկուզ միլիարդավոր տարբերակներով, նյութերի հանդիպումն ու կյանքով օժտված օրգանական գոյածնի առաջացումը, առավել ևս անհավանական է այդ գոյածնի օժտումը գենետիկական, այսինքն՝ անվերջ բազմանալու գործընթացն ապահովող հիշողությամբ:

- Յուրաքանչյուր կենդանի օրգանիզմ բաղկացած է իրարից տարբերվող բջիջներից, որոնց բազմացումն ու բայթայումը ապահովում է տվյալ օրգանիզմի կյանքն ու զարգացումը: Այսինքն՝ յուրաքանչյուր կենդանի օրգանիզմի բազմամիլիոն տարբեր բջիջներում կողդավորված են բազմացման բազմամիլիոն հիշողության կողեր: Սերնդատվության ընթացքում, որը հիմնականում կատարվում է սերմերի միջոցով, այդ բազմամիլիոն կողերը փաստորեն սկիզբ են առնում սերմի մեջ եղած կողերից, և դժվար է ենթադրել ամբողջ օրգանիզմի բոլոր բջիջների զարգացման կողերի համակարգված տեղավորումը մի սերմի մեջ: Նետևաբար սերմի մեջ տեղավորված է նման կողերի ստեղծման կողերը: Այլ կերպ ասած՝ սերմի մեջ տեղավորված անհատի առանձին բջիջների կյանքի ծրագրերի ծրագրերը: Իհարկե, նման հիշողությունը գործում է անհատից անկախ: Անհատը, ասենք մարդը, կարող է զանազան ֆիզիկական կամ այլ միջոցներով բնականից ավելի ուժեղ զարգացնել իր այս կամ այն օրգանը՝ ձեռքը, ոտքը, ուղեղը, բայց ընդհանուր տեսքը այն փոխել առայժմ ի գորու չէ (չի կարող թիվ փոխարեն կնծիթ աճեցնել):

Բայց այդ գենետիկ հիշողությունը, որ կարելի է պայմանականորեն

անվանել առաջին կարգի հիշողություն, ևս անփոփոխ չէ: Այն ևս զարգանում է հետագայում և իր զարգացումով պայմանավորում է տվյալ տեսակի զարգացումը: Դա հիմնականում կատարվում է անհատից դուրս գտնվող գործոնների՝ կյանքի պայմանների, միջավայրի փոփոխության և այլ պատճառներով: Բջիջների մեջ կողավորված հիշողության փոփոխումը հանգեցրել է նրան, որ (ինչպես անդում են հնագետները) ձկան լողաթաղաց վերածվել է կենդանու ոտքի կամ թռչնի թևի: Բայց այդ կատարվել է հարյուր հազարավոր, միլիոնավոր տարիների ընթացքում: Այստեղ ևս դժվար է միանշանակորեն անդել՝ այդ փոփոխությունը տեղի է ունեցել աստիճանաբար, նպատակաուղղված, թե՞ թռիչքներով, առանձին անհատների հիշողության գեների հանկարծակի փոփոխությունների ձևերով (մուտացիաներով):

- Երկրորդ կարգի հիշողությունը կապված է կենդանական աշխարհի կենսագործունեության հետ: Դժվար է ենթադրել՝ բուսական աշխարհում կենսագործունեության համար հիշողություն գոյություն ունի՞, թե՞ ոչ, համենայն դեպս, հիշողության այս ձևը, հավանական է, կապված է ակտիվ կյանք վարելու, այս պարագայում՝ մի տեղից մյուսը տեղափոխվելու կարողության հետ: Յուրաքանչյուր բարձրակարգ արարած, որի սովորությունները ծեռքբերովի են, (մինչև հասունանալը գտնվում է ծնողների պաշտպանության տակ), դաստիարակվում է հիշողության միջոցով: Կենսագործունեության ընթացքում էլ կենդանին հիշում է, ասենք, իր որսի, արոտատեղի սահմանների մասին: Այդ հիշողությունը կապված է ուղեղի գործունեության հետ, որը դեկավարում է կենդանու ամբողջ վարքը:

Սակայն, ինչպես նշվել է Վերևում, բնական արարածը և հետևաբար նախնադարյան մարդը, ինքն իր մասին, իր վիճակի մասին առհասարակ չի մտածում, նա մտածում է (եթե նրա նպատակաուղղված գործողությունները դիտենք որպես մտքի արդյունք) տվյալ պահին իր եսին առնչվող երևույթի, դեպքի, գոյաձևի հետ իր հարաբերվելու մասին, և նրա վարմունքը պայմանավորված է իր

**Ա.Ռ.**



**Բնագործության  
նախարարություն**

Այստեղ թերևս հետաքրքիր է մակերեսորեն քննարկել բնագործությունը: Մատերիալիստական տեսակետից՝ նույն դեպքը կամ երևույթը և դրա նկատմամբ համապատասխան վերաբերմունքը, անընդհատ, բազմահազար սերունդների մոտ կրկնվելիս, հիշողության փոփոխությունը հանգեցրել է այս պահին առնչվող երևույթի, դեպքի, գոյաձևի հետ իր հարաբերվելու մասին, և նրա վարմունքը պայմանավորված է իր

թյան մեջ ամրապնդվելով, կայունանում է և ‘անցնում գենետիկ հիշողության ոլորտը՝ բնագդի ձևով։ Սակայն ցանկացած ընտանի կենդանու նույն բազմահազար սերունդները ապրել են մարդու մոտ, բայց նման ապրելածնի պայմաններից, գենետիկ հիշողություն ձեռք չեն բերել։ Այլ բան է, որ ընտանի կենդանու ֆիզիկական կամ այլ հատկանիշները մարդու կողմից փոխվել են, բայց եթե որևէ ընտանի կենդանու ձագը թողնվի ազատ, բնության մեջ ինքնուրույն ապրելու, նա չի հիշի մարդու կողմից իր նախնիներին սովորեցրածը (շատ դժվար է առաջին անգամ ձիուն սանձելը)։

Ֆիզիկական հատկանիշները փոխելուց բացի, մարդը նրանց մեջ թուլացնում կամ ոչնչացնում է նաև բնագդային հիշողությունը։ Ցանկացած հասուն ընտանի կենդանի կամ թռչուն, ազատ թողնվելիս, վաղ թե ուշ կոչնչանա սովից, ցրտից, կամ կդառնա գիշատիչներին կեր. որովհետև նրա բնագդից ջնջվել են գոյության պայքարում դիմանալու համար անհրաժեշտ սովորույթները։ Այսպիսով, մարդը, վերացնելով բնության կողմից տրված բնագդը, նրանց մոտ իր ցանկացածին համապատասխան, գենետիկ հիշողություն կամ բնագդ չի կարողացել ձևավորել։ Նույն ձևի մարդկային հարաբերությունները, սովորույթները, թեկուզ հազարավոր տարիներ կրկնվելով, բնագդ չեն դարձել։ Երեխան, որը ապրել է գայլերի միջավայրում (նման դեպքեր պատահել են Հնդկաստանում), մեծացել է գայլային սովորույթներով (բայց ոչ բնագդով), կորցրել է մարդկային հատկանիշները, այսինքն՝ նրա մոտ մարդուն հատուկ մարդկային սովորույթները բնագդի չեն վերածվել։

Նախնադարյան մարդն ապրում էր քարանձավներում կամ որջ էր փորում՝ ոչ թե գիտակցելով, այլ բնագդով՝ մյուս արարածների նման։



## Մարդկային հիշողությունը

Մարդու հիշողությունը դասվում է հիշողության երրորդ՝ բարձրագույն կարգին։ Մարդը կարող է իր հետագա գործողությունները ծրագրավորել հիշողության մեջ եղած տվյալներն օգտագործելու միջոցով, այսինքն՝ մտավոր կապ հաստատել անցյալի, ներկայի և ապագայի միջև։ Կենդանին նման հատկություն չունի, նա իր հիշողությունն օգտագործում է տվյալ պահի թելադրանքով։ Մարդու ինքնու-

թյունը, մտածելակերպը, ամբողջովին հիմնված են հիշողության վրա: Որոշ հիվանդությունների կամ ֆիզիկական ու հոգեկան ցնցումների ժամանակ, երբ մարդը կորցնում է հիշողությունը, կարծես դառնում է ուրիշ մարդ: Ընդ որում, նման կորստի դեպքում, մարդը իր մարդկային կերպարը, ասենք մարդկային վարքը, ուրիշ անձաց հետ հարաբերությունների չափանիշները հիմնականում չի կորցնում: Այսինքն, նման հիվանդություններն ազդում են մարդու երրորդ աստիճանի հիշողության վրա (թերևս նման հիվանդություններից պետք է համարել նաև այն, որ որոշ մարդիկ հարստանալիս կամ պաշտոն ստանալիս մոռանում են կամ փորձում են մոռանալ անցյալը: Նման հիվանդությունից բուժելը հեշտ է. պարզապես պետք է վերացնել հարուցիչը):

Երրորդ կարգի հիշողությունը մարդկության լավ զարգացած ուղեղի արգասիքն է, որը ուսումնասիրվում է հոգեբանների, ֆիզիոլոգների և այլոց կողմից: Ընդհանրապես, տարբերակվում են մարդկային հիշողության մի քանի որակներ՝ խոսքային-տրամաբանական, հուզական, տեսողական, լսողական, շարժողական, հոտառական և այլն: Գոյություն ունեն նաև ժառանգական, կարծատև և մշտական հիշողության երևույթներ: Այս որակներից մարդու համար հիմնական բնորոշիչը խոսքային-տրամաբանականն է: Մյուս որակները գոյություն ունեն նաև կենդանական աշխարհում, նույնիսկ միջատների մոտ, և այդ տեսակետից դրանք երկրորդ կարգի



## Հասարակական հիշողությունը

Որպես չորրորդ կարգի հիշողություն կարելի է համարել հասարակական հիշողությունը, որը տվյալ ժողովրդի, տվյալ ազգի, մարդկային խմբի հավաքական հիշողությունն է: Այն իր բնույթով կարող է լինել խոսքային-տրամաբանական՝ պատումների, հեքիաթների, էպոսների ձևերով, լսողական՝ երգերի, երաժշտության ձևերով, տեսողական՝ պատմական հուշարձանների, գեղարվեստական ու ճարտարապետական ստեղծագործությունների ձևերով, բարոյա-հոգեբանական՝ սովորույթների, նիստուկացի, կրոնական պատկերացումների ձևերով և այլն: Ազգային հիշողության շնորհիվ դարերով սերնդից-սերունդ են փոխանցվում ավանդույթները, սովորույթները, ժողովրդական բանահյուսությունը, ազգային այլևայլ արժեքները: Միաժամանակ փոխանցվում են նաև տվյալ


ազգի պատմության ընթացքում տեղի ունեցած, նրա ճակատագրի վրա ազդեցություն թողած դեպքերը, բնական ու հասարակական երևույթները: Երբեմն որևէ ազգի հեքիաթի, ավանդույթի վերլուծության միջոցով հնարավոր է լինում բացահայտել, ծշօրտել պատմական իրողությունները, դեպքերը: Այդ բոլորը միասին պատկերացում են տալիս տվյալ ազգի ազգային բնավորության, մենտալիտետի, լավի ու վատի, բարու ու չարի, Արարչի նկատմանք ունեցած վերաբերմունքի մասին և փաստորեն հանդիսանում են նրա ազգային գաղափարախոսության, բնավորության հենքը: Վերջինս փոխանցման ընթացքում անընդհատ լրացվում է, հղկվում, ներառում տվյալ ազգի գաղափարական, գեղարվեստական, բարոյա-հոգեբանական նվաճումները, արժեքները, մարդկության առաջադիմության գործում կատարած ներդրումները:

Ազգային մտածողության և ոգու ձևավորման գործում կարևոր դեր է կատարում հատկապես պատմական անցուղարձերի մասին հիշողությունը՝ պատմական հիշողությունը: Անցյալում ձեռք բերած հաջողությունների, նվաճումների մասին հիշողությունը ոգեղեն լիցք է հաղորդում ազգի հետագա արարման, զարգացման համար:

Սակայն վտանգավոր է պատմական նվաճումների բացարձականացումն ու ծայրահեղացումը: Նախ ոչ մի ազգին, ինչքան էլ բարձր ազգային արժեքներ ունենա և մեծ ավանդներ ներդրած լինի մարդկային քաղաքակրթության զարգացման գործում, քաղաքականության մեջ առանձնաշնորհություն չի տրվում: Յույները մեծ ավանդներ են ներդրել մարդկության զարգացման գործում, իսկ թուրքերը ոչ միայն չեն ներդրել, այլև մեծ չափով վնասել են: Յիշենք թեկուզ հունական հիասքանչ մարմարյա արձանների ոչնչացումը՝ դրանցից թուրքական շինությունների համար շինանյութ ստանալու պատրվակով: Սակայն ներկայիս քաղաքականության մեջ շատ ավելի մեծ դեր է կատարում թուրքերի ռազմական ուժը, քան հույների անցյալի ու ներկայիս բարձր քաղաքակրթությունը, անցյալում ներդրած արժեքները (թեկուզ Կիպրոսի օրինակով): Մյուս կողմից, անցյալի դափնիների վրա ննջելն ազգին ոչ մի օգուտ չի կարող տալ: Յուրաքանչյուր ժողովուրդ, յուրաքանչյուր ազգ գնահատվում է պատմական տվյալ պահին իր ունեցած վիճակով, իր ուժով և վարած քաղաքականությամբ: Ուժեղները միշտ դժգոհում են պատմական հիշողության հիշատակումից, անցածի գործելակերպի արդարացիության գնահատումից՝ դրանք համարելով ոտնձգություն իրենց ուժեղության օրինականության հիմքերի հանդեպ, քանզի միշտ չէ, որ նրանց հզորությունը հիմնված է մարդկային բարոյականության և օրինականության վրա, և միշտ չէ, որ նրանց պատմական խիզը մաքուր է: Անցյալի կա-

տարած անօրինականությունների մասին ոչ ոք չի սիրում հիշել անձամբ կամ չի ուզում թույլ տալ հիշելու ուրիշներին (Մորգանների նախապապը եղել է ծովահեն):

Այլ խոսքով, պատմական հիշողությունն անհրաժեշտ է տվյալ ազգի համար իր հնարավորությունները, ներուժը, ունակությունները գիտակցելու, նրան ինքնավստահություն հաղորդելու և հետագա որոշումները ծիշտ ձևով իրականացնելու համար: Ցանկացած ազգային դրական հերոս տվյալ ազգության ներկայացուցչին հպարտություն է ներշնչում, արթնացնում է նրան նմանվելու ցանկություն, նրա հերոսության մի մասնիկն իր ոգու մեջ ունենալու



## Հիշողության զարգացումը

Ներկայումս մարդկային հիշողությունը զարգացնելու և հզորացնելու համար բազմաթիվ մեթոդներ են մշակված և կիրառվում: Ամենահինը երևի կրկնությունն է, որ կիրառվում է կրթության ոլորտում: Կան նաև այլ տեխնիկական կամ հոգեբանական մեթոդներ: Մշակվում են խորհուրդներ, հանձնարարականներ: Հիշողության դերի, կիրառման մասին կատարվում են բազմատեսակ ուսումնասիրություններ:

Բնականաբար, ազգային ավանդույթները, բանահյուսությունը, հարյուրավոր, հազարավոր տարիներով ազգային հիշողության մեջ են մնացել, անընդհատ պատմվելով ու վերապատմվելով, կրկնվելով, մի սերնդից մյուսին փոխանցվելով, և յուրաքանչյուր սերունդ դրանք հարմարեցրել է իր ժամանակաշրջանի պատկերացումներին, լրացրել նոր դրվագներով (օրինակ՝ «Սասունցի Դավիթ» էպոսը): Բայց ուշադիր քննարկելիս դժվար չէ նկատել, որ հիմնական առանցքը, հիմքը մնում է, չնայած պաճուճանքներին: Իհարկե, այստեղ ամենակարևոր ազգային պատմիչների անգնահատելի դերն է, պատմագրությունը, որոնց գործերում այդ բոլորը համեմատարար անխաթար են մնացել: Յամեմատարար, որովհետև իրենք էլ երբեմն իրենց անձնական, անհատական մոտեցումներն են միահյուսել իրենց գործերին, փորձելով նույնիսկ փաստերը համապատասխանեցնել իրենց մտածելակերպին: Այս իրողությունը նկատելի է բոլոր պատմագիրների մոտ, սկսած Յերոդոտից, նույն թվում նաև հայ պատմիչների աշխատություններում, որոնք լինելով քրիստոնեու-

թյան մոլեռանդ ջատագովներ, փորձել են հայկական ազգային այս կամ այն երևույթը կապել քրիստոնեական ավանդույթների հետ և ակամայից վնասելով արիական նախնիների մասին հիշողությունը։ Արիական շատ ավանդույթներ նրանց կողմից չեն գրանցվել այլևայլ պատճառներով (թեկուզ կրոնական կամ քաղաքական նկատառումներով), կամ գրանցվածները կորել են ու ոչնչացվել դարերի ընթացքում։ Բայց այն քիչը, որ համարձակվել են գրի առնել (հատկապես Մովսես Խորենացու թողած ժառանգությունում), շատ կարևոր եղրահանգումների տեղիք են տալիս։

Բայց, նախքան պատմիչների կողմից գրի առնվելը, կամ նրանց կողմից գրի չառնված շատ ավանդույթներ հազարավոր տարիների ընթացքում մնացել են ժողովրդի հիշողության մեջ։ Այստեղ ժողովուրդը հնարել է հիշողության պահեստարանի պահպանման մի շատ պարզ ու հանձարեղ մեթոդ։ Այն է. Երբ որևէ ավանդույթ, դեպք, պատմական երևույթ կապել է բնության մնայուն գոյաձևների հետ, ասենք լեռան, գետի, լճի, բնական այս կամ այն հուշարձանի։

Հայկական բարձրավանդակը հարուստ է գետերով, բնական հուշարձաններով և առավել ևս այնպիսի լեռներով, որոնց, իրենց տեսքի շնորհիվ, մի փոքր երևակայության առկայության դեպքում, հեշտ է կապել այս կամ այն ավանդույթի հետ։ Արա Գեղեցիկի մասին ավանդույթը կապվել է Արայի լեռան հետ, որն հիշեցնում է մեջքի վրա պառկած մեռած մարդու, Հայկի մասին առասպելի տարբեր դրվագները այս կամ այն տարածքի, լեռան հետ։ Նման դեպքերը շատ-շատ են։ Այստեղ հետաքրքիր մտորումների տեղիք է տալիս մի զուգադիպություն։ Արարատից արևմուտք կա մի լեռ, որի վերևու մասը վաղ առավոտյան կամ երեկոյան, երբ ստորոտը ծածկված է լինում շարժվող մշուշով, հիշեցնում է ծովի ալիքների վրա շարժվող նավ։ Ինչպես սկզբում նշվել է, Նոյի տապանի պատմության նախատիպը եղել է շումերական Զիասուրայի առասպելը։ Կարելի է ենթադրել, որ այդ լեռան տեսքը ու նրա հարևանությամբ Արարատի գոյությունը, արիներին դրդել են ջրհեղեղի պատմությունը կապել այդ տեսարանի հետ և այդ ձևով հազարավոր տարիներ պահել իրենց սերունդների հիշողության մեջ։ Բնական է, նրանց արշավանքները սկզբում եղել են դեպի հարավի՝ տաք ու բարեբեր տարածքները, որով հիմք են դրել աշխարհի առաջին՝ շումերական քաղաքակրթությանը։


Հիշողությունը մեծ չափով ուժեղացնելու այդ մեթոդը հավանական է գերազանց արդյունքներ է տալիս հատկապես այն պատճռով, որ խոսքային հիշողությունը զուգորդվում է տեսողական հիշողության հետ, և վերացականը դառնում է պատկերավոր ու շոշափե-

լի:

Նշենք, որ նման մեթոդը կիրառում է նաև ժամանակակից մարդը՝ լեզուներ սովորելու կամ նույնիսկ այնպիսի պարզունակ և թվում է զվարճալի տեսքով, երբ ինչ-որ բան իիշելու համար որևէ տեսանելի պայմանական նշան է արվում, ասենք մատների, այս կամ այն առարկայի վրա:

Ներկայումս արևմտյան որոշ հոգեբաններ մարդկային հոգեբանության կատարելագործման և դրա միջոցով հաջողության հասնելու համար խորհուրդ են տալիս մարդկանց ձեռք բերել հոգեկան հավասարակշռություն և հանգստություն՝ անցյալը մոռանալու և ապագայի մասին չափանիքությունը միջոցով։ Նրանց առաջարկը՝ կենտրոնացնել ամբողջ ուշադրությունը ներկայի վրա և գործել պահի թելադրանքով, անհրաժեշտությունից ելնելով, փաստորեն նշանակում է նահանջ մարդու էությունից՝ հիշողության դերի սահմանափակման և միակողմանի մտածելակերպի արմատավորման միջոցով։

Սակայն, չնայած նման խորհուրդներին, Արևմուտքում գործում են բազմաթիվ վերլուծական և հետազոտական կենտրոններ, որ-



- Յուրաքանչյուր մարդ իր մտածելակերպում, վարվելակերպում, գործելակերպում ղեկավարվում է այլոց հետ ունեցած հարաբերություններում իր որդեգրած դերից, իր շահերից ու ցանկություններից բխող սկզբունքներից, ինքնությունից ու անհատականությունից, մոտեցումներից և այլ չափանիշներից ելնելով։ Այլ խոսքով, յուրաքանչյուր մարդու վարքը հասարակության մեջ պայմանավորվում է իր սեփական գաղափարախոսությամբ։ Այն մեծ չափով կախված է ինչպես բնավորության, հոգեբանության՝ ժառանգականությամբ ստացած

գենետիկական առանձնահատկություններից, այնպես էլ ազգային բնավորությունից, շրջապատից, ընտանեկան ու հասարակական միջավայրից, ընդհանուր դաստիարակությունից: Իր նախնիներից ժառանգած և դաստիարակությամբ ձևավորված կյանքի տվյալ ժամանակի ու հասարակության պահանջներին հարմարեցված գաղափարախոսությունը փաստորեն կազմում է մարդու գործելակերպի հիմքը և ձևավորում է նրա վերաբերմունքն ու պատկերացումները այն ամենի նկատմամբ, ինչը գտնվում է իրենից դուրս և ազդում իր եսի շահի կամ ինքնադրսակորման վրա: Ինչքան էլ մարդը խուսափի կամ չհամաձայնվի այդ մտքին, անձնական գաղափարախոսությունը ամրագրված է նրա գիտակցության և ենթագիտակցության մեջ, իրենով բնորոշելով նրա անհատականությունը, ինքնությունը (գաղափարախոսության մերժումը ևս գաղափարախոսություն է): Երբ մարդու գաղափարախոսությունը թելադրում է հանձին ուրիշի տեսնելու իր նմանին և նրա նկատմամբ վերաբերվել այնպես, «ինչպես նա կցանկանար, որ վերաբերվեին իր նկատմամբ», ընդունի որպես իր տեսակին պատկանող, իր նման ու հավասար մի անհատականության, որի վրա, ինչպես իր վրա, դրված է մարդկային տեսակի պահպանություն և զարգացման Արարչական նպատակը, նա մարդուն կողիտի որպես գործընկերոջ այդ գործում, որի հետ պետք է համագործակցել, կիսել դժվարություններն ու հաջողությունները՝ իր շահի ապահովումը տեսնելով մյուսների շահերի ապահովման հետ միաժամանակ: Իսկ եթե նրա գաղափարախոսությունը ձևավորված է ամեն ինչին իր եսի շահերից մոտենալու, ամեն ինչից անձնական օգուտ պոկելու, այլ կերպ՝ իր եսը գերադասելու բոլոր այլ եսերից, ինչպես նաև այլ՝ նախամարդկային չափանիշներով, նա յուրաքանչյուր մարդու մեջ կտեսնի թաքնված հակառակորդի: Նման անձը գաղտնի, զգաստ, միշտ պատրաստ պահելով անհրաժեշտ գենքերը, կասկածելով բոլորին և յուրաքանչյուրին՝ իր եսի դեմ ուղղված մտադրությունների մեջ, մյուս կողմից առիթը բաց չի թողնի այլոց եսերի շահերի հաշվին բավարարելու իր եսի շահերը, առանց մտածելու, թե ինչպիսի՞ն կլիներ ամբողջ մարդկության, հասարակության և նույն իր եսի վիճակը, եթե բոլոր մարդիկ լինեին իր նման եսակենտրոն նախամարդ:

- Յուրաքանչյուր հանրույթում, յուրաքանչյուր համայնքում, ի վերջո առանձին անհատների միության մեջ գերակայող գաղափարախոսությունը առանձին անհատների գաղափարախոսությունների համաձուլվածքն է: Դանրույթի, համայնքի գաղափարախոսությունը նույնքանով է իրական ու համախմբող, և այդ տեսակետից այն այնքանով է միասնական ու կայուն, որքանով ընդգրկում է այդ անհատների գաղափարախոսությունների ընդհանուր տարրերը, այ-

սինքն, որքանով շատ են այդ գաղափարախոսությունների շփման եզրերը: Այն անհատը, որի գաղափարախոսությունը առավել ընդհանուր տարրեր ունի այդ հավաքական գաղափարախոսության հետ, նա ավելի շատ է կապված ու նվիրված հանրույթին կամ համայնքին և ավելի շատ է աշխատում մասնակցել համայնքի կամ հանրույթի զարգացմանն ու առաջադիմությանը՝ դրանում տեսնելով նաև իր եսի շահի ապահովման կայուն երաշխիքը: Եվ ընդհակառակը, ինչքան քիչ ընդհանուր տարրեր ունի համայնքի գաղափարախոսության հետ, այնքան նա քիչ է կապված համայնքի ընդհանուր շահերի հետ: Նրա շահը խորթ լինելով ընդհանուրի շահերին, ինքն էլ իր էությամբ օտար է համայնքին փոխադարձաբար և իր եսի շահերի ապահովումը ձգտում է իրականացնել հանրույթի շահերի հաշվին՝ առանց մտածելու, որ թույլ հանրույթը իր եսի շահերի ապահովման երաշխիք լինել չի կարող:

- Նախամարդկային եսերի գաղափարախոսություններից կազմված հանրույթի գաղափարախոսությունը նախամարդկային է այլ հանրույթների կամ համայնքների նկատմամբ: Այստեղ պետք է ընդունել, որ հանրույթի գաղափարախոսության վրա էական ազդեցություն է գործում լիդերների (առաջնորդների), ղեկավարների գաղափարախոսությունը: Բայց բոլոր դեպքերում նրանք այդ դիրքին են հասնում այն դեպքերում, երբ նրանց գաղափարախոսությունը տվյալ պահին համահունչ է հանրույթի գաղափարախոսության հիմնական դրույթներին կամ կարողանում է համոզել հանրույթի մեծամասնությանն ու նույնիսկ ապացուցել, որ ինքը հանրույթի շահերը գերադասում է իր շահերից: Ավագակախմբի ղեկավարը միշտ էլ ավագակ է ոչ միայն այլոց, այլև իր ենթակաների նկատմամբ (երբ գրականության մեջ կատաղի ավագակախմբի առաջնորդը ներկայացվում է որպես վեհանձն ու բարեկիրթ անձնավորություն, դա հիմնականում հեղինակի երևակայության արդյունքն է կամ նրա գաղափարախոսության արգասիքը: Մյուս կողմից ընթերցողները շատ են սիրում, երբ ուժեղը բարի է, և ստեղծագործությունն էլ վերջանում է բարու հաղթանակով): Իսկ ազգերի, պետությունների մասշտարով, անառարկելի է՝ «ամեն մի ժողովուրդ արժանի է իր կառավարությանը» արտահայտությունը:

- Բնական արարածների մոտ այսպես ասած «գաղափարախոսությունը», այսինքն՝ նրանց ամբողջ վարքի ղեկավարման սկզբունքները համընկնում են նրանց անհատականության կամ տեսակի անհատականության հետ: Բայց սովորաբար յուրաքանչյուր տեսակի անհատների համար կյանքի պայմանները հիմնականում լինելով միատեսակ և գոյության կրիվը բոլորի համար ընթանալով

միևնույն կերպ, նրանց անհատականություններն էլ իրարից շատ քիչ են տարբերվում: Մարդկային անհատների գաղափարախոսությունների տարբերությունները պայմանավորված են նրանց յուրաքանչյուրի գիտակցության, ամբիցիաների, լավի ու վատի, բարու ու չարի և այլ պատկերացումների տարբերությամբ (այսինքն՝ ինքնությունների տարբերությամբ):

- Գաղափարներն իրենց ոգեղեն բնույթով առավել ընդգրկուն են, վարակիչ և ընդունակ ազդելու, փոփոխելու ինչպես յուրաքանչյուր անհատի, այնպես էլ ամբողջ հանրույթների գաղափարախոսությունները: Փոխելով հասարակարգերը, գաղափարները փոխում են նաև մարդկային պատկերացումները («գաղափարներն են կերտում պատմությունը»): Այն, ինչն ընդունելի է մի հասարակարգում կամ ժամանակաշրջանում, կարող է հանցագործություն համարվել այլ հասարակարգում կամ ժամանակաշրջանում. ընդ որում, իենց նույն ազգության կամ ժողովրդի մոտ: Եթե որոշ ազգերի մոտ նախկինում անուսնու մահվան դեպքում զոհաբերում էին կնոջը, դա համարվում էր բնական սովորույթ, իսկ ներկայումս նույն ժողովրդի համար դա համարվում է մարդասպանություն: Նույն ազգի մոտ համայնավարության տիրապետության դեպքում անձնական հարստացման ձգտումը համարվում է հանցանք, հասարակարգը շուկայական-ազատականի վերափոխվելիս այն համարվում է բիզնեսի ձև:

- Գաղափարները հայտնվում են ժամանակի, պատմական պահի թելադրանքից, անհրաժեշտությունից ելնելով, միաժամանակ ազդելով պատմության ընթացքի վրա: Սակայն ոչ մի գաղափար, որպես կանոն, նորություն չէ և նրա հայտնվելը տվյալ պահին բոլորովին էլ նոր ծնվել չի նշանակում՝ «ամեն մի նոր՝ դա լավ մոռացված իինն է»: Ցանկացած գաղափար, ցանկացած փիլիսոփայական աշխարհայացք կամ սկզբունք իր արմատներն ունի հազարամյակների խորքերում, և եթե նրանցից որևէ մեկի մասին հայտնի է դառնում որևէ սեպագիր մագաղաթյա արձանագրությունից, դա դեռ չի նշանակում, որ այն ծնվել է գրանցվելու պահին և սերնդից սերունդ՝ բանավոր, պատումների կամ առասպելների ձևով չի փոխանցվել՝ մինչև գրի առնվելը: Գրի առնելը միայն հնարավորություն է տվել դրանք փրկելու մոռացումից: Դա վերաբերում է և նոյան տապանի կամ Զիուսուդրայի պատմությանը, և մյուս բազմաթիվ տարբեր այլ առասպելներին: Առհասարակ, գաղափարի ծշմարտացիությունն ապացուցվում է հետագայում՝ դրա կիրառման հետևանքներով, հարատևությամբ: Գաղափարը, մյուս կողմից, պարտադիր չէ, որ լինի փիլիսոփայորեն, տրամաբանորեն հիմնավորված և ապացուցված: Այն իր արտացոլումը կարող է գտնել

որևէ գեղարվեստական երկում, էպոսում, հեքիաթում: Այդ իմաստով հաճախ, համամարդկային նշանակություն ունեցող շատ գաղափարներ, ծնվելով տարբեր ժամանակներում տարբեր ժողովրդների մոտ, բայց բովանդակությամբ լինելով մարդկային, բոլորն էլ Արարչական են: Տարբեր ժողովրդներին տալով այս կամ այն գաղափարը տարբեր կերպարանքներով, բայց ըստ էության նույն բարոյական ուղղվածությամբ, կարծես Արարիչն ուղղություն է տալիս և համակարգում ամբողջ մարդկության զարգացումը և առաջընթացը: Այլ խոսքով՝ գաղափարները, լինեն դրանք կրոնական, փիլիսոփայական և այլն, սերտորեն առնչվում են մարդու գիտակցության, նախնադարյան մարդուն մարդ դարձնելու արիական առաքելության հետ: Եվ պատահական չէ, որ իրարից բոլորովին հեռու, եվրասիական համարյա բոլոր ժողովուրդների մոտ բարու և չարի (սատանայի), արդարության կամ ծշմարտության մասին գաղափարները մոտավորապես նույնն են, ի տարբերություն, ինչպես նշվեց վերևում՝ Ամերիկյան բնիկների գաղափարների, որոնք չեն առնչվել արիների հետ:

- Գաղափարներն իրենց մարմնավորումն ստանում են ի հայտ գալուց բավական ժամանակ անցնելուց, նույնիսկ հարյուրամյակներից հետո: Այդ ընթացքում դրանք խմբվում, համակարգվում, աստիճանաբար անցնում են ընդհանուրի գիտակցության մեջ և ստանում կիրառելի ծև: Սովորաբար տվյալ ժամանակի, տվյալ պատմական պահի թելադրանքով մարդկային գիտակցության պահեստարանում գտնվող բազմաթիվ գաղափարներից մի քանիսը պատմական շրջադարձային պահերին փորձ է արվում կիրառել հասարակական կյանքի այս կամ այն խնդիրները լուծելիս: Եթե դրանցից որևէ մեկը համընկնում է, կամ թվում է, թե համընկնում է տվյալ պահի զարգացման միտումների հետ, այն գործածության է դրվում: Եթե այդ համընկնումը իրական է, գաղափարը դեկավար դեր է կատարում հասարակարգերի փոխման, ժողովուրդների ճակատագրերի ծևավորման գործում, իսկ եթե երևութական է, չիհմնավորված, որոշ ժամանակ կիրառելով և հակասության մեջ մտնելով զարգացման միտումների հետ, վերանում է կամ վերադառնում պատմության պահեստարանը: 18-րդ դարի վերջում ֆրանսիական հեղափոխության ժամանակ հանրապետության գաղափարը Ֆրանսիայում իրեն չարդարացրեց և մի քանի տարուց հետո Նապոլեոնի կողմից հանրապետությունը վերափոխվեց կայսրության: Այդ գաղափարն այնտեղ իրեն արդարացրեց միայն 19-րդ դարի երկրորդ կեսին: Ռուսաստանում ցարին տապալելուց ի հայտ եկան բազմաթիվ գաղափարներ՝ և ժողովրդավարական, և անիշխանական, և միապետական-սահմանադրական,

բայց ի վերջո հաղթեց համայնավարականը: Սակայն համընկնելով արդարության, հավասարության և ազատության մասին տվյալ պահի մարդկային պատկերացումներին, այն չհամընկավ մարդկության ընդհանուր գարգացման միտումներին, այդ պատճառով, չնայած վերնախավի ծիգերին, պետական կառավարման բռնակալական մեթոդներին, ի վերջո այն ևս հեղինակագրկվեց և զիջեց իր դիրքերը: Պատմությունից նման օրինակներ շատ կարելի է բերել:

- Գաղափարներն իրենց խմորման ընթացքում, պահպանելով նախնական իիմնադրույթները, իրենց վրա կրում են նաև տարբեր տեսաբանների, անհատականությունների, այսինքն՝ գաղափարակիրների անձնական գաղափարախոսությունների կնիքը: Միշտ որևէ գաղափար ձևավորվում և հղկվում է բազմաթիվ տեսաբանների, իմաստունների, հեղինակների կողմից և փաստորեն հանդիսանում է խմբական աշխատանքի արդյունք: Արդարություն, հավասարություն և նման այլ համամարդկային գաղափարները, արտացոլվելով տարբեր փիլիսոփայական, կրոնական և այլ հայացքներում և իրենց արտահայտությունը գտնելով ընկերական, համայնավարական գաղափարներում, իրենց էությամբ արիական են: Նույնը վերաբերում է նաև ժողովրդավարության և այլ համամարդկային սկզբունքներին:

Սակայն գաղափարներն իրենց էությամբ լինելով ոգեղեն և նպատակառուղիված լինելով մարդկային առաջադիմության, առանձին անհատների կատարելագործման և ինքնաբացահայտման, արդարության մասին պատկերացումների իրագործմանը, իրականում երբեք չեն հասնում իրենց ամբողջական իրականացմանը: Այստեղ գոյություն ունեն տարբեր պատճառներ: Նախ, բոլոր գաղափարներն իդեալական պայմանների համար են, ընդհանրական և հաշվի չեն առնում (և չեն էլ կարող հաշվի առնել) հասարակության գարգացման բոլոր նրբերանգներն ու ոլորապտույտները: Ընդհանրապես, գաղափար և այլընտրանք հասկացություններն անհամատեղելի են: Յուրաքանչյուր գաղափարի գաղափարակիր այն համարում է միակ ծիշտն ու անհերքելին, և դա հանդիսանում է մարդկության պառակտման պատճառներից մեկը:

Արիասարակ, մեծ դեր է կատարում ոչ թե գաղափարակիր դեկավարի բարձր մարդկային կերպարը, գաղափարի խորը իմացությունն ու նվիրվածությունը, այլ նրա ամբիցիաները և անձնական գաղափարախոսությունը:


- Սովորաբար ցանկացած թվացյալ նոր գաղափար ավելի հեշտ է ընկալվում և կիրառվում պատմական շրջադարձերի, հեղափոխական իրադրության և այլ պահերին: Նման պայմաններում հատ-

կապես մեծ հաջողության է հասնում ծայրահեղականությունը, և սովորաբար գաղափարակիրների դերում հանդես են գալիս ծայրահեղականները: Սրանց մեջ առանձնանում են իսկական ծայրահեղականները՝ գաղափարի մոլեռանդները և պատեհապաշտները: Վերջիններս մեծ հաջողությամբ են օգտագործում մոդայիկ ծայրահեղ կարգախոսները, որոնք հեշտությամբ ընդունելություն են գտնում գրգռված ամբոխի մոտ:

Ծայրահեղությունը ցանկացած լավագույն գաղափարի կործանման ամենահաստատ ձևն է: 18-րդ դարի ֆրանսիական հեղափոխության ժամանակ ազատության, հավասարության, եղբայրության կարգախոսներով իշխանությունը գրավեցին յակոբինյանները և կարծ ժամանակամիջոցում իրենց արյունահեղություններով արագորեն հեղինակագրկելով այդ սկզբունքները, իրենք էլ կործանվեցին: Առաջին համաշխարհային պատերազմից հետո Գերմանիայում արիական գաղափարների կարգախոսներով իշխանություն նվաճեցին ծայրահեղականները՝ ֆաշիստները: Այդ ծայրահեղականությունը նրանց կտրեց արիական համամարդկային, Արարչական բովանդակությունից, նրանց մոտ գերիշխողը դարձավ զուտ արտաքին ձևը, որը նրանք օգտագործեցին իրենց ազգային եսամոլությունը քողարկելու համար և որը առիթ դարձավ ընդհանրապես հեղինակագրկելու արիական սկզբունքները: Ուտոպիստ-սոցիալիստների գաղափարների հիման վրա կազմավորված համայնավարության ծայրահեղական գաղափարակիրները հաղթեցին Ռուսաստանում և նորից իրենք էլ հեղինակագրկվելով՝ հեղինակագրկեցին այդ գաղափարները: Ներկայումս առավել համամարդկային և ընդունելի են համարվում ազատական ժողովրդավարական գաղափարները, սկզբունքները: Բայց այդ գաղափարները հիմնվելով մեկ այլ ծայրահեղության՝ շահի, բիզնեսի գերակայման սկզբունքի վրա, ի վերջո հանգեցնում են մարդկային բարոյականության, ոգեղեն էլության խաթարմանը և իրենց մեջ կրում հեղինակագրկման տարրերը՝ անբարոյականության, ընտանիքի քայլայման, կազմակերպված հանցագործության և այլ տարբեր այլանդակությունների տեսքերով, այսինքն, այստեղ էլ ուրվագծվում է նույն վախճանը:

Որպես կանոն, ծայրահեղականությունը մեծ հաջողության է հասնում սկզբում, բայց ի վերջո սպառում է ինքնիրեն և պատմությունը գնում է Արարչի սահմանած ուղիով:

Գաղափարների դերի ուժեղացումը բնականաբար հետևանք է մարդկային գիտակցության զարգացման և տեղեկատվական դաշտի ընդարձակման: Յուրաքանչյուր ազգի, պետության համար



# ԱՐԴՅՈՒՆՎՈՐ ՎԵՐԱԿՐՈՅԱԾ ԱՐԴՅՈՒՆՎՈՐ ՎԵՐԱԿՐՈՅԱԾ ԱՐԴՅՈՒՆՎՈՐ

- Կրոմանյոնյան մարդը քաղաքակիրթ մարդ դառնալու հենց նախաշեմից սկսեց ենթագիտակցաբար վերլուծել, համեմատել ցեղի, հանրույթի առանձին անհատների և իր անձի փոխհարաբերությունները, այլ անձաց միջև եղած փոխհարաբերությունները և դրանց ազդեցությունն իր վիճակի վրա: Իրեն զգալով մարդկային հասարակության անդամ, նա սկսեց իր մտավոր մակարդակով բացահայտել ուրիշների վերաբերմունքն իր նկատմամբ և համապատասխան վերաբերմունք որդեգրել ուրիշների նկատմամբ: Այլ խոսքով, ելելով իր շահերից ու հնարավորություններից, նա փորձեց որոշակիացնել իր դիրքն ու վիճակը հանրույթի մեջ: Մտնելով հասարակական հարաբերությունների մեջ, ստանալով որոշակի իրավունքներ և ստանձնելով պարտավորություններ, մարդկային եսը դարձավ նախանձախնդիր իր իրավունքների պաշտպանության գործում, դրսից եկող վերաբերմունքի մեջ գնահատելով ուրիշների և իր պարտականությունների համամասնության աստիճանը: Նա սկսեց մտածել և կատարել իր ու այլոց վիճակների համեմատությունը, ինչպես տվյալ պահի, այնպես էլ անցյալի ու ապագայի կտրվածքով, ընդ որում, շահի սկզբունքներից ելնելով և նախապատվություն տալով իր վիճակին՝ ձգտելով այն ավելի բարելավել կամ ծայրահեղ դեպքում հավասարեցնել իրենից լավ վիճակ ունեցողների հետ, դրանում տեսնելով արդարություն հասկացության նախապայմաններից մեկը:

Բնության ցանկացած արարած իր գոյապահպանությունը տեսնում է տվյալ պահին կուշտ և պաշտպանված լինելու մեջ, առանց հետաքրքրվելու իր տեսակի ուրիշ անհատների մասին (բացառությամբ իհարկե, իր ծագերի, որը առնչվում է սերնդատվությանը): Նախնադարյան մարդն սկսեց այդ համեմատությունը կատարել համայնքում մարդկանց հետ համատեղ աշխատելիս կամ որս անելիս և հատկապես արդյունքները բաժանելիս, բոլոր դեպքերում բնականաբար նախապատվությունը տալով իր եսին և արդարության իմաստը տեսնելով դրանում:

- Յուրաքանչյուրն իր եսի արդարությունը պատկերացնում է իր

ձևով և համոզված է դրա ծշմարտության մեջ: Հանցագործության պահին ոչ մի հանցագործ չի մտածում, թե ինքը հանցանք է կատարում: Տվյալ պահին իր վարմունքը նա գտնում է արդարացի՝ ելնելով իր եսի շահերից: Յետագայում, հնարավոր է, տեսնելով հանցանքի հետևանքները կամ զգալով պատիժը, նա հետին թվով կընդունի իր անարդար լինելը, բայց նույնիսկ այդ դեպքում էլ նա գիտակցության կամ ենթագիտակցության մեջ փնտրում է իրենից, իր եսից դուրս և իրենից անկախ պատճառներ՝ սեփական եսն արդարացնելու համար, թեկուզ՝ ինքն իր առջև:

- Ազատության և հավասարության հասկացությունները սերտորեն առնչվում են արդարություն հասկացության հետ: Երբ մարդը զգում է, որ իր ազատությունը ավելի սահմանափակ է կամ իր և ուրիշների կեցությունների միջև գոյություն ունի անհավասարություն, այսինքն՝ իր եսի շահերը ավելի քիչ են ապահովված, քան այլոց եսերի շահերը, նա դրանում տեսնում է արդարության ոտնահարում և իրեն, որպես հանրույթի լիիրավ անդամ, զգում է անիրավված:

Քաղաքակրթված հասարակության մեջ արդարություն համարվում է հասարակության բոլոր անդամների իրավունքների հավասարությունը (անկախ յուրաքանչյուրի անձից ու ցանկություններից)՝ ներդրած աշխատանքի կամ միջոցների և ստացած արդյունքի համարժեքությունը, հանցանքի ու պատժի համապատասխանությունը: Բոլոր օրենքները, իրավական նորմերը ելնում են արդարության ապահովության սկզբունքներից կամ ձգտում են դրան, կամ քարոզվում են իրեն այդպիսիք: Արդարության սկզբունքներից ելնելու միշտ հայտարարվում է ամրագրված օրենքների հիմքում:

- Ոչ մի օրենք իրեն անարդար չի համարում, և այն խախտելը հանցանք համարվելով՝ պատժվում է: Այդ նպատակով, սկսած նախնադարից, գոյություն ունեն դատական կամ իրավապահ ինստիտուտները, որոնց դերն այդ օրենքների ստեղծումը, պաշտպանությունն ու խախտողներին պատժելն է: Սակայն, քանի որ արդարության նկատմամբ եղած պատկերացումները տարբեր անձանց և տարբեր հասարակական շերտերի շրջանում տարբեր է, այդ օրենքների նկատմամբ առանձին անձանց վերաբերմունքը ևս տարբեր է:

Բոլոր դեպքերում օրենքները ստեղծվում և պաշտպանվում են նրանց կողմից, ում ծեռքում են իշխանության լծակները՝ իրենց շահերը պաշտպանելու համար: Այլ խոսքով, օրենքով համարվում է հանցագործություն և պատժվում է նրանց շահերի դեմ կատարված ոտնձգությունը: Բայց քանի որ շահն իր բնույթով աճի սահման չի ծանաչում և կանգ է առնում այնտեղ, որտեղ հավասարակշռվում է

ուրիշի շահի դիմադրությամբ, ապա օրենքներն էլ, ապահովելով իշխող խավի շահերը, իրենց սահմաններն ընդարձակում են այնքան, մինչև որ հավասարակշռվում են մնացած խավերի շահերի դիմադրությամբ: Ստրկատիրական հասարակարգում ստրկատերերի կողմից հաստատված օրենքները, կարգավորելով իրենց միջև եղած հարաբերությունները, ստրուկների նկատմամբ փաստորեն սահման չեն ճանաչում, այսինքն՝ ստրուկի անձի, կյանքի նկատմամբ ամեն ոտնձգություն համարվում էր արդար: Իսկ ստրկատերերը, միմյանց միջև եղած հարաբերություններում, ճգոտում էին օրենքներով պաշտպանել ազատությունների հավասարությունը: Ֆեոդալական հասարակարգում ֆեոդալների, թագավորների կողմից հաստատված օրենքները պաշտպանելով նրանց շահերը և կարգավորելով միմյանց միջև եղած հարաբերությունները, արդեն որոշ չափով սահմանափակում էին նրանց իրավունքները մյուս խավերի նկատմամբ, ազատական (կապիտալիստական) հասարակարգում իշխողը տնտեսապես հզոր խավն է (գործարարները), բնականաբար՝ իր շահերի համար գրված օրենքներով:

Սակայն այս վերջին դեպքում կա մի հիմնական առանձնահատկություն, այն է՝ ժողովրդավարական մոտեցումը: Այդ մոտեցմամբ արգելք չի դրվում մյուսներին անցնելու իշխողների դասը՝ հարստանալու միջոցով: Այստեղ կարծես օրենքների միջոցով որոշակի արգելքներ են դրվում շահի անօրինական ածի նկատմամբ: Իսկ այստեղ շահի ածի բավարարումը տեղի է ունենում նաև այդ օրենքները շրջանցելու ճանապարհով: Այսինքն՝ իշխողների ու այլ խավերի հարաբերությունները կարգավորող օրենքները կարող են շրջանցվել տնտեսապես հզորների կողմից, բայց դա դժվար է այլոց համար: Ասենք, եթե հարուստը և ոչ-հարուստը կատարում են միևնույն հանցանքը, ապա հարուստը, եթե չկարողանա արդարանալ կաշառքի կամ այլ մեթոդների շնորհիվ, նա կարող է վարձել բարձրակարգ փաստաբան և արդարացվել (քանի որ չկան անթերի օրենքներ), որը չի կարող ոչ-հարուստը:

- Կեցության ոլորտում բոլորին հավասար վիճակ ապահովելու համայնավարների գաղափարախոսությունը, որը ելնում է բացարձակ արդարության սկզբունքից, իր էությամբ լինելով իդեալական ու ծայրահեղ, ի վերջո հերքվեց կյանքի կողմից այն պատճառով, որ բացարձակ արդարությունը հնարավոր չէ, որովհետև հնարավոր չէ բացարձակ հավասարությունը: Բնության մեջ չկա բացարձակ հավասարություն: Ոչ մի բույս, կենդանի արարած իրենց ֆիզիկական տվյալներով, աճման առանձնահատկություններով, նույնիսկ նույն տեսակի մեջ, հավասար լինել չեն կարող: Այնտեղ գոյություն ունի մր-

ցակցություն՝ սեփական շահի ապահովման նպատակով, որի դեպքում ուժեղները հնարավորություն ունեն ավելի բարգավաճել թույլերի համեմատ: Նույնն է մարդկային հասարկության մեջ: Չկա հնարավորությունների, ունակությունների, այսմանների բացարձակ հավասարություն, և այն արհեստականորեն ստեղծելը պարզապես կվերացնի կատարելագործման ձգտումը, մրցակցությունը, այսինքն՝ զարգացումը: Մարդկային հասարակության մեջ արդարությունը ենթադրում է անձնական կարողությունների կիրառման հավասար հնարավորություն և դրան համարժեք արդյունքի ստացում: Տվյալ պարագայում նախամարդու նպատակը հնարավորին չափով քիչ տալ և շատ ստանալն է, չբացառելով մրցակցության մեջ անարդար մեթոդների կիրառումը:

Դրանում է մարդու և նախամարդու արդարացիության նկատմամբ մոտեցումների տարբերությունը: Այսինքն, եթե մարդու համար իդեալականը հավասար հնարավորություններ ապահովող օրենքների ստեղծումն ու խստիվ կիրառումն է, ապա նախամարդու համար իր եսի շահին ծառայեցնող օրենքի ստեղծումն է կամ արդարացի օրենքի շրջանցումը:

- Բոլոր ժամանակներում ընդգումները, ապստամբությունները կամ հեղափոխությունները եղել են տվյալ ժամանակի պատկերացումներով ընդունված արդարություն հաստատելու փորձեր: Այդ ցնցումները տեղի են ունենում, երբ արդարության որևէ տեսակ նսեմացվում է մեծ քանակությամբ մարդկանց համար: Այդ դեպքում նրանք համախմբվում և պայքարում են այդ արդարութունը վերականգնելու համար: Նման արդարության տեսակներին են վերաբերում և սոցիալական արդարությանը, և իրավունքների հավասարության համար արդարությունը, և ազգային արդարությունը: Սոցիալական և իրավական արդարությանը, և իրավունքների հավասարության համար արդարությունը, և ազգային արդարությունը: Սոցիալական և իրավական արդարությունը հաստատելուն նպատակառությամբ օրենքները, որոնք ընդունվում են որևէ հասարակարգի նորով փոխարինվելու հետևանքով, մարդկության զարգացման ընթացքում աստիճանաբար դառնում են արգելակող, այսինքն՝ վերածվում են անարդարության: Արդարության մասին այդ պատկերացումները մարդկության բարոյականության զարգացման հետ միասին դառնում են ավելի մարդկային ու խստապահանջ: Ստեղծված օրենքները հակասության մեջ են մտնում այդ պատկերացումների հետ և վերանում են բարեփոխումների կամ հասարակարգի փոփոխության միջոցով: Հաջորդ նոր օրենքները որոշ ժամանակի ընթացքում ենթակա են նույն ճակատագրին:

Ինչ վերաբերում է ազգային արդարությանը, այն ավելի զգայուն է ու բժախնդիր և ոգեղեն բնույթ ունի: Նրա նկատմամբ պահանջը

մնում է այնքան ժամանակ, քանի դեռ ազգը չի հասնում իր ազգային խնդիրների լրիվ բավարարմանը: Բարեփոխումները, կիսատ-պռատ զիջումները, լինելով արդարության ժամանակավոր, տվյալ պահի համար հանգստացնող միջոցառումներ, ժամանակի ընթացքում դադարում են բավարարել ազգային արդարության նկատմամբ առաջադրվող պահանջները:

- Սովորաբար արդարության համար պայքարում նախամարդը ու մարդը միշտ գտնվում են բարիկադի հակառակ կողմերում: Բայց պայքարը վերջանալուց հետո բարեփոխումներից կամ նոր հարաբերություններ հաստատելուց հետո, նախամարդը հեշտությամբ հար-

## ԴԱՎԻԴ ԱՌԱՋԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎՈՐ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

- Հանրույթի ներսում մարդկային «եսը» այլոց «եսերի» հետ մշտական հարաբերվելիս, իր շահերն ապահովելու և միաժամանակ բախումներից խուսափելու համար, ակամայից կիրառում է մարդկային հարաբերությունների «քաղաքականություն» կոչվող ձևը: Մարդն սկսեց քաղաքականություն վարել իր գիտակցության սկզբնավորման արշալույսից: Երբ Աղամն ու Եվան իրենց ամոթը ծածկում էին թգենու տերևով, դա արդեն նրանց կողմից միմյանց և Արարչի նկատմամբ քաղաքականություն վարում էր (ամաչելը զգացմունք է, իսկ այն ցուցադրելը՝ քաղաքականության ձև): Այսինքն, նրանք ճաշակելով իմաստնության պտուղը, առաջին հերթին հասկացան իրենց վարվելակերպում քաղաքականություն կիրառելու անհրաժեշտությունը: Եթե ուշադրություն դարձնենք, Աստվածաշնչում նշվում է դրախտում գտնված միայն երեք ծառերի անվանումները՝ իմաստնության, կեցության և թգենու (այսինքն՝ քաղաքականության): Մարդը ծնված օրվանից արագ է յուրացնում քաղաքականություն վարելու անհրաժեշտությունը և այն դարձնելով իր նմանների հետ հարաբերվելու ձև, դրանով է դեկավում ամբողջ կյանքում, յուրաքանչյուր քայլափոխում՝ անկախ այդ հասկացութ-

յան նկատմամբ իր մոտեցումներից, պատկերացումներից, կիրառման ցանկությունից: Այլ կերպ ասած՝ քաղաքականությունը մարդկային գործելակերպի հիմնական մեթոդներից է:

- Ծնողն իր զավակի ծնված օրվանից փորձում է կռահել նրա ցանկություններն ու ըստ հնարավորության կամ անհրաժեշտության բավարարել դրանք կամ մերժել այնպես, որ նա չլացի: Այլ խոսքով՝ կիրառելով քաղաքականություն, դրանով նաև նրան է սովորեցնում քաղաքականություն, և հետագայում զավակն էլ զգալով, որ ծնողը իր ոչ բոլոր ցանկություններն է կատարում, ինքն էլ իր հերթին ենթագիտակցությամբ փորձում է իր ցանկություններին հասնել քաղաքականություն կիրառելու միջոցով: Երբ նա լացով պահանջում է, որ իրեն անընդհատ գրկեն, նա իր ձևով քաղաքականություն է վարում՝ դրանով փորձելով հասնել իր ցանկության բավարարմանը: Երբ մարդը մեկ ուրիշի հետ հարաբերվելիս իրեն հարկադրում է ժպտալ՝ խեղդելով հայինությունը, անշուշտ, նա նույնպես քաղաքականություն է վարում: Այլ խոսքով, քաղաքականություն վարելու առաջին պայմանը իրական ցանկությունները թաքցնելն է:

Կա մի թևավոր արտահայտություն՝ դիվանագիտությունը (այսինքն՝ քաղաքականության միջոցով իր նպատակներն իրականացնելը) այն է՝ «Երբ մարդը մտածում է մի բան, ասում է մի այլ բան և անում է ուրիշ բան»:

Առհասարակ, քաղաքականությունից խուսափող, չպատկերացնող կամ արհամարիող անձն անքաղաքավարի, կոպիտ կամ միամիտ ու հիմար մարդու վարկանիշ է ձեռք բերում իր շրջապատում (քաղաքավարությունը փաստորեն նշանակում է քաղաքականության վարում): Այլ խոսքով, սովորական բարեկիրթ կամ քաղաքակիրթ համարվող մարդը ուրիշների հետ եղած հարաբերություններում իր գործելակերպը, իր դերն ու տեղը, իր շահերն ու ցանկությունները ստիպված է իրականացնել քաղաքականության միջոցով՝ մշտապես հաշվի առնելով շրջապատի արձագանքն ու կարծիքը:

- Քաղաքականությունը մարդկային հասարակությանը բնորոշերևություն է: Այն գոյություն չունի բնական արարածների մոտ: Այնտեղ կա ցանկություն, իր շահերը բավարարելու բացահայտ, անթաքույց ձգտում, որն իրագործվում է անմիջական գործողությունների միջոցով՝ առանց հաշվի առնելու մյուսների կարծիքը (եթե ուժերը բավարարում են): Առհասարակ, կարծիք հասկացությունը և այն հաշվի առնելու անհրաժեշտությունը բնության մեջ գոյություն չունի: Երբ շան ձագն անընդհատ վնասում է, նա հասկացնում է իր ծնողին, որ սոված է և կաթն ուտելով հանգստանում է: Կամ, երբ կատվի ձագը խաղում է մոր պոչի հետ և մայրը ձանձրանալով, քաշում է իր պոչը,

ձագը չի մլավում և պահանջում, որ թողնի խաղալ, հաստատ գիտենալով, որ մայրը դրան ուշադրություն չի դարձնի: Մարդն ապրելով մարդկային հասարակության մեջ, ակամայից ստիպված է հաշվի առնել հասարակական կարծիքը՝ վարելով համապատասխան քաղաքականություն:

Ամբողջ կյանքում իր փորձի, դաստիարակության, կյանքի ու այլոց հետ եղած վերաբերմունքի իր պատկերացումներին համապատասխան, մարդը մշտապես կատարելագործում է սեփական քաղաքականության կիրառման մեթոդները և ինչքան դրանք համապատասխանում են տվյալ հասարակության մեջ փոխհարաբերությունների համար ընդունված կանոններին, և ինչքան նա կարողանում է իր վարվելակերպն ու գործելակերպը, զգացմունքների բացահայտումը համապատասխանեցնել դրանց, այնքան նա բարեհած է ընդունվում: Սխալ քաղաքականությունը, կամ առհասարակ՝ քաղաքականության բացակայությունը կարող է ի չիք դարձնել նրա գիտակցական մակարդակի, կարողությունների, այլ մարդկային լավագույն հատկանիշների առկայության շնորհիվ սպասվելիք վերաբերմունքը: Քաղաքականության ծշտությունը որոշվում է հետևանքներից, շահի ապահովման համար ստացված արդյունքներից:

- Արիական սկզբունքներով քաղաքականություն վարել՝ նշանակում է յուրաքանչյուր եսի շահերի ապահովում ու միաժամանակ մրցակցության պայմաններում այլ եսերի շահերի հաշվառում ու ընդունում: Այդ տեսակետից նախամարդկային եսը չճանաչելով այլ եսերի շահերը և անընդունելի համարելով իր եսի շահերը նսեմացնելու ամեն մի փորձ, հանուն այլոց եսերի չընդունելով իր եսի շահերի որևէ զիջում, չի ընդունում նաև քաղաքականության մեջ կիրառվող մեթոդների արդարացի կամ անարդարացի, բարոյական կամ անբարոյական, մարդկային կամ անմարդկային և այլ հասկացությունների գոյության իրավունքը: Եվ այստեղ նման քաղաքականության էությունը «նպատակն արդարացնում է միջոցները» ծևակերպումն է:

Հանրույթները, համայնքները հանդիսանալով ընդհանուր շահ ստեղծելու միջոցով եսերի շահերի միավորման հետևանք, ինչպես իր առանձին անդամների, այնպես էլ այլ հանրույթների և անձաց հետ հարաբերվելու ժամանակ կիրառում են քաղաքականություն և նրա նույն մեթոդները: Որտեղ կա մարդկային հարաբերություն, այնտեղ կա քաղաքականություն, այսինքն՝ «մարդը քաղաքական կենդանի է»:

- Քաղաքականություն վարելու մեթոդներն ու միջոցները զարգա-

նում են մարդկային գիտակցության զարգացման հետ միաժամանակ: Ներկայումս առավել զարգացած երկրներում այդ հարցին նվիրում են հսկայական միջոցներ և ուշադրություն: Կազմակերպվում են հարյուրավոր գիտահետազոտական և վերլուծական կենտրոններ, որոնք և պետությունների ներքին ու արտաքին քաղաքականության, և առանձին կազմակերպությունների, անհատների փոխհարաբերությունների ժամանակ այս կամ այն նպատակն իրագործելու համար վարվելիք քաղաքականության համար առաջարկում են մեթոդներ, դեղատոմսեր: Այլ խոսքով քաղաքականությունը գիտություն է՝ իր կիրառական ու տեսական բնույթներով:

- Քաղաքականության անբարոյական էությունը տարբեր, զարտուղի ճանապարհներով կամ խարդախ մեթոդներով խարելու, համոզելու, գովազդի և այլ միջոցներով այլոց ստիպելն է՝ վարվելու դրանք կիրառողի ցանկությամբ, նրա շահի համար ձեռնտու գործելակերպով: Քաղաքականություն վարելու այնպիսի միջոցները, ինչպիսիք են ստախոսությունը, կեղծիքը կամ խորամանկությունը, որոնք հատուկ են թերզարգացած մարդկային հասարակություններին, ներկայիս պայմաններում, ներկայիս զարգացած գիտակցությամբ մարդու համար պարզունակ են և անընդունելի:

- Պետությունների միջև քաղաքականություն վարելու ամենահիմնական ելակետը նպատակի և դրան հասնելու մարտավարական և ռազմավարական քայլերի գաղտնիությունն է: Այլ խոսքով, քաղաքականության մեջ մարդն իրեն գգում է՝ ինչպես պատերազմի դաշտում: Դակառակորդի նպատակների և քայլերի ծիշտ գուշակումը հաղթանակի կեսն է: Մյուս կեսը ունեցած հնարավորություններն են և դրանց կիրառման ճշգրտությունը: Սակայն, եթե պատերազմն ունի միայն մի նպատակ՝ հակառակորդին հաղթելը, ապա քաղաքականությունը, ավելի ծիշտ՝ բարձրագույն քաղաքականությունը միշտ ունի մի քանի նպատակներ: Ընդ որում, մշակված լավագույն տարբերակներում հիմնական նպատակը նույնիսկ հակառակորդին հաղթելն ու ոչնչացնելը կարող է չլինել: Անհրաժեշտության դեպքում նախատեսվում է նաև հաշտվելը, դաշնակից դարձնելը, նրան իր շահերի համար օգտագործելը: Երբ քաղաքական որևէ քայլ հետապնդում է ընդամենը մեկ նպատակ, դա պարզունակ քաղաքականություն է (նպատակի բացահայտումը ի չիք է դարձնում այն): Բարձրագույն քաղաքականությունը միշտ հետապնդում է մի քանի նպատակներ, որոնցից մեկը կամ մի մասը բացահայտվելու կամ չկատարվելու դեպքում մյուսների իրականացումը կարող է չեղոքացնել կամ նվազեցնել վնասը: Այսինքն՝ կիրառվող քաղաքականության մարտավարությունը մշակվում է այնպես, որ հանգեցնում է միմիայն հաղթանակի կամ ծայրա-

հեղ դեպքում՝ Ելակետային վիճակին վերադարձի: Քաղաքականության կարևոր մեթոդներից մեկը հակառակորդին ապակողմնորոշելն է, ասենք սեփական թերությունները, որպես առավելություն և առավելությունները որպես թերություն նրա պատկերացման մեջ ամրագրելը: Դրանով այն կիրառողը հակառակորդին ստիպում է իր դեմ պայքարել այն ոլորտում, որտեղ ինքն ուժեղ է: Մեկ այլ մեթոդ է հակառակորդին ստիպելը՝ հավատալու իր նպատակներին հակադիր նպատակների մեջ, ծևանալ բարեկամ՝ ունենալով թշնամական նպատակներ, ցուցադրել խաղաղասեր մտադրություններ, նախապատրաստվելով պատերազմի: Այլ կերպ ասած՝ զոհին ներկայացնել որպես զավթիչ և զավթիչին՝ զոհի, արդարին որպես անարդարի, պարտված հակառակորդին ոչնչացնելը կամ ստրկացնելը ներկայացնել որպես անհրաժեշտություն կամ բարեգործություն, իր կատարած անբարոյական քայլերը վերագրել նրան: Սրանք միջազգային անբարոյական նախամարդկային քաղաքականության այբուբենն են: Վերջապես, նման բարձրագույն քաղաքականության ձևերից մեկն է՝ ստիպել հակառակորդին, որպեսզի վերջինս խնդրի վերցնելու այն, ինչը ինքը նպատակադրվել էր խլել, և ստանալով, դա ներկայացնել որպես նրա հանդեպ բարեգործություն:

Քաղաքականության մեջ (նաև ֆիաստաբանության) կիրառվում է հակառակորդի մոտեցումները, սկզբունքները ծայրահեղացնելու մեթոդը: Նման դեպքերում իբր համաձայնվելով բերված ֆիաստարկներին, մտքերին, պատճառաբանություններին, ծևանալով համախոհ, դրանք լրացվում են նորանոր, ավելի ու ավելի ծայրահեղ մտքերով ու եզրակացություններով, ի վերջո ամբողջ ներկայացվածի իմաստը հասցնելով անհեթեթության, որից հետո արդեն այն դժվար չէ ջախջախել:

- Միջազգային հարաբերություններում պետության շահը դասվում է ամենաբարձրը: Նույնիսկ այն աստիճանի բարձր, որ կարող է հակադրվել համամարդկային, մարդ տեսակի՝ մարդկանց, ազգերի, ժողովուրդների գոյատևմանը: Պետական քաղաքականության մեջ բարեկամություն, ժողովրդավարություն, արդարություն, երախտագիտություն, մարդկային համերաշխություն արտահայտություններն օգտագործվում են միայն քաղաքական նպատակները թաքցնելու, ապակողմնորոշելու, սեփական շահն ապահովելու համար: Ընդունված է ասել, որ պատերազմը դիվանագիտության, այսինքն՝ սեփական շահն ապահովելու նպատակին ուղղված քաղաքականության շարունակությունն է: Եթե տվյալ պետությունը քաղաքական մերենայությունների միջոցով չի կարող ապահովել իր շահերը, ապա իրեն բավականաչափ հզոր գգալու դեպքում պատրաստ է

պատերազմի՝ չընկրկելով հազարավոր մարդկային զոհերի հեռանկարների առջև թե իր և թե հակառակորդի կողմից: Այսինքն՝ բացարձակապես անտեսվում է կյանքի պահպանության Արարչական սկզբունքը: Բնական է, այս բոլորը բնորոշ են ուժեղներին:

- Երբեմն դիվանագիտության մեջ կամ միջազգային իրավական պրակտիկայում այս կամ այն անիրավացի նպատակին հասնելու համար գործողությունների արդարացիության պատրանք է ստեղծվում փաստերը անտեսելու, ընդունված սկզբունքներն արհեստականորեն խճելու, դիվանագիտական թակարդներ, քաղաքական կամ իրավաբանական թնջուկներ ստեղծելու միջոցով, այդ կերպ միջազգային հասարակական կարծիքին համոզելով հարցի քաղաքական միջոցներով լուծելու անհնարինության մեջ: Սովորաբար նման թնջուկներն ստեղծվում են հատկապես այն դեպքերում, երբ որևէ մեկի նպատակն իր բովանդակությամբ, թեկուզ արդարացի և մարդկային, հակասության մեջ է մտնում համընդհանուր ճանաչում գտած, քարոզչության կամ այլ միջոցներով ընդունելի դարձում, հզորների՝ սեփական առաջադեմ ու մարդասեր կերպարի, կամ մարդկության ճակատագրի համար մտահոգության վերաբերյալ տարափողվող գործելակերպի հետ:

Նման թնջուկների միջուկը կազմում է որևէ հարցի վերաբերյալ միջազգայնորեն ընդունված, բնական իրավունքի, մարդկային փորձի և տվյալ մակարդակին համապատասխանող քարոյական նորմերի ու այլ իրավական ակտերի միջև արհեստական, սովորական միջոցների միջոցով առաջացրած հակասությունները: Նման միջուկի շուրջը աստիճանաբար ստեղծվում են հանգույցներ՝ ի վերջո անհնարին դարձնելով հարցի քաղաքակիրթ լուծումը, մարդկությանը կանգնեցնելով անլուծելի գորդյան հանգույցի առջև, որի լուծման միակ ելքը Ալեքսանդր Մակեդոնացու սուրն է: Այլ խոսքով, երբ քաղաքականության ուժին փոխարինում է ուժի քաղաքականությունը:

- Ընդհանրապես, քաղաքականության համար բազմաթիվ մեթոդներ ու ձևեր գոյություն ունեն, բայց այդ բոլորը հասցնում են իրենց վերջնական նպատակին, եթե թիկունքում կա ուժ: Յզորության և ծիշտ քաղաքականության համատեղումը հաջողության գրավական է:

Շահի առկայության դեպքում մարդկանց ճակատագրի նկատմամբ մտահոգությունը շատ քիչ դեռ է կատարում, իսկ զգացմունքներից, գաղափարական սկզբունքներից բխող քաղաքականություն կիրառվում է, եթե այն չի հակասում սեփական շահերին:

Դիվանագիտությունը հիմնված է բարձրագույն քաղաքականութ-

յան վրա, որը որպես գիտության մի ընդարձակ ծյուղ, ունի բազում մեթոդներ ու միջոցներ: Մյուս կողմից՝ կախված պայմաններից, հանգամանքներից, ստեղծվում և կիրառվում են նոր մեթոդներ: Ժամանակակից քաղաքականության մեջ առավել արդյունավետ ու բարեկիրթ մեթոդ է համարվում, օրինակ, մանր հարցերում հակառակոր-

## Ե. Ազգերի ծագումը և վաղացած մարդկան

Ազգերի ծագումը հետաքրքիր ձևով բացատրվում է Աստվածաշնչում՝ «Բարելոնյան աշտարակաշինություն» կոչված պատմության մեջ:

- Մարդիկ զարգանալով ու մեծամտանալով, որոշեցին հասնել երկինք՝ այդ նպատակով կառուցելով հսկա աշտարակ: Նրանց այդ մտադրությունը զայրացրեց Աստծոն, և նա մարդկանց լեզուները խառնեց այնպես, որ չկարողանան իրար հասկանալ և այդ պատճառով ստիպված լինեն դադարեցնել աշտարակաշինությունը: Այդ մարդիկ, ցրվելով աշխարհով մեկ, դարձան տարբեր ազգերի նախահայրերը:

Աղամի ու Եվայի և Նոյան տապանի պատմություններից հետո սա երրորդ դեպքն է, երբ Արարիչը խառնվում է մարդկանց գործերին՝ ուղղություն տալով մարդկության բարոյական զարգացմանը (չհաշված առանձին մասնավոր դեպքերը, ասենք Սոդոմի և Գոմորի կործանումը):

- Յետևենք դեպքերի հաջորդականությանը. Աղամն ու Եվան գտնվում էին դրախտում, ապրում հավերժական, անհոգ կյանքով, այսինքն՝ ոգեղեն ոլորտում: ճաշակելով իմաստնության ծառի պտուղը, նրանք աքսորվեցին դրախտից երկիր՝ իրենք և իրենց սերունդները դառնալով մահկանացու: Այստեղ առաջանում են հարցեր. Եթե ոչ նրանք, ապա ով իրավունք ուներ այդ ծառի պտուղը ճաշակել՝ ինքն Արարիչը, թե՞ ոգեղեն այլ արարածներ, որոնց դրախտում գտնվելու մասին ոչինչ չի ասվում: Իսկ եթե ոգեղեն արարածներ չկային, ապա ինչո՞ւ պետք է այդ իմաստնության ծառը գտնվեր այնտեղ և արգելված լիներ նրա պտուղներից ճաշակելը: Մնում է ենթադրել, որ դա

հենց այդ նպատակով էլ դրված էր: Այսինքն, մարդուն ստեղծելու Արարչական մտադրությունների մեջ մտնում էր նաև նրան իմաստնություն շնորհելը, և Ադամն ու Եվան ոչ թե աքսորվեցին, այլ ուղարկվեցին Երկիր՝ այն մարդկանցով բնակեցնելու, Արարչական մտադրությունների հետագա իրականացման համար: (մանավանդ, որ այս պահը շեշտվում է նույն Աստվածաշնչում, ինչպես նաև Ղուրանում): Այստեղ կարևոր է նաև մեկ այլ հանգամանք. դրախտում, բացի իմաստնության ծառից, կար նաև կեցության ծառը, որի պտուղը ճաշակելու դեպքում մարդը դառնում էր անմահ, իսկ դա տվյալ պահին Արարչի ծրագրերի մեջ չէր մտնում: Նույնիսկ այդ ծառն անհասանելի դարձնելու համար Արարիչը քերովբեներից կազմված հատուկ պահակախումբ դրեց:

- Ըստ Աստվածաշնչի՝ իմաստնության և կեցության ծառերի պտուղների միաժամանակյա ճաշակման պարագայում մարդը կիավասարվեր աստվածներին: Այդ դեպքում նորից է հարց է առաջանում. ուրեմն ինչո՞ւ էր դրված նաև կեցության ծառը: Յավանական է, այն դնելով դրախտում և այդ մասին տեղյակ պահելով մարդուն, Արարիչը մարդու զարգացման համար դրել է կարևոր խթանիչ՝ անմահության ծգտում: Եվ իրոք, անմահության ծգտման մտասեռումը միշտ ուղեկցել է մարդուն՝ սկսած նրա գիտակցության ծևավորման պահից: Աշխարհի բոլոր ժամանակների մեծամեծները, իմաստունները միշտ տառապել են այն մտքից, որ իրենք մահկանացու են: Կեցության ծառը դրախտում դնելով, Արարիչը մատնանշում է կարծես, որ անմահությունը հնարավոր է ծեռք բերել, եթե մարդը կարողանա հաղթահարել քերովբեներին, այսինքն՝ իր զարգացման ընթացքում հասնի այն մակարդակին, որ կարողանա հաղթահարել ոգեղեն արգելքները: Իսկ այդ արգելքների բնույթի և հաղթահարման հնարավորության մասին ենթադրությունը արվել է վերևում: Մյուս կողմից, չի բացառվում նաև մարդու ոգեղեն անմահության, այսինքն՝ արարման արդյունքների միջոցով անմահության հասնելու գաղափարը:

Մարդուն գրկելով Ֆիգիկական անմահությունից, Արարիչը, մյուս կողմից, կարծես նշել է նաև մարդ տեսակի զարգացման միակ հնարավոր ուղին՝ միայն սերնդափոխության միջոցով: Այսինքն՝ յուրաքանչյուր սերունդ նախորդից, ժառանգականության կամ դաստիարակության շնորհիվ ստանալով իմաստնությունը, նրան ավելացնում է նաև իր ծեռքբերումները և փոխանցում հաջորդ սերունդներին՝ իր տեղը զիջելով նրանց: Այդ սերնդի մնալը պարզապես կխանգարեր հաջորդ սերունդների զարգացմանը: Այլ խոսքով, մարդկության զարգացումը շարունակվում է սերունդների կողմից: Յուրաքանչյուր ան-

հատ գեների միջոցով իր սերունդներին է փոխանցում զարգացման գործընթացում իր ձեռք բերած արդյունքները՝ շատ, թե քիչ, լավ, թե վատ՝ դա արդեն կախված է տվյալ անհատից:

- Մարդկային զարգացումը ճիշտ ուղու վրա բերելու Արարչի մյուս քայլը տրված է Նոյան տապանի պատմության մեջ: Այդ պատմությունից հետևում է (ինչպես նշվել է նախորդ գլուխներում), որ նախքան ջրհեղեղը մարդը զարգացել է միակողմանի՝ միայն գիտակցությամբ, անտեսելով բարոյականությունը: Փրկելով ջրհեղեղից Նոյին ու իր զավակներին, Արարիչը նրանց սերունդների մեջ փորձեց համատեղել գիտակցությունն ու բարոյականությունը, և այդ հատկանիշները նրանց հեռավոր սերունդների՝ արիների միջոցով տարածել նախնադարյան մարդկանց կրոնանյոնյան ցեղերի մեջ, որոնք իրենց զարգացման մակարդակով չեն տարբերվում բնության մյուս արարածներից:

- Բաբելական աշտարակաշինության պատմության մեջ Արարիչն իր հաջորդ քայլում մարդկանց նկատմամբ ավելի ներողամիտ վերաբերունք է դրսնորում: Այսինքն, գտնում է, որ այդ ժամանակի մարդիկ իրենց բարոյականությամբ ավելի բարձր են նախորդներից՝ ջրհեղեղի պատճառով ոչնչացվածներից, սակայն նրանք ունեն մի կարևոր թերություն՝ մեծամտություն, որը կարգելակեր նրանց հետագա առաջադիմությանը: Մեծամտությունն առաջանում է սեփական ուժերի, հնարավորությունների գերազնահատումից ծագող ավելորդ ինքնավստահությունից: Մարդիկ, ովքեր հավաքվել ու կառուցում էին Բաբելոնի աշտարակը՝ Աստծուն հասնելու համար փաստորեն իրենցից ներկայացնում էին մեծամիտների ամբոխ: Մարդկային հավաքական մեծամտությունը նրանց կդրդեր ոչ միայն անմիտ ու անհեռանկար քայլերի, այլև նրանց մոտ կառաջացներ արհամարհանք նոր գիտելիքների, հետագա կատարելագործման համար: Փաստորեն աշտարակաշինությունը ցույց էր տալիս մարդկանց համոզմունքը, որ իրենք հասել են գիտության գագաթնակետին և հնարավոր էին համարում իրենց հավաքական հզորությամբ հասնել երկինք:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե այս պատմության մեջ Արարիչը հուշում է զարգացման ամենակարծ ուղին, այն է, եթե մարդիկ բոլորը միավորվեն, խոսեն մի լեզվով, այլ խոսքով՝ դառնան մի ազգ, իրենց գիտելիքները համատեղելով՝ արագորեն կառաջադիմեն: Այսինքն՝ այն, ինչին ձգտել են և միշտ էլ ձգտում են աշխարհի հզորները, փորձելով տարբեր մեթոդներով վերացնել ավելի փոքր ազգերին և դրանով բացառել, իրենց կարծիքով, առաջադիմությանը խանգարող ազգային գործոնը: Նախ, հենց այդ ձգտումը մեծամ-

տության առաջին արտահայտություններից մեկն է, այն պարզ պատճառով, որ լինել հզոր, դեռ չի նշանակում լինել իմաստուն: Մարդկության պատմության մեջ հազվադեպ են եղել հզորները, որոնք իրենց մեջ Սողոմոն Իմաստունի նման համատեղել են նաև իմաստնությունը: Եվ հետո միատեսակ մտածելակերպով, միատեսակ մոտեցումներով ընդհանուր զարգացումը կգնա միակողմանի ուղղությամբ, իսկ իմաստնությունը միակողմանի չի լինում:

Մյուս կողմից՝ այդ մոտեցումը հակասում է գոյաձևերի և նրանց հարաբերությունների բազմազանության Արարչական սկզբունքին: Այն բերում է համընդհանուր համասեռության, որը կնշանակի զարգացման կասեցում, կյանքի ծահծացում: Հետևաբար առանց ժողովուրդների ու ազգերի բազմազանության պահպանման, նրանց միջև մրցակցության, հաղորդակցման ու փոխազդեցության, համընդհանուր մարդկային զարգացում հնարավոր չէ: Ամբողջ աշխարհում մի ժողովուրդ ստեղծելու միտումը, որը հնարավոր է թվում հաղորդակցման ու տեղեկատվության միջոցների անընդհատ զարգացման պայմաններում, առաջ կբերի միակողմանի զարգացում: Ազգերի բազմազանությունը նշանակում է նաև ավանդույթների, արժեքների, հասարակական այս կամ այն երևույթների նկատմամբ մոտեցումների բազմազանություն, դրանց բաղդատման ու համեմատությունների միջոցով լավագույն տարբերակների ընտրության հնարավորություն, բազմածև մտածողություն ու բազմակարծություն, որոնց առկայությունը միայն հնարավորություն կտա մարդկության առավել ճիշտ առաջընթացին:

Եվ վերջապես, նման մոտեցումն ընձեռում է նաև մարդկային համասեռ զանգվածի հեշտ կառավարելի հության հնարավորություն, որը հղի է մի կողմից այն մեծամիտ պատկերացմամբ ձևավորված մտածելակերպով, թե հնարավոր է ամբողջ մարդկության առաջադիմությունը ղեկավարել Արարչի փոխարեն (Բարելոնյան աշտարակաշինության մի տարբերակ), մյուս կողմից՝ կառավարման հեշտությունը կկասեցնի իրենց կառավարողների զարգացումը, քանի որ հեշտ ճանապարհը երբեք գիտակցության զարգացմանը չի խթանում: Եվ, որ ամենագլխավորն է, մարդկության ընդհանուր զարգացման մեջ բարոյականության զարգացման հետ մնալը գիտակցության զարգացումից՝ միակողմանի զարգացածության և հեշտ կառավարելի հության պայմաններում, դժվար չէ գուշակել, թե ինչ աղետալի հետևանքների կարող է հասցնել:

Այս միտումը լավ զգացվում է նույնիսկ ներկա պայմաններում: Ում հայտնի չէ, որ ինչքան զարգացած ու հզոր է որևէ ազգ, այնքան նրա առանձին անհատները մեծամտորեն ու արհամարհանքով են վերաբերվում առավել փոքր ազգերի անհատներին: Մեծ ազգերն ու պետու-

թյունները միշտ փորձում են իրենց իմացածով ու պատկերացումներով ղեկավարել փոքր ազգերին՝ նրանց զարգացումը ուղղորդելով ըստ իրենց մոտեցումների:


Աշտարակաշինության պատմությունը ցույց է տալիս Արարչի անհանդուժողականությունը ոչ թե ընդհանրապես մարդկանց զարգացման նկատմամբ, այլ նրանց զարգացման միակողմանիության նկատմամբ:

- Ներկայումս «ազգ» հասկացության համար չկա միարժեք, համընդհանուր ճանաչում գտած ծևակերպում, թեկուզ այն պատճառով, որ միջազգային քաղաքականության թատերաբեմում կիրառելիս նրա նկատմամբ մոտեցումները առնչվում են հզորների պետական շահերին:

Համենայն դեպս, պարտադիր պայմաններից են համարվում սովորույթները, լեզուն, գրաված միասնական տարածքը, մենտալիտետը, ավանդույթները և այլն:

Սովորույթները, ընդհանուր լինելով ամբողջ ազգի համար, հաճախ իրենց առանձին դրսնորումներում նույն ազգի ներքին տարածքային առանձին միավորներում, ասենք տարբեր գավառներում, շրջաններում իրարից հաճախ են տարբերվում: Նույնը վերաբերում է լեզվի բարբառներին, որոնք (օրինակ՝ հայերի մոտ) իրարից երբեմն տարբերվում են այնքան, որ նույն ազգի մարդիկ իրար դժվարությամբ են հասկանում: Հայերի մոտ այդ երևույթը, հավանաբար, գալիս է դեռ այն ժամանակներից, երբ Նոյի սերունդներն աստիճանաբար ցրվեցին Հայկական բարձրավանդակում, որտեղ բնակության համար պիտանի հողերը իրարից կտրված էին լեռներով ու ձորերով և դժվար էր փոխադարձ մշտական հաղորդակցությունը: Մյուս կողմից, հավանական է՝ դա եղավ նաև այն պատճառներից մեկը, որ ցրվելով ամբողջ Եվրասիայով և ձուլվելով տեղաբնակների հետ, արիները նրանց հաղորդեցին իրենց այդ տարբեր

Զ.



## ԺՈՂՈՎՐԴՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԿԱԿԱՆ ԽՈՎՃԱ ՄՐԱՎԱԴՅԱՆ

- «Ժողովրդավարություն» արտահայտությունը, որը հունարեն «ηεմոկրատիա» բառի թարգմանությունն է, ըստ Էության Ենթադրում է տվյալ հանրույթում հարաբերությունների, գործող օրենքների և ղեկավարման այնպիսի կառուցվածք և վարվելակերպ, որտեղ հավասարապես պաշտպանվում են հասարակության այն անդամների շահերն ու իրավունքները, որոնք ընդունում և իրենց գործելակերպում ղեկավարվում են այդ կառուցվածքով սահմանված նորմերով: Այսինքն, այդ անդամներն ունեն ինքնաբացահայտման և իրենց ինքնության պաշտպանության հավասար հնարավորություններ, հավասար իրավունքներ ու պարտականություններ, գործողությունների ազատությունների նույնական սահմաններ: Ժողովրդավարության պայմաններում առանց բացառության յուրաքանչյուր անհատ, ժողովուրդ կոչվող մարդկային միություն, գոյության և կայունության ապահովման համար, պարտավոր է Ենթարկվել բոլորի համար ընդունված համընդհանուր նորմերին, իսկ այդ միությունն էլ պարտավորվում է ապահովել իր առանձին անդամների շահերի պաշտպանությունը հավասարապես, առանց խտրականության, նույն թվում՝ յուրաքանչյուրին տալով հնարավորություն՝ մասնակցելու բոլորի հետ միասին, ամբողջ միության կառավարմանը:

- Որոշ քաղաքագետներ «դեմոկրատիա» հայերեն «ժողովրդավարություն» թարգմանությունը համարում են սխալ և առավել ծիշտ են համարում բառացի թարգմանված «Ժողովրդաիշխանություն» բառը (Ելնելով հունարեն դեյմոս-ժողովուրդ և կրատիա-իշխանություն բառակապակցությունից): Սակայն իմաստային տեսակետից հայերենի «ժողովրդավարություն» բառը ավելի ծիշտ է, քան ինց հունարեն «դեմոկրատիա» բառը, քանի որ «ժողովրդավարություն» նշանակում է ոչ միայն ժողովրդի կողմից ղեկավարել, այլև փոխադարձ հարաբերությունների մեջ կիրառել այնպիսի գործելակերպ, վերաբերնունք, որը կհամապատասխանի և ընդհանուրի, և յուրաքանչյուրի ցանկություններին ու շահերին, իրավունքների պաշտպանությանը՝ տվյալ ժողովրդի կողմից ընդունված պատկերացումներին: Այդ տեսակետից «ժողովրդաիշխանություն» (դեմոկրատիա) բառը անհաջող է այն պատճառով, որ ի վերջո ոչ թե ժողովուրդն է անմիջականորեն իշխում կամ ղեկավարում, այլ նրա կող-

մից առաջադրվող ընտրյալները. այսինքն, ժողովուրդը չի իշխում ինքն իր վրա, այլ ընտրյալներն են իշխում, պաշտպանելով նրա իրավունքներն ու պահպանելով շահերը (ըստ իրենց ներկայացման), իսկ ժողովուրդը մասնակցում է իշխանությանը միջնորդավորված ձևով: Մյուս կողմից, եթե գոյություն ունի ժողովուրդ, որն իրագործում է իշխանություն, ապա պետք է գոյություն ունենար նաև մարդկանց մի խավ, որը չի մտնում այդ պատկերացման մեջ և որի նկատմամբ իրագործվում է այդ իշխանությունը ժողովրդի կողմից:

- Բնորոշ է, որ հունական դեմոկրատիան իրագործվել է, ոչ թե ամբողջ ժողովրդի համար, այլ միայն մեկ՝ իշխող արտոնյալ խավի (հիմնականում որոշակի ունեցվածք ունեցողների) համար, իսկ ոչ իշխող խավը եղել են ստրուկները, ունեզուրկները և այլն: Յունարեն «դեյմոս» բառը վերաբերվել է միայն արտոնյալ խավին, ի հակադրություն հայերեն ժողովուրդ բառի, որ վերաբերում է բոլոր մարդկանց: Այստեղ տեղին է նշել, որ ներկայիս «դեմոկրատիա» հասկացության մեջ ևս գոյություն ունի անիրավահավասարության միտում, նույնիսկ ամրագրված օրենքներով: Ասենք իրենց ժողովրդավարական համարող երկրներում առանց որոշակի գումար ունենալու անհմաստ է ընտրություններին որպես թեկնածու առաջադրվելու փորձը: Փաստորեն նորից ամրագրվում է կամ օրինականացվում արտոնյալ խավին իշխելու իրավունք ապահովելու սկզբունքը, որը կամ իր համապատասխան գումար ունեցող անդամների միջոցով է իրագործում նման «դեմոկրատիան» կամ փորձում է այլոց օգնությամբ, բնականաբար, համապատասխան փոխհատուցում ստանալու ակնկալիքով: «Դեմոկրատիայի» (ժողովրդաիշխանության) կիրառման ժամանակ, օրենքով «ոչ-ժողովուրդ» խավ, այսինքն, որի նկատմամբ իրագործվում է իշխանությունը, ներկայացվում են հանցագործները, օրինախախտները և այլք, բայց միաժամանակ, փաստորեն իշխանությունից հեռու են պահպում սակավ ապահովված խավերը (թեկուզ ընտրական ցենզի միջոցով), չնայած օրինականության և բարոյականության առումով, նրանք կարող են շատ ավելի բարձր լինել, և նույնիսկ իրենց օրինախախտումներով շատ ավելի քիչ վնաս պատճառել, քան օրինական իշխանավորները:

- Հետաքրքիր արդյունքներ է ստացվում «դեմոկրատիա» բառի վերլուծության ժամանակ: «Դեյմոս» նույն արիական ծագումով հայերեն «դեմ» բառն է, (իիշենք յ-ի սղումը այր, Այրարատ բառերում), որի հոգնակին՝ «դեմքը» հետագայում նմանօրինակ շատ բառերի (ձեռք, ոտք, միտք և այլն) նման դարձել է եզակի: Այլ խոսքով՝ նախնական իմաստով «դեմ» բառը եղել է ոչ թե տեղի պարագա, ինչպես ներկայիս հայերենում է, այլ գոյական և ունեցել է ներկայիս «դեմք» ի-

մաստը («դեմ»՝ հավանաբար նկատի են ունեցել դիմացը կանգնած անձ. նշենք, որ ներկայումս հաճախ, խոսակցական լեզվում, նույն իմաստով էլ օգտագործվում է): Հետևաբար իր նախնական իմաստով «դեմքը» նշանակել է «դեմերի» (անձանց) ամբողջություն: Այն հայերենում եզակիացվել է, իսկ հունարենում «ք»-ի սղմամբ վերածվել է «դեյմոսի»՝ «ժողովուրդ» իմաստով (նույն «դեմ» արմատն է նաև դեմորկացիա, դեմոնստրացիա և այլ միջազգային տերմիններում):

Ազգերի փոխհարաբերությունների, փոխազդեցությունների, տեղեկատվության փոխանակման և նման այլ գործընթացներում բնական է մեկը մյուսից գաղափարների, մոտեցումների, սկզբունքների և այլ փոխառումներն, ու դրանք իրենց միջավայրում, իրենց պայմաններին համապատասխանեցնելով, օգտագործումը: Սովորաբար նման նորույթը կիրառվում է իր նախնական արտահայտչական ձևով, բայց ձևափոխվելով փոխառող ազգին բնորոշ պատկերացումներով: Այդ տեղի է ունենում այն դեպքերում, երբ տվյալ լեզվում համապատասխան բառն ու հետևաբար դրա իմաստային պատկերացումը բացակայում է: Դա վերաբերում է նաև գոյաձևներին, երևույթներին: Օրինակ, միջազգայնորեն ընդունված են և բոլոր ազգերի կողմից օգտագործվում են «սոցիալ», «մատերիալիզմ», «իդեալիզմ» բառերը, «ավտո» արմատը և այլն (նման բառերը հայերենում որոշ գերազանցեր լեզվաբաններ փորձում են թարգմանել, չնայած ոչ միշտ հաջող). «Լեզվաբանական ծայրահեղություն»):

Նախորդ գլուխներում նշվեց հունական միջավայրի վրա արիական ազդեցության առկայությունը: «Դեմոկրատիա» արտահայտության մեջ «դեմ» արմատի օգտագործումը մատնանշում է գաղափարի արիական ծագումը: Այսինքն, ինչպես արիական շատ գիտելիքներ, ժողովրդավարության գաղափարը ևս լինելով մարդու կերպարի կազմավորման չափանիշներից մեկը, տարածվել է արիացիների կողմից իրենց արշավանքների ընթացքում: Սակայն այդ գաղափարի հիման վրա հույներն ստեղծել են կառավարման մի ձև, որտեղ իրավունքների հավասարությունը, որը ժողովրդավարության հիմնական հատկանիշներից մեկն է, տարածել են միայն ընտրյալների խավի վրա:

Ժողովրդավարությունը հանդիսանալով իշխանության և հանրույթի փոխհարաբերությունների արդարացիության արտահայտություն, պատմության ընթացքում քայլ առ քայլ, փուլ առ փուլ դարձել է ավելի ընդգրկուն՝ ավելի ամրապնդվելով մարդկային գիտակցության մեջ: Մարդկության զարգացման ընթացքում ավելի է բացահայտվում նրա սերտ կապը մարդկային բարոյականության

**հասկացության հետ:** Բոլոր հասարակական ցնցումների, հեղափոխությունների հիմնական պատճառը դեմոկրատիա հասկացության սահմանափակումն է որևէ խմբի ծավալով՝ այդ խմբի ներսում հարաբերությունների կարգավորման համար, ելնելով խմբային շահերը ապահովելու անհրաժեշտությունից:

Եվ իրոք, բացի հունականից, եղել է նաև հռոմեական ստրկատիրական դեմոկրատիա՝ սենատի, կոնսուլների ընտրություն՝ օրենքների և այլ ձևերով. այսինքն՝ դեմոկրատիա՝ միայն Հռոմի քաղաքացիների և ստրկատերերի համար: Միջնադարյան ֆեոդալական հասարակարգում դեմոկրատիայի որոշ տարրերը գոյություն են ունեցել միայն ազնվականության միջավայրում՝ իրավունքների և այլ բնագավառներում, միապետների և ազնվականների որոշ հարաբերություններում, ինչպես նաև միջնադարյան քաղաք-պետությունների կառավարման համակարգերում:

20-րդ դարում հեղափոխությունների և պատերազմների արդյունքում հանդես եկան դեմոկրատիայի սկզբունքների 2 բևեռացումներ՝ կապիտալիստական (ազատական) և համայնավարական: Ընդ որում, մյուս սկզբունքները (սոցիալ-դեմոկրատական և այլն), դրանց տարրերակներն են՝ ձևավորված երկու սկզբունքների տարրերը տարրեր համամասնությամբ համատեղելու միջոցով:

- Համայնավարական դեմոկրատիան հռչակելով իր բռնապետական էությունը՝ պրոլետարիատի դիկտատուրայի միջոցով և գտնելով համապարփակ դեմոկրատիայի հասկացության անհնարինությունը, ելքը գտնում էր մեծամասնություն կազմող ստորին խավերի համար կիրառվող և իշխանության բռնի ուժով իրականացվող դեմոկրատիայի, այլ խոսքով՝ մեծամասնության դեմոկրատիայի մեջ: Նման մոտեցումը, չնայած իր ազնիվ միտումներին, լինելով զուտ տեսական և հիմնված մարդկային գիտակցության զարգացման և բարոյականության ածի վրա, իրեն սպառեց այն պարզ պատճառով, որ (ինչպես նշվեց վերևում) այդ երկու մարդկային հատկանիշների ածը հավասարաչափ չէ, իսկ արհեստականորեն էլ հնարավոր չէր հասնել դրան՝ աշխարհի մնացած մեծ մասում՝ բարոյականության ածի հետ մնալու միտումը գիտակցության ածից պահպանվելու պարագայում: Այս վերջին երևույթի ազդեցության պատճառով դեմոկրատիայի սկզբունքներն աստիճանաբար նեղացվեցին և իրենց բնույթով դարձան ձևական՝ ծառայելով նոր իշխող խավի՝ կուսակցական ազնվականության համար որպես իրենց դասային արտոնությունների արդարացման միջոց: Եվ բռնապետական գործելակերպը, որը նախատեսված էր համայնավարական՝ ժողովրդավարական սկզբունքը մարդկանց գիտակցության մեջ ներդնելու համար,

իրականում կիրառվեց այդ խավի շահերի համար: Այլ խոսքով, առաջացավ խզում՝ գաղափարի հիմքում դրված համայնավարական ժողովրդավարության սկզբունքների և այդ սկզբունքներն իրագործելու նպատակ հայտարարած, բայց իրականում այլ նպատակներ հետապնդող գործելակերպի միջև, որն ի վերջո հեղինակագրկելով համայնավարական ժողովրդավարության գաղափարը, պատճառ դարձավ համայնավարական գաղափարների իրականացման նպատակով հիմնված հասարակարգի քայլայմանը:


- Ազատական (կապիտալիստական) ժողովրդավարության սկզբունքները լայնորեն քարոզվում և տնտեսական ու քաղաքական մեթոդներով տարբեր երկրներում ներդրվում են այն պատճառաբանությամբ, թե այն առավել բարենպաստ պայմաններ է ապահովում մրցակցության միջոցով տնտեսության զարգացման և բիզնեսի աճի համար: Եթե չլիներ նման երևոյթը, այն պարզապես չէր ներդրվի: Իրոք, նույնիսկ 20-րդ դարի վերջում գոյություն ունեն բացարձակ միապետություններ՝ միջնադարյան միապետությունների տիպի, բայց ազատական ժողովրդավարական երկրները, իրենց համարելով առհասարակ ժողովրդավարության ջատագովներ, չեն էլ ծգտում իրենց սկզբունքները ներդնել նրանց մոտ, և բիզնեսի շահերից ելնելով, նույնիսկ համագործակցում և պաշտպանում է նրանց: Այսինքն, եթե լիներ մարդկային հարաբերությունների այլ ձև, որն ավելի նպաստեր բիզնեսի աճին, նա կիրաժարվեր իր ժողովրդավարական կերպարից: Բիզնեսը ոգեղեն գաղափարախոսություն չունի, չի հետևում բարոյական որևէ սկզբունքի, և նրա միակ նպատակը սեփական աճի ապահովումն է: Համայնավարական ժողովրդավարության նկատմամբ բիզնեսի հակակրանքի ու վախի պատճառը համայնավարության գաղափարախոսության կողմից առհասարակ բիզնեսի ժխտումն է (չնայած դրա փոխարեն կիրառվող՝ համընդհանուր պլանավորման մեթոդի և պետական մենաշնորհի ամբողջ անիրատեսությանն ու զարգացմանը խանգարելու բացահայտ բնույթին):

- Այսպիսով, ժողովրդավարության սկզբունքը յուրաքանչյուր հասարակարգում, հենվելով իր ժամանակաշրջանի համար ընդունված գաղափարախոսության վրա, կիրառվում է՝ ելնելով տիրապետող խավի շահերից, մոտեցումներից, հայացքներից. ստրկատիրական հասարակարգում գոյություն ուներ ստրկատիրական դեմոկրատիա, ֆեոդալականի ժամանակ՝ ֆեոդալական ներազնվականական, ոչ հեռու անցյալում՝ համայնավարական, որը կարծ ապրեց և ազատական, նպատակառողված՝ հիմնականում բիզնեսի աճի ապահովմանը:

- Ժողովրդավարական սկզբունքների մյուս կարևոր հատկանիշը նրա ազգային երանգավորումն է: Յուրաքանչյուր ազգ ունենալով մարդկային արժեքների, բարոյական կերպարի իր չափանիշները, լավի ու վատի, բարու և չարի իր պատկերացումները, ժողովրդավարության սկզբունքների նկատմամբ ունի իր մոտեցումները: Եվ նույնիսկ բացառված չէ տարբեր ազգերի այդ մոտեցումների հակասականությունը (որոշ եվրոպական ազգերում նույնիսկ ժողովրդավարություն են համարում արվածության ազատությունը, արևելյան ազգերի համար դա պարզապես հայիոյանք է): Այլ խոսքով, ժողովրդավարության սկզբունքների նկատմամբ ևս գործում են բազմազանության Արարչական մոտեցումները:

Ընդհանրապես, ինչպես ցանկացած գաղափար կամ սկզբունք, բոլոր ազգերի համար գոյություն ունի նաև ժողովրդավարության սկզբունքների կիրառման երեք հիմնական «տիրույթ»՝ ընտանիքի ներսում եղած հարաբերություններ, հասարակության անդամների միջև եղած հարաբերություններ և տարբեր ազգերի միջև եղած հարաբերություններ, և այդ տեսակետից ժողովրդավարական սկզբունքների միատեսակ, միանշանակ կիրառումը տարբեր՝ հատկապես արևելյան ու արևմտյան ազգերի համար, ոչ միայն անհնար է, այլև դրա փորձը վնասակար է՝ այդ սկզբունքների վարկաբեկման տեսակետից: Եթե այդ սկզբունքները ընդունելի են և կիրառելի Արևմտյան ազգերի համար ընտանիքի մակարդակով (նկատի ունենալով, որ արևմուտքում ավելի ու ավելի մեծ տարածում ունի մի քանի անգամ ամուսնանալ-բաժանվելը, արտաամուսնական երեխաների ծնունդը, պայմանագրային ամուսնությունները և այլն), ապա ժողովրդավարությունն այնտեղ մարդկային զարգացումը տանում է ընտանիքի աստիճանաբար քայլայման և ձևական դառնալու ուղղությամբ: Արևելքում ընտանիքը հանդիսանում է հասարակության կայուն հիմքը, և ժողովրդավարական սկզբունքները նպաստում են ընտանիքի ներսում իրավահավասարությանը, բռնակալական մոտեցումների մեջմացմանը: Դասարակական հարաբերություններում Արևելքում և Արևմուտքում ժողովրդավարության սկզբունքները աստիճանաբար միտում ունեն միակերպության՝ հատկապես բիզնեսի գերակայության պայմաններում: Սակայն պետությունների և ազգերի հարաբերություններում թե՝ Արևմուտքում, թե՝ Արևելքում ժողովրդավարության սկզբունքներն առհասարակ չեն կիրառվում, և դա է հանդիսանում համամարդկային բարոյականության ածի դանդաղեցման հիմնական պատճառներից մեկը:

- Ժողովրդավարության սկզբունքների շրջանակները նեղացնելու, դրանք այս կամ այն գաղափարի կամ աշխարհայացքի համար



# ԱՐԴԻՈՒԹՅՈՒՆ ՇԱՀ ԱՐԴԱՐՄԱՆ ՄՐԱՎԻՆ

- Յայերենում «արիություն» արտահայտությունը հոմանիշ է «քաջություն», «խիզախություն» և մի շարք այլ արտահայտությունների: Սակայն դրանցից յուրաքանչյուրն ունի իր ներքին բովանդակային երանգները, որոնք օգտագործվելիս, ոչ միշտ են կարող փոխարինել մեկը մյուսին: «Արիություն» արտահայտությունն իր ներքին բովանդակությամբ ներառելով վերը նշվածների երանգները, միաժամանակ իր մեջ համատեղում է նաև տոկունությունը, հաստատակամությունը, վճռականությունը. այսինքն, մարդկային բնավորության այն հատկանիշները, որոնք ապահովում են անսասան պաշտպանություն, կայունություն, համառություն, հաղթանակի վստահություն, վտանգի դեպքում՝ սառնասրտություն: Այդ տեսակետից հայերենում «արիություն» արտահայտության արմատում «արի» բառի օգտագործումը պատահական չէ. նշված բոլոր հատկանիշները ընդգրկված են «արի» արմատի մեջ, որն օգտագործվում է դրանց հավաքանությունը արտահայտելու համար:

- Քաջությունը, խիզախությունը, կարծես գոյություն ունեն նաև կենդանական աշխարհում: Սակայն, երբ քարայծը թռչում է անդունդի վրայից կամ կապիկը ցատկում է մի ծառից մյուսը, դրանք նրանց կենսագործունեության մի մասն են կազմում: Այդ գործողությունները կատարելիս նրանք բնագդի կամ փորձի վրա հիմնվելով, աչքաչափով կատարում են հաշվարկ և վստահ են լինում իրենց այդ գործելակերպի հաջողությանը: Երբ մարդն է կատարում նման գործողություն, դա արդեն քաջություն է, քանի որ ժամանակակից մարդու սովորական կենսագործունեության մեջ նման արարք «նախատեսված» չէ և նրա մարմինն էլ իր ֆիզիկական հատկանիշներով հարմարեցված չէ դրանց: Նման վարմունքը թելադրված է լինում կամ հազվադեպ անհրաժեշտությամբ կամ ինքնահաստատման նպատակով: Կենդանու մոտ հազվադեպ իրադրություն կարող է ծագել միայն կյանքին սպառնացող վտանգի կամ իր ծագերին պաշտպանելու անհրաժեշտության և դրա հետևանքով առաջացած տագնապի դեպքում, ինչը նրան կդրդի հանդուգն քաջության (սովորաբար գազանները խուսափում են ծագերին պաշտպանող մոր հետ ընդհարվելուց) և բացառվում է, որ

**նույնը կատարվի ինքնահաստատման պատճառով:**

- Արիությունը, բովանդակելով վերը նշվածը, սերտորեն կապված է գիտակցության հետ, իմա՝ այն բնորոշ է միայն մարդուն: Մարդն արիություն է ցուցաբերում հասարակության, այսինքն՝ այլ անձաց հետ հարաբերվելու ժամանակ ծագած անհրաժեշտությունից, իրենց մեծությամբ բազմակի անգամ գերազանցող բնության ուժերը կամ երևույթները հաղթահարելիս, իր ինքնահաստատման համար (իհարկե, խոսքը չի վերաբերում տեխնիկական կամ այլ միջոցներով գերազանցություն ձեռք բերելուն և դրանց օգտագործմանը: Երբ մարդը մերկ ձեռքերով կամ ծայրահեղ դեպքում սառը գենքով մարտի մեջ է մտնում արջի հետ, դա արիություն է, իսկ երբ նա հեռվից կրակոցով սպանում է նրան, դա սովորական որս է):

- Երբ որևէ մարդու մասին ասում են, թե նա անվախ է, ապա դա զուտ պայմանական, համեմատական բնորոշում է: Առհասարակ, բնության մեջ բացարձակորեն անվախ արարած չի լինում (թերևս միայն միջատների կամ ծկների մեջ, որոնց «գիտակցության» մակարդակը շատ ցածր է կաթնասուների կամ թռչունների «գիտակցությունից»). Ճանձին ինչքան քշում ես, նորից վերադառնում է նույն տեղը): Նույնիսկ փիղն է վախենում, այն էլ՝ մկներից, որոնք մտնում են ոտքերի մատների արանքն ու կրծում: Կյանքի պահպանության օրենքը, որ դրված է յուրաքանչյուր արարածի կենսագործունեության հիմքում, նրան դրդում է մշտական օգուշության կամ ներշնչում վախ՝ հանդիպած վտանգների, նույնիսկ անսովոր կամ անծանոթ իրադրությունների, երևույթների կամ գոյածների նկատմամբ: Մարդկային հասարակության մեջ բացարձակ անվախ կարող է լինել միայն հոգեկան հիվանդը:

Վախը մարդկանց մոտ լինում է տարբեր չափի կամ խորության, միաժամանակ նաև տարբեր երևույթների նկատմամբ: Տարբեր հանգամանքներում իրեն քաջ դրսենորող մարդը կարող է վախենալ ասենք բարձրությունից, ջրից, հասարակության առաջ ելույթ ունենալուց և այլն: Վախը փաստորեն մարդուն ազդանշան է տալիս կյանքին կամ վարկանիշին սպանացող վտանգի մասին և, կախված անձի հոգեկան հատկանիշներից, անձը կարող է տարբեր կերպ արձագանքել դրան: Ուժեղ ոգի, ինքնատիրապետում ունեցող կամ արիասիրտ մարդը, նման դեպքերում սառնարտությունը չի կորցնում, կարողանում է վտանգի դեմ համապատասխան ծշգրիտ միջոցներ կիրառելով, հաղթահարել վախը: Թույլ ոգու տեր կամ վախսկոտ մարդը մատնվում է տագնապի և, որ ավելի վտանգավոր է՝ սարսափի, որը, հաճախ, բազմակի անգամ ուժեղացնում է վտանգը: Երբ ամբոխը վտանգից սարսափելով փախչում է, շատ ավելի

զոհեր են լինում՝ փախչողների ոտքերի տակ տրորվելուց, քան Վտանգից: Այդ տեսակետից վախը նաև վարակիչ է:

- Երբեմն անձը դիմում է մի գործողության, որի հաջողության մեջ ինքը Վտահություն չունի, կամ դրա հավանականությունը փոքր է (ասենք անհրաժեշտությունից կամ անելանելի վիճակի պատճառով մարդը ցատկում է բարձրությունից կամ նավակով դուրս է գալիս փոթորկուն ծով): Նման դեպքերում, գիտակցելով հնարավոր գալիք Վտանգը, նա նախընտրում է դրանից խուսափել մեկ ուրիշ, թեկուզ չնշին չափով, հաջողության հույս ընծայող այլ Վտանգին ընդառաջ գնալով, քան իուսահատվել և անձնատուր լինել: Սա ևս գիտակցությամբ պայմանավորված արիություն է, որը դրդում է պայքարել մինչև վերջ և չհուսահատվել:

Այսպիսով, արիությունը մարդկային այնպիսի հատկություն է, որը դրսևորվում է որոշակի գործելակերպի ժամանակ՝ վախը գիտակցաբար հաղթահարելու ձևով: Այդ տեսակետից արիությունը մարդուն հնարավորություն է տալիս նույնիսկ հաղթահարել բնության հիմնական օրենքներից մեկը՝ կյանքի պահպանության օրենքը՝ հօգուտ ավելի բարձրագույն արժեքների: Երբ որևէ նպատակի, գաղափարի համար մարդը գիտակցաբար կատարում է իր կյանքին բացահայտ վտանգ սպառնացող գործողություն, ասենք, հացադուլ, ինքնակիզում և այլն, դա արդեն ոչ մի կերպ չի կարելի անվանել քաջություն, խիզախություն, անվախություն. դա միայն արիություն է: Նույն արիությունն է, ասենք, երբ մարդը գնում է անձնազոհության՝ հանուն, դիցուք իր նմանների կյանքի, հայրենիքի, մերձավորների պաշտպանության, թշնամու դեմ հաղթանակի և այլն:

Ինչպես մարդու համար բնորոշ մյուս հատկանիշները, արիությունը ևս բացահայտվում է մարդու էության ու կենսագործունեության տարբեր մակարդակներում:

- Մտքի արիությունը նախ և առաջ ընդունված և համընդիանուր ճանաչում գտած կարծիքներից վեր կանգնելու և, անհրաժեշտության դեպքում, հակառակ ձևով դատելու, այսինքն՝ ոչ ստանդարտ, ոչ կանոնակարգված համարձակ մտածելու կարողությունն է: Նման մտածելակերպը հատուկ է միայն բարձր մտավոր զարգացում ունեցող անհատներին և հանդիսանում է անձի առաջադիմության ու դրանով ամբողջ մարդկային հասարակության զարգացման նախապայմանը (հոչակավոր գիտնականների մոտ տարածված է՝ «արդյո՞ք վարկածը այնքան խելահեղ է, որ ծշմարիտ լինի» արտահայտությունը): Ոչ ստանդարտ մտածելակերպը Արարչական բազմազանության սկզբունքի անդրադարձն է մարդու գիտակցութ-

**յան մեջ:**

Նույնիսկ տիեզերական օրենքները՝ կախված ժամանակից, իրադրությունից, միջավայրից, տարբեր են: Եթե տարածությունն և ժամանակի միավորները հաստատուն են սովորական միջավայրում, ապա նրանք փոփոխական են գերխիտ աստղերի շրջապատում: Ընդունված է, որ տիեզերքում, անկախ միջավայրից, լույսը տարածվում է ուղղագիծ, բայց աստղերի մոտից անցնելիս, ձգողության պատճառով այն դառնում է կորագիծ: Մտքի արիության, այսինքն՝ համընդիանուր ճանաչում գտած կարծիքների, օրենքների, փաստերի անվերապահ ծշմարտությանը կասկածելու և դրանց հակասականության մեջ այլ ծշմարտություն որոնելու շնորհիվ ծնվել են բազմաթիվ գյուտեր, հոյակապ ստեղծագործություններ, մարդկային մտքի մեծագույն այլ արժեքներ: Այլ խոսքով մտքի արիությունը նորաստեղության կարևոր պայմաններից մեկն է:

Բայց մյուս կողմից՝ մտքի արիության կարևոր դրսնորումներից է նաև սեփական սխալների գիտակցումն ու ընդունումը: Անսխալական մարդ չկա, անսխալականը միայն Արարիչն է, որովհետև մահկանացու արարածը հասու չէ նրա նպատակներին ու գործելակերպին, հետևաբար նաև՝ Նրա սխալները տեսնելուն: Սեփական սխալի գիտակցումը հնարավորություն է տալիս խուսափել այն կրկնելուց: Դա մտքի, անձի ինքնադաստիարակման հիմնական միջոցն է:

Մարդը դրսից եկած ազդանշանները, տեղեկատվությունը, խորհուրդները ստանալով, ինքն է իրեն դաստիարակում, կատարելագործում: Ուսուցչի ասածը ընկալելով, համոզվելով դրա ծշմարտության մեջ, աշակերտն այն անցկացնում է իր ուղեղի մտավոր ունակության, հնարավորությունների պրիզմայով: Այդ պատճառով նույն բանը լսելիս, տարբեր աշակերտներ տարբեր կերպ են այն ընկալում, յուրովի: Դրսից ստացած յուրաքանչյուր միտք, տեղեկություն լիարժեքորեն ընկալվում և դառնում է սեփական, եթե այն անցնելով անձի ընկալունակության պրիզմայի միջով, տեղավորվել է ուղեղի համապատասխան ծալքերում: Կախված այդ պրիզմայի հատկություններից, այն տեղավորվում է տարբեր խորությամբ և ծավալով:

Մտքի արիության արգասիք և արտահայտություն է նաև, որ մարդը հասկանում է իր այդ պրիզմայի թերությունները և ընդունում սխալվելու հնարավորությունը:

- Մարդկային սովորական հարաբերությունների ժամանակ գործելակերպի արիությունը սեփական արժանապատվության, ինքնության պահպանման կարողությունն է՝ անկախ հանգամանքներից: Արժանապատվության պահպանման հատկանիշը նաև սե-

փական սխալի ընդունումն է արժանապատվորեն: Դա նշանակում է, հանուն ծշմարտության և արդարացիության՝ սեփական եսի, սեփական շահի նկրտումների հաղթահարում: Առհասարակ, հարգանք է վայելում այն անձը, ով ոչ թե փորձում է տարբեր փաստարկներով համառորեն պնդել իր սխալը՝ այն թաքցնելու կամ պատասխանատվությունից խուսափելու նպատակով, այլ այն անձը, որն ընդունում է իր սխալը, դրանով հաստատելով ոչ միայն իր մտքի արիությունը, այլև այն, որ նա գիտի իր գիտակցական մակարդակի և հեղինակության չափն ու վստահ է, որ նման սխալի ընդունումը չի նվազեցնի իր արժանապատվությունը: Ուրիշի կողմից իր սխալի մատնանշելը հիվանդագին է ընդունում այն անձը, որը կասկածում է իր կարողությունների չափի և արժանապատվության կայունության վրա (մարմնի հիվանդ տեղին դիաչելը ցավ է առաջացնում):

Մարդկանց հետ ունեցած հարաբերություններում արիության դրսենորում է նաև ուրիշների մտքի, արժանիքների գերազանցության առկայության դեպքում դրանց ընդունումը, որը բավական դժվար է հատկապես ուժեղների համար: Ուժեղն իր ուժի մեջ տեսնում է իր ծշմարտության ապացույցը, և դա խանգարելով իր սխալի գիտակցմանը, փաստորեն խանգարում է նրան նաև մտքի արիության դրսենորմանը:

Ի վերջո կարելի է ընդունել, որ արիությունը մարդկային բարոյականության դրսենորման ծներից մեկն է:

- Զարմանալի գուգադիպություններ են նկատվում հայերենում՝ կապված «ար» արմատի կիրառման հետ: Ինչպես արդեն նշվել էր վերևում, «արով» սկսվող անվանումները հիմնականում տրվում են առանձնահատուկ գերակայությամբ օժտված գոյածներին, լավագույն հատկանիշներին, կարևորություն ունեցող երևույթներին: «Ար» արմատը կարծես բնորոշում է իրենով սկսվող բառերի առանձնահատուկ նշանակությունը. Եթե «արիություն» և «արարել» բառերը համեմատենք, ապա կտեսնենք, որ, եթե արիությունը քաջության, անվախության նկատմամբ առավել բովանդակալից հասկացություն է, «արարել» բառը փաստորեն ստեղծագործելու, նորաստեղծելու, հնարելու և այլ հասկացությունների առավել բովանդակալից, ընդհանրական ծնն է և ընդգրկում է նաև նրանց առանձին իմաստային երանգները (այս բառից է բխում նաև «Արա-

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿԻ ԽՈՍՔԸ

3

## I. ԱԿՈՒՔՆԵՐԸ

### A. Արիների մասին

Ա. ա. Նոյան տապանի խորհուրդը	8
Ա. բ. Իմաստնության ժառանգումը	10
Ա. գ. Նախնադարյան մարդը	11
Ա. դ. Արիների արշավանքները	12
Ա. ե. Քաղաքակրթության հիմքերը	16
Ա. զ. Իմաստնության տարածումը	19
Ա. է. Եղեմի տեղադրավայրը	19
<b>Բ. Արիների բնօրանի մասին</b>	
Բ. ա. Հայկական բարձրավանդակը	21
Բ. բ. Արարատը	23
Բ. զ. Առաքելության հետևանքները	25
<b>Գ. Արիների հետնորդների մասին</b>	28

## II. ԱՐԱՐԻՉԸ ԵՎ ԿՐՈՆՆԵՐԸ

### A. Աստվածների մասին

Ա. ա. Նախնադարյան մարդու պատկերացումները	35
Ա. բ. Բազմաստվածություն	36
Ա. զ. Միաստվածություն	37
Ա. դ. Արարչի մասին պատկերացումները	38

### B. Արարչի նկատմամբ մոտեցումները

Բ. ա. Արարչի էությունն ըստ կրոնների	40
Բ. բ. Արարչի կերպարը	41
Բ. զ. Ամենագոյություն	43
Բ. դ. Կրոնների հետագա ճակատագրերի մասին	45
Բ. ե. Ոգեղեն ցնցումները	46
<b>Գ. Արիական մոտեցումների մասին</b>	48

### **III. ՄԱՐԴՈՒ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ**

<b>Ա. Մարդու գոյության իմաստի մասին</b>	<b>55</b>
<b>Բ. Կյանքը բնության մեջ</b>	<b>56</b>
<b>Գ. Մարդու ընտրության մասին</b>	<b>61</b>
<b>Դ. Մարդու մտավոր ունակությունների մասին</b>	<b>65</b>
<b>Ե. Համաշխարհային աղետի մասին</b>	<b>68</b>
<b>Զ. Մտորումներ Արարչի նպատակների մասին</b>	<b>73</b>
<b>Է. Նյութական և ոչ նյութական ոլորտների մասին</b>	<b>74</b>

### **IV. ՈԳԻՆ ԵՎ ՈԳԵՂԵՆ ԵՐԵՎՈՒՅՑԹՆԵՐԸ**

#### **Ա. Ոգու մասին**

<b>Ա. ա. Ոգու վերաբերյալ պատկերացումները</b>	<b>78</b>
<b>Ա. բ. Ոգու դրսևորումները</b>	<b>81</b>
<b>Ա. գ. Ոգու բնույթը ու կառավարելիությունը</b>	<b>83</b>
<b>Ա. դ. Մարդկային ոգու առանձնահատկությունները</b>	<b>86</b>
<b>Ա. ե. Ազգային ոգին</b>	<b>89</b>
<b>Ա. զ. Խմբային ոգու կառավարումը</b>	<b>91</b>
<b>Ա. է. Ոգու ծայրահեղությունները</b>	<b>94</b>
<b>Բ. Գուշակությունների, կանխազգացումների,</b> <b>երազների մասին</b>	<b>96</b>
<b>Գ. Խոհեր այնկողմնային ոլորտի մասին</b>	<b>103</b>

### **V. ՄԱՐԴԸ ԵՎ ՀԱՆՐՈՒՅՑԹԸ**

#### **Ա. Հիշողության և բնագդի մասին**

<b>Ա. ա. Հիշողության երևույթը</b>	<b>108</b>
<b>Ա. բ. Բնագդի երևույթը</b>	<b>111</b>
<b>Ա. գ. Մարդկային հիշողությունը</b>	<b>112</b>
<b>Ա. դ. Հասարակական հիշողությունը</b>	<b>113</b>
<b>Ա. ե. Հիշողության գարգացումը</b>	<b>115</b>
<b>Բ. Գաղափարախոսությունների և գաղափարների մասին</b>	<b>117</b>
<b>Գ. Արդարության և արդարացիության մասին</b>	<b>124</b>
<b>Դ. Քաղաքականության մասին</b>	<b>128</b>
<b>Ե. Ազգերի ծագման մասին</b>	<b>134</b>
<b>Զ. Ժողովրդավարության մասին</b>	<b>139</b>
<b>Է. Արիության և արարման մասին</b>	<b>145</b>





ԴՐՏ 941 (479.25)

ԳՄԴ 63.3 (23)

Խ 988

Խուրշուղյան Էղմոն

Խ 988 «Արիական իմաստնություն» գիրք Ա - Եր: «Արաց գործակալություն» 1999թ. 152 էջ

Գրքում համառոտակի քննարկվում է արիների ակունքները Հայկական բնաշխարհից սկիզբ առնելու իրողությունը և ամբողջ Եվրասիայով արիների արշավանքների նշանակությունը՝ ներկայիս մարդկային քաղաքակրթության հիմքերը կազմավորվելու և առհասարակ նախնադարյան մարդուն քաղաքակիրթ մարդ դարձնելու գործընթացում։ Փորձ է արվել պարզաբանել բնության, կյանքի, մարդու առաջացման ու տիեզերքում նրան վերապահված դերի Արարչական նպատակները, մարդկության զարգացման ընթացքում ծիշտ ուղուց շեղվելիս Նրա միջամտության կերպն ու հետևանքները՝ ելնելով միաբժիշտ արարածից մինչև մարդու առաջացման ամբողջ գործընթացի ուղղորդված ու ծրագրավորված բնույթից։ Յիմնվելով արիների տարածման ընթացքում նրանց որդեգրած գործելակերպի և մարդկության զարգացման վրա թողած հետևանքների փաստերին, ենթադրություն է արվում Արարչի նպատակների իրագործման գործընթացում արիների կատարած առաքելության մասին, ինչպես նաև հիմնավորվում է արիական սկզբունքների համամարդկային բնույթը, դրանք ծիշտ ընկալելու անհրաժեշտությունը և դրանց միտումնավոր խեղաթյուրումների ու ծայրա-

Խ 0503020913  
Խ 0050 (01) - 99

ԳՄԴ 63.3 (23)

ԽՈՒՐՃՈՒԴՅԱՆ ԷԴՍՈՆ

Արիական  
իմաստնություն

ԳԻՐՔ Ա

ԵՐԵՎԱՆ 1999